

# ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԲ  
2018




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ

Նուիրում է «Արարատ» ամսագրի  
հիմնադրման 150-ամեակին

Գեղարդյան

2018  
Ս. ԷԶՄԻԱՇՆԻ



ՀՐԱՄԱՆԱԻ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**«Էջմիածին»**

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

**Խմբագրակազմ**

Գլխավոր խմբագիր՝

**Գէորգ Մադոյեան**

Գլխավոր խմբագրի տեղակալ՝

**Տ. Անդրեաս արեղայ Եզեկեան**

Խմբագիր՝

**Արփինէ Զանթիկեան**

Տեխնիկական խմբագիր՝

**Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ

**Տ. Եզնիկ արք. Պետրոսեան, Տ. Զաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեան,  
Տ. Անդրեաս արեղայ Եզեկեան, Ազատ Բօգոյեան, Գէորգ Տէր-Վարդանեան,  
Վարդան Դեւրիկեան, Գոհար Աւագեան**



**“Etchmiadzin”**

Theological and Armenological Journal

**Editorial staff**

Editor-in-Chief - **Gevorg Madoyan**

Deputy Editor-in-Chief - **Rev. Fr. Andreas Yezekyan**

Editor

**Arpine Chantikyan**

Technical editor - **Gor Grigoryan**

Editorial Board

**Archbishop Yeznik Petrosyan, Proto-Archimandrite Zakaria Baghumyan,  
Rev. Fr. Andreas Yezekyan, Azat Bozoyan, Gevorg Ter-Vardanyan, Vardan Devrikyan,  
Gohar Avagyan**



**«Эчмиадзин»**

Религиоведческий и арменоведческий журнал

Главный редактор

**Геворг Мадоян**

Заместитель главного редактора

**Иеромонах Андреас Езекиан**

Редактор


**Арпине Чантикян**

Технический редактор

**Гор Григорян**

Редакционный совет

**Архиепископ Езник Петросян, протоархимандрит Закария Багумян,  
иеромонах Андреас Езекиан, Азат Бозоян, Геворг Тер-Варданын, Вардан Деврикийн,  
Гоар Авакян**



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

**Ս**Յ տարի լրացավ Մայր Աթոռի պաշտոնական առաջին ամսագրի՝ «Արարատ»-ի 150-ամյակը. այն հրատարակվել է գրեթե կես դար (1868–1919 թթ.)՝ որպես փարոս առաջնորդելով գիտության անեղբոններին, լուսավորելով հայ ընթերցողի միտքն ու հոգին։ «Արարատ»-ի արժանի ժառանգորդը, սահմանած գիտական չափանիշների եւ ավանդույթների պահպանողն ու շարունակողն այսօր «Էջմիածին» ամսագիրն է։

Հրատարակության առաջին տարիներին «Արարատ» ամսագիրը նման էր մի անպաճույճ եւ փոքրիկ տետրակի՝ բաղկացած 15–20 էջից, սակայն լույսը լույս ծնեց, նպատակը՝ ուժ եւ կամք, բարի սերմը՝ բարի հունդեր։ Տարիների ընթացքում Մայր Աթոռի պաշտոնական ամսագրի շուրջը համախմբվեցին ժամանակի լուսամիտ եւ նշանավոր հոգեւորականներն ու մտավորականները, որոնց անդուլ աշխատանքը տվեց իր բարի պտուղները։ «Արարատ»-ը դարձավ նշալ ժամանակահատվածում կովկասյան տարածաշրջանում տպագրվող կրոնագիտական, աստվածաբանական, եկեղեցագիտական, հայագիտական, պատմագիտական, բանասիրական առաջին լուրջ պարբերականը։ Այն գիտական նոր սկզբունքներ եւ չափորոշիչներ հաստատեց՝ իր արժանի եւ մնայուն տեղը զբաղեցնելով հայ պարբերական մամուլի պատմության մեջ։

Անուրանալի է «Արարատ» ամսագրի ավանդն ու դերակատարումը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանանքի, դավանաբանական դիրքորոշման պաշտպանության եւ ամրագրման գործում։ Այն հրատարակվեց որպես հայ աստվածաբանական մտքի հանդես, որի նպատակը Հայ Եկեղեցու պատմությունը, կարգն ու կանոնը, ուղղափառ վարդապետությունը, առաքելահաստատ լինելը, ծիսական-արարողական համակարգը ներկայացնելն էր։ Ամսագրում տպագրված՝ հայ

եկեղեցական իրավունքին, կանոնագիտությանը, ծիսագիտությանը եւ տոմարագիտությանը վերաբերող ուսումնասիրություններն ու հոգվածները այսօր եւս արժեքավոր աղբյուրներ են համարվում:


«Արարատ»-ի միջոցով գիտության մեջ շրջանառվեցին հայ դավանաբանական գրականության մաս կազմող արժեքավոր բնագրեր, աստվածաբանական երկեր, ուսումնասիրություններ, վավերագրեր:

«Արարատ» ամսագրի հրատարակմամբ աննախընթաց վերելք ապրեց նաեւ հայագիտությունը. 1870 թ. վերջերից ընդարձակվեց ամսագրի հայագիտական բաժինը, իսկ վերջին երկու տարիների՝ 1918–1919 թթ. համարներն ամբողջովին նվիրվեցին հայագիտական նյութերին: Ամսագիրը անդրադարձավ հայ հոգեւոր երաժշտությանը, խազագրությանը, շարականներին, ձեռագրագիտությանը, վիմագրագիտությանը, մանրանկարչությանը, հայ հոգեւոր ու նյութական մշակույթի գրեթե բոլոր ճյուղերին: Առանձնակի կարեւորություն ունեն նաեւ պատմաբանասիրական, գրականագիտական բնույթի ուսումնասիրություններն ու հաղորդումները:

Իրավամբ, կարող ենք նշել, որ «Արարատ» ամսագիրն իր տարածմամբ եւ հեղինակների լայն շրջանակի ընդգրկմամբ աստիճանաբար ստացավ համահայկական բնույթ: Հայ անվանի գիտնականների որոշ աշխատություններ առաջին անգամ լույս տեսան Մայր Աթոռի պաշտոնական ամսագրի էջերում: «Արարատ»-ը դարձավ հայ իրականության մեջ բովանդակային առումով ամենահարուստ եւ գիտական տեսանկյունից ամենաորակյալ ամսագրերից մեկը:

Այսօր մեկ անգամ եւս արժեւորելով «Արարատ»-ի դերն ու նշանակությունը՝ հպարտությամբ արձանագրում ենք, որ այն պատվով եւ սրբորեն իրագործեց իր առաքելությունը՝ Հայ Եկեղեցու մատենագրության եւ պատմության մեջ ամրակայելով իր առանձնահատուկ ու եզակի տեղը: Ամսագրի խմբագրակազմը, հավատարիմ իր ուխտին, «հայկազուն սերնդոց սրտի եւ հոգույ եռանդը» վառեց, «հայրենի հնութեանց թանգարանը» բացեց, «ազգային մեծագործութեանց պատմական յիշատակները» կենդանացրեց՝ համայն հայության սիրտը կապելով Մայր Եկեղեցուն եւ Հայրենիքին:





**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ  
«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ  
ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ**

(19 դեկտեմբերի 2018 թ., Սուրբ Էջմիածին)

*Սիրելիներ,*

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում «Արարատ» ամսագրի հիմնադրման 150-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցներին: Այսօր դուք համախմբվել եք՝ ձեր զեկույցներով ու քննարկումներով վերարժեւորելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագրի նշանակալի վաստակն ու ժառանգությունը:

Երջանկահիշատակ Գեորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք եւ նրա խրախուսմամբ հիմնադրված «Արարատ» ամսագիրը հարյուր հիսուն տարի առաջ կարեւոր առաքելության լծվեց ազգային-եկեղեցական մեր անդամատանում: Ինչպես նշվում է ամսագրի առաջին համարի նախաբանում՝ «Արարատ»-ի հանձնառությունն էր կրոնական գիտելիքների մատուցմամբ, ներկայացվող ուսումնասիրություններով եւ հոդվածներով նպաստել ազգի բարոյական ու հոգեւոր դաստիարակությանը: Ամսագիրը կարեւոր ներդրում ունեցավ հայ աստվածաբանական մտքի, հայագիտության ու պատմաբանության զարգացման գործում: Մեծանուն հոգեւորականներից Մաղաբիա արքեպիսկոպոս Օրմանյանի գլխավորությամբ նոր սերնդի հոգեւորականները, Եւրոպայում կրթություն ստացած երիտասարդ եկեղեցականները հանդես եկան դավանաբանության, ինչպես նաեւ ընդհանուր աստվածաբանության վերաբերյալ գիտական լուրջ հոդվածներով, նշանավոր աստվածաբանների աշխատությունների թարգմանություններով: «Արարատ»-ի էջերում հիշարժան վաստակ թողեցին նաեւ նշանավոր հայագետները: Ամսագրի մեծարժեք նյութերի ցանկը հարստացրել են ձեռագրագիտության,

մանրանկարչության, համեմատական բնագրերի, արվեստի ու մշակույթի վերաբերյալ հրապարակումները: Դեռեւս այդ շրջանում, երբ Մայր Աթոռի պաշտոնական գրություններում գլխավորապես գրաբարի գործածումն էր սահմանված, «Արարատ» ամսագրի համար նախընտրելի համարվեց գրաբարին մերձ աշխարհագրի գործածումը, որպեսզի այն ընթերցողների ավելի լայն շրջանակին հասու լինի:

Հատկանշական է նաեւ, որ «Արարատ» ամսագիրը լույս էր տեսնում այնպիսի մեծանուն հոգեւորականների խմբագրությամբ, որպիսիք էին Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանը, Խորեն վարդապետ Ստեփանեն, Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը եւ ուրիշներ: Մեր խորին հարգանքն ու խոնարհումն ենք բերում երանաշնորհ Գեորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ամսագրի վաստակաշատ խմբագիրների եւ «Արարատ»-ի բոլոր երախտավորների լույս հիշատակի առջեւ: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ հրատարակվող նյութերի հատուկ ընտրությամբ «Արարատ» ամսագիրը դարձավ այդ ժամանակաշրջանում Կովկասում առաջին գիտական լուրջ հանգեսը, որի շուրջ համախմբված հայ աստվածաբան հոգեւորականները, գիտնականները, գրողները կարեւոր ավանդ բերեցին գիտության ճյուղերի զարգացմանը: Այսօր էլ «Արարատ» ամսագրի գիտական հարուստ նյութերը, նաեւ կաթողիկոսական կոնդակների ու կարգադրությունների, Սինոդի գրագրությունների, թեմերի, գաղթավայրերի, ազգագրության վերաբերյալ տեղեկությունները օգտաշատ գիտելիքների աղբյուր են ընթերցողների եւ ուսումնասիրողների համար:


Սիրելիներ, Հայրապետական Մեր գնահատանքն ենք հայտնում ձեզ բոլորիդ, մասնավորապես «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենագրաբանի տնօրենությանը եւ այս ձեռնարկի իրականացմանը բարի նպաստ բերած բոլոր անձանց:

Մաղթում ենք, որ նման միջոցառումները առատ արգասիքներով արդյունավորվեն հոգեւոր-եկեղեցական մեր կյանքի անդաստանում, գիտության եւ իմացության կաճառում:

Վերստին Հայրապետական Մեր օրհնութունը բերելով՝ հայցում ենք Տիրոջ օգնականությունը ձեզ գիտական բեղուն աշխատանքով նորանոր հաջողություններ կերտելու ճանապարհին:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհներն ու ողորմությունը թող միշտ լինեն ձեզ եւ ամենքի հետ. ամեն:

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ



Տ. ՄԱՂԱՔԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՄԻՐԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝  
ԽՕՍՈՒԱԾ Ս. ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ  
ՅՂՈՒԹԻՒՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՅԱՆՆԱՅԷ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(9 դեկտեմբերի 2018 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Օրհնեալ ես դու ի կանայս,  
եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո»  
(Ղուկ. Ա. 42-43):

Սիրելի՛ հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ,

Այսօր Առաքելական մեր Ս. Եկեղեցին, յիշատակում է՝ Ս. Աստուածածնի Յղութին յԱննայէ տօնը: Թէեւ Աստուածաշունչ Մատեանը շատ քիչ տեղեկութիւններ է տալիս, Աստուածամօր կեանքի վերաբերեալ, բայց, այնուամենայնիւ, այդ մի քանի դրուագները, որ կապուած են ուղղակի մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի տէրունական կեանքի հետ, բաւական են, որ Աստուածամայրն իր ուրոյն տեղն ունենայ քրիստոնէական աշխարհում եւ Առաքելական մեր Ս. Եկեղեցում: Նրա ծնողները՝ Յովակիմն ու Աննան երկար տարիներ զաւակ չէին ունենում, եւ ահա Գաբրիէլ հրեշտակապետի մեծ աւետիսով Ս. Աննան յղիանում է եւ մարդկութեան համար լոյս աշխարհ է բերում Ս. Մարիամին:

Սիրելի՛ հաւատացեալներ, մարդկութեան փրկութեան աստուածային ծրագիրն այլ ճանապարհ չունէր, այն սկիզբ էր առնում Ս. Կոյս Մարիամով: Մարդիկ ի զօրու չէին իրենց մարմնաւոր աչքերով տեսնել անմարմին Աստծուն: Եթէ Աստուած չմարմնանար, չէին կարող մարդկային գիտութեամբ ըմբռնել աստուածային յայտնութեան խորհուրդը: Այդ պատճառով է, որ Աստծու Միածին Որդին մարդացաւ ու մարմնացաւ,

երկնքից երկիր խոնարհուեց եւ ծնունդ առաւ մարդկանց դուստրերից ամենակատարեալից՝ Ս. Կոյս Մարիամից։ Սակայն եթէ չլինէր Աստուածամօր խոնարհութիւնը, հեզութիւնը Տիրոջ աստուածային պատգամներին, անկատար կլինէր այդ իրողութիւնը։ Մահը Եւայով մուտք գործեց աշխարհ, սակայն կեանքի մեծ աւետիսն Աստուածամօրը հաղորդուեց, դրա համար էլ Աստուածամայրը կոչուում է լուսաւորեալ, որ լոյս էր առել մեր Տիրոջից եւ լուսաւորում էր մահուան եւ խաւարի մէջ գտնուողներին։ Այս իրականութեամբ է, որ Գրիգոր Նարեկացին ասում է՝ «Հրեշտակի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ» (Մատեան ողբերգութեան, Զ.)։

Սակայն սիրելիներ, այս ամենը կատարեալ չէր լինի, եթէ Մարիամը չծնէր Յիսուս Քրիստոսին՝ այն մեծ աւետիսով, որով ասում է՝ «Օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո» (Ղուկ. Ա. 42-43)։

Եկէք մտովի խորհենք. ո՞րն էր Աստուածամօր առաքելութիւնը, ի՞նչ արեց Աստուածամայրն այն խոնարհութեան, հեզութեան եւ առաքինութեան կեանքի ընթացքին, որ ապրեց։ Սիրելիներ, այսօր լաւագոյն առիթն է մեզ ընձեռուել՝ ինքնամաքելու եւ Աստծուն ընծայաբերելու համար։ Նայէք մեր Ս. Եկեղեցու խորաններին. Աստուածամայրը բազմած է այնտեղ՝ մանուկ Յիսուսին իր գիրկն առած եւ այնտեղից ամեն անգամ, ամեն կիրակի մեծ պատգամ է տալիս մեզ, որ Կանայի հարսանիքի ժամանակ եղաւ, երբ Տէրը ջուրը գինու փոխարկեց։ Մատուակները մօտեցան Մարիամին՝ ասելով. «Բն շանք», նա պատասխանեց՝ «Արէք այնպէս, ինչպէս Տէրն է կամենում (հմմտ. Յովհ. Բ. 2-5)։

Յաւիտենական է այդ պատգամը, սիրելիներ, որ այսօր Ս. Աստուածամօր կողմից բաշխուում է մեզ, որ մեր կեանքը ճիշտ նրա կեանքի օրինակով կառուցենք։ Նայէք այն մեծ խոնարհութեանը, որ Աստուածամայրն ունէր, նայենք այն մեծ հեզութեանը, որ Աստուածամայրը իր կեանքով ապրեց։ Մի պահ մտովի տեղափոխուենք աւետարանական այն ժամանակները, որ մեր Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին չարչարելով, տանջելով խաչն իր ուսերին առած Գողգոթայ էին բարձրացնում։ Ո՞ւր էր Մարիամը, ո՞ւր էր Տիրոջ մայրը։ Նա լուեւայն, հաւատքով, մեծ յոյսով հետեւում էր իր զաւակին, որը չարչարուելով եւ տանջուելով դէպի Գողգոթայ էր բարձրանում, այն Գողգոթան, որ մեզ փրկութեան էր տանում, այն Գողգոթան, որ մեզ քրիստոնեաներիս պէտք է ցոյց տար, որ մահը կեանքի վերջը չէ, այլ յաղթանակն է այն մեծ կեանքի, որ Տէրը մեզ խոստացաւ՝ ասելով. «Ես եմ ձանապարհը, ճշմարտութիւնը եւ Կեանքը» (Յովհ. ԺԴ. 6)։

Սիրելիներ, եթէ կառուցենք մեր կեանքը խոնարհութեան եւ աստուածապաշտութեան մէջ, տեսնենք նրա Աստուածամայր լինելու հանգամանքը, բայց նրա մէջ չտեսնենք այն մեծ խոնարհութիւնը եւ նուիրումը, որ ունէր Աստուածամայրը եւ այսօր պատգամում է մեզ, ապա ճիշտ չենք կարող կառուցել մեր կեանքը: Աստուածամայրը մշտապէս մեզ օրինակ է, օրինակ է, որ մենք ունենանք ճշմարիտ կեանք, այն կեանքը, որ սկսում է Աստուածամօրով եւ անցնում է մեր Տիրոջ միջոցով եւ տանում է դէպի փրկութիւն, դէպի յաւիտենութիւն:

Այսօրուայ այս սուրբ խորհուրդի մէջ, սիրելիներ, մենք իբրեւ քրիստոնեաներ եւ Առաքելական մեր Ս. Եկեղեցու զաւակներ պարտաւոր ենք Աստուածամօր հետ միասին քայլել մեր կեանքի ընթացքը, նրանից սովորել ամենը եւ պատգամել մեր սերունդներին: Տեսէ՛ք, մեր ժողովուրդն այնքան է սիրել Աստուածամօրը, որ նրա մէջ տեսել է հայ մօր կերպարը, այն կերպարը, որ ուսուցանում եւ դաստիարակում է ճշմարիտ ընտանիք, որ դարեր ի վեր հիմնասիւն է եղել հայ ընտանիքի: Մենք այնքան ենք սիրել Աստուածամօրը, որ մեզ համար նուիրական սուրբ կոթողները կոչել ենք Աստուածամօր անունով, իբրեւ՝ Մայր Եկեղեցի, Մայր Հող եւ Մայր Հայրենիք:

Այսօր, սիրելիներ, Աստուածամայրը մեզ համար մեծ պատգամ ունի, որպէսզի մենք մաքրենք, մաքրագործենք խոնարհութեամբ մեր քրիստոնեայի կեանքը: Աստուածամօրը ունենանք մեր առջեւ եւ ընթանանք այն ճանապարհով, որը տանում է դէպի յաւիտենականութիւն, դէպի փրկութիւն: Առանց Աստուածամօր խոնարհութեան, առանց Աստուածամօր հնազանդութեան մենք այսօր անկարող ենք կառուցել առողջ եւ բարոյական ընտանիքներ: Ուրեմն Աստուածամայրը մեզ համար պէտք է լինի այն հիմնակէտը, որով մենք կարող ենք առաջնորդուել:

Եկէ՛ք ուրեմն սիրելի՛ հաւատացեալներ, սերտենք նուիրումի, աստուածապաշտութեան, հեղութեան եւ խոնարհութեան այսօրուայ մեծագոյն դասը ուղղուած մեզ ամէնքիս: Եկէ՛ք խորախորհուրդ այ պատարագի ընթացքին մեր սուրբ աղօթքներով յիշենք Աստուածամօր, խնդրենք նրան որպէսզի բարեխօս լինի իր Միածին Որդուն մեր աշխարհի, համայն ժողովրդի եւ Առաքելական մեր Ս. Եկեղեցու համար ասելով. «Մայր սուրբ սքանչելի լուսոյն, աղաչեա՛... զի լուսցին պատերազմունք, դադարեցին յարձակմունք թշնամեաց, տնկեցի սէր եւ արդարութիւն ի յերկրի» (Ժամագիրք). այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տ. ՄԻՆԱՍ ԱՔԵՂԱՅ ՀԱՆՎԵՐԴԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝  
ԽՕՍՈՒԱԾ Ս. ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(16 դեկտեմբերի, 2018 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Եթէ մեղիցէ եղբայր քո, սաստեա՛ նմա.

եւ եթէ ապաշխարիցէ, թո՛ղ նմա»

(Ղուկ. Ժէ.4):

*Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ,*

*Քիչ առաջ այս սուրբ խորանից մեզ համար ընթերցուեց Ղուկասի աւետարանի Ժէ. գլխից մի հատուած, որտեղ Քրիստոս, ամենից առաջ Իր խօսքն ուղղելով առաքեալներին, ասում է. «Եթէ քո եղբայրը մեղանշի, սաստի՛ր նրան, եւ եթէ ապաշխարի, ների՛ր նրան»:*

*Հնկերային կեանքը, որի մէջ մենք մաս ու բաժին ունենք, անպայմանօրէն մեզնից իւրաքանչիւրի ուսերին դնում է փոխադարձ պարտաւորութիւններ: Այսօրուայ աւետարանական այս խօսքերի մէջ մենք տեսնում ենք երկու պարտականութիւն. առաջինը՝ մեզնից իւրաքանչիւրին տրուած է հսկիչ լինելու պաշտօնը՝ անշուշտ բարի միտումով յանդիմանելու եւ ուղղելու մեր դիմացիներին՝ իր կատարած սխալ արարքի կամ մեղքի համար: Երկրորդ պարտականութիւնը, որ մեզ տրւում է մեր Տիրոջ՝ Քրիստոսի կողմից, ներողամտութիւնն է, որը նշանակում է եւս մէկ հնարաւորութիւն, հաւատի եւս մէկ քայլ, սիրոյ դրսեւորման եւս մէկ առիթ: Երբ տեսնում ենք մեր ընկերոջ զղջումը, պարտաւոր ենք ներել նրան, որ վերահաստատուի Քրիստոսի սէրն ու խաղաղութիւնը: Բայց տեսէք, թէ ինչ է ասում Քրիստոս. «Նոյնիսկ, եթէ մէկ օրուայ մէջ քո եղբայրը եօթն անգամ քո դէմ մեղանշի եւ եօթն անգամ քո մօտ գալով ասի՝ Զղջում եմ, ների՛ր նրան»: Ահաւասիկ տողեր, որոնց մէջ ամփոփւում է քրիստոնէական վարդապետութիւնը:*

*Սիրելիներ, ներողամտութեան ոգին մարդու մէջ աստուածադիր է, եւ պատահական չէր, որ Քրիստոս Իր քարոզչութեան ողջ ընթացքին*

խրատներով ցանկանում էր արթնացնել մարդկանց մէջ թմրած այդ յատկութիւնը: Ներողամտութիւնը իրենից ենթադրում է ճշմարիտ մարդասիրութիւն: Մարդասէր լինել՝ նշանակում է նմանուել Աստծուն: Յաւօք խորապէս քննելով մեր ներաշխարհը՝ պէտք է խոստովանենք, որ մեր մարդասիրութեան շրջանակները խիստ նեղ են եւ իրենց մէջ են ներառում միայն ծնողներին, հարազատներին, բարեկամներին եւ ընկերներին: Այսպիսով, մենք դառնում ենք ծնողասէր, բարեկամասէր, ընկերասէր, բայց ոչ երբեք մարդասէր: Տիեզերական մարդասիրութեան ոգին սքանչելիօրէն դրսեւորեց Տէր Յիսուս Քրիստոս Իր երկրաւոր կեանքի ողջ ընթացքին: Նա ներողամտօրէն ու առանց խորշելու մօտեցաւ մաքսաւորներին, հրէաների կողմից պիղծ համարուող սամարացի կնոջը, հասարակութիւնից վտարուած ու մերժուած բորոտներին ձեռք մեկնեց եւ բժշկեց: Տիրոջ մարդասիրութեան գերագոյն դրսեւորումն ի վերջոյ Նրա՝ խաչի վրայ մահն ընդունելու յանձնառութեամբ, մեղաւոր մարդկութեանը յաւիտենական մահից դէպի յաւիտենական կեանք առաջնորդելու պատրաստակամութիւնը եղաւ: Հէնց այստեղ էր, որ նա ցուցաբերեց Իր ներողամտութեան անգերազանցելի ոգին՝ խնդրելով Հօրը, որ ների Իրեն խաչողներին: Միակ անմեղը աստուածային Իր բարձրութիւնից ներեց, երբ իրաւունք ունէր չներելու: Ներեց նրանց, ովքեր դատապարտում էին Իրեն՝ ոչ Իր մեղքերի համար:

Տիրոջ ներողամտութեան պատգամը լաւագոյնս իրագործեցին Նրա աշակերտները՝ առաքեալները, մարտիրոսներն ու նահատակները, կրօնաւորները, անապատական միայնակեաց հայրերը: Բազմաթիւ զրոյցներ են պահպանուել նրանց ներողամտութեան ու խոնարհութեան մասին: Ներողամտութեան ոգին, խորապէս ըմբռնելով եւ ի կատար ածելով՝ նրանք դարձան քրիստոնէական կենդանի հաւատքի ջահեր եւ իրենց օրինակով լուսաւորեցին, կրթեցին ու առաջնորդեցին ոչ միայն իրենց աշակերտողներին, այլեւ յետագայ դարերի բազմաթիւ սերունդների:

Որպէսզի լաւ ըմբռնենք թէ անապատական հայրերն ինչպիսի խորութեամբ էին հասկացել ու իրագործել ներողամտութեան պատգամը բերենք նրանց կեանքից օրինակ: Հայր Գէլասիոսը խցում մի հին ձեռագիր Աւետարան ունէր: Մի մարդ այցելութեան է գալիս նրան եւ գայթակղուելով Աւետարանի հնութիւնից՝ գողանում է: Իսկ հոգեւոր հայրը կատարուածից բնաւ չի խռովուում: Գողացողն Աւետարանը տանում

է շուկայ վաճառելու եւ որոշակի գին է սահմանում նրա համար: Մի առեւտրական համաձայնում է գնել այն հետեւեալ պայմանով. նա պէտք է Աւետարանը տանէր որեւէ վանականի մօտ եւ ստուգեր դրա հնութիւնն ու արժէքը: Աստուածային նախախնամութեամբ Աւետարանը բերում է հէնց հայր Գէլասիոսի մօտ: Միայնակեացը, այն տեսնելով, կրկին չի յուզւում ու չի յայտնում, որ դա իրենն է, այլ ասում է, թէ այն խիստ արժէքաւոր է եւ աւելին արժէ: Առեւտրականը վերադառնում է եւ ասում, որ ինքն Աւետարանը տարել է հայր Գէլասիոսի մօտ, եւ նա իրաւամբ վկայել է դրա հնութեան հանգամանքը: Գողը նոյն պահին սարսռում է ու հարցնում է, թէ ուրիշ ինչ է ասել նա: Առեւտրականը պատասխանում է, թէ՝ ուրիշ ոչինչ: Գողն անմիջապէս վերցնում է Աւետարանը եւ ասում, որ ինքն այլեւս այն չի վաճառում: Նա վազում է հայր Գէլասիոսի մօտ, նրա ոտքերն ընկնում, ներողութիւն խնդրում եւ ուխտում այլեւս հրաժարուել չար գործերից եւ դառնում է կրօնաւոր: Մինչեւ կեանքի վերջը մնում է անապատում ու ապաշխարում իր գործած յանցանքների համար: Ահա նման ներողամտութեան շնորհիւ անապատական հայրերը ոչ միայն իրենց էին ազատում ուրիշներից դատելու մեղքից ու վրէժխնդրութիւնից, այլեւ այդ ուրիշներին փրկում յետագայ մեղքերից ու անդունդը գահավիժելուց:

Միմեանց ներելու Քրիստոսի պատգամն այսօր ուղղուած է նաեւ մեզ, որ այդ պատգամը դարձնենք ապրելու ձեւ՝ կենսակերպ: Ս. Գրիգոր Նարեկացին ասում է. «Տէ՛ր, եթէ մարդկանց մեղքերն իմ հանդէպ, որքան գործել են, խիստ քիչ են ու սահմանափակ, ապա իմ մեղքերը Քո հանդէպ անսահման են ու յաւիտենական: Եւ եթէ Դու ներում ես ինձ իմ անսահման մեղքերը, ապա ես ինչպէս չներեմ իմ դէմ գործուած սահմանափակ մեղքերը»:

Յիշենք հոգեբանական չափազանց կարեւոր մի գործօնի մասին եւս: Զղջացող մարդուն յաճախ նոյնքան անկեղծ «ներում եմ» բառն է պակասում իրեն լիարժէք մարդ զգալու եւ քրիստոնէական հասարակութիւն վերադառնալու համար, եւ ընդհակառակը՝ մէկ հատիկ այս բառը, մէկ այսպիսի արարք կարող է փրկել եզրագծին կանգնած մէկ կեանք, կարող է կեանքի կոչել կիսով չափ մեռած մի հոգի: Պէտք է համոզումն ունենալ, որ կեանքը վերագտնելու, վերարժեւորման ուրախութիւնն աւելի զօրեղ է, քան ներանձնային մեր տառապանքը, որն ունենում ենք մարդուն ներելուց առաջ: Գերմանացի մեծ գրող

Ֆրիդրիխ Շիլլերն բաւականին դիպուկ ու ճշմարիտ մի միտք ունի՝ «Ներողամտութիւնը՝ յաղթանակներից ամենագորեղն է»։ Այն ստիպում է գիտակցուած ապրել, միաժամանակ վստահութիւն ունենալ, որ ներողամիտ գտնուելով այսօր, վաղը կամ մէկ այլ օր դու եւս կարժանանաս նման վերաբերմունքի։

Զպարտուենք չարից, այլ չարին պարտութեան մատնէք բարութեամբ։ Այս դէպքում ահա Տէրը կների մեզ ոչ միայն այս, այլեւ հանդերձեալ կեանքում, քանզի միայն ներողամիտները ներման կարժանանան։



ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ



ԷԻՆՆԵՍ ՍԻԼՎԱՆՈՒՍ ԷՓԼՅԱՆԻ

## ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Սկիզբը՝ ԺԱ.:

Գլուխ Դ.  
ՀԱՅՆԵՐԸ

Կրթություն: Կոստանդնուպոլսի նեմարանը: Առատաձեռն դրամատերը: Կոստանդնուպոլսի մերձակա հայկական հրատարակչատունը: Ակնարկ ունեւորներին: Դպրոց Զմյուտնիայում: Դպրոց Էրզրումում: Դպրոց Թոխաթում: Հայոց հավատամբը: Խոստովանությունը հայոց մեջ: Պատարագ էջմիածնում: Խաչի պաշտամունք: Նրանքի Կույսին նվիրված տոնակատարություններ: Կիրակնօրյա պաշտամունք: Շաբաթվա օրերի պաշտամունքը գլուղերում: Բարեկամական հրաժեշտ եղբայր Հովնաթանին: Հայեր եւ հրեաներ. նմանության կետեր: Դոկտ. Բյուկենենի կարծիքը հայերի մասին: Նրանց անսահման բարեսիրությունը: Հայերն իրական հարգանքով եւ հիշում իրենց հանգուցյալ ընկերներին: Հառաջ. հետեւե՛ք նրանց օրինակին:

*Բնական հարց է առաջանում. նոր ու երկնային օրենքներն ի՞նչպես են սերմանվում Քրիստոսի Եկեղեցի մուտք գործող երեխայի սրտում ու մտքում եւ առավել ամրանում նրա մասնակցությանը սրբազան խորհուրդներին. հարց, որ փոխակերպվելով հետեւյալ տեսքն է ստանում. արդյո՞ք հայկական միջավայրում կրոնական առողջ քարոզչություն իրականացնելու կարիք կա, թե՞ կարելի է այն զանց առնել: Դրական պատասխանի արժանանում է առաջինը: Ամերիկացի քարոզիչները բավարարված չէին հայոց դպրությանը եւ ժամանեցին այն բարելավելու կամ փոխարինելու համար: Անշուշտ, նրանք շողմուծված չեն զբաղվում: Քարոզիչների վկայությանը (եւ սա իրենց մեծագույն արժանիքն է, որ*

խնամքով եւ դժվարություններ կրելով հավաքել են [մանրամասն տեղեկություններ])՝ քաղաքներում, որտեղ հայ ընտանիքները շատ են, հիմնված են բարձրակարգ դպրոցներ, որ լավ աջակցություն են ստանում եւ համալրված են կարող եւ բանիմաց ուսուցիչներով: Իսկ գյուղերում, որտեղ բնակչության թիվը նվազ է, եւ չքավոր վիճակը սահմանափակում է դպրոց հիմնելու կամ դրա գործունեությունն ապահովելու հնարավորությունները, [կրթության պակասը] մասամբ լրանում է ծխական քահանաների ջանքերով. նրանց համար երեխաների ուսումը բարեսիրական գործ է: Նրանց վկայությունները համառոտելով՝ կթողնեմ, որ քարոզիչներն անձամբ խոսեն իրենց դիտարկումների մասին:

«Կոստանդնուպոլսի հայկական վարժարանը, պատրիարքական նստավայրի հետ, նույն փակ տարածքում է: Պարսպված այս մասում են նաեւ երեք եկեղեցիները՝ այնքան մեծ, որ մի քանի հազար մարդ միաժամանակ կտեղավորվի: Նշվածներից բացի, ընդարձակ հարկաբաժիններ կան դպրոցի, ինչպես եւ այլ կարիքների համար: Այս ամենը կառուցվեց հին եկեղեցու ավերումից հետո, երբ ենիչերիները կրակի էին մատնել ողջ տարածքը: [Շինարարության] ծախսը հոգացին կամավոր նվիրատուներով, իսկ [գումարի] կեսից ավելին եկավ Հարություն<sup>1</sup> անունով մի մեծատուն պարոնի գրպանից, որ դրամատան ղեկավար է: Մեզ ընդունեց ճեմարանի տեսուչ Գրիգորը<sup>2</sup>՝ այնպիսի սիրալիրությամբ, որ մեզ հասած բնութագրումներն իր մասին կատարելապես համապատասխանում էին մեր տպավորություններին: Նա աշխարհիկ մարդ է, քաջածանոթ իր ազգի լեզվին ու գրականությանը, հարգանքի արժանի բառարանի եւ հին հայերենի՝ [գրաբարի] քերականության հեղինակ: Նա շրջապատված է տասնհինգ-տասնվեց տարեկան պատանիներով՝ դեմքերը պարզ ու հասարակ, որ բնորոշ է Զմյուռնիայի ու Կոստանդնուպոլսի երիտասարդությանը: Նրանք ուսումնարանի ամենաբարձր բաժնի աշակերտներն էին: Ամենացածր բաժինը նախատեսված էր թույլ երեխաների համար. նրանց անվճար սովորեցնում են գրել եւ կարդալ: Երկրորդում նույն առարկաներն ուսանում են համեմատաբար ուժեղները: Երրորդում ուսանողները, այս պահին նրանք քառասուն-հիսուն

<sup>1</sup> Հարություն Պեզճյան (1771–1834).– ծան. թրգմ.:

<sup>2</sup> Գրիգոր Փեշտմալճյան (1774–1837) բառարանագիր, քերական, փիլիսոփա, մանկավարժ: Աշխատությունները՝ «Քերական լեզուագիտութիւն», «Քերականութիւն Հայկազեան լեզուի», «Կրթութիւն քաղաքավարութեան», «Դիմառնութիւն ի շարչարանս Քրիստոսի փրկչին մերոյ», «Լուսաշաւիղ, որ է բացատրութիւն Նիկիական հանգանակին», «Տրամաբանութիւն կամ Արուեստ բանական», «Բառգիրք Հայկազեան լեզուի».– ծան. թրգմ.:

հոգի են, սերտում են քերականության բաժինները: Ուսումն ամբողջական է համարվում, եթե ըստ կարգի առաջագիմելով հասնում են չորրորդ՝ Գրիգորի [հոգածության ներքո գտնվող] խումբ, որտեղ աշակերտների թիվը նախորդի հետ համեմատած գրեթե նույնն է: Նրանց դեմքերին դրոշմված էր խոհմությունը, եւ իրենց նստելու ձեւից [անգամ] (յուրաքանչյուրն իր բարձին կամ գորգիկին, երկու կամ երեք՝ շրջանաձեւ շարքերով) երեւում էր իրենց կարգապահությունը: Աշակերտների թիվը մոտ երեք հարյուրի է հասնում: Հաստատությունը զգալի եկամուտներ ունի. դրանք տրամադրում է այն նույն անձը, որ առատորեն գումարներ էր նվիրաբերել շենքերի կառուցման համար: Իսկ մնացյալ ծախսերը հոգում է հայ համայնքը: Կան նաեւ դպրոցներ, որ կցված են այլ եկեղեցիների: Ես հիացած եմ աշխարհագրության բնագավառի նրանց գիտելիքներով. երբ մենք հիշատակեցինք Անդովերն իբրեւ այն վայրն, ուր պետք է ուղարկեինք պարսկերեն բառարանը, որ սիրով մեզ էր տրամադրել պատրիարքը, խոսակցությանը ներկա մեկն անմիջապես հղեց հին հայերենով՝ [գրաբարով] շարադրված մի գիրք, եւ ճշգրիտ ներկայացրեց ոչ միայն այս քաղաքի, այլ նաեւ հարակից բնակավայրերի աշխարհագրական դիրքը»:

«Բոսֆորի գյուղերից մեկում»<sup>3</sup> հայկական մի հրատարակչատուն<sup>4</sup> կա, որն այցելեցինք մենք: Մուտք գործելով՝ հանդիպեցինք պատկառելի մի մարդու: Տարիքով, բայց եռանդուն մարդն այս թուղթ էր ծալում: Եւ, ինչպես հետագայում պարզվեց, նա հաստատության տնօրենն էր: Նա մեզ ասաց, որ իր հայրն է հիմնել այդ տպարանը՝ իր լույս աշխարհ գալուց առաջ: Ակնհայտ է, որ հրատարակչատունը պետք է մոտ 100-ամյա վաղեմություն ունենար, որովհետեւ այդ պահին տնօրենն արդեն 84 տարեկան էր: Ինքը, իր չորս որդիներն ու տասնութ թոռները մի ընտանիք են կամ փոքր տոհմ: Նրանք ոչ միայն սեփականատերերն են, այլեւ կատարում են հիմնարկության [ողջ] աշխատանքը: Կառավարությունն այս հաստատության նկատմամբ որեւէ վերահսկողություն չի սահմանել եւ անգամ չի պարտադրում հարկ վճարել: Հրատարակչությունն ունի նաեւ գրաձուլարան, որտեղ հայկական, հունական, հոմեական, եբրայական (ե՛ւ հին, ե՛ւ միջնադարյան), ռաբբիական<sup>5</sup>, ռուսական եւ արաբական տառատեսակներ են ձուլվում: Վերջինս պատրաստում են բացառապես կառավարական տպագրությունները կյանքի կոչելու նպատակով, եւ դրա համար

<sup>3</sup> Օրթագիւղ.- ծան. քրգմ.:

<sup>4</sup> Ակնարկվում է Արապյան ընտանիքի տպարանը.- ծան. քրգմ.:

<sup>5</sup> Խոսքը նիքբուգի մասին է, որ կոչված է դյուրացնելու ընթերցողի գործը.- ծան. քրգմ.:

այս մարդիկ վերջերս ստեղծել են մի նոր տառածե՝ պարսկական ձեռագիր տառատեսակի նմանությունը: [Եւ նրանց աշխատանքն] այնպես է գոհացրել սուլթանին, որ նա, տարեց պարոնի հպարտությունը բավարարելով, ընտանիքին շնորհեց լոկ մահմեդականներին հասու պատիվ՝ դեղին ոտնամաններ կրելու իրավունք: Հրատարակչատանը երեք մեքենա կար. [այդ պահին] հայերեն ու եբրայեցերեն էին տպագրում: Այդտեղ տպագրված գրքերից է նաեւ պարսկերենի բառարանը, որն արդեն հիշատակել ենք: Այն պարսկերեն-հայերեն, թուրքերեն է<sup>6</sup>, հեղինակը<sup>7</sup> ներհուն մի հայորդի է, որ վախճանվել է գրքի տպագրությունից առաջ: Բարերարը, որի առատածեռնության մասին արդեն բազմիցս առիթ եմ ունեցել խոսելու, մի հրատարակչություն պատվիրեց, որի ամբողջ տպաքանակը հանձնեց պատրիարքին՝ վիճակի անդամներին անվճար բաժանելու համար: Յոթհարյուրէջանոց՝ «արքայական ութածալ» [234 × 156 մմ] գիրքը հրատարակվեց յոթ հարյուր օրինակ տպաքանակով: Այժմ ես Հէի կամենա խնդրել մեր դրամատների հարուստ տնօրեններին, որ օրինակ վերցնեն Հարությունի այս վերջին՝ արձանագրված բարեգործական քայլից, որովհետեւ վախենում եմ, որ մեծածավալ եւ ծանրակշիռ բառարանը (սրա հեղինակի անխոնջությունը լոկ մահը կարող էր ընդհատել), ցանկացած երեք լեզուներով՝ հին, կամ [թեկուզ] ժամանակակից, չի կարող ըստ արժանվույն գնահատվել: Մտորում եմ նաեւ յոթ հարյուր օրինակների մասին, որոնց շատ նմուշներ իրենց պարունակած լուրջ եւ պայծառ նյութերով բարի [պտուղների] կպարգեւեն: Բայց խորապես համոզված եմ, որ եթե մեր մեծատունները նվիրատվություններ կատարեին եւ հիմնադրեին դպրոցներ, որտեղ կուսանեին իրենց աղքատ եւ անտեսված հայրենակիցները՝ հմտանալով տնտեսության եւ արդյունաբերության այն ոլորտներում, որոնց իրենք՝ ունեւորները պարտական են իրենց բարեկեցիկ վիճակի համար, ապա բարեգործությունից բխող հոգեւոր բավարարվածությունից բացի կգտնեին նաեւ լավ եւ ապահով ներգրումների [բերրի] ասպարեզ: Քարոզիչները գրում են. «Զմյուռնիայում ուշագրավ է հայկական ճեմարանը, որ գործում է արդեն 30 տարի (նրանք այնտեղ են եղել 1830-ին): Սա տեղի միակ դպրոցն է հայերի համար: Մնացյալ մի քանիսը, ուր միայն քահանաներն են դասավանդում,

<sup>6</sup> Բառարանում «ճոխաբար աւանդին իմաստք բառիցն հայերէն եւ տաճկերէն եւ ուրեք արաբական նշանակութեամբք».- ծան. քրգվ.:

<sup>7</sup> Բառարանը կազմողը Գեւորգ Դպիր Պալատեցին է (Տեր-Հովհաննեսյան) (1737-1811) բառարանագիր, թարգմանիչ, պատմաբան: Աշխատությունների մի մասն անտիպ է.- ծան. քրգվ.:

բավարար կշիռ չունեն, որ արժանի լինեն հիշատակության»: Խեղճ քահանաները սրտամոտ չեն Անկախ Եկեղեցու մեր եղբայրներին:

«Գրեթե հինգ տարի առաջ կանգնեցված շենքը գտնվում է եկեղեցու բակում, եւ այն հայկական ճաշակի ու վայելչության [վառ] նմուշ է: Ասում են, թե հաստատությունն զգալի միջոցներով է օժտված, որ հիմնականում գոյացել են հրիտակներից. այն անվճար դպրոց է, եւ հայագգի ամեն ոք՝ ցանկության դեպքում, կարող է իր զավակներին ուղարկել այնտեղ: Աշակերտները մոտ երկու հարյուր հոգի էին: Նրանք տարբեր հարկաբաժիններ էին զբաղեցնում, պատկանում էին տարիքային այլեւայլ խմբերի եւ, ըստ այդմ, համապատասխան դասարաններում էին ընդգրկված: Հաճելի էր Նոր Կտակարանը նրանց ձեռքերին տեսնելը: Բրիտանական եւ Արտասահմանյան աստվածաշնչային ընկերության անդամ, քերականության ուսուցիչ պարոն Պողոսի առաջարկությամբ Աստվածաշունչն ընդունվել էր իբրեւ դասագիրք այն աշակերտների համար, որոնց ինքը հին հայերեն՝ [գրաբար] էր ուսուցանում»:

Փոքրասիական Թոխաթ վաճառաշահ քաղաքը դառն տպավորություններ է արթնացնում մեր սրտերում՝ իբրեւ մի վայր, ուր, իր հերոսական գործերից ուժասպառ, վերջին շունչն է առել մեծագույն նվիրյալ Հենրի Մարտինը: Քարոզիչները գրառում են. «Սուրբ Սարգիս եկեղեցու տարածքում էր հայկական վարժարանը, որն, ի դեպ, միակն էր քաղաքում: Ուսուցիչն աշխարհիկ էր՝ հոգեմտավոր բարձր կարողությունների տեր մի անձնավորություն: Ներս մտնելով՝ տեսանք, որ նրա աշակերտները սովորական դասի նմանությամբ սովորում էին աղոթք արտասանել՝ հավանաբար պատրաստվելով եկեղեցական ծառայության: Նա մեզ տեղեկացրեց, որ հարյուր վաթսույն աշակերտ ունի, որոնց սովորեցնում է գրել, կարդալ եւ մի փոքր քերականություն: Նրանց հիմնական դասագիրքը Նոր Կտակարանի վենետիկյան հրատարակությունն էր՝ հին հայերենով: Հայերն այստեղ ունեն նաեւ մի քանի փոքր դպրոց»:

Քարոզիչներն ասում են, որ մեծ, սակայն անկում ապրող էրզրումի «հայկական վարժարանը բացառիկ մեծ ու ճոխ էր: Տեսուչն աշխարհական էր, որ ուներ հինգ-վեց օգնական: Սովորողների թիվը հինգից վեց հարյուր էր: Նրանք խմբերի էին բաժանված եւ ուսանում էին ընդհանուր բոլոր ճյուղերը՝ անգամ քերականություն ու տրամաբանություն»:

Բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ իրենց համայնքի անդամներին կրթելու անհրաժեշտությունը հայերի համար լավ

գիտակցված մի գաղափար է, որ [ամենուր] իրականացվում է [ըստ կարելիության բարձր մակարդակով]: Այն, որ կրոնը մոռաք է գործում եւ միավորվում է նրանց էությունը, կարելի է եզրակացնել բերյալ հիշատակություններից, օրինակ՝ նրանից, որ դպրոցը սովորաբար եկեղեցու անմիջական հարեւանությամբ էր լինում, կամ, որ աշակերտներն աղոթքներ են սովորում, եւ վերջապես, որ Նոր Կտակարանի գրքերը մշտական կիրառություն ունեն:

Ամենօրյա պաշտամունքի ընթացքին արտասանվող հայոց Հավատամքը հետեւյալն է. «Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յորդին Աստուծոյ. ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ եւ ո՛չ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր. որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով. որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք: Զարչարեալ, խաչեալ, թաղեալ յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան: Հաւատամք եւ ի սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն. որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս. որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն, եւ բնակեցաւ ի սուրբսն: Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական Սուրբ Եկեղեցի. ի մի մկրտութիւն, յապաշխարհութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց. ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց՝ յարքայութիւնն երկնից, եւ ի կեանսն յաւիտենականս»:

Հայերը որեւէ անպատշաճություն չեն տեսնում գրկանոց հասակի երեխաներին սուրբ հաղորդության արժանացնելու պարագային, եւ այս է պատճառը, որ երբեմն ջերմեռանդ ծնողներն իրենց զավակներին սուրբ բեմին են մոտեցնում այն նույն ոգով, որով Աննան ընծայեց Սամուելին: Սակայն առավել հաճախ ծնողներն սպասում են մինչեւ մանկան գիտակցությունը որոշակիորեն ձեւավորվի, եւ երեխան ոչ միայն հաղորդություն ստանալու իրավունք ունենա, այլ նաեւ հնազանդություն:

Այստեղ արդեն խոստովանությունը դառնում է կարեւորագույն մի նախապատրաստություն: [Քարոզիչներն] ասում են, որ ներկայումս այն կատարվում է միայն հաղորդությունից առաջ: Քարոզիչները հայկական եկեղեցիներից որեւէ մեկում չեն տեսել թեկուզ մեկ խոստովանական խուց: Նրանք խոստովանության կարգին ներկա են եղել երկու անգամ: Մի անգամ «խոստովանահայրը թուրքի պես [ծալապատիկ] նստած էր գետնին, խոստովանողին ստիպում էր ծնկի իջնել իր կողքին, գրկում էր նրա գլուխը, իսկ հետո ձեռքը գլխին դրած՝ լսում էր խոստովանությունը»: «Մյուս անգամ, ասում են, տեսանք, որ [համայնքի] անդամներով շրջապատված խոստովանահայրը [թեք նստել էր]՝ հենվելով ձեռքին, իսկ խոստովանող կինը ծնկել էր իր կողքին: [Մի ձեռքով] քահանան բռնել էր խոստովանողի գլուխը, մյուսը՝ դրել վրան»: Ամերիկացիներն անշուշտ ցնցված էին: Փառքդ շատ, եղբայր Զոնաթան. չարիք նրան, ով չարիք է տածում: Ժողովուրդների սովորույթները միմյանցից տարբերվում են, եւ արտառոց առանձնահատկություններ կան: Մեղքերի անհատական, ինչպես եւ հանրային խոստովանության ձեւերի առնչությամբ ընթերցողին պիտի խնդրեմ դիմել պարոնայք Սմիթին կամ Դուալթին, որ իրենց անհուն դատապարտություններին մի գրառում են կցում, ուր հռոմեական կաթոլիկ իրենց հայրենակիցների համար ճառում են «անմիջաբար խոստովանահոր ականջին հնչեցված մեղադրականների ապականիչ ազդեցության» մասին, ուր, սակայն, ըստ իս, չափից մեծ բան են պնդում, թե՛ «նմանատիպ վարկաբեկիչ վավերագրեր կան յուրաքանչյուր ջերմեռանդ պապականի ձեռքին»: Հնարավոր է՝ ընտիր ազնվությունը, անազնիվ վերաբերմունքի մերձավոր ազգականը, անվանարկության պատճառ դառնա: Հնարավոր է նաեւ տքնող երեւակայությունը վնասելու նյութ հայտնաբերի: Բայց ես դեռեւս որեւէ բողոք չեմ լսել հոգեբույժների՝ [հիվանդներին] ուղղած հարցերի առնչությամբ, որ, սակայն, նույնությամբ չի վերաբերում մարմնական հիվանդությունները դարմանող բժիշկներին: Ամենակարճ եւ սպառիչ պատասխանն այս է. բոլոր նրանք, որ ընդունում են անհատական խոստովանությունը, շարժվում են կարգապահության ծիրով եւ այս նվիրական խորհրդի սրբությունը պահում են մշտապես: Ինչպես նախկինում, նույնպես եւ հիմա խոստովանությունը կատարվում է անկախ մարդու տարիքից ու սեռից, եւ հատկապես նորատիներին պարագային այն առաջին հաղորդություն ստանալու նախապատրաստությունն է: Ինչպես նախկինում, նաեւ այժմ այս են

հրահանգել ընտանիքների ավագները՝ ազնիվ, լուսավոր մարդիկ՝ ազդելով թե՛ արական, թե՛ իգական սեռի ներկայացուցիչների վրա: Եւ արդ, ի նկատ առնելով այն բոլոր զեղծումները, որ մշտապես առկա են մարդկային բոլոր գործերում՝ ես անկարող կլինեի ընկալել Ապաշխարության ատյանի պես մի կառույցի [գոյության] պաշտպանությունը (ինչպես եղել է բազում դարերում եւ բազում երկրներում, որտեղ Եկեղեցին կապանքներում էր, ինչպես եւ այնտեղ, ուր Եկեղեցին ազատ էր), եթե մեծ եւ ծանրակշիռ չլինեին անհատական խոստովանության արժանիքները, կամ եթե իր դրական ազդեցությունը չգերազանցեր բացասականին:

Սուրբ հաղորդություն շնորհվում է բոլորին՝ անկախ սեռից: Քարոզիչները՝ առաջնորդանիստ եկեղեցում՝ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, ներկա են եղել կատարվող մի տոնակատարության: Հաջորդող քաղվածքը բավականին ծավալուն է, բայց այն միանշանակ կհետաքրքրի ընթերցողներից շատերին, իսկ ով ուշադրության չարժանացնի՝ կարող է պարզապես բաց թողնել: Մայր Տաճարը պատկառելի շինություն է՝ «հիմնականում կառուցված հղկված քարով: Խաչաձեւ հատակագծով [խոյացող պատերը] պսակում է գլանային-կոնաձեւ (բյուզանդական) գմբեթը: Զանգակատունը՝ հնամենի աշտարակը, ավարտվում է բրգաձեւ գմբեթով (ուր կախված են զանգերը), որ հենվում է քառակուսի՝ հաստաբետ սյուների վրա, որոնցով արեւմտյան կողմում գտնվող հիմնական մուտքի գավիթն է գոյանում: Ներսում չորս հսկայական մույթերն են, որ կամարաձեւ միահյուսվելով՝ գրկում են [կենտրոնական] գմբեթը եւ բարձր պատերի ուղեկցությամբ պահում են տանիքը: Պատերը ծածկված են սրբերի պատկերներով եւ սուրբգրային պատումների ալլազան դրվագներ ներկայացնող նկարներով: Հատակի կեսից ավելին՝ խորանից մինչեւ գավիթ, բազրիքով առանձնացված է հոգեւոր դասի կարիքների համար եւ ծածկված է գորգերով, որոնցից շատերը բնորոշելի են ճոխ եւ պերճաշուք եզրերով: Գլխավոր խորանը բեմի վրա է՝ [կառույցի] արեւելյան հատվածում գտնվող բարձրագիւր խորանում: Այն հագեցած է մեծադիր ոսկյա խաչերով, արծաթե մոմակալներով եւ այլ՝ ոչ պակաս արժեքավոր զարդերով: [Գլխավոր խորանի] երկու կողմերում փոքր խորաններ են, որոնցից մեկն այս առավոտյան ծառայում էր իբրեւ խորհրդանոց: Կողային պատերից յուրաքանչյուրի կենտրոնում նույնպես խորան է, եւս մեկը՝ ավելի փոքր, մեկուսի դիրք է գրավում. [այն] հենց Տաճարի կենտրոնում է՝ անմիջապես գմբեթի ներքո: Վերջինս եզերված է ոսկեզօծ գործվածքի

վարագույրներով եւ իր հանդերձանքով ու պատվական զարդերով գերգերազանցում է շինության մյուս հատվածները: Սա հավանաբար հաստատված է այն քարի վրա, որի վերաբերյալ Շարդենը<sup>8</sup> հայկական մի ավանդույթուն է պատմում, թե Գրիգոր Լուսավորչին երեւալով՝ Քրիստոս հարվածեց եւ անդունդը նետեց Հայաստանի հեթանոսական տաճարներում բնակվող ոգիները: Միով բանիվ՝ այս առավոտյան իմ տեսած մոմակալների, խաչերի, վարագույրների, գորգերի ու հանդերձանքի ճոխությունն ու պերճությունը, ըստ իս անգերազանցելի է նույնիսկ Մալթայի Սբ. Հովհաննես եկեղեցում՝ տաղավար տոներին մատուցվող պատարագների պարագային: Ծեսի առաջին եւ կարեւոր մասն էր պատարագող եպիսկոպոսի զգեստավորումը, երբ հանդերձանքի անխտիր բոլոր տարրերի համար առանձին աղոթք կամ աղերս է վերառաքվում: Բայց սա մասնավոր՝ ավանդատանը կատարվող արարողություն էր, եւ մենք ներկա էինք միայն աղոթքին, որ միաժամանակ հնչում էր նաեւ եկեղեցում: Այնուհետեւ պատարագիչ եպիսկոպոսը դուրս եկավ պերճաշուք՝ վար սահող, ոսկեզօծ զգեստով. օձիքը՝ լայն, ուղղաձիգ ու ոսկեհուռ: Նույն ազնիվ նյութերից էր նաեւ խուլը՝ զարդարուն թե՛ առջեւից, թե՛ ետեւից, ուր ոսկով ազուցված ադամանդներով արեւներ էին պատկերված: Առաջին հերթին նա լվաց ձեռքերը, արտասանեց մեղքերի խոստովանության համառոտ բանաձեւը, որոնց թողության խոսքը հնչեցրեց մեկ այլ հոգեւորական: Այնուհետեւ նա կրկին հեռացավ՝ Պատարագի հացն ու գինին նախապատրաստելու: Ի տարբերություն Լատին Եկեղեցու՝ անապակ գինին՝ առանց ջրի հետ խառնելու լցվում է սկիհի մեջ, եւ հակառակ հունական ավանդույթի՝ բաղարջ, բարակ հացը՝ [նշխարը], (որին դրոշմված են սրբազան տարբեր խորհրդանիշներ կամ տառեր) դրվում է արծաթե սկուտեղի վրա, որ տեղավորվում է սկիհի շուրթերին: Ծեսի ամեն հատված ունի իր հատկական աղոթքը, որ ուղեկցվում է խնկարկուծյամբ, սակայն վերեւից սահող վարագույրն սքողում էր ամեն ինչ մեր հայացքից: [Արարողությունը] բավականին երկար տեւեց, [եւ պետք է նշել], որ մեծ թվով քահանաներ եւ սարկավագներ էին մասնակցում: Վերջապես, ընծաները՝ գինին ու հացը, թողնելով՝ եպիսկոպոսը՝ մեծաշուք թափորով, խնկարկուծյամբ առաջ եկավ եւ համայնքի անդամների միջով շրջելով, ընթացավ դեպի գլխավոր խորանը: Մի շարք աղոթքներից հետո

<sup>8</sup> Ժան Շարդեն (1643–1713). Ֆրանսիացի ճանապարհորդ. իր աշխատանքից մի հատված տե՛ս «Էջմիածին», 2008, Բ., էջ 110.– ծան. քրգվ.:

սարկավազը կարդաց օրվա ավետարանական ընթերցվածը եւ [արտասանեց] Նիկիական հանգանակը, իսկ հետո՝ [սուրբ սեղանի] բոլոր սպասավորների ուղեկցությամբ գնաց սկիհը բերելու: Այն բերեցին քողածածկ՝ թափորի ուղեկցությամբ: Եպիսկոպոսը, որի խույրը այդ պահին հանեց սպասավորներից մեկը, վերցրեց սկիհն ու աղոթեց՝ ասելով. «Դ՞նՏէր, Որում պատարագեմք զպատարագիսս ընկալ առ ի մէջ զառաջադրութիւնս զայս, եւ աւարտեա՛ զսա ի խորհրդականութիւն մարմնոյ եւ արեան Միածնի Քո, դեղ թողութեան մեղաց պարգեւեա՛ ճաշակողացս զհացս զայս եւ զբաժակս»<sup>9</sup>:

Ի նշան Քրիստոսի հայտնության՝ հավաքվածներին հորդորեցին ողջունել ու համբուրել միմյանց: Սարկավազը, ավետիսն ընդունելով եպիսկոպոսից, գնաց եւ փոխանցեց կաթողիկոսին, իսկ նա [բարի լուրը] փոխանցեց ողջ ժողովյալ բազմությանը: [Եւ դա կատարվում է այսպես]. յուրաքանչյուր ոք աջ եւ աջակ կողմերից գգվում էր իր կողքին կանգնածի ուսերին՝ ծիսականորեն համբուրելով եւ փոխանցելով ավետիսը: Պատարագը շարունակվեց: Այն մատուցելով՝ եպիսկոպոսը խաչակնքելով օրհնեց հացը, հայացքը վեր հանելով գոհության վերառաքեց, բեկանեց նշխարը՝ մասերի բաժանելով, իսկ հետո կրկնելով այս խոսքերը՝ «Առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմին Իմ», միառժամանակ այն պարզեց իր գլխավերելում, որ հավաքվածները երկրպագեն: Հարեւնման կատարվեց գինու օրհնության կարգը. պատարագիչը կանգնած էր դեմքով դեպի սեղանը՝ թիկունքը հավատացյալների կողմը եւ սկիհը վեր բարձրացնելուց բացի, որեւէ բառ չարտասանեց կամ շարժում չարեց: Իսկ երբ սրբազործումից հետո սկիհն ի ցույց վեր բարձրացվեց, գրեթե բոլոր ներկաները միահամուռ վերառաքեցին պաշտամունքի ամենախորունկ աղոթքը»: Կարելի է կարծել, որ «գրեթե»-ով արտահայտված բացառությունը մեր արգո քարոզիչներն են եղել: «Ոմանք ճակատները հատակին էին հենել, ոմանք ծնկի էին եկել, ձեռքերը կարկառել եւ աչքերն աղերսալի հայացքով սկիհին էին հանել, իսկ երեսներին մեծագույն պաղատանք էր դրոշմված: Սրբազործմանը հաջորդեց հետեւյալ աղոթքը. «Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի: Սրբոյ Եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց,

<sup>9</sup> Սա մի գրվագ է Աթանասի աղոթքից, որ ամբողջությամբ կարող եք տեսնել՝ Neale's "History of the Holy Eastern Church"-ի առաջին հատորի 444-րդ էջում:

կապելոց, վտանգելոց, աշխատելոց, եւ որք ի պատերազմունս բարբարոսաց: Սովաւ եւ օգոց շնորհեա՛ զբարեխառնութիւն, եւ անդոց՝ զպտղաբերութիւն, եւ ախտացելոց ի պէսպէս ցաւս՝ փութապէս զառողջութիւն: Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն ի Քրիստոս զննջեցեալսն [զնախահարս, զհայրապետս, զմարգարէս, զառաքեալս, զվկայեալս], զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւազունս, եւ զբնաւ ուխտ Եկեղեցւոյ Քոյ սրբոյ: Եւ զամենեսեան որք յաշխարհական կարգէ զարս եւ զկանայս հաւատով վախճանեալս» եւ այլն<sup>10</sup>: Այնուհետեւ եպիսկոպոսը հացն ընկղմեց գինու մեջ եւ պահելով այն երկու ձեռքերի բթամատերով ու ցուցամատերով՝ սկիհը բռնեց ամբերով եւ դեպի բազմութիւնը շրջվելով՝ արտասանեց. «Ի սուրբ, ի սուրբ, պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում: Սա՛ է Կեանք, Յոյս, Յարութիւն, Քաւութիւն, եւ Թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերոյ: Սաղմոս ասացէ՛ք երկնաւոր Թագաւորիս մերում անմահի, որ նստի ի կառս քերովբէականս»: Շրջվելով նա սկիհը զետեղեց սուրբ սեղանին, եւ այդ պահին շքեղ ու մեծ վարագույրը մեր հայացքներից ծածկեց ամբողջ խորանը՝ բացառութեամբ սեղանի առջեւ՝ կիսաշրջանաձեւ շարված երգող սարկավագների: Սակայն կանոնի համաձայն՝ նա պետք է նախ հացը բեկաներ չորս մասի եւ արտասովալից համբուրեր այն՝ զանազան աղոթքներ ու աղերսներ վերառաքելով՝ հացն ու գինին երկյուղածութեամբ ճաշակելու մասին. «Հաւատով ճաշակեմ զսուրբ եւ զկենդանարար եւ զփրկագործ մարմինս Քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս՝ ի թողութիւն մեղաց իմոց... Հաւատով ըմպեմ զսրբարար եւ զմաքրիչ արիւնս Քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս՝ ի թողութիւն մեղաց իմոց... Մարմին Քո անապական լիցի ինձ ի կեանս, եւ սուրբ արիւն Քո՝ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»: Վարագույրը քաշելիս սարկավագը ձայնեց. «Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք»: Երբ եպիսկոպոսը՝ սկիհը բարձրացրած շրջվեց, ի տեղի բազմութեան դպիրները ձայնեցին. «Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»<sup>11</sup>: Հաղորդվողները շարվեցին խորանի առաջ, ու եպիսկոպոսը գինու մեջ թաթախված հացից մեկական կտոր դրեց նրանցից յուրաքանչյուրի բերանում»:

<sup>10</sup> Հմմտ. Neale's History, հտ. II., էջ 590:

<sup>11</sup> The missionaries state, that in their way home "notes were very faithfully compared with Bishop Dionysius, one of the best-informed ecclesiastics of the Armenian nation, now (or then) attached to the Armenian mission press at Malta". The liturgical extracts rest on his authority.

Հայերը պաշտում են նկարված պատկերները, սակայն պաշտամունքային քանդակներ չունեն, բացառությամբ խաչի, որին մեծ երկյուղածությամբ են վերաբերվում՝ համարելով, որ դատաստանի ժամանակ՝ իբրեւ Մարդու Որդու նշան, այն կհայտնվի երկնքում արեւելքից՝ լուսավորելով նաեւ արեւմուտքը: «Եռափափաք քրիստոսագարդ է այս նշան,-ասում է հայ հռչակավոր բանաստեղծը<sup>12</sup>, - Աստուածասէրք, յերկիր մածիք իւր յանդիման... Քանզի ոչ նայիմք ի սոսկ փայտ եղական, Այլ որ ի սա է Բանն անեղ մեզ յանդիման... Տէրն իմ Յիսուս աստ կայ բազմեալ մեզ յանդիման... Քանզի ուր խաչ, անդ եւ Խաչեալն է յանդիման...»<sup>13</sup>: [Իրենց վարդապետները] հայերին ուսուցանում են, թե խաչակնքելը նշանն է քրիստոնյայի. ինչպես, ասենք, հովիվն է ճանաչում իր գառներին դրանց նշաններով, նմանապես եւ Քրիստոս իր հոտի անդամներին ճանաչում է նրանց խաչակնքմամբ: Աղոթքի ժամանակ հայերն ամեն անգամ խոնարհվելիս ու բարձրանալիս խաչակնքում են: Խաչակնքում են նաեւ շատ այլ դեպքերում. օրինակ՝ կարելոր գործ ձեռնարկելիս, քնելուց առաջ, արթնանալիս, զգեստավորվելիս, լվացվելիս, ուտելուց առաջ, երեկոյան դուրս գալիս կամ որեւէ վտանգավոր տեղ գնալիս: Այդու, նրանք ակնկալում են, որ խաչակնքումն իրենց աղոթքներն ընդունելի կանի, իսկ ձեռնարկվող աշխատանքը՝ դյուրին, [սուրբ նշանը] կպաշտպանի չար ոգիների որոգայթներից եւ ուժ կտա մեղքի դեմ պայքարելու:

Հայերը հայցում են սրբերի բարեխոսությունը, հատկապես՝ երանելի սուրբ Կույսի, որին նրանք համարում են առաջինն արարածների մեջ, մեծագույն բարեխոս եւ պաշտպան: Ի հավելումն նրա պատվին կատարվող [համաքրիստոնեական] տոների՝ նրանք նաեւ նշում են Աստվածածնի վերափոխման տոներ:

Հայերը միշտ ճշգրտորեն հետեւել են պահոց օրերին, որ եւ առավել խստապահանջությամբ են պահում [տարվա կտրվածքով] հարյուր հիսունվեց օրերը: «Ո՛հ,- կարող եք ասել,- նրանք տեղը հանում են խնջույքներին»: Հնարավոր է: Զորօրինակ վերցրեք համայն հայությանը. նրանք հանդարտ եւ հավասարակշիռ մարդիկ են եւ, հուսանք, կմնան այդպիսին անգամ Նոր Անգլիայի ռոմի հարուցած գալթակղությունների պարագային:

Կիրակին՝ օրն Աստծու, սովորաբար պահվում է հավուր պատշաճի. դադարեցվում են բոլոր աշխատանքները, փակվում են խանութները:

<sup>12</sup> † Nerses; elected Catholicos 1166.

<sup>13</sup> Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 233 եւ հշ.- ծան. քրգվ.:

Մեր ամերիկացի ընկերները, հավանաբար սեփական փորձից ելնելով, ասում են, թե [այդ օրերին] հայ առևտրականները չեն խորշում մասնավոր կերպով որոշ ապրանքներ վաճառելուց: Չեմ կամենում պաշտպանել, արդարացնել կամ անհարկի ուռճացնել կիրականօրյա առևտրի հանգամանքը, սակայն անկողմնակալ ընթերցողը, ի մտի առնելով այն երկրները, ուր մահմեդականությունն է հռչակված պետական կրոն, կնկատի, որ քրիստոնյաների ազատ օրը սովորաբար տոնավաճառային օր է այդ երկրներում: Եւ երբ պատկերացնում ենք, թե քրիստոնյաներն ինչ դիրք են գրավում մահմեդական նվաճողների զավթած տարածքներում, հասկանալի պիտի լինի, որ եթե հզորի կամքն այդպիսին է, ուրեմն առևտուրը կիրակի օրերին պիտի լինի: Նույն տրամաբանությունն է նաեւ կիրականօրյա ճամփորդության պարագային, որի առնչությամբ հայերն առանձնակի տեսակետ չունեն:

Կիրակի օրերին Հայ Եկեղեցում երեք պաշտոն է մատուցանվում, որոնց ներկա են լինում տարբեր խմբեր: Բոլորն այցելում են այս կամ այն արարողությունը. բացառությամբ՝ տկարների, փոքրերի ու տարեցների: Մեզ ասում են, թե՝ «Օրվա մնացյալ մասը նրանք անց են կացնում հյուրընկալությամբ եւ խրախճանքներով»: Այլ կերպ ասած՝ օրն անցնում է ընկերասիրության եւ հյուրասիրության միջավայրում՝ «...այդու գործելով ավելի շատ մեղքեր, քան կարող էին գործել աշխատելու պարագային»: Եթե մեղքն այս տգիտության արգասիք չլիներ, ես թերեւս կխոսեի անմեղ զվարճանքի մասին՝ իբրեւ ավելի մեծ մեղքի:

Հայերն ունեն ինը ժամերգություն՝ գիշերային, առավոտյան, արեւագալի, ճաշու՝ երրորդ, վեցերորդ, իններորդ, երեկոյան, խաղաղական, հանգստյան: Բացառությամբ վանական պաշտամունքների՝ մնացյալ վայրերում ինը նվազեցված է երկուսի՝ առավոտյան եւ երեկոյան, որ մատուցում են տարին բոլոր: Մեծ պահքին շարքը համալրում է նաեւ երրորդը՝ ժամը 11-ին: Ավանդույթը չի վերաբերում լոկ աթոռանիստ բնակավայրերին կամ մեծ քաղաքներին, այլ տարածվում է նաեւ հեռավոր ու փոքրիկ գյուղերի վրա:

«Բենկլի Ահմեդը»<sup>14</sup> հասարակ՝ հիսուն կամ վաթսուն հայկական եւ յոթ-ութ հունական տուն ունեցող մի գյուղ է: Առաջիններն ունեն չորս

<sup>14</sup> Հայկ. անունը՝ Որմիզդ. գյուղ Կարսի մարզում: Տեղանունների բառարանի վկայությամբ՝ «Գյուղի եկեղեցին, որ փայտածածկ էր, կառուցվել էր 1866 թ. եւ կոչվում էր Աստվածածին». տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», Թ. ՀԱՅՈՐՅԱՆ ԵՒ

քահանա եւ մեկ եկեղեցի: Երբ գնացինք եկեղեցի՝ երեկոյան ժամերգության, տեսանք, որ այնտեղի անշուք եւ աղքատիկ տների նմանությամբ եկեղեցին եւս գետնափոր էր: Առաջին անգամ ստորգետնյա ծիսակատարության մասնակցելով՝ ես նոր [եւ աննկարագրելի] զգացումներ ունեցաւ: Այս պարզ իրողությունն ինձ ստիպեց մտքերս ուղղել այն ժամանակներին, երբ հալածանքների ու հետապնդման արդյունքում քրիստոնյաներն ապաստանում էին ծերայերում ու քարայրներում: Հավաքատեղիի թշվառ վիճակն ու հավաքվածների ցնցոտիներն ինձ ստիպեցին, որ զգամ. ես հետապնդողների շարքում եմ: Հետապնդում, որ չնայած համեմատաբար մեղմ է, սակայն վերջնական նպատակը նույնն է, [ինչ քրիստոնեւթյան արշալույսին էր]:

Ցավոք, ծեսը հեռու էր երբեմնի պարզութունից, սակայն «քրիստոնյա» կոչմանը կառչած մնալու հանգամանքը, որ պահել ու պահպանել էր նրանց, անկարելի է, որ պատկառանք չառաջացներ: Եւ ինքս ինձ հարցնում էի՝ արդյո՞ք մեր երկիրը կդիմանա փորձությանը, որին դիմակայել է այս ժողովուրդը: Նրանց չափ կդիմանա՞ Մեքսայի մարգարեի պատրանքին: Արդյո՞ք երբեւէ արաբ կամ թաթար հորդանները կհաջողեն ավեր եւ ավար սփռել Նոր Աշխարհի դեմքին: Առնվազն պահպանվել է Քրիստոսի անունը, եւ դա ամենեւին քիչ չէ. այն դյուրում է մեզ՝ բոլորիս, այն մի նշանաբան է, որին կարձագանքենք ամենքս»: Ի սրտե արձագանքելով այս ճշմարտացի ու արդար խոսքերին, իմ սիրելի եղբայրներ, եղբայրներ լեզվի եւ արյան, որովհետեւ Հին Անգլիան խոսում է ձեր շուրթերով եւ հոսում է ձեր երակներում: Դուք [ասես] իմ պատկառելի ռահիբրան ու հոգատար ուսուցիչն էիք, եւ ես գոհունակությամբ շրջեցի ձեզ հետ Արեւելքում, իսկ այժմ երախտագիտությամբ հրաժեշտ եմ տալիս ձեզ: Երբ հանրապետական հպարտությունը սպրդում է այսուայնտեղ, երբ ոչ ոք չի կարող ձեզ լիովին արդարացնել՝ մարդկանց եւ իրողությունը նկարագրելիս ցուցաբերած կրոնական կանխակալության, չեմ ասում նախապաշարվածության հարցում: Ես սկսեցի առավել հիանալ ձեր համբերատար աշխատանքով՝ հանդարտ դատողություններով, ճշմարտության ձգտմամբ, որի շնորհիվ հաղթահարեցիք ցանկացած արգելք ու խոչընդոտ: Նույն նախահայրերից սերող մեծ եւ ձեռնահաս շառավիղները, որ պանծացրին բրիտանական հուշակն ու փառքը, թո՛ղ լինեն ասպարեզն ու

ՈՒՐԻՇՆԵՐ, հտ. 1, Երեւան, 1986, էջ 648: Անգլ. աղբյուրները, փաստորեն, վկայում են, որ գյուղում եղել է շատ հին՝ գետնափոր եկեղեցի.՝ ծան. թղթմ.:

դատավարը մեր խաղաղ մրցակցության, թո՛ղ [ներանցից] յուրաքանչյուրը փաստի, թե ով առավել դրվատեց զորությունը Փրկչի, ո՛վ առավել փառավորեց Նրա Ավետարանը:

Հայոց պատմությանն անգամ հարեւանցի ծանոթացող ամեն ոք կցնցվի հայերի ու հրեաների միջեւ առկա նմանություններից: Ընդհանուր առմամբ, նրանք իրենց ազգային միասնությունը պահպանել են կրոնական վարդապետությանը զուգահեռ: Երկուսի մասին էլ կարելի է ասել, որ սփռված են [աշխարհով մեկ], երկուսին էլ ձգում է առեւտրական գործունեությունը, եւ իրար նմանությամբ ներգրավված են թանկարժեք մետաղների [մշակման եւ վաճառքի] բնագավառում: Ի սերանձնական [բարեկեցության], առեւտրային շահի հետապնդումը բացասական ազդեցություն է գործում քրիստոնեական սկզբունքների զարգացման վրա: Բայց հայ վաճառականներն ամեն դեպքում բացառություն են այս կանոնից: Դիտարկման մեծ կարողություններով օժտված դոկտոր Բյուկենեն<sup>15</sup> իր «Christian Researches [in Asia]» աշխատության մեջ ասում է. «Հայերի կարելի է հանդիպել Ասիայի գրեթե բոլոր մեծ քաղաքներում: Նրանք Արեւելքի գլխավոր առեւտրականներն են, որ Կանտոնից<sup>16</sup> դեպի Կոստանդնուպոլիս մշտական շարժման մեջ են: Նրանց բնորոշ գծերն են՝ ունեւոր, աշխատասեր, գործունյա ու ձեռներեց: Նրանք հաստատվել են Հնդկաստանի կենսական բոլոր կենտրոններում, ուր իրենք ժամանել են անգլիացիներից շատ դարեր առաջ: Եւ ամեն վայրում, որտեղ հաստատվում են նրանք, կառուցում են եկեղեցիներ եւ բժախնդրոթեւն ու հավուր պատշաճի պահում են քրիստոնեական կարգը: Նրանց եկեղեցական հաստատությունը Հնդկաստանում առավել հարգված է (տողերը գրված են 1809-ին, եւ, հուսով եմ, 1949-ին կարող ենք ասել՝ հարգված էր), քան անգլիացիներինը... Նրանք ամենայն անաղարտությամբ են պահել Աստվածաշունչը, եւ նրանց վարդապետությունը, որքանով որ հեղինակին հայտնի է, հենց Աստվածաշնչի վարդապետությունն է: Մեր կայսրության ողջ տարածքով հայերը պահում են յոթներորդ օրն Աստծուն պաշտոն մատուցանելու քրիստոնեական ավանդույթը: Նրանք երկինք խոյացող նույնքան զանգակատուն ունեն Հնդկաց երկրում, որքան մենք»:

Քրիստոնեական բարեսիրության հուրն անշեջ է նրանց սրտերում՝ շարունակական եւ արդյունաշատ բարեգործության շնորհիվ: «Սփռեաց եւ

<sup>15</sup> Կլաուդիոս Բյուկենեն (1766–1815) շոտլանդացի աստուածաբան, քարոզիչ՝ ծան. քրզմ.:

<sup>16</sup> Գուանչժոու, Չինաստան.՝ ծան. քրզմ.:

ետ աղքատաց. արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից» [Սաղմ. ՃԺԱ. 9],<sup>17</sup>– այս խոսքերը կարելի է դրոշմել գրեթե յուրաքանչյուր հայ մեծահարուստի շիրիմին: Սարգիս Հովհաննես<sup>17</sup> անվամբ մի կալկաթացի հայ մեծատուն, 1789-ին տեղեկանալով [Միացյալ թագավորության] արքայի կազդուրման մասին, փրկագնում է բոլոր կալանավորներին, որ պարտքերը չվճարելու պատճառով Կալկաթայի բանտում էին հայտնվել: Ի նշան երախտագիտության՝ Գեորգ Գ. արքան բարերարին է շնորհում [մի թանկարժեք թուր եւ]<sup>18</sup> իր արքայական պատկերով մի ապիզակ, որը Սարգիսը պատվով կրեց մինչեւ մահվան օրը՝ ժառանգելով իր ընտանիքին:

Պատահական դիտորդին կթվա, թե [բարեգործությանը] օրհնության արժանանալով՝ ամենակարող Աստծուն երախտագիտություն վերառաքելու գաղափարը սերմանվում է [հայ] հասարակ գործարարի մտքում ու սրտում, թափանցում նրա աշխատանքային առօրյա: Գաղափար, որ պետք է շնորհակալ լինել ամեն բարեգործության համար՝ որեւէ գույք ձեռք բերելիս կամ արկածից բարեհաջող դուրս գալիս:

Հայոց պահեցողությունը խիստ է, տոնակատարությունը՝ ճոխ. եւ որպէս օրեն է՝ կհրավիրեն ոչ միայն ունեւոր՝ ընկեր, բարեկամ, հարեւաններին, այլ եւ հաճույքով ու սիրալիր կընդունեն տնանկներին ու սնանկներին: [Հավաքույթների] պատեհավոր առիթները սովորաբար մեծ, կամ Տերունական տոներն են լինում: Սակայն հատկապէս առատ ու ճոխ հյուրասիրություն է լինում հեռացածներին հիշատակելիս: Համարվում է, որ նման բարեսիրությունը ներում է շնորհում թե՛ ողջերին, թե՛ հանգուցյալներին՝ դատաստանից առաջ հաճելին մատուցելով հեռացած հոգիներին եւ նպաստելով, որ այդ օրն արդարները հառնեն [գահի] աջ կողմում եւ լսեն բերկրալի կանչը: Այն պատկերացումը կարող է սխալ լինել, դիտարկվել իբրեւ սնահավատություն եւ թյուրըմբռնման պատճառ հանդիսանալ, սակայն վստահաբար կարող ենք ասել, որ անոթիների կերակրումը, ցնցոտիավորի զգեստավորումը, պապակին ջրով հագեցնելը եւ, ամենակարեւորը, Քրիստոսի հոտի կարիքավորներին ու կրտսերներին հանապազօրյա հաց հասցնելը, անհամեմատ ավելի արդար ու ակնածանքի արժանի գործ է, հարգանքի տուրք [համամարդկային] արժեքներին, որ, [ցավոք], մենք կորցրել ենք: Այն ավելի ընդունելի է, քան օրվա ճոխ ու թատերականացված ծեսը, պերճաշուք ու թանկագին

<sup>17</sup> Իրականում՝ Աղա Խաչիկ Առաքել. տես Mesroby Jacob Seth, Armenians in India, from the Earliest Times to the Present Day, New Delhi, 2005, էջ 550.– ծան. քրգվ.:

<sup>18</sup> Հավելումն ըստ վերոբերյալ աղբյուրի.– ծան. քրգվ.:

պաճուճանքը, որ, ասես իբրեւ ծաղր, կհասցնի վերջին հանգրվանին նրան, որ «հող էր» ու շատ շուտով նորից «հող է դառնալու»:

Չեմ կամենում սեւեռվել անուշադրության եւ անտարբերության մատնված ժամանակների վրա, շրջափուլ, որ արդեն անցել է, շրջափուլ, երբ այժմ բարգավաճողներից շատերը դեռ իրենց ձեռքը ոտքից չէին տարբերում: Չեմ ցանկանում հիշել, որ մեր մայրաքաղաքը պսակող հոյակերտ տաճարի (այն կառուցվել է խաղաղության Աստծու տանը պատերազմների հաղթանակները տոնելու համար)՝ հեռավոր, մեկուսի ու մոռացված մի անկյունում մեծ շիրմաքար կա՝ «Ի հիշատակ Հնդկաստանի առաջին բողոքական եպիսկոպոսի» մակագրությամբ, որ առավելազույնը ԺԹ. դարասկզբի երկրորդ տասնամյակով թվագրվի: Կամենում եմ լուր, որ այս թույլ, անզոր խոսքերը երբեւէ հասնեն մեր կայսրության մեծատունների ականջին. կայսրություն, որի անծայրածիր սահմաններին երբեք մայր չի մտնում արեւը: Այս է միակ ցանկությունս, որ մեր հզոր կայսրության ժառանգներն օրինակ վերցնեն հայերից՝ հայրենիքից զրկված ժողովրդի զավակներից, մարդկանցից, որոնց ազատությունը ոտնահարվում է ամեն քայլափոխի, մարդկանցից, որոնց կրոնն ու հավատքը հետապնդվում է ամենուր: Ինչպես նրանք արել են նախկինում եւ շարունակում են անել այսօր, նվիրաբերեք ձեր գանձերը՝ դրանց մի մասը կուտակելով այնտեղ, «ուր ո՛չ ցեց եւ ո՛չ ուտիճ ապականեն, եւ ո՛չ գողք ական հատանեն եւ գողանան» [Մատթ. Զ. 19]: Կրթեցե՛ք անուսներին, լուսավորեցե՛ք խավարյալներին, հոգացե՛ք կարոտյալների ու նեղյալների կարիքները, հագեցրե՛ք քաղցն ու ծարավը. քաղց եւ ծարավ... ոչ թե հացի ու ջրի, այլ Աստծու խոսքն ունկնդրելու: Հիմնե՛ք դպրոցներ, կառուցե՛ք եկեղեցիներ, որպեսզի նրանք, որ ուսանում են, կամ նրանք, որ երկրպագում են, երախտագիտությամբ հիշեն առատաձեռն բարերարներին: Արե՛ք այս ամենը հայերի պես եւ հայերի նմանությամբ...

Թարգմանությունը՝  
Արշակ Բ. Մադոյան  
Արշակ Գ. Մադոյան



ԱՐՓԻՆԷ ԶԱՆԹԻԿԵԱՆ  
«Էջմիածին» ամսագրի խմբագրություն

## ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ-ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՅՈՂՈՒԹՆԵՐԸ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

«...Հայոց ազգը եղաւ առաջինը, որ Քրիստոսի աստուածութիւնը  
նանաչեց եւ Նորա սուրբ Աւետարանի փրկարար վարդապետութիւնը գրկեց,  
որով արդարեւ քրիստոսական երանութիւնն եւս առաւ...»  
«Արարատ», 1868, Ե. (թիւ 1), էջ 4-5:

2018 թուականին լրացաւ «Արարատ» ամսագրի 150-ամեակը. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտօնական ամսագիրը հրատարակուել է գրեթէ կէս դար (1868–1919 թթ.) եւ անգնահատելի աւանդ է ունեցել հայագիտութեան զարգացման գործում՝ իր ուրոյն տեղը զբաղեցնելով Հայ Եկեղեցու մատենագրութեան ու պատմութեան մէջ: «Արարատ»-ի արժանի ժառանգորդը, աւանդութեան պահպանողն ու շարունակողն այսօր «Էջմիածին» ամսագիրն է:

«Արարատ» ամսագիրը տպագրուել է 1868 թ. մայիսի 1-ին՝ Գէորգ Դ. Կոստանդնուպօլսեցի հայրապետի (1866–1882 թթ.) անմիջական նախաձեռնութեամբ: Ամսագրի առաջին հրատարակութեան առաջաբանում նշուած է, որ այն տպագրուել է որպէս «Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական եւ բարոյական գիտելեաց», իբրեւ «աշխատասիրութիւն միաբանից Սուրբ Էջմիածնի»<sup>1</sup>: Արդէն 1898 թուականից «Արարատ» ամսագրի տիտղոսաթերթին գրուել է «Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Սուրբ Էջմիածնի»:

Ըստ առաջաբանի՝ ամսագիրն ունենալու էր չորս հիմնական բաժին՝ «Կրօնական, Պատմական, Բանասիրական եւ Բարոյական»: Բնական է, որ Մայր Աթոռի պաշտօնական ամսագրի առաջին բաժինը Կրօնականը պէտք է լինէր եւ «Արարատ»-ի խմբագրակազմում ընդգրկուած միաբաններն առանձնակի ուշադրութիւն պէտք է դարձնէին այս բաժնում զետեղուող նիւթերին<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Արարատ» ամսագրի 1868 թուականի Ե. (թիւ 1) համարի առաջաբանն ու տիտղոսաթերթը:

<sup>2</sup> Նշենք, որ սկզբնական շրջանում ամսագիրը խմբագրել է միաբաններից կազմուած խորհուրդը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նշանակած խմբագրի ղեկավարութեամբ: Այս առումով

Յստակ նշուել է, որ «Կրօնականին մէջ պիտի դրուին եկեղեցական կարգաց եւ արարողութեանց վրայ տեղեկութիւններ, կաթողիկոսաց գործեր, սուրբ հարց գրութեան, ազգային մատենագրաց կենսագրութիւններ եւ ձեռագիր մատենից ծանօթութիւններ»<sup>3</sup>:

Յիշենք նաեւ, որ հայ եկեղեցական մատենագրութիւնն սկզբնաւորուել է հայոց գրերի գիւտից յետոյ, այսինքն՝ Ե. դարում՝ հայ թարգմանական եւ ազգային աշխարհիկ մատենագրութեանը զուգընթաց<sup>4</sup>: Հայ եկեղեցական ու դաւանաբանական մատենագրութիւնը ոչ միայն մաքառման եւ պայքարի գրականութիւն է՝ ի պաշտպանութիւն Հայ Եկեղեցու ուղղափառութեան, այլ նաեւ՝ հայ ազգային ինքնութեան պահպանման հզօր կռուան<sup>5</sup>: Համաձայն պատմական սկզբնաղբիւրներին՝ Ե. դարը մեր ժողովրդի ու Եկեղեցու համար կրօնական, գաղափարական, ապա նաեւ դաւանաբանական հակամարտութիւնների եւ պայքարի ժամանակաշրջան էր: Այս պայքարը շարունակուել է նաեւ յաջորդ դարերում, երբ Հայ Եկեղեցու հայրերը, նշանաւոր վարդապետները հիմնաւոր կերպով պաշտպանել եւ ամրագրել են մեր առաքելահաստատ Եկեղեցու վարդապետական ուղղափառութիւնն ու ինքնուրոյն դաւանաբանութիւնը: Ուստի, ժամանակի ընթացքում դաւանաբանական գրականութիւնը դարձել է հայ եկեղեցական մատենագրութեան ամենահարուստ եւ արժէքաւոր ճիւղերից մէկը: Հայ աստուածաբանական-դաւանաբանական գրականութեան պատմութիւնը չափազանց հետաքրքիր է. Ե. դարում աստուածաբանական միտքն ու մտածողութիւնն արտայայտուել են Սահակ Ա. Պարթեւի (387-439 թթ.) եւ Մեսրոպ Մաշտոցի թղթերում, Մովսէս Խորենացու դաւանաբանական թղթում, Յովհան Ա. Մանդակունի հայրապետին (478-490 թթ.) վերագրուող «Ապացոյց յերկուց բնութեանց ասել զՓրկիչն կամ մի բնութիւն» հակաքաղկեդոնական դաւանաբանական վաւերագրում<sup>6</sup>, Ղազար

չափազանց հետաքրքիր են «Արարատ» ամսագրի խմբագրման կանոնները, որոնք զետեղուած են 1868 թ. օգոստոսեան համարի (թիւ 4) 51-րդ էջում:

<sup>3</sup> «Արարատ», 1868, Ե. (թիւ 1), էջ 5:

<sup>4</sup> Տէս Յ. ՔՅՕՍԷԱՆ, Ներածութիւն հայ եկեղեցական մատենագրութեան, Երեւան, 2018, էջ 8:

<sup>5</sup> Տէս Մ. ԱՔԵՂԵԱՆ, Հայոց գրականութեան պատմութիւն (վեց հատորով). Հայոց հին գրականութեան պատմութիւն, հտ. Ա., Երեւան, 1944, էջ 80:

<sup>6</sup> Տէս «Երանելոյն Յովհաննու (Հայոց) եպիսկոպոսապետի, Ապացոյց յերկուց բնութեանց ասել զՓրկիչն եւ կամ մի բնութիւն», «Գիրք թղթոց». Մատենագրութիւն նախնեաց, Բ. հրատ., Երուսաղէմ, 1994, էջ 128-143: Այս գրութեան մի ամբողջական հատուած՝ «Երանելոյն Յովհաննու Մանդակունու Հայոց Կաթողիկոսի ի հակաճառութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց» վերնագրով, վկայաբերուած է «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ Եկեղեցու

Փարպեցու թղթում, նաեւ հայրաբանական գրուածքների թարգմանութիւններում<sup>7</sup>: Հայ եկեղեցական մատենագրութիւնը հարուստ է դաւանաբանական գրականութեան գոհար էջերով, եւ այս իրողութեան յստակ գիտակցումով «Արարատ» ամսագիրը հրատարակման առաջին իսկ օրից եղել է հայ աստուածաբանական-դաւանաբանական մտքի արտայայտողն ու արժեւորողը, Հայ եկեղեցու վարդապետութեան եւ ուղղափառութեան պաշտպանը, հայ եկեղեցական գրականութեան մաս կազմող արժէքաւոր բնագրերի ուսումնասիրողն ու հրատարակողը:

«Արարատ» ամսագրի շուրջն են համախմբուել նուիրեալ հոգեւորականներ, որոնք գիտական ծանրակշիռ ուսումնասիրութիւններով եւ վերլուծութիւններով առաջ են մղել հայ կրօնագիտական-աստուածաբանական միտքը՝ արժէքաւոր նիւթեր հրատարակելով աստուածաբանական, դաւանաբանական, եկեղեցապատմական խնդիրների վերաբերեալ:

Խմբագրակազմն ընդգծել է՝ «Արարատայ առաջին մասն Կրօնական դնելով՝ մտփեռնիս այն չէ, որ հաւատոյ խնդիրներու վրայ պիտի խօսինք ու հաւատոյ վեճեր նորոգենք, այլ ինչպէս գրել ենք մեր յայտարարութեան մէջ, որ արդէն հրատարակուած է, եկեղեցական կարգաց եւ արարողութեանց յումմէ՛ եւ ե՛րբ սկզբնաւորելուն վրայ պիտի գրենք...»<sup>8</sup>: Այսինքն՝ այս բաժնի նպատակը Հայ եկեղեցու կարգերի ու կանոնների, առաքելահաստատութեան, առաքելական յաջորդականութեան, նուիրապետութեան ձեւաւորման պատմութեան, դաւանաբանական դիրքորոշման, ծիսապաշտամունքային համակարգի ներկայացումն էր: Կրօնական բաժնում նոր ուսումնասիրութիւնների լոյսի ներքոյ եւ աղբիւրագիտական հիմնաւորումներով պարզաբանուել են մեր եկեղեցու պատմութեան չհետազօտուած որոշ հարցեր ու խնդիրներ: Այս առումով «Արարատ» ամսագրի ստեղծագործական ընթացքը բաժանուել է երկու փուլի՝ 1868–1895 եւ 1895–1919 թթ.:

յուղղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց. յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի (613–627) համահաւաքեալ, աշխ.՝ Կ. եպս. Տէր-Մկրտչեան, Ս. Էջմիածին, 1914, էջ 232: Այժմ հաստատուել է, որ հակաքաղկեդոնական դաւանաբանական այս վաւերագրի հեղինակը Յովհաննէս Բ. (Ա.) Ալեքսանդրացին է, եւ նշեալ գրուածքը հայերէն է թարգմանուել յունարէն բնագրից, սակայն թիւրիմացաբար վերագրուել է Յովհան Ա. Մանդակունուն (478–490 թթ.). տե՛ս Ն. ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ, Հայ գրողներ (Ե.–Ժէ. դար), Երուսաղէմ, 1971, էջ 32: Այս վաւերագրի հեղինակութեան խնդրին անդրադարձել են նաեւ Ն. Ակիւնեանն ու Պ. Տէր-Պօղոսեանը (Ն. ԱԿՆԵԱՆ, Հ. Պ. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ, Մատենագրական հետազօտութիւններ. Յովհաննէս Ա. Կաթողիկոս Հայոց (Մանդակունի. 480–502), «Հանդէս Ամսօրեայ», 1971, թիւ 4–6, էջ 142):

<sup>7</sup> Տե՛ս «Գիրք թղթոց». Մատենագրութիւն նախնեաց, Բ. հրատ. Երուսաղէմ, 1994:

<sup>8</sup> «Արարատ», 1868, Ե. (թիւ 1), էջ 2:

«Արարատ»-ի հրատարակութեան առաջին տասնամեակը կարող ենք իրաւամբ համարել «որոնումների շրջան», քանի որ ամսագիրը դեռեւս բովանդակում էր տարաբնոյթ ուշագրաւ նիւթեր: Նկատելի է, որ առաջին շրջանում Կրօնական բաժնում հրատարակուած յօդուածները եւ ուսումնասիրութիւններն առաւելապէս կրել են պահպանողական-պատմական, մատենագրական, մեկնողական, ջատագովական նկարագիր, քան՝ գիտական բնոյթ:

Այսպէս՝ ամսագրի 1869 թուականի մարտեան համարում (թիւ 11, էջ 152-156) տպագրուել է Գէորգ Դ. Կոստանդնուպօլսեցի հայրապետի կոնդակը, որն ունի աստուածաբանական-դաւանաբանական բովանդակութիւն: Այս կոնդակը պատասխան է Հռոմի Պիոս Թ. պապի հրաւէր-նամակին<sup>9</sup>՝ մասնակցելու 1868 թ. դեկտեմբերին Վատիկանում հրաւիրուող ժողովին: Նշենք նաեւ, որ իր հրաւէր-նամակը Հռոմի պապն ուղարկել էր ոչ թէ Հայոց հայրապետին, այլ՝ Կ. Պօլսի հայոց պատրիարք Պօղոս Թաքթաբեանին: Հայոց պատրիարքը դիմել է Հայոց հայրապետին եւ գրել. «Մեք որպէս պարտն էր պատասխանի արարաք այսպէս թէ՛ է՛ մեր գերագոյն Հայրապետ ի Ս. էջմիածին, գլուխ Հայաստանեայց Եկեղեցոյ որ միայն ունի զիրաւասութիւն ի վերայ սրբոյ Եկեղեցոյս մերոյ եւ ամենայն հոգեւոր հովուաց նորին. վասնորոյ եւ նմա անկ է քննադատել զհրաւիրագիրն...» (էջ 153): Կ. Պօլսի հայոց պատրիարքի խնդրանքով Գէորգ Դ. Կոստանդնուպօլսեցին պատասխանել է Հռոմի պապի գրութեանը. Հայոց հայրապետը խնդիրը քննել է Եկեղեցու պատմութեան լոյսի ներքոյ եւ դաւանաբանական հարցերի համակողմանի վերլուծութեամբ՝ ընդհանրական Եկեղեցու պառակտման պատճառներից մէկը համարելով Հռոմի Աթոռի նկրտումը՝ լինել «նախապատիւ եւ գերագահ», քան «զայլ Աթոռս Արեւելեայց»<sup>10</sup>: Գէորգ Դ. Կոստանդնուպօլսեցին հանգամանօրէն պատասխանել է Հռոմի պապի հրաւէր-նամակին՝ պատմական, կանոնական եւ դաւանաբանական հիմնաւորումներով՝ ընդգծելով, որ վերջինիս գրութեան մէջ կանոնական կէտերը պահպանուած ու յարգուած չեն, ուստի Հայ Եկեղեցին այդ պայմաններում հրաժարուած է մասնակցել Վատիկանի եկեղեցաժողովին: Նշանակալի է նաեւ Մակար Ա. Թեղուտցի կաթողիկոսի (1885-1891 թթ.) կոնդակը<sup>11</sup>՝ հրատարակուած «Արարատ»-ի 1889 թուակա-

<sup>9</sup> Նշեալ հրաւէր-նամակը շարադրուած էր լատիներէնով եւ հայերէնով:

<sup>10</sup> Տե՛ս «Արարատ», 1869, Գ., էջ 154:

<sup>11</sup> Սոյնը 8 դեկտեմբերի 1888 թ., թիւ 471 թուակիր կոնդակն է՝ «Թողթ ընդհանրական Տ. Տ. Մակարայ Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց առ համօրէն դասս եկեղեցականաց

նի փետրուարեան համարում (թիւ 2, էջ 65–85): Հայոց հայրապետն իր «Թուղթ ընդհանրական Տ. Տ. Մակարայ Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց առ համօրէն դասս եկեղեցականաց եւ ժողովրդականաց հայոց» վերնագրուած կոնդակով հանգամանալից պատասխանել է Լեւոն ԺԳ. պապի գրութեանը (յուլիս 25 թուակիր), որով Հայ Եկեղեցուն կոչ է արուել ընդունել Հռոմի պապի գերագահութիւնը:

Մակար Ա. Թեղուտցի հայրապետի կոնդակը մի բովանդակալից գրութիւն է՝ գրաբարով շարադրուած, եւ յստակ ներկայացնում է Հայ Եկեղեցու պատմութիւնն ու դաւանաբանութիւնը: Այս կոնդակը նաեւ համակարգուած ու ջախջախիչ պատասխան է Կաթողիկ Եկեղեցու նկրտումներին: Հայոց կաթողիկոսը յորդորել է հոգեւորականութեանը եւ իր «շնորհածին» ժողովրդին՝ անսասան պահել Հայ Եկեղեցու ուղղափառ դաւանաբանութիւնը, աւանդոյթները, ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը, քանզի Սիմէոն Ա. Երեւանցու (1763–1780 թթ.) խօսքի համաձայն՝ «հաւատն մեր ոչ է հնաքեալ զի նորոգեցի, ոչ է թերի՝ զի լրացի...»<sup>12</sup>:

Ըստ Մակար Ա. Թեղուտցի հայրապետի՝ ընդհանրական Եկեղեցու միասնութիւնն ու դաւանաբանական միութիւնը խարխուլել է Քաղկեդոնի 451 թ. տիեզերաժողովում ընդունուած որոշումներով. յետագայում տարաբնոյթ խնդիրները ներկայացուել են դաւանաբանական վիճաբանութիւնների շղարշով քօղարկուած: Նշեալ խնդիրների առանցքը մեծաւ մասամբ եղել են պատրիարքական աթոռների առաջնութեան նկրտումները: Մինչդեռ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դաւանաբանութիւնն ու վարդապետութիւնը խարսխուել են Աստուծոյ խօսքի՝ Աստուածաշնչի, սրբազան Աւանդութեան եւ առաջին երեք տիեզերաժողովների ընդունած հաւատոյ հանգանակի ու որոշումների վրայ. մեր Եկեղեցին առաքեալներից աւանդուած դաւանութիւնը պահել ու պահպանել է անփոփոխ՝ «ի դարս դարս յարածիգ ժամանակացն անցելոց»<sup>13</sup>:

Կոնդակում պատմական ստոյգ վկայութիւններով հերքուել է նաեւ «Դաշանց թղթի» վաւերականութիւնը:

Ամսագրի 1868 թուականի օգոստոսեան (թիւ 4) համարում, առաջին խմբագրի՝ Աբէլ արք. Մխիթարեանի հեղինակութեամբ, տպագրուել է Հայ Եկեղեցու առաքելահիմն լինելը, առաքելական յաջորդականութիւնը

եւ ժողովրդականաց հայոց»:

<sup>12</sup> Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Բ., Ս. էջմիածին, 2001, էջ 954:

<sup>13</sup> «Արարատ», 1889, Բ., էջ 70:

ներկայացնող յօդուած՝ «Անընդհատ շարունակութիւն առաքելական յաջորդութեան Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց» (էջ 39): Յօդուածը հրատարակուել է հատուածաբար՝ ամսագրի տարբեր համարներում: Հետաքրքիր են նաեւ նոյն հեղինակի «Ամենասուրբ Երրորդութիւն» չափածոյ գրուածքը, «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբ»<sup>14</sup> յօդուածը, վերջինս կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում Հայ Եկեղեցու հրաւիրած ժողովների, դրանց ընթացքում ընդունուած դաւանաբանական, ծիսական եւ կանոնական որոշումների վերաբերեալ: Յիշատակենք նաեւ Աբէլ արք. Մխիթարեանի մէկ այլ կարեւոր ուսումնասիրութիւն՝ «Պատմութիւն հալածչաց ուրացողաց, հերձուածողաց եւ բաժանելոց յԵկեղեցւոյն հայոց» վերնագրով. այն եւս տպագրուել է հատուածաբար՝ ամսագրի 1875 թուականի տարբեր համարներում: Ուշագրաւ վերլուծութիւններ են առկայ Յուսիկ վրդ. Մովսիսեանի «Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւն» (1884, 1885 եւ 1886 թուականների համարներում), Մաղաքիա արք. Օրմանեանի «Աթոռ Հայաստանեայց» (1886 եւ 1887 թթ.), Վահրամ եպս. Մանկունու «Հայաստանեայց Եկեղեցւոյ անցեալն» (1874 եւ 1875 թթ.), Գաբրիէլ եպս. Այվազովսկու «Նիկոլ եպիսկոպոս եւ պատմութիւն դարձին հայկազանց Լեհաստանին ի կաթողիկոսութիւն» (1877 թ.) յօդուածներում<sup>15</sup>:

Մեր ուշադրութիւնը գրաւեց Արշակ Տէր-Միքէլեանի ուսումնասիրութիւնը, որ վերնագրուած էր «Ասողկայ պատմութեան «կորած» գլուխները»<sup>16</sup>: Հեղինակը գրում է, որ Ասողիկի Պատմութեան վերջին հրատարակողը հետամուտ էր եղել երկրորդ գրքի Ե. եւ Զ. գլուխների ձեռքբերմանը Վենետիկից, սակայն կաթողիկ հայրերը վերջինիս պատասխանել էին, որ իրենց օրինակում եւս նշեալ հատուածներն առկայ չեն: Արշակ Տէր-Միքէլեանը պակասող՝ Ե. ու Զ. գլուխները գտել է Փարիզի ազգային մատենադարանում եւ անփոփոխ կերպով հրատարակել «Արարատ» ամսագրում: Հեղինակը յաւելում է. «Թէ ով է Վենետիկի միաբան, Դիպոտի այդ մարդասէր կամ ազգասէր բարեկամը, չգիտենք. միայն թէ մէկ լաւ գործ է կատարել, արտագրելով յիշեալ կտորն եւ ուղարկելով այդ գիտնականին»<sup>17</sup>:

<sup>14</sup> Տե՛ս «Արարատ», 1873, ԺԱ., էջ 400-409, 442-452, 1874, Ա., էջ 1-13, 37-49, 80-91, 117-124, 157-169, 197-203, 237-241:

<sup>15</sup> Մեր նիւթն աւելորդ շփանաբեռնելու նկատառումով շարադրանքում նշել ենք միայն յօդուածների հրատարակութեան թուականները, քանզի վերջիններս տպագրուել են հատուածաբար:

<sup>16</sup> Տե՛ս «Արարատ», 1892, Ը., էջ 748-754:

<sup>17</sup> Անդ, էջ 748:

Ամսագրում հրատարակուած Ե. գլուխը վերնագրուած է «Յայլմէ պատմագրէ, յաղագս Ամիրմումնեացն տաճկաց»<sup>18</sup>, իսկ Զ.-ն վերնագիր չունի<sup>19</sup>:

Առանձնակի կարեւորութիւն ունի նաեւ Արշակ Տէր-Միքէլեանի «Աստուածաբանական գիտութիւնները» յօդուածաշարը, որը հրատարակուել է հաստուածաբար՝ ամսագրի 1893 թուականի համարներում: Հեղինակը ներկայացրել է Եկեղեցու դերակատարումն ու նշանակութիւնը կրթական գործում, անդրադարձել մեկնողական աստուածաբանութեանը, սուրբգրային մեկնութեանն օժանդակող գիտութիւններին, աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան յարաբերութեան խնդրին, արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդել հնաբանութեան, պատմական աստուածաբանութեան, բեմասացութեան, գործնական աստուածաբանութեան, Եկեղեցու պատմութեան վերաբերեալ:

1888 թ. ամսագրում բացուել է նոր՝ «Սուրբ Էջմիածնի գրադարան» խորագրով բաժին, որտեղ զետեղուել են Հայ Եկեղեցու պատմութեանն առնչուող՝ դեռեւս «մութ եւ անծանօթ» մնացած որոշ խնդիրների վրայ լոյս սփռող ձեռագրային բնագրեր:

Արդէն 1895 թուականից «Արարատ» ամսագրում սկսել են գերակշռել հայ աստուածաբանական-դաւանաբանական մտքի ուսումնասիրմանը նուիրուած գիտական յօդուածները՝ շնորհիւ Մայր Աթոռի միաբանների նոր սերնդի ծաւալած գիտական լուրջ գործունէութեան: Նշենք, որ հէնց այս շրջանում Եւրոպայի նշանաւոր բուհերում կրթութիւն ստացած հայ հոգեւորականները (Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեան, Գալուստ Տէր-Մկրտչեան, Գարեգին վրդ. Յովսէփեան եւ այլք) համախմբուել էին Մաղաքիա արք. Օրմանեանի շուրջը եւ գիտական ծանրակշիռ ուսումնասիրութիւններ էին կատարում:

Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեանի (յետագայում՝ եպիսկոպոս) խմբագրութեան տարիներին՝ 1894-ի դեկտեմբերից մինչեւ 1899 թ., Մայր Աթոռի պաշտօնական ամսագիրը թեւակոխել է ստեղծագործական մի ուրոյն եւ բեղուն շրջան, հրատարակուել են եւ հայագիտական, եւ աստուածաբանական-դաւանաբանական հարցերին վերաբերող գիտական արժէքաւոր ուսումնասիրութիւններ:

1895 թուականից սկսեալ «Արարատ» ամսագրում աւելացել է նոր՝ «Յաւելուած» բաժինը, որտեղ լոյս են տեսել Հայ Եկեղեցու

<sup>18</sup> Անդ, էջ 749:

<sup>19</sup> Անդ, էջ 750:

դաւանաբանութեանը, վարդապետութեանը վերաբերող մի շարք հնագոյն բնագրեր, դաւանաբանական ժողովածոներում ներառուած վաւերագրեր:

Ամսագրի 1896 թուականի ապրիլեան համարում (թիւ 4, էջ 155) Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեանն ընդարձակ եւ ուշագրաւ ուսումնասիրութեամբ՝ «Բնութեան խնդրի նկատմամբ մեր եւ Մխիթարեան հայրերի ունեցած հայեացքը», անդրադարձել է Քրիստոսի բնութիւնների խնդրին, ներկայացրել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետների ու Մխիթարեան հայրերի աստուածաբանական ընկալումները դաւանաբանական այս հարցի շուրջ: Յօդուածի շարունակութիւնը՝ «Կրկին բնութեան խնդիրը եւ Մխիթարեան հայրերը», հրատարակուել է նոյն թուականի օգոստոսեան համարում (թիւ 8, էջ 353): Նշեալ յօդուածը Հայ Եկեղեցու դաւանաբանութիւնը պաշտպանող եւ հիմնաւորող մի կուռ, գիտականօրէն ու մատենագրական հարուստ վկայութիւններով հիմնաւորուած ուսումնասիրութիւն է: Այն մէկ անգամ եւս հաստատել է Հայ Եկեղեցու Քրիստոսի բնութիւնների միութեան վերաբերեալ վարդապետութիւնը: Հայ Եկեղեցու վարդապետն արդարացիօրէն ընդգծել է, որ «զուտ պատմական սխալ է միայն, թէ եւ շատ տարածուած սխալ, կարծել՝ թէ «մի բնութիւն» դաւանելը նոյն է, ինչ որ միաբնակ լինել»<sup>20</sup>:

Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեանն իր «Աստուածաբաններ պէտք են» յօդուածում<sup>21</sup> անդրադառնում է աստուածաբանութեանը՝ որպէս որոշակի գիտութիւն: Հեղինակի տեսակէտներն այսօր եւս արժէքաւոր ու արդիական են. նա իրաւամբ նկատում է՝ «Շատերը երեւակայում են, ինչպէս երեւում է, թէ աստուածաբանութիւն նշանակում է վերացական տեսութիւնների մի ժողովածու. մարդիկ նստել՝ Աստուծոյ էութեան, Աստուծոյ յատկութիւնների եւ այլ նման խնդիրների մասին երկար բարակ խորհրդածութիւններ են արել... Մինչդեռ աստուածաբանութիւն ուսանել արդի մտօք նշանակում է՝ պատմական հետազօտութիւնների վերայ հաստատուած մի փոխառնական աշխարհահայեցողութիւն կազմել, որով պէտք է առաջնորդուի իւրաքանչիւր ոմ՝ ով կամենում է փոխառնական դաստիարակել»<sup>22</sup>: Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեանը կարծում է, որ աստուածաբանութեան ոլորտում առաջընթացը պակաս նկատելի է, քան գիտութեան միւս ճիւղերում,

<sup>20</sup> «Արարատ», 1896, Դ., էջ 157:

<sup>21</sup> Տե՛ս «Արարատ», 1898, Ե., էջ 199-204. նաեւ՝ 1898, Ը., էջ 344-349:

<sup>22</sup> «Արարատ», 1898, Ե., էջ 201:

քանզի «միւսներն իրերի, ձեւերի, օրէնքների հետ գործ ունին, իսկ աստուածաբանների գործը մարդոց հոգիների հետ է, որ կշիռնի մէջ չի դրում եւ բնալուծութեան չի ենթարկում»<sup>23</sup>: Հեղինակն ընդգծում է, որ անհրաժեշտ է տարբերակել կրօնական վէճը եւ կրօնական խնդրի պատմագիտական հետազոտութիւնը. աստուածաբանը պէտք է կարողանայ յստակ տարբերակել այս երկուսը<sup>24</sup>:

Արժէքաւոր է նաեւ 1896 թուականի յունուարեան (թիւ Ա., էջ 3-4) համարում տպագրուած մէկ այլ՝ «Աստուածայայտութեան տօնի ճիշտ օրն ըստ պատմութեան» յօդուածը: Հեղինակը՝ Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեանը, պատմական ստոյգ վկայութիւնները քննութեան ենթարկելով, հիմնաւորում է Հայ Եկեղեցու ծիսական հինաւորաց աւանդոյթը՝ Քրիստոսի սուրբ ծնունդն ու մկրտութիւնը միասին՝ յունուարի 6-ին նշելը: Սոյն ուսումնասիրութիւնը մէկ անգամ եւս հաստատում է, որ մեր Եկեղեցին, Սուրբ Ծնունդն ու Աստուածայայտութիւնը յունուարի 6-ին նշելով, հետեւել է ընդհանրական Եկեղեցու կողմից մինչեւ Դ. դարն ընդունուած աւանդութեանը. «...մեր Եկեղեցին նախնական սովորութեան հետեւելով՝ ոչ միայն իւր հարազատ եւ աւանդապահ լինելն է ցոյց տալիս, այլ շարունակում է պահպանել այն խորհրդաւոր կապը, որ կայ Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Մկրտութեան՝ իբրեւ մեր Փրկչի կրկնակի յայտնութեան մէջ»<sup>25</sup>:

Այս շրջանում «Արարատ» ամսագրի «Յաւելուած» բաժնում աստուածաբանական-դաւանաբանական, մեկնողական բնոյթի եզակի բնագրեր են հրատարակել Գալուստ Տէր-Մկրտչեանը (Միաբան), Գարեգին վրդ. Յովսէփեանը, Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեանը եւ այլ հեղինակներ: Աշխատասիրողները յաճախ լոյս են ընծայել համեմատական բնագրեր՝ դրանք օժտելով նաեւ անհրաժեշտ ծանօթագրութիւններով:

Այսպէս՝ Գալուստ Տէր-Մկրտչեանը 1892 թ. հրատարակել է Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեան»-ը<sup>26</sup>, որը մինչ այդ կորած է համարուել: Նոյն թուականին տպագրուել է նաեւ «Գիրք հերձուածոց»-ի բնագիրը<sup>27</sup>: Աշխատասիրողն այս ուսումնասիրութեան հրատա-

<sup>23</sup> Անդ, էջ 201:

<sup>24</sup> Տէս անդ, էջ 202:

<sup>25</sup> «Արարատ», 1896, Ա., էջ 4:

<sup>26</sup> Տէս «Երանելոյ հաւր Անանիայի գիր խոստովանութեան. յաղագս սուտ կարծեացն որ վասն նորա», «Արարատ», 1892, Ա., էջ 1-18:

<sup>27</sup> Տէս «Գիրք հերձուածոց», աշխատ.՝ Գալուստ Տէր-Մկրտչեանի, «Արարատ», 1892, Բ., էջ 91-114:

րակման առընչութեամբ գրում է. «Անցեալ անգամ Անանիա Նարեկացու խոստովանութեան գրի եւ այս անգամ այս թարգմանական գրուածքի հրատարակութիւնը մեր այն համոզման արդիւնքն է, որ «Արարատ»-ը իւր կրօնական-պատմական բաժինը մեծ մասամբ պէտք է յատկացնէ նախնեաց կորած համարուած կամ անտիպ մնացած երկերին եւ նրանց հետազոտութեանը»<sup>28</sup>:

Գալուստ Տէր-Մկրտչեանի աշխատասիրութեամբ լոյս է տեսել նաեւ «Մատեան Յովհաննու Մանգակունույ. Յաղագս սիրոյ եւ սրբութեան, որով պտղաբերին արարածք» երկը<sup>29</sup>: Նա է հրատարակել Ստեփանոս Իմաստասէրի «Վասն անապականութեան մարմնոյն...» ճառը<sup>30</sup>: Միաբանը բնագրի տողատակում՝ ծանօթագրութեամբ նշել է, որ Ստեփանոս Իմաստասէրի սոյն գրութիւնը «երեւութականներէց» մեզ հասած միակ նշանաւոր վաւերագիրն է, որ լոյս է սփռում Ը. դարի առաջին կէսի, մասնաւորապէս Մանգակերտի եկեղեցաժողովի՝ մինչ օրս այդքան վիճելի պատմութեան վրայ<sup>31</sup>: Մկրտիչ Ա. Խրիմեանի (1892-1907 թթ.) հրամանով այս ուսումնասիրութիւնը 1902 թ. լոյս է տեսել նաեւ առանձին գրքոյկով:

1896 թուականի ապրիլեան համարի «Յաւելուած»-ում (էջ 192-199) Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեանը հրատարակել է «Յովհաննու Իմաստասիրի Հայոց Կաթողիկոսի խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնացելոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս» ճառը, մայիսեան համարում՝ «Այս թուղթ Յովհաննու Երուսաղէմի եպիսկոպոսի է առ Աբաս Աղուանից կաթողիկոս» վերնագրով գրուածքը:

1899 թ. վերջին Կարապետ Տէր-Մկրտչեանն ստիպուած հրաժարուել է ամսագրի գլխաւոր խմբագրի պարտականութիւնից, քանի որ խիստ ծանրաբեռնուած էր Գէորգեան հոգեւոր ճեմարանի տեսչութեան գործերով: Մկրտիչ Ա. Խրիմեանը 1900 թ. վերջին «Արարատ»-ի խմբագրումը յանձնարարել է հայագիտութեան երախտաւոր Գարեգին վրդ. Յովսէփեանին:

<sup>28</sup> Անդ, էջ 93:

<sup>29</sup> Տէս «Արարատ», 1903, է., էջ 562-575, 662-672, Ը.-Թ., էջ 774-784:

<sup>30</sup> Ճառի ամբողջական վերնագիրն է «Վասն անապականութեան մարմնոյն, որք ասեն թէ՛ Որ աճէ եւ նուազէ ապականացու է. եւ վասն զի մարմինն Քրիստոսի աճէր եւ զարգանայր եւ ապականացու ոչ էր, զի Աստուծոյ մարմին էր վկայութիւն սրբոց եւ աստուածազանից, որք անապական խոստովանին յարգանդէ եւ յաւիտեանս յաւիտենից», «Արարատ», 1902, Գ.-Դ., էջ 368-400:

<sup>31</sup> Տէս անդ, էջ 368:

Գարեգին վրդ. Յովսէփեանը հրատարակել է «Դաւթի փիլիսոփայի բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց» բնագիրը եւ «Նորին Դաւթի ի հրամանէ Անաստասու Հայոց Կաթողիկոսի» ճառը<sup>32</sup>:

Ամսագրում «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրիոյ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի»<sup>33</sup> նշանաւոր գրուածքի վերաբերեալ արժէքաւոր ուսումնասիրութիւններ են հրատարակել Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեանն ու Երուանդ Տէր-Մինասեանը<sup>34</sup>, ապա նաեւ Գալուստ Տէր-Մկրտչեանը<sup>35</sup>:

Առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում Գալուստ Տէր-Մկրտչեանի ուսումնասիրութիւնը, որտեղ հեղինակը տոմարական հաշուարկով հիմնաւորում է Տիմոթէոս Կուզի «Հակաճառութեան» հայերէն թարգմանման ժամանակը. «...մեզ հետաքրքրող փառամեակի ճշտագոյն սահմաններն են 480 փետր. 29 – 484 փետր. 28: Ահա այս փառամեակն է Տիմոթէոս Կուզի հայ թարգմանութեան հաստատուն եւ անխախտելի թուականը»<sup>36</sup>:

Մայր Աթոռի պաշտօնական ամսագրում տպագրուել են նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քոյր եկեղեցիների հետ ունեցած յարաբերութիւններին վերաբերող ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ: Օրինակ՝ «Արարատ»-ում հրատարակուել է Երուանդ վրդ. Տէր-Մինասեանի «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ. հայկական եւ ասորական աղբիւրների համաձայն» աշխատութեան գրախօսականը<sup>37</sup>: Նշենք, որ Երուանդ վրդ. Տէր-Մինասեանի այս ուսումնասիր-

<sup>32</sup> Տէն «Արարատ», 1906, Գ., համապատասխանաբար՝ էջ 261-268 եւ 269-272:

<sup>33</sup> Դաւանաբանական այս վաւերագրի հեղինակն է Տիմոթէոս Կուզը (Կուզացի, էլլուրոս, Ալեքսանդրացի)՝ Ե. դարավերջ – 477 թ., Ե. դարի յոյն հակաքաղկեդոնական աստուածաբան, Ալեքսանդրիայի պատրիարք (457-460 թթ., 476-477 թթ.), Ալեքսանդրեան աստուածաբանական դպրոցի ամենանշանաւոր ներկայացուցիչներից:

<sup>34</sup> Տէն Կ. Վրդ. Տէր-Մկրտչեան, Տիմոթէոս էլլուրոսի նորագիտ երկը եւ նորա մի քանի նոր հատուածները նախնի հայրերից առած, «Արարատ», 1897, Զ., էջ 251-257. «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրիոյ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի», աշխատ.՝ Կարապետ Ժ. վարդապետի եւ Երուանդ վարդապետի, Ս. էջմիածին, 1908:

<sup>35</sup> Տէն Գ. Տէր-Մկրտչեան, Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան հայ թարգմանութեան ժամանակը եւ Սուրբ Գրքի երրորդ կամ «Նորաբեր» հայ թարգմանութիւնը, «Արարատ», 1908, Ե.-Զ., էջ 564-589. նաեւ նոյն հեղինակի՝ «Տիմոթէոս Կուզի մասին. կրացումն եւ ուղղելիք», 1908, Ե.-Ը., էջ 707-708:

<sup>36</sup> Գ. Տէր-Մկրտչեան, Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան հայ թարգմանութեան ժամանակը եւ Սուրբ Գրքի երրորդ կամ «Նորաբեր» հայ թարգմանութիւնը, «Արարատ», 1908, Ե.-Զ., էջ 572:

<sup>37</sup> Տէն Մ. Խոսիկեան, Երուանդ վրդ. Տէր-Մինասեանի «Հայաստանեայց եկեղեցու յարաբերութիւնները ասորի եկեղեցիների հետ», 1907, ԺԲ., էջ 1094-1099:

րուծիւնը նախապէս գերմաներէն էր հրատարակուել<sup>38</sup>, յետագայում լոյս է տեսել հայերէն տարբերակը՝ առաւել ընդարձակ ու լրամշակուած<sup>39</sup>: Գրախօսութեան հեղինակը՝ Մ. Խոստիկեանը, այս աշխատութեան վերաբերեալ գրում է. «Ամբողջ աշխատութիւնը կատարուած է հետախուզողի լրջութեամբ եւ անկողմնակալ ոգով: Աղբիւրներից օգտուելու եղանակը գիտական է... Ի զուր չէ, որ այս գիրքը մեծ ընդունելութիւն գտաւ աստուածաբան ուսուցչապետների կողմից»<sup>40</sup>:

«Արարատ» ամսագիրն անդրադարձել է նաեւ ընդհանուր աստուածաբանութեան կարեւորագոյն հարցերին: Այսպէս՝ 1879 թ. հրատարակութեան մէջ քննարկուել է Նիւ Եօքքի համալսարանի պրոֆէսոր Դրէպէրի աշխատութիւնը<sup>41</sup>, որը ներկայացրել էր կրօնի ու գիտութեան միջեւ հակասութիւնների պատմութիւնը:

Ամսագրի 1910 թուականի համարներում շարունակաբար հրատարակուել է ռուս նշանաւոր աստուածաբան Նիկոլայ Սագարդայի<sup>42</sup> «Յոյն Արեւելքի հին եկեղեցական աստուածաբանական գիտութիւնն իւր ծաղկման շրջանում (IV-V դդ.)» նրա գլխաւոր ուղղութիւնները եւ բնորոշ յատկութիւնները<sup>43</sup> աշխատութիւնը. ռուսերէնից հայերէն է թարգմանել Արտակ վրդ. Սմբատեանը: Նոյն թուականին այն տպագրուել է որպէս առանձին աշխատութիւն:

«Արարատ»-ի 1917-1918 թուականի համարներում հատուածաբար՝ հայերէն թարգմանութեամբ հրատարակուել է նաեւ ռուս գիտնական

<sup>38</sup> Տէս ERWAND TER-MINASSIANTZ, Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts, Leipzig, 1904:

<sup>39</sup> Տէս Ե. ՎՐԳ. ՏԷՐ-ՄԻՆԱՍՅԱՆՅ, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ. հայկական եւ ասորական աղբիւրների համաձայն, Ա. հրատ., Ս. էջմիածին, 1908, Բ. հրատ., Ս. էջմիածին, 2009:

<sup>40</sup> Մ. ԽՈՍՏԻԿԵԱՆ, Երուանդ վրդ. Տէր-Մինասեանի «Հայաստանեայց եկեղեցու յարաբերութիւնները ասորի եկեղեցիների հետ», 1907, ԺԲ., էջ 1098-1099:

<sup>41</sup> Տէս Ա. Վ. (ԱՐՏԱԿ ՎՐԳ. ՍՄԲԱՏԵԱՆ), Կրօն եւ գիտութիւն (Նիւ Եօքքի համալսարանի պրոֆ. Դրէպէրի «Կրօնի եւ գիտութեան մէջ տեղի ունեցած հակասութիւնների պատմութիւն» գրքի շուրջ), «Արարատ», 1879, Ը., էջ 333-339:

<sup>42</sup> Նիկոլայ Սագարդա (Николай Иванович Сагарда, 1870-1943 թթ.)՝ նշանաւոր աստուածաբան, հայրաբան, եկեղեցու պատմութեան մասնագէտ (պատմական գիտ. դոկտոր):

<sup>43</sup> Տէս ՆԻԿՈԼԱՅ ՍԱԳԱՐԳԱ, Յոյն Արեւելքի հին եկեղեցական աստուածաբանական գիտութիւնն իւր ծաղկման շրջանում (IV-V դդ.). նրա գլխաւոր ուղղութիւնները եւ բնորոշ յատկութիւնները, 1910, Զ., էջ 539-548, Ե., էջ 627-636, Ը., էջ 719-726, Թ., էջ 846-857, Ժ., էջ 945-957, ԺԱ., էջ 1061-1068, ԺԲ., էջ 1141-1158. ռուսերէն բնագիրը՝ «Древнецерковная богословская наука на греческом Востоке в период расцвета (IV-V вв.)», «Христианское чтение», апрель, 1910:

Ֆ. Մ. Ռոսեյկինի «Կ. Պոլսի Փոտիոս պատրիարքի առաջին պատրիարքությունը» ծավալուն աշխատությունից մի հատուած՝ «Փոտի ջանքերը Հայ Եկեղեցին միացնելու Կ. Պոլսոյ կամ Յունական Եկեղեցուն»<sup>44</sup>. նշեալ ուսումնասիրությունը ռուսերէնով տպագրուել էր դեռեւս 1915 թ.: Երկի Թ. գլխում ռուս գիտնականը հանգամանօրէն՝ պատմական փաստերի վկայակոչմամբ ներկայացնում է Կ. Պոլսի պատրիարքի ջանքերը՝ ուղղուած Հայ Եկեղեցին Յոյն Եկեղեցուն միացնելուն: Այս հատուածը թարգմանել է Յուսիկ արք. Մովսիսեանը, որը հայերէն տարբերակում յաւելել է արժէքաւոր բազմաթիւ մեկնաբանություններ եւ պարզաբանումներ, ծանօթագրություններ, կատարել սրբագրություններ ու լրացումներ:

Գիտական ուշագրաւ քննարկումներ են ծավալուել Յուսիկ արք. Մովսիսեանի «Անապատականներ եւ վանականութիւն»<sup>45</sup> յօդուածաշարի շուրջ:

Մայր Աթոռի պաշտօնական ամսագրում լոյս են ընծայուել ծիսագիտութեանը, տոմարագիտութեանը, հայ եկեղեցական իրաւունքին, կանոնագիտութեանը վերաբերող բազմաթիւ յօդուածներ, գիտական լուրջ ուսումնասիրություններ:

«Արարատ» ամսագրի միջոցով գիտական շրջանառութեան մէջ են դրուել նաեւ թարգմանական եւ հայ ինքնուրոյն հեղինակային ճառախօսություններ, վկայաբանություններ, պատմական եւ աստուածաբանական գրուածքներ: Յատկապէս շափազանց կարեւոր է գործածությունից դուրս մնացած շարականների, գանձերի, տաղերի, անտիպ երկերի հրատարակումը: Օրինակ՝ Նիկողայոս Քարամեանը ձեռագրական հարուստ նիւթերի հիմամբ լոյս է ընծայել «Հին հայ երգիչներ»<sup>46</sup> եւ «Ս. Էջմիածինը հայ երգիչների տաղերում»<sup>47</sup> արժէքաւոր ուսումնասիրություններ:

<sup>44</sup> Տէն Ֆ. Մ. Ռոսեյկին, Փոտի ջանքերը Հայ Եկեղեցին միացնելու Կ. Պոլսոյ կամ Յունական Եկեղեցուն, թարգմ.՝ Յուսիկ արք. Մովսիսեան, 1917, Դ.-Ե., էջ 355-360, Զ.-Է., էջ 499-506, 1918, Ա., էջ 49-63:

<sup>45</sup> Յօդուածաշարը տպագրուել է 1905 (էջ 244-252, 332-341, 440-454, 542-550, 640-666, 1015-1025, 1098-1109) եւ 1906 (էջ 60-68, 161-169, 244-250, 435-449, 606-628) թուականների համարներում՝ հատուածաբար: Այս ուսումնասիրությունը գրախօսել է Նրուանդ վարդապետ Տէր-Մինասեանը (տէն «Արարատ», 1906, Բ., էջ 156 եւ 1907, Ա., էջ 70-74). հեղինակը Յուսիկ արք. Մովսիսեանը, պատասխանել է գրախօսութեանը («Արարատ», 1907, Բ., էջ 150-154):

<sup>46</sup> Տէն Ն. ՔԱՐԱՄԵԱՆ, Հին հայ երգիչներ, 1895, Ա., էջ 12-16, Բ., էջ 55-56, Գ., էջ 90-92, Դ., էջ 124-131:

<sup>47</sup> Տէն Ն. ՔԱՐԱՄԵԱՆ, Ս. Էջմիածինը հայ երգիչների տաղերում, 1895, Զ., էջ 194-202:

Արժեքաւոր տեղեկութիւններ են հաղորդում հայոց վանական համալիրներին, թեմական եկեղեցիներին, հայ եկեղեցական մշակոյթին նուիրուած յօդուածները:

Մայր Աթոռի պաշտօնական ամսագրի շուրջ համախմբուած միաբանները, նշանաւոր գիտնականները, Գէորգեան հոգեւոր ճեմարանի դասախօսները միացեալ ուժերով լոյս են ընծայել «Շողակաթ. Ս. էջմիածնի հայագիտական ժողովածուն» (գիրք առաջին)<sup>48</sup> նուիրուած հայ գրի եւ տպագրութեան մեծ յոբելեանին:

Ամսագրի վերջին երկու տարիներին՝ 1918–1919 թթ. հրատարակութիւններում հիմնականում տպագրուել են հայագիտական նիւթեր:

Ըստ էութեան «Արարատ»-ը եղել է Կովկասեան տարածաշրջանում հրատարակուող կրօնագիտական, աստուածաբանական, հայագիտական, պատմագիտական, բանասիրական առաջին պարբերականը, որը համապատասխանել է տուեալ ժամանակաշրջանի գիտական պահանջներին ու չափանիշներին:

Գէորգ արք. Չէորեքչեանի (Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ 1945–1954 թթ.) աննկուն ջանքերի շնորհիւ 1944 թուականից սկսեց տպագրուել «էջմիածին» ամսագիրը, որի խմբագրակազմը եւ հեղինակներն ըստ արժանւոյն կարեւորել ու գնահատել են «Արարատ» ամսագրի գիտական աւանդը: Այսպէս՝ «էջմիածին» ամսագրի 1968 թ. հրատարակութիւնները նուիրուել են «Արարատ»-ի 100-ամեակին: Տպագրուել են բազմաթիւ յօդուածներ<sup>49</sup>, որոնք մէկ անգամ եւս անդրադարձել են հայագիտութեան գանձարանին՝ «Արարատ» ամսագրի գործունէութեանը:

«Արարատ» ամսագիրն անգնահատելի ներդրում ունի հայ աստուածաբանական մտքի ներկայացման ու նրա զարգացման գործում: Իրաւամբ, կարող ենք նշել, որ ամսագիրն իր տարածմամբ եւ հեղինակների լայն շրջանակի ընդգրկմամբ ունեցել է համահայկական բնոյթ: Մէկ յօդուածի սահմանում հնարաւոր չէ ամբողջութեամբ եւ կատարելապէս

<sup>48</sup> Տէս Ս. Ա. ՆՈՍԵԱՆ, Հայ լեզուաբանութիւնը «Արարատ»-ի էջերում, «էջմիածին», 1968, ժԱ.-ժԲ., էջ 53–63. Ա. ԱՌԱՔԵԼԵԱՆ, «Արարատ» ամսագիրը. Հրատարակման 100-ամեակի առիթով, «էջմիածին», 1968, ժԱ.-ժԲ., էջ 6–13. Ն. ԹԱՀՄԻՋԵԱՆ, «Արարատ»-ն ու երգ երաժշտութեան հարցերը, «էջմիածին», 1968, ժԱ.-ժԲ., էջ 84–90, 1969, Գ., էջ 37–40, է., էջ 44–48, ժԲ., էջ 60–69. Ն. Ծ. ՎՐԴ. ՊՈՋԱՊԱԼԵԱՆ, «Արարատ» ամսագիրը եւ Գէորգեան ճեմարանը, «էջմիածին», 1968, ժԱ.-ժԲ., էջ 30–38. Բ. ՏԱՌՈՒՇԵՅԻ, Թատերական հարցերն «Արարատ»-ի էջերում 1870-ական թուականներին, «էջմիածին», 1968, ժԱ.-ժԲ., էջ 91–95. Վ. ԵՊԱ. ՏԵՐԵԱՆ, «Արարատ»-ը եւ արեւմտահայութիւնը, «էջմիածին», 1968, ժԱ.-ժԲ., էջ 78–83. Ս. ՔՈՒԱՆՋԵԱՆ, «Արարատ»-ը եւ հայագիտութիւնը, «էջմիածին», 1968, ժԱ.-ժԲ., էջ 39–52 եւ այլ յօդուածներ:

*ներկայացնել «Արարատ»-ում հրատարակուած կրօնագիտական, աստուածաբանական, դաւանաբանական ուսումնասիրութիւններն ու յօդուածները. համոզուած ենք, որ այսօր եւս ամսագիրը արժէքաւոր աղբիւր է նոր սերնդի ուսումնասիրողների համար:*

## РЕЗЮМЕ

В 2018 году исполнилось 150-летие журнала «Арагат». Официальный журнал Первопрестольного Святого Эчмиадзина издавался почти полвека (1868–1919 гг.) и внес неоценимый вклад в развитие арменоведения, заняв свое уникальное место в летописи и истории Армянской Церкви. Достойным наследником «Арагата», хранителем и продолжателем его традиций является журнал «Эчмиадзин». Армянская церковная летопись богата ценными страницами догматической литературы, и, с четким осознанием этого, журнал «Арагат» с первого же дня издания выражал армянскую богословско-догматическую мысль, был защитником и поборником учения и православия Армянской Церкви, исследователем и издателем ценных подлинников армянской церковной литературы.

Вокруг журнала «Арагат» объединились преданные священнослужители, которые важными научными исследованиями и анализами развивали армянскую богословско-религиоведческую мысль, публикуя ценные материалы по богословским, догматическим и церковно-историческим вопросам.

## SUMMARY

2018 marked the 150th anniversary of creation of “Ararat” monthly. The official magazine of the Mother See of Holy Etchmiadzin was published for almost half a century (1868–1919) and made an invaluable contribution to the development of Armenology, occupying its unique place in the history and literature of the Armenian Church. Today “Etchmiadzin” monthly is the worthy heir to “Ararat”, the custodian and continuer of the tradition.

The Armenian ecclesiastical literature is rich in jewels of doctrinal literature, and with the clear understanding of this fact, “Ararat” monthly, from the very first

day of its publication, expressed and valued the thought of the Armenian theology and dogmatics being the guardian of the Armenian Church doctrines and orthodoxy, the researcher and publisher of valuable texts forming part of the Armenian ecclesiastical literature.

Dedicated clergymen gathered around “Ararat” monthly pushing forward the Armenian religious-theological thought through weighty scientific studies and analyses and publishing valuable materials on theological, dogmatic, ecclesiastical and historical issues.





ԼԵՅԼԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ  
ԵՊԼՀ

## ՀԱՅԵՐԵՆԻ ԵՒ ՊՈԼԻՆԵՉԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԳՈՒՅՆ** ավստրոնեզիական լեզվաընտանիքն ավանդաբար ներառում է չորս լեզվախմբեր՝ ինդոնեզիական, մելանեզիական, միկրոնեզիական եւ պոլինեզիական<sup>1</sup>, նաեւ մի շարք այլ լեզուներ, որոնցով խոսում են Մալայան կղզեխմբի (արշիպելագ), Հնդկաչինի, Թայվանի, Օվկիանիայի եւ Մադագասկարի բնակիչները:

Ընդունված տեսակետի համաձայն՝ ավստրոնեզիական նախալեզվից ամենից վաղ անջատվել են պոլինեզիական լեզուները: Վերջիններին հնչյունական համակարգերն ավելի աղքատիկ են (պոլինեզիական լեզուներում առկա է միայն խուլ պայթականների շարքը՝ k, t, p), քան մելանեզիական լեզուներինը (այստեղ արդեն երեւան են գալիս q, d, b, ts, dz, x, sh հնչյունները), իսկ մալայականում դրանց ավելանում են նաեւ այլ հնչյուններ<sup>2</sup>: Պոլինեզիական լեզուները հայտնի են որպէս աշխարհի ամենաքիչ հնչյուններ ունեցող լեզուներ, դրանց հնչյունների քանակը տատանվում է 12-17-ի միջեւ: Օրինակ, հավայերենը, որ համարվում է աշխարհի ամենապարզ քերականություն ունեցող եւ ամենահին լեզուներից մեկը, նաեւ ամենաքիչ հնչյուններ ունեցող լեզուն է. այն ունի ընդամենը 12 հնչյուն՝ հինգ ձայնավոր՝ a, e, i, o, u եւ յոթ բաղաձայն՝ h, k, l, m, n, p, w:

<sup>1</sup> Գոյություն ունեն նաեւ բազմաթիվ այլ դասակարգումներ, ինչը պայմանավորված է լեզվաընտանիքի անբավարար ուսումնասիրված լինելու հանգամանքով:

<sup>2</sup> <http://languages.garshin.ru/australasian/austric/austronesian/index.html>, ըստ Энциклопедический словарь Брокгауза и Ефрона

Մասնագետներն ավստրոնեզիական լեզվաընտանիքը նմանեցնում են մի բարձրաբերձ ժայռի, որի ստորոտում գտնվում են պոլինեզիական լեզուները (որոնք քերականական հարաբերություններն արտահայտում են ինքնուրույն ձևույթներով), միջին մասում մելանեզիական լեզուներն են (մանավանդ viti (վիտի) բարբառը<sup>3</sup>, որն արդեն ձևավորել էր ստացական դերանվանական հոդեր), իսկ ամենավերելում գտնվում են զարգացած ինդոնեզիական (մալայական) լեզուները (նախածանցավոր եւ վերջածանցավոր)<sup>4</sup>։ Պոլինեզիական լեզվախմբում նախապոլինեզերենից ամենավաղ անջատված լեզուն Զատիի կղզու (բնիկների լեզվով՝ Rapa Nui – Ռապա Նուի) լեզուն է՝ ռապանուերենը, որն առավել հարազատորեն է արտացոլում նախապոլինեզիական եւ նախաավստրոնեզիական լեզվավիճակները։ Այդ նկատառումներից ելնելով՝ ներկա ուսումնասիրությունը համար հիմք (կամ չափանիշ) լեզու ընտրվել է ռապանուերենը։

Ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրությունների քանակը մոտ 3000 է՝ ըստ դեռեւս անավարտ «Ռապանուերեն-հայերեն ընդհանրությունների բառարան»ի։ Դրանց մեջ բնիկ հայերեն համարվող ընդհանրությունների թիվն անցնում է 600-ից (մնացյալը համարվում են փոխառություններ տարբեր լեզուներից եւ անհայտ ծագման բառեր)։ Ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրությունների՝ բնիկ հայերեն ճանաչված զուգահեռներն ընդգրկում են Կ. Բաքի հնդեւրոպական համանիշների բառարանի բոլոր բառիմաստային (թեմատիկ) խմբերը։ Ռապանուերեն-հայերեն ընդհանրությունների թվաքանակը (ռապանուերենի բառապաշարի 50%-ը) եւ ընդգրկման ոլորտը (բոլոր բառիմաստային խմբերը) բավարար հիմք են տալիս ենթադրելու հայերենի եւ պոլինեզիական լեզուների ցեղակցություն, իսկ որակը (բառացի նույնություն կամ կայուն հնչյունափոխական օրինաչափությունների իրացման արդյունք)՝ նաեւ հայ-պոլինեզյան լեզվական հաջորդայնություն։ Կարելի է փաստել, որ հիմնական բառապաշարի եւ քերականության՝ որակ կազմող ընդհանրությունները, երկու լեզուների կառուցվածքների, զարգացման միտումների եւ ներքին օրինաչափությունների համընկնումները վկայում են, որ ի դեմս ռապանուերենի եւ հայերենի գործ ունենք չափազանց հնում գործածված նախնական մի լեզվի տարժամանակյա դրսեւորումների հետ։

<sup>3</sup> Այս բարբառի անունը նույնանում է հայերեն վիտի առանձին անգործածական արմատին, որի կրկնությամբ ունենք բրբ. (Ղբբ.) վիտիվիտի (անել) «շատախոսել», վիտվիտ (անել) «արագ-արագ խոսել», «բարձրաձայն կարգալ», վիտվիտալ «դատարկաբանել»։

<sup>4</sup> <http://languages.garshin.ru/australoasian/austric/austronesian/index.html>

Արդի հայերենի եւ ռապանուերենի հնչույթային համակարգերը ներկայացնում են չափազանց տարբեր պատկերներ. մեզ հայտնի հին գրավոր հայերենը՝ գրաբարն ունի 36 հնչույթ, որոնք արտահայտվում էին 36 տառերով, իսկ արդի հայերենի 36 հնչույթները գրության մեջ արտահայտվում են 39 տառերով: Ռապանուերենն ունի ընդամենը 14 հնչույթ (եւ կոկորդային պայթյուն), որոնք գրության մեջ արտահայտվում են 14 տառերով:

Հնչույթային համակարգերի տարբերություններից զատ տարբեր են նաեւ երկու լեզուներին վերագրվող տարիքները. ըստ պատմահամեմատական լեզվաբանության արդի նվաճումների՝ հայերենին վերագրվում է առավելագույնը 8 000–12 000 տարվա հնություն, իսկ հնագույն ավստրոնեզիական լեզվաընտանիքի պոլինեզյան ճյուղի լեզուներին, այդ թվում նաեւ ռապանուերենին՝ 40 000–50 000 եւ ավելի տարվա: Այդ պատճառով էլ հայերենի եւ պոլինեզիական լեզուների համեմատությունը չափազանց հետաքրքիր է երկուստեք՝ թե՛ հայերենի, թե՛ պոլինեզյան լեզուների ուսումնասիրման համար:

### Ռապանուերենի ձայնավորները

Ցավոք սրտի՝ մասնագիտական գրականության մեջ<sup>5</sup> քիչ տեղեկություններ կան ռապանուերենի հնչույթային համակարգի մասին՝ վերջինիս հնչույթաբանական առանձնահատկությունների մանրամասն ուսումնասիրության բացակայության պատճառով: Բայց նկատի ունենալով այն փաստը, որ ձայնավորների հնգաստիճան համակարգն ընդհանուր է բոլոր պոլինեզիական լեզուների համար եւ, ըստ ամենայնի՝ նաեւ առավել կայուն է, կարելի է փաստել, որ ավելի լավ են ուսումնասիրված ձայնավորների տիպաբանական բնութագրերը:

Վերականգնված նախապոլինեզերեն լեզուն ենթադրաբար ունեցել է հինգ պարզ ձայնավոր (/a/, /e/, /i/, /o/, /u/)՝ առանց երկար/կարճ հակադրության: Ձայնավորների այս հնգաստիճան համակարգն ընդհանուր է բոլոր պոլինեզիական լեզուների համար, իսկ դրանցում առկա երկար ձայնավորներն ու երկձայնավորները, ըստ լեզվաբանական ուսումնասիրությունների արդյունքների, հետագայում են առաջացել՝ ձայնավորների միաձուլման արդյունքում:

<sup>5</sup> Տե՛ս օրինակ՝ В. Крупа, Полинезийские языки, М., 1975, с. 19–31.

Ռապանուերենը եւս ունի հինգ ձայնավոր՝ **a, e, i, o, u**, որոնք ունեն հնչույթային տարբերություններ, կարող են լինել կարճ եւ երկար (կամ կրկնակի): Գրության մեջ երկար ձայնավորներն արտահայտվում են որպես կրկնակ ձայնավորներ. **a** – կարճ, **aa** – երկար կամ կրկնակի, **e** – կարճ, **ee** – երկար կամ կրկնակի եւ այլն:

Ռապանուերենի ձայնավորների համակարգն ունի հետեւյալ պատկերը.

Աղյուսակ 1.

| Բարձր.\շարՖ | Առաջնային | Միջին | Ետին |
|-------------|-----------|-------|------|
| Վերին       | i         |       | u    |
| Միջին       | e         |       | o    |
| Ստորին      |           | a     |      |

ա) Հայտնի է, որ հայերենի բարբառներում արձանագրվող ձայնավորների թիվը տատանվում է 6-ից 12-ի միջեւ: Սակայն՝ «Ուշագրության արժանի հանգամանք է այն, որ անկախ այդ միավորների քանակից, բոլոր բարբառներն էլ անխտիր ունեն հայերենի համար ընդհանուր վերը նշված վեց ձայնավորներ՝ **a, e, i, o, u, ə...** որոնք, ըստ բոլոր ուսումնասիրողների հավաստիացումների՝ իրենց արտասանական առանձնահատկություններով չեն տարբերվում ժամանակակից գրական հայերենի համապատասխան հնչույթներից: Դրանք փաստորեն այն ձայնավորներն են, որոնք վերականգնվում են նաեւ հին գրական հայերենի համար»<sup>6</sup>:

Գ. Զահուկյանը վաղնջահայերենի<sup>7</sup> համար վերականգնում էր հնգաստիճան ձայնավորային համակարգ (\***a**, \***e**, \***i**, \***o**, \***u**, \***ā**, \***ē**, \***ī**, \***ō**, \***ū**) եւ գտնում էր, որ այդ շրջանում երկար եւ կարճ ձայնավորները դեռեւս հնչույթային տարբերություն ունեին<sup>8</sup> (նկատենք, որ վերականգնված հնդեւրոպական նախալեզվի ձայնավորների համակարգը նույնպես բնութագրվում է երկար եւ կարճ ձայնավորների հակադրությամբ):

<sup>6</sup> Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Հայոց լեզվի պատմական քերականություն, հտ. 1, Հնչունաբանություն, Երեւան, 1982, էջ 32-33:

<sup>7</sup> Եզրը շրջանառության մեջ է դրել Գ. Զահուկյանը՝ որպես протоармянский ձեւի համարժեք: Հայերենի պատմական զարգացման փուլերի մասին իր անդրադարձումն առաջարկում է հետեւյալ շրջանաբաժանումը. վաղնջահայերեն՝ հայերենի կազմավորման հեռավոր ժամանակներից մինչեւ Ք. ա. ժԲ. դար եւ հնագույն հայերեն՝ Ք. ա. ժԲ. դարից հետո (տես Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 25-26):

<sup>8</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, էջ 36:

Այսպիսով, վաղնջահայերենի համար Գ. Ջահուկյանի կողմից վերականգնված ձայնավորային համակարգը<sup>9</sup> ճշտվել համապատասխանում է ռապանուերենի ձայնավորային համակարգին:

| Ռապանուերեն        | Վաղնջահայերեն       |
|--------------------|---------------------|
| a, e, i, o, u,     | *a, *e, *i, *o, *u, |
| aa, ee, ii, oo, uu | *ā, *ē, *ī, *ō, *ū  |

բ) Ժամանակակից հայերենի ձայնավորական համակարգը ներկայացնում է հետևյալ պատկերը:

Աղյուսակ 2.

| Բարձր.\շարժ | Առաջնային | Միջին | Ետին |
|-------------|-----------|-------|------|
| Վերին       | ի         |       | ու   |
| Միջին       | է(ե)      | (ը)   | օ(ո) |
| Ստորին      |           |       | ա    |

Եթե վերջինս համադրենք ռապանուերենի ձայնավորների համակարգը ներկայացնող աղյուսակի հետ, կստանանք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 3.

| Բարձր.\շարժ | Առաջնային | Միջին | Ետին    |
|-------------|-----------|-------|---------|
| Վերին       | i (ի)     |       | u (ու)  |
| Միջին       | e (է/ե)   | (ը)   | o (օ/ո) |
| Ստորին      |           | a     | (ա)     |

Ինչպես տեսնում ենք, ռապանուերենի i, e, u, o ձայնավորները տիպաբանորեն նույնական են արդի հայերենի համապատասխան (ի, է, ու, օ) ձայնավորներին, փոփոխվել է միայն a(ա)-ի տիպաբանական բնութագիրը՝ մեկ հատկանիշով. ռապանուերենում այն ստորին բարձրության միջին շարքի ձայնավոր է, իսկ հայերենում՝ ստորին բարձրության ետին շարքի:

գ) Արդի հայերենն ունի ը ձայնավոր, որ բացակայում է ռապանուերենում: Այն եւս ռապանուերենի a ձայնավորից տիպաբանորեն

<sup>9</sup> Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 225-226:

տարբերվում է մեկ հատկանիշով. ռապանուերենի **ա**-ն *ստորին* բարձրության միջին շարքի ձայնավոր է, իսկ հայերենի **ը**-ն՝ *միջին* բարձրության միջին շարքի:

Ըստ Հ. Մուրադյանի՝ «...ա ձայնավորը հին հայերենի դասական շրջանում միշտ կայուն եւ չհնչունափոխվող ձայնավոր էր», սակայն «...հետդասական եւ հատկապես միջին հայերենի շրջանից սկսած խախտվում է նրա այդ հատկությունը»<sup>10</sup>: Այս կարծիքը, թերեւս, կարիք ունի հետագա ճշգրտումների: Նորահայտ փաստերը խոսում են այն մասին, որ **ը** ձայնավորը նախապես կարող էր արտահայտվել *ա* հնչյունով, ինչին թերեւս ականատես ենք լինում ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրություններում, որտեղ առկա է ռապ. **ա** – հայ. **ը** համապատասխանություն.

ռապան. **ա**<sub>2</sub> «հող, գործածվում է անձնանունների հետ» – հայ. **ը** որոշալ հող,

ռապան. **ա**<sub>3</sub> «մեջ» – բնիկ հայ. **ըն**- (**ըն**-կալել, **ըն**-տանի), (**ըն**-գրկել) բխեցվում է հնիս. \*anti ձեւից, որի ներգոյականն է \*ant «երես, ճակատ, առաջակողմ»), ընդարձակ գործածութիւն ունեցող նախդիր, որ զանազան հոլովներով զանազան նշանակութիւններ է ստանում, այդ թվում՝ «մէջտեղը, միանգամայն»<sup>11</sup>: Կարծում ենք՝ համեմատելի է նաեւ հայ. **ըն**-դեր (**ըն**տեր) «փորոտիք, խորք» բառի հետ, որ բխեցվում է հ.ե. \*entero- «ներքին» արմատից եւ համեմատվում հ. հնդ. antra «ներքին», հուն. εντερα «աղիք, փորոտիք, ընդերք», լատ. interus «ներքին» բառերի հետ<sup>12</sup>,

ռապան. **ա**<sub>7</sub> «շրջապատել» – գրբ. **ըն**դ «շուրջ» (**ըն**-գրկել), (տե՛ս **ա**<sub>3</sub>-ը),

ռապան. mana<sub>3</sub> «մնալ» – մ(**ը**)նալ «մնալ», գրբ. մնամ (\*menā-՝ \*mēn- «մնալ». հմմտ. նաեւ հ. հնդկ. man- «հապաղել, հանգիստ մնալ», լատ. maneo «մնալ»),

ռապան. tatake (ta-take) «վեճ, վիճել» – գրբ. (ղրբ.) թակ տալ «ծեծել», թակ (ու) մհակ, նաեւ թըկըմըհակ «կռիվ, ծեծկռտուք», թըկը-թակե «ծեծ, տփոց», թակել «ծեծել»,

ռապան. hahari, (ha-hari) «կատակ, ծաղր» – հայ. հ(**ը**)ռհ(**ը**)ռալ «բարձրաձայն եւ անզուսպ ծիծաղել, ք(**ը**)ռք(**ը**)ռալ» եւ այլն:

<sup>10</sup> Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Հայոց լեզվի պատմական քերականություն, հատոր 1, Հնչյունաբանություն, Երեւան, 1982, էջ 76:

<sup>11</sup> Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան (այսու՝ ՀԱԲ), էջ 122:

<sup>12</sup> Հր. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱԲ, էջ 125, Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 248:

Ռապանուերեն որոշ երկվանկ բառերի *a* վերջնահնչյունը, որը դրանց հայերեն զուգահեռներում հնչահապավման արդյունքում սովորաբար օրինաչափորեն ընկնում է, երբեմն կարծես համապատասխանում է հայերենի ը որոշյալ հոդին: Օրինակ՝

ռապան, hegahega (hega-hega) «կարմրավուն, կարմիր, պայծառ» – գրբ. շէկ/շէկ<sup>13</sup> «զեղնակարմիր, խարտյաշ», բրբ. (Վն.) շէկ «շիկացած», (Ղրբ.) շէգ/շէգ (թերեւս՝ շէգյը),

ռապան, heva «խելագարություն», «խելագարվել» – գրբ. խեւ «գիժ, խելառ», Գ. Զահուկյանը կասկածանքով բխեցնում է հ.-ե. \*(s)kebh- «կտրել, ճեղքել» արմատից (թերեւս՝ խեւը),

ռապան, hega<sub>2</sub> «լուսը բացվել», hehega (he-hega) «լուսը բացվել, արեւածագ» – գրբ. ծագ (Գ. Զահուկյանը կասկածանքով բխեցնում է հ.-ե. \*g'ogh- «ցից, սյուն, ճյուղ» արմատից)<sup>14</sup>, բրբ. (Ղրբ., Տր., Տփ. եւլն) ծաք/ծէք «արեւածագ, արշալույս» (թերեւս՝ ծէքը),

ռապան, hega<sub>1</sub> «ձկան անվանում» – գրբ. ձուկ(ը)ն «ձուկ» (\*g'h(i)-kon՝ \*g'hiu-)<sup>15</sup>, բրբ. (Ղրբ.) ծուկնը/ծուկըն, տես նաեւ անհայտ ծագման զիգ(ը)ն «մի ձուկ» (կարելի է ենթադրել որոշյալ հոդի կրկնակի գործածություն) եւ այլն:

Այս համապատասխանությունը նկատվում է նաեւ հայերենում. հմմտ. օրինակ, գրբ. անկանել/ընկենուլ «զցել, նետել», որից ունենք՝ ընկեցիկ, զընկենուլ, զէնընկեց եւլն (բխեցվում է \*sengu- «ընկնել, խորասուզվել» արմատից, որտեղից ծագած է համարվում անկանել (\*sngu-)բայը<sup>16</sup>, իսկ ավելի ուշ շրջանում՝ գրբ. առատ/միջին հայերեն ըռատ «առատ, լի, առատաձեռն»<sup>17</sup>:

Այն մանավանդ հատուկ է հայերենի՝ գրաբարից ավելի հնատիպ համարվող արեւելյան խմբի առավել տիպական բարբառներին, ինչպես օրինակ՝ արածել/ըրածել, առաւել/ըռավալ, անդար-ընդերու «անտեր-անտիրական», անդոր/ընդուր «այդ պատճառով», առաջին/առաջի/ըռը-չի,<sup>18</sup> նաեւ ա նախասկիզբ ունեցող բառերի հոլովաձեւերում անգյուն/

<sup>13</sup> Համարվում է փոխառ. իրան. անհայտ աղբյուրից. Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 586:

<sup>14</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 357:

<sup>15</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 477:

<sup>16</sup> ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱԲ, էջ 128, Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 249, հմմտ. գ. \*sinkwan, գոթ. siggan, հ. վ. գ. sinkan, sinken «ընկնել, սուզվել»:

<sup>17</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 73:

<sup>18</sup> ՏԷՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Ղարաբաղի բարբառի բառարան, Երեւան, 2013:

ընգյունան/ընգյունավը, աշունք/ըշունքան/ըշունքավը, ախճիգյ/ըխճըկանա/ըխճըկանավը, անգունճ/ընգունճան/ընգունճավը եւլն:

Ենթադրում ենք, որ, ըստ ամենայնի՝ ռապանուերենում, նաեւ պոլինեզիական լեզուների միջեւ փաստված մի շարք հնչյունական համապատասխանություններ եւ հերթագայություններ հայերենի կազմավորման վաղնշագույն շրջանում սաղմնավորվող բարբառների նախնական հնչյունական տարբերությունների արտացոլումն են: Նորություն չէ, որ, «...բարբառային արդի տարբերությունների զգալի մասը հիմքերունի բարբառային ավելի հին տարբերությունների մեջ: Դրանց թվին են պատկանում հատկապես հնչյունական որոշ կարեւոր հատկանիշներ»<sup>19</sup>:

### Ռապանուերենի բաղաձայնները

Պոլինեզիական լեզուների բաղաձայնների թիվը տատանվում է 8–12-ի միջեւ: Բաղաձայնների ամենասակավաթիվ քանակն արձանագրված է հավայերենում (8): Անգամ արեւմտապոլինեզիական տոնգա լեզուն, որ պոլինեզիական լեզուների մեջ ամենահարուստ բաղաձայնական համակարգ ունեցող լեզուն է, ունի ընդամենը 12 բաղաձայն: Ռապանուերենը եւս ունի սակավաթիվ բաղաձայններ (10):

Պոլինեզիական բոլոր լեզուների պես, ռապանուերենը եւս գործածում է քմային հնչյուն (ng), որը հիշեցնում է անգլերեն լեզվի sing բառի ng-ն կամ ռուսերենի нг հնչյունակապակցությունը (դյուրինություն համար գրության մեջ արտահայտվում է g տառով):

Ինչպես նշվեց, ռապանուերենը շատ վաղ է անջատվել մյուս պոլինեզիական լեզուներից, ավելի վաղ, քան մաորին, մարկիզերենը, հավայերենը: Ըստ էմորիի՝ վիճակագրական տվյալները վկայում են, որ Զատկի կղզու լեզուն ամենից վաղ է անջատվել մյուս արեւելապոլինեզիական լեզուներից<sup>20</sup>: Այս մասին է վկայում նաեւ կոկորդային հնչյունի առկայությունը, որն անհետացել է Պոլինեզիայի այլ կղզիներում, սակայն պահպանվել է տոնգա լեզվում: Օրինակ՝ ռապան. ma'unga «սար» – տոնգա mo'unga, ռապան. ra'a «արեւ» – տոնգա la'a, ռապան. va'e «ոտք» – տոնգա va'e, ռապան. ho'ou «նոր» – տոնգա fo'ou, ռապան.

<sup>19</sup> Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայ բարբառագիտության ներածություն, Երեւան, 1972, էջ 189:

<sup>20</sup> K. P. EMORY, East Polynesian relationships, "Journal of the Polynesian Society", 1963, Vol. 72, p. 78–100.

tu'u «կանգնել» – տոնգա tu'u, ռապան. hetu'u «աստղ» – տոնգա fetu'u եւ այլն<sup>21</sup>: Ռապանուերեն բնագրերում կոկորդային հնչյունն արտացոլող նշանը սովորաբար չի նշվում՝ հրատարակչական գործընթացը հեշտացնելու նպատակով:

Հնչյունները ռապանուերենում նշանակվում են ըստ Ս. Էնգլերտի՝ 14 տառերով. A, E, G (ng), H, I, K, M, N, O, P, R, T, U, V:

Այսպիսով՝ ռապանուերենի հնչյունական համակարգն ամբողջությամբ ներկայացնում է հետեւյալ պատկերը.

Vowels

|     |     |     |     |     |
|-----|-----|-----|-----|-----|
| a   | e   | i   | o   | u   |
| [a] | [e] | [i] | [o] | [u] |

Consonants

|     |     |     |     |      |     |     |     |     |     |
|-----|-----|-----|-----|------|-----|-----|-----|-----|-----|
| h   | k   | m   | n   | g/ng | p   | r   | t   | v   | ʻ/ʼ |
| [h] | [k] | [m] | [n] | [ŋ]  | [p] | [r] | [t] | [v] | [ʔ] |

Պոլինեզիական նախալեզվի համար վերականգնված է բաղաձայնների հետեւյալ շարքը. \*p, \*t, \*k, \*q, \*m, \*n, \*ŋ, \*w, \*f, \*s, \*h, \*l, \*r:

Նախապոլինեզերեն լեզվի բաղաձայնական համակարգի համեմատությունը արդի պոլինեզիական լեզուներում դրանց արտացոլումների հետ հանգեցնում է այն եզրակացության, որ որոշ բաղաձայններ ավելի կայուն են, քան մյուսները: Այդ հարցի՝ պոլինեզիական 29 լեզուներում կատարված ուսումնասիրությունը<sup>22</sup> տվել է հետեւյալ արդյունքները (փակագծերում նշված թվերը ցույց են տալիս, թե համեմատվող 29 լեզուների քանի տոկոսն է պահպանել տվյալ հնչույթը). m (100%), p (100%), n (97%), t (97%), ŋ (93%), k (86%), f (62%), l (59%), s (49%), r (41%), ʔ (17%), w (14%), h (10%)<sup>23</sup>:

Պոլինեզիական լեզուների (այդ թվում՝ նախապոլինեզերենի) բաղաձայնական համակարգերի համեմատությունը վաղնջահայերենի՝ ակադ. Գ. Զահուկյանի կողմից վերականգնված բաղաձայնական համակարգի հետ բացահայտում է հետաքրքիր զուգադիպումներ, որոնց մասին ստորեւ:

<sup>21</sup> И. К. ФЕДОРОВА, «Говорящие дощечки» с острова Пасхи, Санкт-Петербург, 2001, с. 62–63.

<sup>22</sup> V. KRUPA, Consonantal Change in the Polynesian Languages, «Asian and African Studies», Bratislava, N6, 1972, p. 57–65.

<sup>23</sup> В. КРУПА, Полинезийские языки, М., 1975, с. 19.

ա) Գ. Զահուկյանի կարծիքով, վաղնջահայերենը պետք է որ ունենար հետեւյալ բաղաձայնները. \*b(h), \*d(h), \*g(h), \*j(h), \*p, \*t, \*k, \*c, \*p', \*t', \*k', \*wc', \*f (\*β)?, \*δ (\*θ), \*x (\*γ?), \*s, \*z, \*h եւ \*r, \*r̥, \*l, \*m, \*n ձայնորդները (մգացված են այն բաղաձայններն ու ձայնորդները, որոնք առկա են պոլինեզիական լեզուներում): Դրանց թվում, «...վաղնջահայերենի բուն ձայնորդների շարքը պիտի կազմեին \*r, \*r̥, \*l, \*m, \*n ձայնորդները»<sup>24</sup>: Ձայնորդների այս շարքն առկա է պոլինեզիական լեզուներում եւ վերականգնվում է նախապոլինեզերենում՝ բացառությամբ n(\*r̥)-ի: Բայց անհրաժեշտ ենք համարում նկատել, որ ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրություններում գործում է ռապանուերեն r – հայերեն n համապատասխանություն, ինչը նկատվում է նաեւ հայերենում: Բերենք օրինակներ.

ռապան. aaru<sub>1</sub> (a-aru) «բռնել, խլել» – գրբ. առ «առնելը, գրաւում, կողոպուտ, յափշտակութիւն, աւար եւլն», որից՝ առնուլ «առնել, գրաւել, նուաճել, խլել եւլն» (բխեցվում է հնիս. ar- «տալ, բաժին հանել, առնել, յուրացնել» արմատից)<sup>25</sup>,

ռապան. aaru<sub>2</sub> (a-aru) «միացնել բռնակով» – գրբ. ար «կից, կցուած, կողք-կողքի, միացած» (ar- «կցել, միացնել») եւ առ- (նախդիր եւ նախածանց) «մոտ, դեպի, կողքին» իմաստով, որից՝ առուկ, առնթեր, առանձին (\*per- արմատից)<sup>26</sup>,

ռապան. ara<sub>4</sub> «արթնացնել», «արթնանալ» – գրբ. արանել (յարեայ, արի) «վեր կենալ, կանգնել» (բխեցվում է \*r-n-՝ \*er- «շարժվել, բարձրացնել, հուզել»-ից)<sup>27</sup>,

ռապան. aro «առջեւի կողմը» – գրբ. առ- «նախդիր կամ նախադրութիւն, որ զանազան հոլովներով զանազան նշանակութիւններ է ստանում, այդ թվում դիմը, առջեւ... (բխեցվում է հնիս. par- ձեւից, որի բունն է համարվում \*perə- «առաջի»)<sup>28</sup>,

ռապան. gorogoro (goro-goro) «փնթփնթալ, խռմփացնել» – գրբ. գոռ «գոչիւն, բոռալու ձայն, բղավոց» (թերեւս հ.-ե.՝ \*ghor-s՝ \*gher- բնաձայնական արմատից)<sup>29</sup>,

<sup>24</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, էջ 225-226:

<sup>25</sup> ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱԲ, հտ. 1, էջ 247, Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 72:

<sup>26</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 72:

<sup>27</sup> Անդ, Երեւան, 2010, էջ 548:

<sup>28</sup> ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱԲ, հտ. 1, էջ 247:

<sup>29</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 168:

ռապան. **hariu**<sub>2</sub> «նայել ծուռ, թեք, խորամանկորեն», **ariu** «նայել ինչ-որ մեկին» – գրբ. **յառել** «հառել, մեկնել, սեւեռել, անքթիթ նայել» (ըստ Զահուկյանի՝ «թերեւս յ- նախածանցով բնիկ հ.-ե.՝ \*ar-s-՝ \*ar- «հարմարեցնել, կապել» արմատից)»<sup>30</sup>,

ռապան. **hiro**<sub>1</sub> «ոլորել, պտտել», **huri**<sub>4</sub> «շրջվել», «փաթաթվել, ոլորվել, կծկվել» – գրբ. **հիռ** «պտոյտ, շրջան, գալար» (թերեւս \*per-s-՝ \*sper- «պտտել, շրջել» արմատից),

ռապան. **kero** «թեք(վ)ել, ծալ(վ)ել» – գրբ. **կեռ** «ծուռ, կեռ, ճանկ» (\*ger-s-՝ \*ger- «պտտել, ոլորել» արմատից),

ռապան. **hurihuri**<sub>1</sub> (**huri-huri**) «զայրույթ» – գրբ. **հեռ** «հակառակու-թիւն, գժտութիւն, կռիվ, ոխ» (\*hers- «հուզել» արմատից)»<sup>31</sup> եւ այլն:

Այսպիսով, վաղնջահայերենի համար Գ. Զահուկյանի կողմից վերականգնված ձայնորդների շարքը եւս առկա է պոլիներգիական լեզուներում եւ վերականգնվում է նախապոլիներգիներում, իսկ հայերենի կոշտ **ռ(\*i)**-ի համար հնարավոր է ենթադրել երկրորդային ծագում:

**բ** Հայտնի է, որ հ.-ե. \***Լ**-ի դիմաց հայերենն ունի **Լ (ղ)**: Ըստ Գ. Զահուկյանի՝ վաղնջահայերենում «...\***Լ**-ն հավանաբար դեռեւս գոյություն չի ունեցել որպէս **Լ**-ի հատուկ տարբերակ, առավել եւս որպէս առանձին հնչույթ»<sup>32</sup> (ընդգծումը մերն է.– Լ. Ս.): Հիշեցնենք, որ հինգերորդ դարում (**Ա**) **ղ**-ն դեռեւս կողմնային ձայնորդ էր, հնչում էր որպէս կատկային [**ʎ**]: Հատկանշական է, որ այն՝ (\***Լ**)-ն, ոչ միայն գոյություն չունի պոլիներգիական լեզուներում, այլեւ չի վերականգնվում նաեւ պոլիներգիական նախալեզվում:

Պոլիներգիական լեզուներում գործում է **ր/ʎ** հերթագայություն. օրինակ՝ ռապանուերենի **ր**-ին մի շարք պոլիներգիական լեզուներում (նիուէ, սամոա, արեւելյան ֆուտունա, նուկուորո, հավայերեն) փոխարինում է **Լ**-ն: Ի դեմս պոլիներգիական լեզուներում առկա այս **ր/ʎ** հերթագայության, կարծում ենք, որ գործ ունենք նախավոր \***ր**-ի տրոհման (**ր** > **ր**, **ր** > **Լ**)՝ այսպէս կոչված «եւրոպական օրենքի» արտացոլման հետ: Ասվածի ապացույց կարելի է համարել մի ամբողջ շարք բառերում բացահայտվող ռապանուերեն **ր/** սամոա, նուկուորո, հավայերեն, նաեւ հայերեն եւ այլ հնդեւրոպական լեզուներ **Լ**, իսկ մի շարք հայերեն բառերում՝ նաեւ **ʎ** համապատասխանությունները<sup>33</sup>:

<sup>30</sup> Անդ, էջ 548:

<sup>31</sup> Անդ, էջ 457:

<sup>32</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, էջ 226:

<sup>33</sup> Տե՛ս Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայ-պոլիներգիական լեզվամշակութային ընդհանրություններ, Երեւան, 2015, էջ 83–84:

Բերենք օրինակներ.

1) *ռապան. r – հայ. լ.*

*ռապան. raga*, «հոսել, առաջացնել ջրափոս» – *հայ. լակ* – «լակում, լակելը» (*հ.-ե. \*lakk-`\*lak-* «չապացնելով ուտել, լակել»-ից), *լիթ. laku*, *լեթթ. laku*, *լakt*, *հւլ. lokati*, *լոֆա, սերբ. lõkati* *ռուս. локать*, *լեհ. lokam*, *նաեւ հայ. լական*, *բրբ. լազան* «կոնք, լազան»<sup>34</sup>,

*ռապան. rano* 1) «հրաբուխ, հրաբխի խառնարան (լճով)», 2) «սար» – *հայ. լ) լայն* «լայն», *բրբ. լէն/* (*հ.-ե. \*platen-`\*plāt-* «թեթեւ»), *հմմտ. սանս. prthú*, *լիթ. platùs*, *լեթթ. plats* *եւլն*, 2) *գրբ. լեառն*, *բրբ. լէռ/լէր/լեռ/լեր/լռռ* «լեռ, սար» (*հ.-ե. \*k'leitr-no`\*k'lei-* «հենել, հակել, թեքել» արմատից), *հմմտ. լատ. clivus* «բլուր», *հնդու. hlaiva*, *գոթ. hlaiw*, *անգլ. hlāw*, *հրգ. hlēo* «գերեզման»,

*ռապան. riva* «լավ» – *հայ. լաւ* «լավ» (*հ.-ե. \*labh-* «բռնել, ունեցվածք, կալվածք» կամ *\*lē(e)-/lei-* «ցանկանալ» արմատից), *հմմտ. հ. հնդ. lābha* «ձեռքբերում, օգուտ, շահ», *հուն. λαφύρον* «ավար, կողոպուտ», *լիտվ. lōbis* «հարստութուն, գանձ», *lābas* «բարիք, բարի», *լատվ. labs* «լավ, բարի», *լիթ. labas* «հարստութիւն», «հնարավոր է համարվում նաեւ համեմատութունը *հ.-ե. \*lē(e)-/lei-* «ցանկանալ» արմատից ծագող *հուն. λώϊος* «ավելի լավ» բառի հետ. տես ԱՃ. ՀԱԲ 2, 268»<sup>35</sup>,

*ռապան. ritorito (rito-rito)* 1) «սպիտակ, պայծառ», 2) «կարմիր» – *հայ. լ) լուրթ* «պարզ, բաց, պայծառ, բաց կապույտ», 2) «պայծառ, ուրախ, պարզերես», 3) «պայծառ արթուն մտքով», *նաեւ լուրջ* «բաց կապույտ, պայծառ» (ըստ Զահուկյանի՝ հազիվ թե կապ ունի *հ.-ե. \*lenk-*, *\*kleu-* «ողողել, մաքրել»-ի հետ), *հմմտ. նաեւ վրաց. լուրջի* «կապույտ», *մինգր. լուր-ժի*, *ինգիլ. լուրժ*, *սվան. յուրջ* «կապույտ», 2) *գրբ. լոյց*, *լուցումն* «բորբոքումն, վառումն», *լուցանել* «վառել» (*\*louks-*, *\*leuk-k*, *\*leuk-*)<sup>36</sup>,

*ռապան. raraga*, (*rara-ga*) «հյուսել (կողով)», «գործել (ուռկան, ցանց)» – *հայ. որոգայթ* «թափարդ, ծուղակ»։ Ըստ Գ. Զահուկյանի՝ «կազմված է –այթ վերջածանցով. (հմմտ. ճառագայթ)՝ որոգ արմատից, որ, թեբեւ, ծագում է հնդեւրոպական *\*ro-* ձեւից՝ *\*reu-* «պատռել, քանդել, փորել» արմատից». *հմմտ. ռուս. роб* «փոս»<sup>37</sup>։

<sup>34</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 260: Համարվում է փոխառություն պարս. lakan (lagan)-ից:

<sup>35</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 292:

<sup>36</sup> ՀԱԲ, էջ 304, Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 303:

<sup>37</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 608:

Հաշվի առնելով, որ ռապանուերենում բառիս հիմնական իմաստն է «հյուսել», «գործել (ուռկան)» (ոչ թե «քանդել, փորել»), ռապանուերեն *rara* արմատը համեմատելի է դառնում նաեւ գրաբ. լար «առասան, թոկ, պարան, լար, թել, ուղղալար, թակարդ, տոռն» «պարանի կանեփոյ» բառի հետ (հնխ. \*vləro-՝ \*wel- «պտտել, ոլորել»), հմմտ. նաեւ վրաց. լարո «լար, առասան, թակարդ», լարի «մետաքսէ կտոր, նուագարանի լար, աղեղի լար»<sup>38</sup>։ Մեր կարծիքով, վերջինիս՝ «հյուսված, գործված թակարդ» նախնական իմաստի օգտին է վկայում նույնարմատ հայերեն որոգայթա-դիր բառը եւ որոգայթ լարեալ լարիւք արտահայտությունը։ Նկատի ունենալով, որ ռապանուերենի *ga* մասնիկը հոգնակիության ցուցիչ է եւ համապատասխանում է գրաբարյան -ք հոգնակիակերտ մասնիկին<sup>39</sup>, հնարավոր է ենթադրել ռապանուերեն *raraga*<sub>1</sub> (*rara-ga*) – գրաբ. լար-ք համապատասխանություն՝ «թել-ք, պարան-ք» իմաստով։

ռապան. *reo*<sub>1</sub> «ձայն», «հնչող» – գրբ. լու «լսելի» (լու <\*k'lutos-), լու առնել «լսել տալ», լու լինել «լսուիլ», լու ի լու «լսելով, լսելի լինելով», հրամ.՝ լուռ<sup>40</sup>, հմմտ. ռուս. слышать «լսել», նաեւ լուր «ձայն լսելի, հնչյուն», որից լսել բայի հրամայական եգ. բ. դեմքը՝ լու՛ր (\*k'luro- \*k'leu «լսել» արմատից, որից նաեւ լու, լում, լսել)։

Նախնական *r*-ն պահված ենք գտնում սանս. ɕru «լսել», ɕrutá- «լուեալ», ɕrúti- «աականջ, տեղեկություն, լուր», ɕruš «լսել», զնդ. sru «լսել», srūta- «լուեալ», պհլ. srūtan «արտասանել», պրս. surūd «երգ», surūdan «երգել, խօսիլ» զուգահեռներում, իսկ Լ-ն՝ լատ. clueo, cluo «հռչակուիլ, անունը դուրս գալ», գոթ. hluma «ականջ», հ. բ. գ. hlosēn «ականջ դնել», hlūt «բարձրաձայն, լսելի ձայնով», ն. բ. գ. losen «ականջ դնել», կիմր. clywed, կորն. clevaf եւ բրլտ. klévout «լսել», հիսլ. hlust «ականջ», անգլ. listen «լսել», հսլ. slut i «կոչիլ, անվանի լինել», ռուս. слушать, слышать «լսել», слухъ «լսելիք» եւ ալլն,

ռապան. rerarera (*rera-rera*) «ծովի մակերեւոյթը» – գրաբ. երեր «երերում, տատանում» (բխեցվում է \*tres- «դողալ, երերալ»-ից), բրբ. էրէրալ/էրըրալ/էրէլմ/իարոլ (ըստ Հր. Աճառյանի՝ պարզ արմատն է *ter-*, որ պահված է միայն սանս. tarala «վախից դողալով» բառի մեջ) հմմտ. նաեւ

<sup>38</sup> ՀԱՐ, էջ 267–268։

<sup>39</sup> Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, նշվ. աշխ., էջ 170–173։

<sup>40</sup> Լու արմատը պահում է Ղրբ. լիւ «լսիր, թող, կայց». ինչ. լիւ կաց, լիւ ասեմ «կայց, ասեմ» (ՀԱՐ, 307)։

սանս. trasati «դողալ», զնդ. tərəsaiti «վախենալ», լատ. terreo «վախեցնել», terror «սարսափ», հւլ. tresa «ցնցել», ռուս. тряхти «ցնցել», трясёный «երերալ»<sup>41</sup>, նաեւ գրաբ. լեւալ «երերալ, շարժվել» (բխեցվում է \*lel- բնաձայնատիպ արմատից), հմմտ. նաեւ լիտվ. liliuoti «օրորել, ճոճել», չեխ. leleti «հուզել», ռուս. лежать «ալիքների վրա օրորել»<sup>42</sup> եւ այլն:

2) ռապան. r – հայ. լ>ղ.

ռապան. ragaraga<sub>2</sub> (raga-raga) «լողալ» – բնիկ հայ. լոզանալ/լոկանալ/լոդկանալ «լողանալ» (\*louəṇā, \*lou- «լվանալ» արմատից), լոդ (լաւդ, լոյդ, դոդ, դաւդ եւլն) «լողալը» (\*lel- (այլեւ \*lul-, \*lal-) «օրորել, ճոճել, դես ու գեն շարժել» արմատից),

ռապան. ruru<sub>3</sub> «ցուրտ» – հայ. բրբ. սլուլ «սառնամանիք», սղին «սառցաշերտ», սղոն «սառցակտոր»<sup>43</sup>, լեղուլ «ջրի մէջ հարելով հալեցնել» (հ.-ե. <\*lel-), լիլի «սառույցի կակղիլ՝ հալիլ սկսելը» (հ.-ե. \*leg- «կաթել, ծորալ»),

ռապան. horihori «հոգնություն, հոգնել» – հայ. յոյլ «ծուլ, դանդաղ, ծանրաշարժ» (\*solio-՝ \*sel- «սողալ, սողոսկել»), որից՝ յուլանալ/յուլանալ «ծուլանալ», նաեւ յոդալ «ծուլանալ», յուլոդ «մեղկացուցիչ», յոդեալ «ընկեցեալ»,

ռապան. rogo «հաղորդում» (հմմտ. հ.-ե. \*lok<sup>2</sup> «խոսել») – հայ. ողոք «աղաչանք», ողոդ «ողբ, լաց, կոծ» (հնիս. ol-), ողոդանալ (-անիլ) «լալ, ողբալ» (\*ol-ol-՝ \*el- բնաձայնական արմատից), ողբ «ողբ» (\*el-, \*ol-ից),

ռապան. roiroi «հոսել բերանից (թուքի մասին)» – հայ. լորձն «լորձ, լորձոնք» (\*s)lend(հ) «սահել» արմատից), նաեւ լոյծ «հալուկ, հալհալուկ» (leu-, lou-), հմմտ. լատ. re-luo «լուծել», so-lvo «լուծել», lues «լուծույթ, անմաքուր հեղուկ», ողոդ «թափելը, հոսելը», «ողողել, հեղեղել, ցողել, պարզաջրել» (բխեցվում է \*pol-ի կրկնավոր ձեւ՝ \*pel- «թափել, հոսել, լցնել» արմատից),

ռապան. hare<sub>3</sub> «թափել, ոթել, վայթել» – հայ. հալ «հալք, հալչելը» «լցնել, հոսել» (հ.-ե. \*pl- (\*pol, \*pel-) «լցնել, հոսել»-ից) եւ հեղ- «թափել, լցնել» (հ.-ե. \*pel- «լցնել, թափել, հոսել»), որից՝ հեղուկ «թափել» հեղեղ, նաեւ զեղ, որից զեղուկ, զեղանիլ «թափուելու չափ լցուիլ» (հնիս. \*pel-ից), տես նաեւ հայ. ողովթի (որովաթի) «հեղեղ» բառը, որ Գ. Զահուկյանը միացնում է ողող բառի հետ,

<sup>41</sup> ՀԱԲ, հ. 2, էջ 48-49:

<sup>42</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 294:

<sup>43</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, էջ 275:

ռապան. **huri**<sub>2</sub> «փորել» – գրաբ. **հոր** «փոս, խոր, ջրհոր», որից՝ հորել (\*poro-՝ \*por- «անցկացնել», «անցնել»?), անհայտ ծագման գրաբ. **փոր** «ծակ, պարապուկյուն, մեջը փոս տեղ», որից՝ փորել, (յետնաբար գրուած նաեւ **պորել**), բնիկ հայ. **պեղել** «փորել, հողը փորելով դուրս հանել» (bel- «կտրել, հանել, փորել» արմատից. հմմտ. սանս. bīla- «խոռոչ, ծակ, բացվածք», bīlma- «տաշեղ», վեդ. bāra- «ծակ, բացուածք», միդ. belach «ծերպ, ճեղք», նիդ. bealach «ճամբայ, լեռնանցք»), անհայտ ծագման գրաբ. **փող** «նեղ անցք, խողովակ»<sup>44</sup>,

ռապան. **are**<sub>1</sub> «ծաղիկ», **tiare** «ծաղիկ, ծաղկելը» – բնիկ հայ. **ծառ** «ծառ» (\*g'rsō-)<sup>45</sup>, ծաղիկ «ծաղիկ» (\*g'ol-(+իկ)՝ \*gel- «պայծառ, զվարթ շողալ» արմատից): Ռապան. **are1** «ծաղիկ» բառի նախնական՝ *ր-ով* արմատը պահված ենք գտնում հայ. **առուեղ** «մի տեսակ անծանօթ ծաղիկ», **առուոյտ**, գրված նաեւ **առուտ**, **առվոյտ**, **առոյտ**, **առուտ**, **առուտ** եւլն «մի տեսակ խոտ», **առսան** «անծանոթ մի բույս»<sup>46</sup>, բրբ. (Խրբ.) **արիշի** «որթատունկ», (Հվր.) **արիովր** «վայրի կանաչի տեսակ», (Մշ.) **արուք 1** «չոր ծառ», 2) «չորացած ծիրանենի», (Խն.) **արուսուկ** «ուտելի բանջար», (Ալշ. Հմշ. Նն.) **արոտ/արող**, (Գնձ. Ղրբ.) **արուտ** «մարգագետին, արոտավայր»<sup>47</sup>, (Ակն) **արոտակ** «գիհիի նման ծառ, ձխնի», (Լ.) **արոտկան** «լավ արածող»<sup>48</sup> բառերում, իսկ *լ/ղ-ով* տարբերակը՝ բնիկ հայ. **ծիլ** (ծիղ/ծէղ) «ծիլ, ընձուղ, բողբոջ» (\*gī-lo-՝ \*gēi- «ծլել, ծաղկել»)՝<sup>49</sup> եւ, թերեւս վերջինիս ձայնդարձային տարբերակ, սակայն կովկասյան (քարթվելական) աղբյուրից փոխառություն համարվող **ծալան** (բրբ. **ծալամ**) «խաղողի ուռ»<sup>50</sup> բառերում,

ռապան. **po** «մթնոլթյուն», «գիշեր», «օր» – գրաբ. **բալ/բաղ** «մէգ, մթին, մռայլ, մթագույն», «ամպ, աղոտ», «ծխի քուլա, գիշեր» (\*bhəl- «փայլուն, սպիտակ» արմատից), սանս. bhala- «փայլ», հսլ. bēlū «սպիտակ», լիթ. báltas «սպիտակ», լեթթ. bāls «գժգոյն», գոթ. bala «գժգոյն» եւ այլն,

ռապան. **kikiri**<sub>1</sub> (ki-kiri) «գլաքար» – գրաբ. **գիլ/գիղ** «գլորում, քար» (\*uel- «շրջել, ոլորել, պտտել, գլորել» արմատից), հմմտ. հ. հնդ. válati

<sup>44</sup> Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 766:

<sup>45</sup> ՀԱԲ, հտ. 2, էջ 446:

<sup>46</sup> ՀԱԲ, հտ. 1, էջ 265:

<sup>47</sup> Իմաստային մերձավորության առումով տես հատկապես՝ արոտի պառկեցնել արտահայտությունը՝ «հիվանդին լողացնել խոտերի թորմով» իմաստով:

<sup>48</sup> «Հայոց լեզվի բարբառային բառարան», Երևան, 2001, էջ 133–134:

<sup>49</sup> Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 362:

<sup>50</sup> Անդ, էջ 357:

«ոլորել, գլորել, փաթաթել», լատ. volvō «ոլորել, գլորել, դարձնել», հ. վ. գերմ. welzan «գլորել», ռուս. балыш «գլաքար» (տես նաև գրաբ. գուլ «բուլթ, ոչ սուր» (դանակ), որից՝ գլիլ «բթանալ»),

ռապան. kero «թեք(վ)ել, ծալ(վ)ել» – գրաբ. կեռ «ծուռ, կեռ, ճանկ» (\*ger-s-` \*ger- «պտտել, ոլորել» արմատից), նաև կեղ «ծուռ, թյուր, թերի», ըստ Զահուկյանի՝ թերեւս կ/խ հերթագայությունը կապված է խեղ բառի հետ, որ ծագում է հ.-ե. \*(s)k(h)el- «ծռել, հենել, ծուռ» արմատից»<sup>51</sup> (տես նաև կաղ) եւ այլն:

Բերված (եւ ոչ միայն) օրինակները թույլ են տալիս ենթադրել, որ գործ ունենք նախաձոր r-ի տրոհման (r>r, r>l) «եւրոպական» կոչված օրենքի արտացոլման հետ:

զ) Հայտնի է, որ գրաբարում վ հնչյունն ուներ եռատառ գրություն՝ վ, Լ, ու (v, w, u): Պոլինեզիական լեզուներին հատուկ է w/v հերթագայությունը, իսկ ռապանուերեն-հայերեն բառային զուգահեռներում գործում է ռապանուերեն u/v – հայերեն վ/լ համապատասխանություն, ինչպես օրինակ՝

ռապան. toutou (tou-tou) «թավ, խիտ (բույսերի, ծառերի մասին)» – գրաբ. թաւ, որից՝ թաթաւ (t'at'aw) «թանձր, խիտ (ծառի, անտառի համար ասված)» (բնիկ հայ բառ՝ հնխ. \*tuo-, \*tēu- «ուռչել» արմատից),

ռապան. tau, «տարի, դարաշրջան» – գրաբ. տիւ «ցերեկ, օրվա լույս մասը» (բխեցվում է հնխ. \*deu-` \*dei- «շողալ, փայլել» արմատից), տես նաև տի «օր», առանձին անգործածական արմատ, որ «կայ միայն երկտի «երկու օր» բարդի մէջ...» եւ տի «տարիք, հասակ» (հնխ. \*dit կամ \*diti)<sup>52</sup>,

ռապան. taviri tavara «պտույտ գալ, բոլորածիր պտտվել» – գրաբ. թաւալ «թավալում, գլորում» (ըստ Գ. Զահուկյանի՝ թերեւս \*tap- «սեղմել» արմատից)<sup>53</sup>,

ռապան. kevakeva (keva-keva) «ուժեղ ցավ» – հայ. ցաւ «ցավ» (Գ. Զահուկյանը կասկածով բխեցնում է \*k'sā-po-` \*k'sā- «այրել» արմատից),

ռապան. hau, «հով, սյուր» – գրաբ. հով «հով, հովանի, քամի» (\*pou-` \*p(h)u- «փչել, ուռչել» արմատից) եւլն:

դ) Արդի հայերենը բաղաձայնական հարուստ համակարգ ունեցող լեզու է, ունի եռաշարք պայթականներ, պայթաշփականներ եւ շփականներ: Ժամանակակից հայերենի եռաշարք պայթականների դիմաց

<sup>51</sup> Անդ, էջ 397:

<sup>52</sup> ՀԱԲ, էջ 403:

<sup>53</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 261:

ռապանուերենն ունի միայն խոսվ պայթականների շարքը: Ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրություններում գործում է խոսվ-ձայնեղ համապատասխանություն:

**Ռապան. k – հայ. գ.**

kiki<sub>1</sub> (ki-ki) «խոսել», «ասել» – հայ. **գո'գ** «ասել, գոչել» (հնխ. \*oguh-, \*ueguh- «հանդիսավոր կերպով խոսել»), kikiri<sub>1</sub> (ki-kiri) «գլաքար» – հայ. **գիլ** (գիղ) «գլորում, քար» (\*uel- «շրջել, ոլորել, գլորել, պտտել», **գուլ** «պակասեալ 'ի սրութենէ» (\*uel- «պտտել, ոլորել»), kio<sub>4</sub> «հմայել» – հայ. **գերել** «թովել, հմայել» (\*ueriio-, \*uer- «գտնել, վերցնել»), korokoro<sub>2</sub> (koro-koro) «հնդկահավ» – հայ. **գոռել** «հնդկահավ» (գոռալ բայից, որ ծագում է \*gher- բնաձայնական արմատից), ka<sub>4</sub> «գերազանց», kura<sub>2</sub> «լավագույն, ընտիր» – հայ. **գեր** «վեր, աւելի քան, բարձր» (\*uer- «բարձրացնել»), kau<sub>1</sub> «գնալ» – հայ. **գա-** «գալ» (\*uadh- «քայլել, գնալ»), գնալ (\*ghhē-nā-mi-`\*ghē- (չբմայնացած \*gh-ով) «լքել, հեռանալ, գնալ» արմատից)<sup>54</sup>, karu «սերմ, հատիկ» – հայ. **գարի** «գարի» (\*gher- «դուրս գալ, բուսնել, քիստ ունենալ» արմատից` \*gharua- (°)), kite<sub>2</sub> «տեսնել, նկատել», «իմանալ» – հայ. **գէտ** (գիտ) «գիտակ, գիտուն, գիտցող» (\*ueid-/`uoid- «տեսնել, գիտենալ»-ից), rakeia (rakei-a) «հագնված» – հայ. ագանիմ «հագնել» (ըստ Զահուկյանի` \*ou-` (\*eu- «հագնել»-ից), koa «բավարարվածություն, լինել բավարարված» – հայ. **գոհ** «արմատ գոհանալույ»<sup>55</sup>, kori «զավթել, խլել, գողանալ, գող» – **գող** «գող», գող- «անհետացում, գրավում, զավթում» (\*uolo- \*uel- «պոկել, շորթել, թալանել»-ից) եւն:

**Ռապան. t – հայ. դ.**

tigi «փոքրիկ քարե կացին» – հայ. **դակու** (տակու, դակուր, դագուր) «ուրագ կամ կացին» (\*dhāgu(r)-, \*dhag- «սրել, ծակել»), toku «իմ» – հայ. **դուք** «դուք», turi «եղեգի տեսակ», tuere «բույսի անվանում» – հայ. **դեղ** «(կանաչ, դալար) խոտ, դեղաբույս, բուժախոտ» (\*dhel- «ծաղկել, կանաչել», \*dhal-), terea (tere-a) «հանգստություն, հանգիստ» – հայ. **դարել** «կանգ առնել, կենալ, մնալ» (\*dher- «պահել, մնալ»), tatari «սպասել» – հայ. **դադար** «հանգիստ, դադարի տեղ, կանգառ» (\*dher- «պահել»), tanu «թաղել» – հայ. **դամբ** «թաղում» (\*dhmbh-`\*dembh- «թաղել»), ta «այդ» – հայ. **դ** երկրորդ դեմքի ցուցական հոդ, **դա** «դա, այդ» (\*to- ցուցական հիմքից), tai «ծով, օվկիանոս» – հայ. **դանդ** «թանձրացեալ մրուր հեղուկ

<sup>54</sup> Անդ, էջ 164:

<sup>55</sup> Համարվում է իրանական փոխառություն, բայց բուն աղբյուրը չի հավաստված:

նիւթոց» (\*dhn-dh-, dhm-dh-` \*dhem-, հմմտ. լատվ. danga «կեղտոտ ջրափոս») եւ այլն:

**Ռապան. ք – հայ. ք.**

քՕ «մթուխուն», «գիշեր», «օր» – հայ. քալ/քաղ «մէգ, մթին, մռայլն, մթագուն», «ծխի քուլա, գիշեր» (\*bhel- «փայլուն, սպիտակ»), քոտ «դանակի սուր ծայրը» – հայ. քութ «բութ, գուլ» (\*bhu-t-` \*bhau-, bhu- «խփել, հրել»), քաւ «ասել, պատմել» – հայ. քալ «խօսիլ, ասել», պարզ արմատն է՝ քա, որից՝ քարքառ «հնչուն, ձայն, խօսք, լեզու»<sup>56</sup> (հնխ. bha- «խոսիլ» արմատից), քաի «բշտիկ» – հայ. քուշտ «պալար, ուռուցք, բշտիկ, պալար» (\*b(h)(e)u- «ուռչել»), pipiri<sub>1</sub> (pi-piri) «որսալ, բռնել» – հայ. բուռն «ձեռքի բուռ, բռնի, բռնավոր», բռնեմ «ի բուռն առնել, ճանկել» (\*bhōr-, \*bhōr-no-, \*bher- «բերել, տանել»), քաւր «ամբողջ» – հայ. քուր «ողջ, համայն», «ամբողջ, բոլորակ» (\*bhol-, \*bhel- «փչել, ուռչել, բխել» արմատից), քա<sub>2</sub> «յուզոտ», «չաղ», քու, քուի «ազահաբար ուտել, ճարպակալած» – հայ. քուտ/քութ «ուտելիք, կերակուր» (\*bhug- «վայելել» – ից), քուի ա) «կատաղություն, զայրույթ» – հայ. բոհ «սպառնալիք, վախ, երկյուղ, սոսկում», որից՝ բոհմունք «ահագին ցասումն եւ սպառնալիք» (բնաձայն, կազմություն), բ) «սպառնալ, հանդիմանել» – հայ. բողոք «գանգատ՝ աղաղակաւ» (\*bholo-ko-, \*bhel- «հնչել, խոսել»), քա<sub>2</sub> «սկսել ծեծկռտուք» – հայ. քախ «արմատ բախելոյ, բախումն», «ընդհարում», «ավելի ուշ՝ բաղխ «հարված» (թերեւս զուգահեռ հ.-ե. \*bhu(m)bh-ին), ինչպես նաեւ իրանական լեզուներից փոխառություն համարվող մի շարք բառերում՝ քա<sub>1</sub> «ավարտել, վերջացնել» – հայ. քա «ծայր, վերջ, սահման» (համարվում է փոխառ. պրսկ. bav-ից), քա<sub>3</sub> ա) «մաս, բաժին» – հայ. բաժին/բարժին (բաժ) «մաս, բաժին» (համարվում է փոխառություն իրանական աղբյուրից՝ bāžīn), բ) «բաժանել» – հայ. բաժ «մաքս, հարկ, տուրք» (համարվում է փոխառություն իրանական աղբյուրից՝ baž)<sup>57</sup>, քա<sub>7</sub> «բավական, բավականաչափ» – հայ. քաւ, որից բաւարար, բաւական, բաւել «այնչափ, որչափ պիտոյ իցե» (համարվում է փոխառություն պրսկ. bav-ից) եւլն:

Հիշեցնենք, որ նման (խուլ-ձայնեղ) համապատասխանությունը հատուկ է **ցեղակից** լեզուներին: Է. Սեպիրը գտնում էր, որ լեզվի կաղապարը անփոփոխ էություն է, որը որոշում է, սակայն, փոփոխությունների բնույթն ու ուղղությունը. «...ցեղակից լեզուները կարող են հնչյունապես

<sup>56</sup> Հր. ԱճԱՌՅԱՆ, ՀԱԲ, էջ 385:

<sup>57</sup> Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 111, 112:

տարբեր լինել, բայց նրանց հնչունական համակարգերի կաղապարները կհամընկնեն այնպես, որ մի լեզվի **b, d, g** հնչուններին կարող են համապատասխանել մեկ այլ լեզվի **p, t, k** հնչունները»<sup>58</sup>։

Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրությունների բնույթի որոշման հարցում հենվենք այդ ընդհանրություններին բնորոշ հնչունական համապատասխանությունների բնույթի վրա։

## РЕЗЮМЕ

В результате сопоставительного сравнения армянского и полинезийских языков, в частности, рапануйского (остров Пасхи), обнаружены общие фонетические особенности. Некоторые из них выявлены между рапануйским и протоармянским, а звуковое соответствие глухой-звонкий, характерная для родственных языков, обнаруживается между рапанануйским и древнеармянским (грабар).

По нашему мнению, при определении характера рапануйско-армянских лексических общностей было бы правильно полагаться на характер фонетических соответствий характеризующие эти общности.

## SUMMARY

Some common phonetic characteristics have been revealed as a result of a comparative study of the Armenian and some Polynesian languages (the Rapanui language spoken on Easter Island, in particular). Some of them are revealed between Rapanui and Ancient Armenian languages, and the deaf-sonorous phonetic correspondence characteristic of related languages is found between Rapanui and the Classical Armenian language.

From our perspective, while determining the nature of Rapanui-Armenian lexical features, it would be more reasonable to rely on phonetic similarities existing between these languages.



<sup>58</sup> Э. СЕПИР, Язык, М.-Л., 1934, с. 134.

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու  
Սփյուռքի նախարարություն

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ԷԶԵՐՈՒՄ (ԺԹ. ՂԱՐԱՎԵՐՋ – Ի. ՂԱՐԱՍԿԻԶԲ)

«...1868 թ. մայիսի 1-ից, տպարանի բարեկարգութիւնը դեռ չվերջացած,  
սկսում է հրատարակել իւր տնօրէնութեամբ,  
Արել եպիսկոպոսի խմբագրութեամբ «Արարատ» ամսագիրը...»<sup>1</sup>:

**Մ**ԱՅՐ Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական առաջին հրատարակութիւնը՝ «Արարատ» ամսագիրը, արժեքավոր հոգւածներ է հրատարակել Պարսկաստանի հայ գաղթօջախի գործունեության վերաբերյալ: Դրանք ունեն աղբյուրագիտական նշանակութիւն՝ այդ երկրի հայության կյանքի (ԺԹ. դարավերջ – Ի. դարասկիզբ) մասին պատկերացում կազմելու համար:

Կովկասում հայագիտական առաջին պարբերականը լուսաբանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Պարսից արքունիքի հարաբերութիւնները, ինչպես նաեւ պարսկահայ գաղթօջախի կրթական եւ սոցիալ-տնտեսական կյանքը:

Հրապարակումների հեղինակներն են «Արարատ» ամսագրի խմբագրականը, առանձին հոգեւորականներ եւ աշխարհիկ գործիչներ:

ա. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Պարսից արքունիքի հարաբերությունների հարցը «Արարատ» ամսագրի էջերում. Հայտնի է, որ Հայոց պետականության բացակայության պայմաններում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրականացնում էր ազգապահպան եւ հայահավաք առաքելութիւն ու քաղաքականութիւն: Պարսից շահերի հետ կապերը, բարձրաստիճան պաշտոնյաների այցելութիւնները Սուրբ Էջմիածին եւ Հայոց հայրապետների հետ քննարկումներն ունեին կարեւոր նշանակութիւն Պարսկաստանի հայ գաղթօջախի ազգային ու եկեղեցական որոշ խնդիրներ լուծելու համար:

<sup>1</sup> Տէս Մ. ԱՔԵՂՅԱՆ, Գեորգ Դ. Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց, աշխատ. եւ ծանոթ.՝ Պ. Հովհաննիսյանի, Ս. Էջմիածին, 2014, էջ 73:

Հիրավի, Մայր Աթոռի եւ Պարսից արքունիքի միջեւ ձեւավորված հա-  
րաբերությունների նշանակության մասին է խոսում այն իրողությունը,  
որ 1870 թ. Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցին (1866–1882 թթ.) արժանա-  
նում է Նասր էդ-Դին շահի բարձր գնահատանքին: «Արարատ» ամսագ-  
րի այդ տարվա Դ. (թիվ 12) համարում գրված է. «Յանցելումս Պարսից  
Օգոստ. Շահէն առ Վեհ. Կաթողիկոսն Տ. Տ. Գեւորգ Դ. շնորհուած Առիծու եւ  
Արեգական առաջին կարգի շքանշանը հանդերձ կանաչ ժապաւէնի՝ որ Ա.-Պ.-  
բուրգոյ պարսկական նորոգ կարգեալ դեսպանին ձեռամբ՝ առաքուած էր ի  
Պ.-բուրգ, Ռուսաց Օգոստ. Կայսեր կողմանէ հանութիւն տրուած լինելով զայն  
կրելոյ, անցեալ մարտ ամսոյ 25ին հասաւ՝ ի Ա. Էջմիածին՝ Կովկասեան փո-  
խարայական կառավարութեան միջոցաւ. զոր Ա. Հայրապետը ստացաւ ար-  
ժանին պատուով»<sup>2</sup>:

Մայր Աթոռի եւ Պարսկաստանի բարձրաստիճան պաշտոնյաների  
միջեւ կապերի մասին է վկայում 1873 թ. օգոստոսի 24-ի այցելությու-  
նը. «Պարսից հինգերորդ բանակի հրամանատար եւ մեծ Եպարֆոսի եղբայր  
Վսեմ. Նասրուլլան խանն (Նասրալի մուլֆ), որ Օգոստ. Շահի ուղեկիցներէն  
է, Պարսկաստանի հեռագրաց ընդհանուր վերատեսուչն եւ հայազգի Մեծ.  
Ծատուր խանն ի Տփլիսէն յատկապէս ի Մայր Աթոռս ի Ա. Էջմիածին եկին  
Վեհ. Հայրապետի հետ տեսնուելոյ համար»<sup>3</sup>: Նրանք պետք է հանդիպե-  
ին Հայոց հայրապետին, սակայն վերջինս Բյուրականի ամառանոցում  
էր գտնվում: Նկատելի է, որ պարսից պաշտոնյայի այցելության կազմա-  
կերպման գործում մեծ էր եղել հայազգի Ծատուր խանի դերը:

Նասր էդ-Դին (1848–1896 թթ.) եւ Մոզաֆֆար էդ-Դին (1896–  
1906 թթ.) շահերի կառավարման շրջանում իրանահայության վիճակը  
որոշակիորեն փոխվեց: Երկիրը տնտեսական լճացումից դուրս բերե-  
լու, արհեստներն ու առեւտուրը խթանելու նպատակով նրանք հրապա-  
րակեցին մի շարք ֆերմաններ (հրովարտակ, հրամանագիր), որոնցով  
վերջ էր տրվում հայերի նկատմամբ եղած սահմանափակումներին, ար-  
գելվում էր նրանց բռնի հավատափոխությունը, կարգավորվում էր հայ  
քաղաքային եւ գյուղական բնակչությունից գանձվող հարկերի գան-  
ձումը, օրինականացվում էին հայ եկեղեցիների կալվածքները եւ այլն:  
Հայերին վստահվեցին արքունի եւ պետական բարձր պաշտոններ<sup>4</sup>:

<sup>2</sup> Տե՛ս «Խմբագրական. Առիծու եւ Արեգական առաջին կարգի շքանշան Վեհ. Կաթողիկոսի  
Ամենայն Հայոց շնորհեալ յՕգոստ. Շահէն Պարսից», «Արարատ» 1870, Դ. (թիվ 12), էջ 309:

<sup>3</sup> Տե՛ս «Խմբագրական. Պարսկաստանցի այցելուք», «Արարատ», 1873, Ը. (թիվ 8), էջ 312:

<sup>4</sup> Տե՛ս Վ. ԲԱՅԵՐՈՒՐԻՅԱՆ, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երեւան, 2013, էջ 23:

Ամսագրում վկայված է՝ «...Արեգակնափայլ շահի արդարասէր վարչութեան ներքոյ գրեթէ իսպառ վերացել են Պարսկահայքից բարբարոսական ննշումներն...»<sup>5</sup>:

1878 թ. ապրիլի 29-ին Նասր էդ-Դին շահն այցելում է Սուրբ Էջմիածին, հանդիպում Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսին, այս մասին «Արարատ» ամսագիրը հրապարակել է. «Նորին Արքայական Մեծութիւնն ի վաղուց հետէ ըղծացած է Հայաստանեայց այս հնադարեան եւ նուիրական կեդրոնը իւր բարեհաճ այցելութեամբ տեսնել եւ յարգել»<sup>6</sup>: Սուրբ Էջմիածնում շահն արժանանում է ջերմ ընդունելության: Ընդգծվում է շահի վերաբերմունքը Հայոց հոգեւոր կենտրոնի նկատմամբ. «Նորին Արքայական Մեծութիւնը՝ երբ նեմարանէն կմեկնէր՝ 700 յանուն նեմարանի եւ 300 յանուն կաթողից՝ ամենը հազար ոբլ. նուիրեց»<sup>7</sup>:

Նասր էդ-Դին շահը հայերի նկատմամբ ունեցել է մեղմ վերաբերմունք, եւ դա արտահայտվել է տարբեր առիթներով: 1888 թ. շահը Մակար Ա. Թեղուտցի (1885-1891 թթ.) Հայոց կաթողիկոսին շնորհել է ջքանշան: Այդ առիթով շահի հրապարակած հրամանագրում նշվում է. «Ի վկայութիւն Մեր արքայական բարեհաճութեան եւ մտերմութեան առ Ձեր Սրբութիւնը... մենք հանգեցանք եւ լիովին արդար ու պատշաճ դատեցինք երեւելի կացուցանել Ձեր Սրբութիւնը Մեր առանձին շնորհքի եւ յատուկ բարեսիրութեան արտայայտութեամբ առ Ձեզ: Ուստի շնորհում ենք Ձեզ Մեր աղամանդեայ կենդանագիրը...»<sup>8</sup>:

Մակար Ա. Թեղուտցին դեռեւս 1848 թ., երբ տակավին վարդապետ էր, Ներսէս Ե. Աշտարակեցու (1843-1857 թթ.) հրամանով մեկնել էր Պարսկաստան՝ հայերեն հին ձեռագրեր որոնելու: Նա մեկ տարի բնակվել էր Պարսկաստանում, ծանոթացել այդ երկրին, շփվել էր տարբեր պաշտոնյաների հետ եւ դարձել Պարսկաստանի հետ հարաբերություններում փորձառու գործիչ:

«Արարատ» ամսագրում ներկայացվում է Պարսկահնդկահայոց թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոսի կողմից Մակար Ա.

<sup>5</sup> Տէն «Խմբագրական. Հայաստանեայց եկեղեցին Պարսկահայքում եւ հեռուոր գաղութներում 1885 թուին», «Արարատ», 1896, Գ., էջ 137-138:

<sup>6</sup> Տէն «Խմբագրական. Նորին Մեծութիւն Նասրէտուն Շահ Պարսկաստանեայց ի Ս. Էջմիածին», «Արարատ», 1878, Դ., էջ 156:

<sup>7</sup> Անդ, էջ 158:

<sup>8</sup> Տէն «Խմբագրական. Նորին Մեծութեան Պարսից Շահի ֆիրմանն առ Վեհափառ Կաթողիկոսն Ամենայն Հայոց», «Արարատ», 1888, Ժ., էջ 615-616:

Թեղուտցի հայրապետին շքանշանի հանձնման հանդիսավոր արարողությունը<sup>9</sup>: Հայոց հայրապետի մտահոգությունն ու նպատակը Պարսկաստանում հայկական կրթօջախները հնարավորին չափ բարեկեցիկ ու ապահոված տեսնելն էր՝ ինչ-որ առումով պետություն հոգաժուխյան եւ աջակցություն ներքո:

Նշենք, որ 1880 թ. Նոր Զուղայում կառուցվում է դպրոց, որտեղ 1883 թ. կենտրոնացվում է երեք դպրոց. նոր դպրոցը անվանում են Ազգային կենտրոնական դպրոց: Ժ. Դ. 2-րդ կեսին Թավրիզում բացվում են «Աննայեան», «Հայկազեան», «Թամարեան» եւ այլ դպրոցներ: 1879 թ. հիմնադրվեց Թավրիզի իգական առաջին դպրոցը: 1909 թ., Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ծրագրով, Թավրիզում բացվեց թեմական երկսեռ դպրոց: 1891–1892 թթ. Թեհրանում հիմնվեց իգական առաջին դպրոցը: 1891 թ. Ազգային դպրոց բացվեց Թեհրանի Դարվազե Ղազվին թաղամասում, 1903 թ.՝ Դարվազե Դովլաթի թաղում: 1870-ական թթ. դպրոցներ հիմնվեցին Սալմաստ գավառի Հաֆթվան, Փայաջուկ, Ղալասար գյուղերում: 1903 թ. Փայաջուկ գյուղում կառուցվեց դպրոց<sup>10</sup>:

Պատմական որոշակի արժեք է ներկայացնում Հայոց կաթողիկոսների եւ Պարսից շահերի նամակագրությունը, որը վերաբերում է թեմական առաջնորդներին՝ պարսից կողմից ճանաչման խնդրին: Մկրտիչ Ա. Վանեցի (Խրիմյան Հայրիկ) կաթողիկոսի գրած երկու նամակին ի պատասխան՝ 1899 թ. Մոզաֆֆար էդ-Դին շահը տեղեկացնում է, որ Սահակ եւ Մաղաքիա եպիսկոպոսները համապատասխանաբար Ատրպատականի ու Պարսկահնդկահայոց թեմերում Պարսից պետության կողմից ճանաչվել են որպես առաջնորդներ եւ արժանացել շահի բարձր ուշադրությանը. «Յայտնում ենք, որ շնորհիւ Զեռդ Վեհ. Բարի ընտրութեան, այդ եպիսկոպոսները հետեւելով իրենց նախորդներին՝ չափի շեղուեն պետութեան եւ ժողովրդին բարիք բերող նամակարհից»<sup>11</sup>: Շահի մեկ այլ՝ 1902 թ. հրովարտակով<sup>12</sup> Եղիշե Ժ. վրդ. Մուրադյանը հաստատվում է որպես Ատրպատականի թեմի առաջնորդ:

<sup>9</sup> Տե՛ս «Խմբագրական. Պարսից Արեգակնափայլ Նասրէտտին Շահի շքանշանն առ Վեհափառ Հայրապետն ազգիս», «Արարատ», 1888, Թ., էջ 576–577:

<sup>10</sup> Տե՛ս Վ. ԲԱՅՐՈՒՐԿԱՆ, Իրանն այսօր, Տեղեկատու, Երեւան, 1999, էջ 287:

<sup>11</sup> Տե՛ս «Մուզաֆֆէրէդդին, Կաջար Շահնշահ Պարսից Արեգակնափայլ Շահի գրութիւնն ի պատասխան Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Հայրապետի երկու նամակներին», «Արարատ», 1899, Բ., էջ 52–53:

<sup>12</sup> Տե՛ս «Խմբագրական. Պարսկահայք», «Արարատ», 1902, է.-Ը., էջ 677–678:

Ընդունելով իր նախորդի՝ Նասր էդ-Դին շահի՝ Հայ Եկեղեցու նկատմամբ որդեգրած դիրքորոշումը՝ Մոզաֆֆար էդ-Դինը եւս այցելեց Մկրտիչ Ա. Վանեցի հայրապետին։ 1900 թ. Եւրոպա մեկնելիս շահը Երեւանում հանդիպում է Հայոց կաթողիկոսին եւ խոստանում վերադարձին այցելել Մայր Աթոռ։ Շահին ուղեկից նշանակված ադյուտանտ<sup>13</sup> Դ. Արսենելը հոկտեմբերի 9-ին Ելենովկա<sup>14</sup> կայարանից հեռագիր է ուղարկում Սուրբ Էջմիածին եւ տեղեկացնում, որ «Նորին Արքայական Մեծութիւնը Մայր Աթոռում կլինի հոկտեմբերի 11-ին»<sup>15</sup>։

Նորին Սուրբ Օծուկյան հրամանով արքայի ընդունելության համար կազմվում է հանձնաժողով, որը ամենայն պատասխանատվությամբ եւ բժախնդրութեամբ էր մոտեցել կազմակերպչական հարցերին։ Պարսից արքայի դիմավորման եւ հրաժեշտի արարողակարգի նկարագրութեանից նկատվում է, որ իրականացվել էին դիվանագիտական նուրբ աշխատանքներ։ Շահի այցելութեան առիթով Հայոց հայրապետն ուղարկել էր իր կառքը նրա համար։ Սուրբ Էջմիածնում շահին դիմավորում են հոգեւոր ճեմարանի, հարակից գյուղերի դպրոցների սաները, իսկ Մայր Տաճարի զանգակատան առջեւ՝ Հայոց կաթողիկոսը՝ «Թագաւոր փառաց» շարականի եւ զանգերի ղողանջների ներքո։ Հայոց հայրապետը շահին ողջունում է փոքր ճառով<sup>16</sup>։

Հյուրերի ուշադրութեան կենտրոնում էր Մայր Տաճարում դեռեւս շահ Աբաս Մեծի օրերից կախված ջահը, որը ժամանակին տիրակալը նվիրել էր Մայր Աթոռին։

Շահի այցը Սուրբ Էջմիածին հաջողված կարելի է համարել։ Երբ շահը դուրս է գալիս Մայր Տաճարի թանգարանից, հնչում է Կոմիտաս վարդապետի ձայնագրած եւ պարսից արքային նվիրված քառաձայն երգը, որի «է՛յ Շահ» բառերի կրկնութիւնը գրաւեց Նորին Մեծութեան ուշադրութիւնը...»<sup>17</sup>։ Հիրավի, սա կատարողական բարձր արվեստի ներկայացումն էր պատվելի հյուրերին։ Մոզաֆֆար էդ-Դին շահը, Նասր էդ Դինի օրինակով, հազար ուրբի նվիրեց

<sup>13</sup> Համհարզ՝ ռազմական ցածր աստիճանի սպա, որն օգնում է հրամանատարին՝ ծառայողական հանձնարարութիւններ կատարելով։

<sup>14</sup> Այս բնակավայրը 1842 թ. հիմնադրել են եկվոր ռուս աղանդավորները եւ կոչել Ելենովկա՝ ի պատիւ Պավել Ա. կայսեր դուստր Ելենայի։ 1935 թ. այն վերանվանվել է Սեւան։

<sup>15</sup> Տէս ԳԱՐԵԳԻՆ ՎՐԳ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Մոզաֆֆեր էդ-Դին շահի գալուստն ի Մայր Աթոռ, «Արարատ», 1900, Ժ., էջ 457-461։

<sup>16</sup> Տէս անդ, էջ 459։

<sup>17</sup> Տէս անդ, էջ 460։

ճեմարանին: Հատկանշական է, որ ամսագրում հրապարակված է շահի լուսանկարը<sup>18</sup>:

Պարսից շահերի եւ Հայոց կաթողիկոսների միջեւ ձեւավորվել էր նամակագրություն, որը հայություն խնդիրներին առնչվելուց զատ, ուներ նաեւ միմյանց տոները շնորհավորելու մշակույթ: «Արարատ» ամսագրում հրատարակվել է 1902 թ. Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոսի՝ նովրոգի առիթով շնորհավորական նամակը պարսից Մոզաֆֆար էդ-Դին շահին եւ պատասխան շնորհակալական նամակը նրանից<sup>19</sup>:

1907 թ. Ա. համարում ամսագրի խմբագրակազմն ափսոսանքով հայտնում էր շահի մահվան մասին. «...Պարսիկներից յետոյ ոչ ոք այնքան հետաքրքրութեամբ չի հետեւել Շահի առողջութեան լուրին, քան Հայոց ազգը: Եւ այս շատ հասկանալի է. Վեհապետի գան բարձրանալու օրից նա փաշալեռել է Հայոց դպրոցները, խրախուսել ամէն մի յառաջադիմական փայլ. թատրոն, բարեգործական ընկերութիւն, եկեղեցի նորա հովանաւորութիւնն են վաշելել»<sup>20</sup>: Հայերն ակնհայտ ցույց էին տալիս այն մեծ հարգանքը, որ տածում էին շահի հանդեպ:

Պատմական իրադարձությունները ճիշտ պատկերացնելու համար պետք է դիմել համեմատական մեթոդին: Արդ, եթե համեմատենք հայության մի փոքր հատվածի վիճակը Պարսկաստանում, մյուս կողմից՝ առավել մեծ թիվ կազմող արեւմտահայության վիճակը Օսմանյան կայսրությունում, ապա կստանանք տարբեր պատկերներ: Թուրքական իշխանությունը հատուկ նպատակով եւ ծրագրով ոչնչացման քաղաքականություն էր վարում արեւմտահայոց նկատմամբ, մինչդեռ պարսկական տերությունը չէր սպառնում հայության գոյությունը:

Ի դեպ, նույն 1907 թ. իր մահկանացուն կնքեց նաեւ Մկրտիչ Ա. Վանեցին՝ խորմյան Հայրիկը:

Բ. Պարսկաստանի հայ անվանի գործիչների, Սպահանի հայությամբ սպառնացող սովի վերաբերյալ հրապարակումները «Արարատ» ամսագրում. Իրանահայությունը միշտ հանդես է եկել որպես իր միջավայրի քաղաքակրթության զարգացմանը նպաստող ուժ: Պարսիկ պատմաբան Խոսրով Չաքերին ընդգծում է այն իրողությունը, որ թեեւ հայերն Իրանում

<sup>18</sup> Տե՛ս անդ, էջ 458:

<sup>19</sup> Տե՛ս «Խորիմեան Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Վեհափառ Հայրապետի հետագիրը Պարսից Շահնշահին Նովրոգի առթիւ եւ Նորին Մեծութեան պատասխանը», «Արարատ», 1902, Գ.-Դ., էջ 207:

<sup>20</sup> Տե՛ս «Խմբագրական. Մոզաֆֆեր էդ-Դին շահի մահը», «Արարատ» 1907, Ա., էջ 55:

մահմեդական բնակչության ծովում կազմում էին չնչին փոքրամասնություն, սակայն չափազանց կարեւոր դերակատարում ու ներդրում են ունեցել այդ երկրի հասարակական զարգացման, մշակութային առաջընթացի եւ առհասարակ մտավոր ու քաղաքական կյանքում<sup>21</sup>:

Պարսկաստանում ապրող հայ անվանի գործիչներին անդրադարձել է Գալուստ Շիրմազանյանցը: Նրա հոգվածներից պարզ է դառնում, որ Պարսկաստանում ականավոր ռազմական գործիչ է եղել Մանուշար խանը<sup>22</sup>, իսկ «էնիկօլօփեանց» գերդաստանից հայազգի յոթ պետական գործիչներ ժԹ. դարասկզբից մինչեւ կեսերը զբաղեցրել են զինվորական, տնտեսական եւ քաղաքական բարձր պաշտոններ: Գալուստ Շիրմազանյանցը առանձնացնում է «Սուլէյման խան էնիկօլօփեանին», որը «էն տէրութեան մէջ իր ժամանակակիցների մէջ առաջին ֆաշ զօրավարն էր, ինչպէս եւ 1853 ամի 16 յունուարի Թէհրանումը նրա փառացի եւ շֆեղ հանդէսով յուլարկատրութեան օրը (որի նմանը ոչ թէ մէկ հայի, այլեւ մուսուլմանի համար դուն ուրեմ էր էն տէրութիւնը կատարած) Հայոց եկեղեցւոյ գաւթումը ողջ առաջնակարգ զինուորական եւ ֆաղափական անձինքներն էստեղ էնտեղ բոլորուած՝ նորա պատերազմական արհեստի հմտութեան եւ անչափ ճակատամարտեր մղելու վերայ ասում, խօսում եւ խոստովանում էին...»<sup>23</sup>:

Խոսելով Սուլէյման խանի՝ պարսկական հասարակության մեջ զբաղեցրած բարձր դիրքի մասին՝ հեղինակը եզրակացնում է. «Հանգուցեալն էնպէս ականաւոր անձն էր, որ Իրանումը նա միմիայն արտօնութիւն ուներ ջսաբբայով (վերարկուով) եւ գաւազանով ներկայանալու Տիեզերքի Աղօթաւանին կամ Բարձրագոյն Ատենումը»<sup>24</sup>:

Ամսագրի խմբագրականազմի ուշադրությունից չէր վրիպում գաղթավայրերում առաջացած արտակարգ դեպքերը: 1869–1872 թթ. սովի պատճառով մահացավ Պարսկաստանի ողջ բնակչության 10%-ը<sup>25</sup>: Սպահանի հայությունը եւս սպառնում էր սովը<sup>26</sup>, որն ավելի էր սաստկանում, քանի որ բեկլարբեկը հրաման էր տվել պատժել քաղաք հաց բերողին<sup>27</sup>:

<sup>21</sup> Տէս Վ. ԲԱՅԲՈՒՐԳՅԱՆ, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, էջ 9:

<sup>22</sup> Տէս Գ. ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՅ, Զինուորական հայ պաշտօնակալք ոմանք ի Պարսկաստան, «Արարատ», 1878, Զ.-է., էջ 275–279:

<sup>23</sup> Տէս Նույն ուսումնասիրությունը՝ «Արարատ», 1878, Ե., էջ 197–200:

<sup>24</sup> Տէս անդ., էջ 197:

<sup>25</sup> Տէս Վ. ԲԱՅԲՈՒՐԳՅԱՆ, Իրանի պատմություն, Երեւան, 2005, էջ 501:

<sup>26</sup> Տէս «Խմբագրական. Սով ի Սպահան: Յայտարարություն», «Արարատ», 1871, Ը., էջ 462–465:

<sup>27</sup> Տէս Մ. ՍԱՐԳՍԵԱՆ, Սով ի Պարսկաստան, «Արարատ», 1872, Դ., էջ 170–171:

Հայ Եկեղեցու հոգեւոր իշխանության կողմից Ռուսաստանի հայոց բոլոր վիճակներին ուղարկւում է հրահանգ, որի համաձայն՝ ձեւավորվում են նպաստահավաք մարմիններ, որոնց միջոցով հավաքված օգնությունը նախ ուղարկվում էր Սուրբ Էջմիածնի սինոդին, ապա՝ բաշխվում Սպահանի հայ կարիքավորներին: Այս առնչությամբ խմբագրակազմն իր շնորհակալությունն էր հայտնում Դավրեժ քաղաքի հայ ազգային գործիչներին, Մադրասի ընկերությունը, Կալկաթայի, Բաքվի հայությունը, ինչպես նաեւ Սպահանի «Արկեղ» աղքատաց ընկերությունը, որոնք օգնության ձեռք են մեկնել սովյալներին: Ներկայացվում էր բարերարների ցուցակը<sup>28</sup>:

Արտակարգ դեպք էր 1872 թ. մայիսի 12-ին Ատրպատականում՝ Սավրիում, տեղի ունեցած բնական աղետը: Անձրեւից ու գյուղ մտնող գետից առաջացած հեղեղը լցվել էր տները՝ մեծ վնասներ պատճառելով հայ չքավոր գյուղացիներին՝ «...40 հայք կգտնեն իւրեանց տունը հիմնայատակ կործանուած, ոմանք կիսով չափ փլատակեալ»<sup>29</sup>:

գ. Պարսկաստանի հայ գաղթօջախի կրթական հարցերը «Արարատ» ամսագրում. Ամսագրի խմբագրակազմի օրակարգում էր կրթական գործի կազմակերպմանը վերաբերող հարցերի հավուր պատշաճի լուսաբանումը: Ըստ հրատարակված վիճակագրական տվյալների՝ 1898 թ. Ատրպատականի թեմում գործել է 30 դպրոց. գրանցից չորսն ուներ ուսուցիչների կարիք, իսկ 26 դպրոցում աշխատում էին 47 ուսուցիչ. «...երէ դուրս գանք Թաւրիզի 6 ուսումնարանները (2 տղայոց, 2 աղջկանց, 2 մանկապարտէզ. կանոնապէս 2 արհեստանոց աղջկանց կար ու ձեւի, որ ուսումնարան չենք հաշուել)՝ իրենց 23 ուսուցիչներով եւ 580 աշակերտներով՝ կունենանք հետեւեալ թուերը. 231 տան վրայ գալիս է 1 ուսումնարան, 7 տունից՝ մի աշակերտ, կամ 42 անձից մին միայն ուսանող է: Իսկ Թաւրիզում միջին հաշուով մի ծովս մի ուսանող է տալիս»<sup>30</sup>:

Անմխիթար վիճակում էին գտնվում թեմի գրադարանները. «Ատրպատականում մի միայն Թաւրիզի, Հաֆթուանի եւ Ղալասարի գրադարաններն են փոքր-ինչ գրադարանի նման»<sup>31</sup>: Մնացյալ դեպքերում կարելի էր հանդիպել մասնավոր անձանց, որոնք մի քանի գիրք հավաքելով՝ կարող էին

<sup>28</sup> Տէս ԽԱԶԱՏՈՒՐ ՎՐԻ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Յայտարարութիւն եւ հաշիւ.... Նոր-Ջուղայու, «Արարատ», 1875, ժ., էջ 390-394:

<sup>29</sup> Տէս Օ. ՏԷՐ-ՕՆՆԵԱՆՑ, Հեղեղ ի Սաւրի, «Արարատ», 1872, է., էջ 294:

<sup>30</sup> Տէս «Խմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայր», «Արարատ», 1898, ժԱ.-ԺԲ., էջ 507:

<sup>31</sup> Տէս ԵՂԵՇ Ե. ՎՐԻ. ՄՈՒՐԱԳԵԱՆ, Համառօտ ակնարկ Ատրպատականի թեմի կացութեան եւ կարիքների վերայ, «Արարատ», 1902, ժԱ.-ԺԲ., էջ 2034:

բացել աղքատիկ գրադարան, իսկ մի քանի ամիս անց հայտնի էր դառնում, որ այն փակվել է: Այլ կերպ ասած՝ առկա չէր գրադարանային կազմակերպված աշխատանքներ իրականացնող որեւէ կառույց:

Պատկերը նույնն էր նաեւ դպրոցներում, որտեղ չկար ծրագիր, նյութական միջոցներ եւ հսկողություն. «Ուրոնում են գլխաւորապէս էժանագին՝ տարեկան 100-180 ռուբլիանոց վարժապետներ: Բողոքական միսիոներական նորմալ դպրոցի աշակերտը համարում էր լաւ ուսուցիչ»<sup>32</sup>: Դպրոցները նյութական կամ ուսուցչի բացակայության պատճառով երբեմն տարիներով փակ էին մնում: Վիճակը համեմատաբար բարձր էր Թավրիզի «Արամեան»<sup>33</sup> եւ «Հայկազեան» դպրոցներում, որտեղ տարեկան ծախսվում էր ավելի քան 14.000 ռուբլի գումար, սակայն այստեղ եւս արդյունքը նկատելի չէր: Այդ երկու դպրոցը միասին ունեին 17 դասարան, որտեղ սովորում էին ընդամենը 250 աշակերտ:

1898-1899 ուսումնական տարվա սկզբին «Արամեան» դպրոցում սովորում էր 87, «Ս. Աննայեան» դպրոցում՝ 63 աշակերտ<sup>34</sup>, եւ գումարած տարվա ընթացքում նորեկներին, սովորում էր ընդամենը 211 աշակերտ: Մինչդեռ 1901-1902 ուսումնական տարում այդ դպրոցներում սովորում էր 234 աշակերտ. նրանցից 155-ը ստանում էր 1072 թուման թոշակ<sup>35</sup>: «Արամեան» դպրոցին Պարսից կառավարությունը տալիս էր տարեկան 160 թուման կամ 320 ռուբլի նպաստ<sup>36</sup>:

Թավրիզի «Հայուհեաց միացեալ բարեգործական միութիւն»-ը, որի 1903 եւ 1904 թթ. տեղեկագիր հաշվեցույցը հրատարակվել է «Արարատ» ամսագրում<sup>37</sup>, պահել է 11 դպրոց, 2 մանկապարտեզ եւ «Աննայեան» դպրոցի 4-րդ դասարանը, որտեղ ավարտածները դառնում էին գյուղական վարժուհիներ:

Նոր դպրոցների բացման խնդիրը գտնվում էր ամսագրի խմբագրակազմի օրակարգում: Այդ մասին է վկայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցու՝ Պարսկահայոց թեմին ուղղված 1902 թ.

<sup>32</sup> Տէն անդ, էջ 2034:

<sup>33</sup> Ատրպատականում առաջին հայկական դպրոցը հիմնադրվել է Թավրիզում 1835 թ., որը հայտնի է «Արամեան» անվամբ:

<sup>34</sup> Տէն Ա. ԱԼԷՔՍԱՆԵԱՆ, Տեղեկագիր Արամեան եւ Ս. Աննայեան երկսեռ դպրոցների 1888-1899 ուսումնական ամի, «Արարատ», 1900, Ե., էջ 249-251:

<sup>35</sup> Տէն «Խմբագրական. Տեղեկագիր Թավրիզի Հայոց «Արամեան եւ Աննայեան» երկսեռ դպրոցների 1901-1902 ուս. ամի», «Արարատ», 1903, Բ.-Գ., էջ 167-171:

<sup>36</sup> Տէն «Խմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1898, Է., էջ 302:

<sup>37</sup> Տէն «Խմբագրական. Պարսկահայք», «Արարատ», 1905, Բ., էջ 135-136:

հունիսի 6-ի թիվ 871 հայրապետական կոնդակը, վերջինս նոր երկսեռ դպրոց բացելու մասին է՝ համաձայն Ռուսաստանի պետական գաղտնի խորհրդական Գեորգ Քանանյանի (1834–1897 թթ.) կտակի<sup>38</sup>։ Այդ նպատակով հանգուցյալի այրին՝ Վառվառե Քանանյանը, հատկացնում է 47.000 ռուբլի, որը հանձնվում է Նոր Զուղայի առաջնորդական փոխանորդ Բագրատ վրդ. Վարդազարյանի հսկողությանը։

Կտակի ժԵ. կետում նշված էր հետեւյալ կարեւոր պայմանը՝ «Գեորգ-Քանանյան դպրոցը, ինչպէս եւ Զուղայի միւս դպրոցները, միշտ դրուած պիտի լինին ազգային զօրեղ հիմքերի վերայ եւ կազմակերպուած մանկավարժական ժամանակակից պահանջների համաձայն»<sup>39</sup>։ Ամրագրվում էր, որ դպրոցում Հայոց լեզուն, Հայոց պատմությունն ու գրականությունը, Հայ եկեղեցու պատմությունը պետք է դառնային առաջնային առարկաներ։

Ուշագրավ է, որ հեռանկարում չէր բացառվում կրթօջախի տեղափոխումը հայրենիք։ Կտակի ԻԴ. կետում ամրագրվում է. «Եթէ ապագայում պայմանները փոփոխուելով հարկ լինի փոխադրել Գեորգ-Քանանյան դպրոցը Նոր Զուղայից՝ Հայաստանի մի որեւէ բազմահայ, յարմարաւոր կենտրոն, այդպիսի դէպքում այդ որոշումը պիտի կայանայ Ամենայն Հայոց Հայրապետի, կտակարարների եւ հոգաբարձութեան փոխադարձ համաձայնութեամբ»<sup>40</sup>։

«Արարատ» ամսագրի խմբագրականազմը կարեւորում էր դպրոցներին աջակցելու ցանկացած նախաձեռնություն եւ այդ մասին հրապարակում էր։ Կրթված սերունդ ունենալու մեծ ցանկություն ունեւ Մնացական Տեր-Հակոբյանը, ով մահվան մահճում, Ա. քհն. Շաղոյանցին խոստովանելիս, հայտնում է իր կտակի մասին. վերջինս գրի է առնում այն՝ 1897 թ. դեկտեմբերի 3-ին Դավրեժ քաղաքում. «...ուղարկում եմ Պատ. Խմբագրութեանդ ի Տէր հանգուցեալ Մնացական Տէր-Յակովբեանցի՝ իմ ձեռնով գրել տուած կտակի բովանդակութիւնը, որն իւր տեսակի մէջ առաջին օրինակելի գործը համարուեցաւ քաղաքում...»<sup>41</sup>։ Հետ կտակի՝ 2000 թուման նվիրում էր Դավրեժ քաղաքի երկսեռ դպրոցներին, 200-ը՝ մանկապարտեզներին, 100-ը՝ Վան քաղաքի «Վարազա» որբանոցին, 300-ը՝ Խանակյահ գյուղի դպրոցին, 200-ը՝ Մուժամբար գյուղի եկեղեցին նորոգելու

<sup>38</sup> Տէն «Խրիմեան Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Վեհափառ Հայրապետի կոնդակը Զուղայի Քանանյան դպրոցի բացման առթիւ», «Արարատ», 1902, Ե.-Զ., էջ 405–410։

<sup>39</sup> Տէն անդ, էջ 408։

<sup>40</sup> Տէն անդ, էջ 409։

<sup>41</sup> Տէն «Խմբագրական. եկեղեցի Հայաստանեայց. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1897, ԺԱ.-ԺԲ., էջ 523–525։

համար: 3000 թուման տրվում էր չքավոր սաների տարեկան թոշակները հոգալու նպատակով:

«Արարատ» ամսագրի խմբագրակազմը նաեւ իր անմիջական մասնակցությունն էր բերում կրթական հարցերի լուծմանը: 1875 թ. հուլիսի 25-ով թվագրված մի նամակում Նոր Զուղայի «Հայկեան» դպրոցի կառավարիչներ Միքայել եւ Կարապետ Աբգարյանցներն իրենց շնորհակալությունն էին հայտնում խմբագրությանը. «Հայկեան հայրենասիրական դպրոցս Զուղայ ի հերոն հետ է այս շարունակաբար արժանի եղել ընդունելոյ զՁերոյ պատուական Արարատ ամսագիր ի նուէր, որով արդարեւ աշակերտք դպրոցիս ի հեռուստ աստի զքնիկ Հայրենոյ իւրեանց նաշակեալ զնաշակն տեսական եւ բարոյական ազգի հոգեպարար արգասեաց գրականութեան, նաեւ զՀայաստանեայց վանօրէից եւ գեաղաբաց տեղագրութիւնս ի նմին ընթեռնելով, զնախնեացն մերոց զերջանիկ յուշ ածեն զփառս»<sup>42</sup>: Հիւրավի, ամսագրում տպագրված նյութերը Նոր Զուղայի մատաղ սերնդի մեջ սերմանում էին ազգային գիտակցություն եւ հայրենասիրություն:

դ. Պարսկահայքի վերաբերյալ ազգագրական եւ ժողովրդագրական տեղեկությունները «Արարատ» ամսագրում. Պարսկահայքի պատմության, տնտեսության, հասարակական կյանքի, նյութական ու հոգեւոր մշակույթի մասին ուսումնասիրությունները, «Արարատ» ամսագրի խմբագրակազմի եւ առանձին հեղինակների հաղորդումները կարեւոր սկզբնաղբյուր են:

Ատրպատականի թեմի<sup>43</sup> վերաբերյալ Տ. Եղիշե ծ. վրդ. Մուրադյանը գրում է. «Մեծ Մասիսի կրծից մինչեւ Կասպից ծովը եւ Արաքսից մինչեւ Ուրմիոյ լճի հարաւային Միանդաբ եւ Սուղբուլաղ գաւառներն ընկնող տարածութիւնը կազմում է մի ընդարձակ փոխաւրայութիւն, որի վարիչն է, ըստ սովորութեան, Պարսից Շահի գահաժառանգը, եւ նոյն այդ տարածութիւնն է բռնում Ատրպատականի թեմը: Այդ երկրի 14 ընդարձակ գաւառներում եւ Մակուի խանութեան մէջ ապրում է մօտաւորապէս 48.000 հայ ժողովուրդ»<sup>44</sup>: Երեւանի, Գանձակի եւ Բաքվի նահանգները միացնելու դեպքում նոր միայն կստացվեր Ատրպատականի թեմի չափ մի վարչական միավոր:

<sup>42</sup> Տէս Մ. ԱՐԳԱՐԵԱՆՅ, Գ. ԱՐԳԱՐԵԱՆՅ, Կարապետ Աբգարեանց Նոր-Զուղայ, «Արարատ», 1872, Գ., էջ 128:

<sup>43</sup> Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ատրպատականի թեմն իրանահայության հնագույն թեմն է. ընդգրկում է Ատրպատականի տարածքը (Իրանի Արեւելյան եւ Արեւմտյան Ադրբեջան նահանգները): Առաջնորդանիստը Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցին է:

<sup>44</sup> Տէս Եղիշե Մ. վրդ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Համառօտ ակնարկ Ատրպատականի թեմի կացութեան եւ կարիքների վերայ, «Արարատ, 1902, ԺԱ.-ԺԲ., էջ 2032:

«Արարատ» ամսագրում գրված է. «Մոռանալու չէ, որ Ատրպատականը կառավարում է պարսկական աղաթներով եւ պարսիկ վարիչներով, որոնց նպատակը մի միայն կեղեքելն ու հարստահարելն է, եւ ուր հայ ժողովուրդը առաջնորդարան է վազում իւրաքանչիւր ֆայլափոխում»<sup>45</sup>: Ահա թե ինչու էր Եղիշե ծ. վրդ. Մուրադյանը առաջարկում պահել երկու փոխանորդ Սալմաստ-Ուրմիա եւ Ղարադաղի գավառների համար:

Ամսագրում ներկայացվում է Ատրպատականի հայոց թեմի տեղագրությունը<sup>46</sup>: Ղարադաղի գավառում բնակվում էին հայեր, թուրքեր, ալալլահիներ, շահսեվաններ եւ գարափափախներ: Հայերն իրենց դրացիների հետ լավ հարաբերություններ չունեին՝ «...ինչպէս արջերից, նոյնպէս սոցանից միշտ զգոյշ են լինում եւ հրացանը ձեռքին պաշտպանում. այնուամենայնիւ սպանութիւններ եւ գողութիւններ անպակաս են»<sup>47</sup>:

Անտանեւի վիճակ էր Ատրպատականում, որի կառավարիչն էր փոխարքա Մուհամմեդ Ալի Միրզան<sup>48</sup>: Նա գյուղացիներից բռնագրավում էր հացահատիկը, այն հավաքում շտեմարաններում, ապա աշնան վերջին սարսափելի թանկ գնով վաճառում քաղցած ժողովրդին: Այդպիսով, մարդկանց դառը քրտինքով վաստակածը հավաքելով՝ թագաժառանգը մեծ հարստություն էր դիզում<sup>49</sup>:

Տեղի հայությունն իրավական անմխիթար վիճակի մասին նշվում է, որ «աւելի մեծ նեղութեան մէջ են եղել 8-10 տարի առաջ (1888 թ. - Կ. Մ.) աւազակաբարոյ աղաների եւ խաների պատճառով եւ իւրաքանչիւր դարադադցի օրհնութեամբ է յիշում Ստեփանոս եպիսկոպոսին»: Վերջինս պատկառազդու հոգեւորական էր, եւ նրա ջանքերի շնորհիվ հայերին հարստահարող աղաները պատասխանատվության ենթարկվեցին:

Պարսկաստանի նշանավոր բարերարներ Թումանյանները Ղարադաղից էին, որտեղ գնել էին իրենց պապի ծննդավայր Ողան, թուրքաբնակ մի քանի գյուղեր եւ դարձել տեղի ամենամեծ կալվածքի տերերը: Նրանք հայրենի գյուղում կառուցել էին ամառանոց, որի ստորին հարկում մտադիր

<sup>45</sup> Տէն անդ, էջ 2036:

<sup>46</sup> Տէն «Խմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1898, ԺԱ.-ԺԲ., էջ 497-507:

<sup>47</sup> Տէն անդ, էջ 501:

<sup>48</sup> Սովորույթի համաձայն՝ պարսից գահաժառանգը, մինչեւ գահին նստելը, նշանակվում էր Իրանի ամենամեծ՝ 9 մարզից բաղկացած եւ ամենահարուստ նահանգի՝ Ատրպատականի փոխարքա: Մուհամմեդ Ալի Միրզան Ատրպատականի փոխարքա էր նշանակվել 1896 թ.: Նրա նստավայրն էր Թավրիզը:

<sup>49</sup> Տէն Հր. ՍԻՄՈՆՅԱՆ, 1905-1912 թթ. պարսկական հեղափոխությունը եւ հայերը, Երեւան, 2017, էջ 15:

էին բացել ուսումնարան: Միայն Նորաշեն գյուղն ուներ վանք-մատուռ՝ Ս. Գեորգ անվամբ, եւ մեկ դպրոց կար Աղաղան գյուղում, որն ուներ 41 տուն եւ 15 աշակերտ<sup>50</sup>: Այս գավառի հայաբնակ գյուղերի վիճակագրական տվյալները ներկայացված են ամսագրի այլ համարներում եւս<sup>51</sup>:

Ղարադաղ գավառի հայությունը սնոտիապաշտ էր՝ «...մի կարգ սօսի ծառերին մեծ յարգ են տալիս, գիշերները տակին նրագ են վառում, քարաթոռը<sup>52</sup> յարգում են պաշտելու չափ՝ չգիտեմ նրա մէջ ինչ բարի ոգի բնակուած կարծելով»<sup>53</sup>:

Քեյվան բնակավայրում հայերը զբաղվում էին շերամապահությամբ, իսկ թթենիներից ստացած բերքից պատրաստում օղի, որից քիչ քանակությամբ արտահանում էին Արցախ. «Քեյվանից զատ միւս գաւառներում ոգելից խմիչ՝ չի օգտագործում, որովհետեւ չկայ, ծխելն էլ սովորական չէ: Խմելու ունակութեան շնորհիւ քեյվանցիները վարժ ու բարձր խիստ տարբերում են միւս գաւառականներից»<sup>54</sup>:

Ինչ վերաբերում է զարադաղցիների տեղաշարժին, ապա նրանք գաղթում էին Ռուսաստան, նաեւ Շուշի եւ հարակից գավառներ, իսկ «երթեկնությունը կատարում էր Արափ գետի հոստաֆրին կամուրջով»: Լեզվական խնդիրները քննարկելիս նշվում է, որ զարադաղցիները խոսում են «խիստ դժուարահասկանալի մի բարբառ՝ նման մի քիչ Ղարաբաղի լեզուին»: Ըստ էության՝ Ղարադաղը եւ լեզվական, եւ հաղորդակցության որոշակի թելերով կապված էր Արցախին:

Հոգվածագիրն ամփոփում է, որ նշյալ վայրերից բացի, «Ատրպատականում՝ ուրիշ տեղ աչքի ընկնող թուով հայեր չկան, միայն Սօմայում, Քիրդիստանի զանազան տեղերում՝ տուն-տուն, հատ-հատ ցրուածներ կան, որոնք բոլորը միասին մօտաւորապէս 50 տուն հաշուել կարող ենք»<sup>55</sup>: Իսկ «Ազգահամար»<sup>56</sup> վերտառությամբ աղյուսակում ներկայացվում է հայկական բնակավայրերի թվային պատկերը՝ ըստ տների, բնակչության, եկեղեցիների, քահանաների, դպրոցների, ուսուցիչների եւ աշակերտների:

<sup>50</sup> Տե՛ս «Խմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1898, ԺԱ.-ԺԲ., էջ 502:

<sup>51</sup> Տե՛ս «Խմբագրական. Պարսկաստանի Ղարադաղ գաւառի հայաբնակ գիւղերը: Վիճակագրական», «Արարատ», 1896, Գ., էջ 135-137:

<sup>52</sup> Քարաթոռը կամ քարադոռոշ՝ քարքարոտ տեղերում ապրող դոդոշ, մողես. տե՛ս Է.Պ. ԱՂԱՅԱՆ, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976, էջ 1582:

<sup>53</sup> Տե՛ս «Խմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1898, ԺԱ.-ԺԲ., էջ 502:

<sup>54</sup> Տե՛ս անդ, էջ 503:

<sup>55</sup> Տե՛ս անդ, էջ 504:

<sup>56</sup> Տե՛ս անդ, էջ 505-506:

Սալմաստ գավառում կար հայաբնակ 28 գյուղ. դրանցից 6-ը զուտ հայ բնակչություն ուներ, մյուսները՝ խառը բնակչություն՝ թուրք, ասորի, քուրդ, հրեա<sup>57</sup>: Զուտ հայկական գյուղերն էին Հավթվան՝ 310, Փայաջուկ՝ 226, Մահլամ՝ 176, Սառնա՝ 74, Ղալասար՝ 54, Հախվերան՝ 46 տուն: Մնացյալ խառը գյուղերից Սավրան ուներ 109, Սանամերեկը՝ 81, Հին քաղաքը՝ 62, Ախթխանան՝ 46, Կզլճան՝ 41 տուն հայ բնակչություն:

Սալմաստում հայություն թիվը 8957 էր՝ 1504 տուն, յուրաքանչյուր տունը՝ մոտ 6 անձ: Համեմատած Ատրպատականի մյուս գավառների՝ սալմաստցիները բավական կրոնասեր էին եւ հյուրասեր, որի համար «գաղթականներ եւ հալածականներ ամենից աւելի այստեղ խնամուած են, մինչեւ այսօր Թաւրիզից եւ շրջակայից գաղթականները փախչում են Սալմաստ գնալու համար»<sup>58</sup>:

Ուրմիայում եւ հարակից 28 գյուղում հայերը բնակվում էին թուրքերի եւ ասորիների հետ: Ուրմիա գավառում զուտ հայաբնակ գյուղեր էին Կերտապատը եւ Նախջեւան-թեփեն: Քաղաքում բնակվում էր 45 տուն հայ, ունեին մեկ եկեղեցի՝ կառուցված 1891 թ.՝ Ս. Ստեփանոս անվամբ: Սակայն այստեղ խնդիրը խառնամուսնություններն էին. «...հայերը, ասորուց ազդեցութեան տակը լինելով, շատ անգամ խառն խնամութիւններ են ունենում, մեծ մասամբ ասորերէն են խօսում, կանանց տաւազն եւս ասորական է՝ թրփականին շատ նման»<sup>59</sup>: Հետ էություն՝ եթե Սալմաստից եւ Թավրիզից վաճառական հայերը ելումուտ չանեին, Ուրմիայի հայերին «բոլորովին կորուստած կարելի էր համարել»: Ուրմիայի հայերը զբաղվում էին հյուսնություններ եւ գինեվաճառությամբ:

Ինչ վերաբերում էր Ուրմիայի հայության մեջ Եկեղեցու դերին եւ ազգային դավանանքին, ապա «կրօնասիրութիւն բոլորովին չկայ, Յարութեան եւ Մննդեան տօներից բացի, եկեղեցւոյ մէջ աղօթող տեսները հրաշք կարելի է համարել»<sup>60</sup>: Փաստորեն, ներմուծված օտար տարրերը նպաստել էին ազգային նկարագրի զգալիորեն փոխմանը:

Ուրմիա գավառից հարավ՝ Բարանդուզ գավառի 13 գյուղում, հայերը բնակվում էին թուրքերի եւ ասորիների հետ, ընդամենը՝ 203 հայկական տուն, ունեին չորս եկեղեցի, որոնք գտնվում էին Բաբառի, Բելանեթ, Դիզաթափա եւ Թամաթար գյուղերում, չունեին ուսումնարան.

<sup>57</sup> Տէն խմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1895, Ե., էջ 173-174:

<sup>58</sup> Տէն խմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1898, Թ., էջ 403-405:

<sup>59</sup> Տէն խմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1898, Ժ., էջ 449-453:

<sup>60</sup> Տէն անդ, էջ 450:

սահմանակից Արեւմտյան Հայաստանից մի այցելու քահանա երբեմն գալիս էր այստեղ: Տեղի հայությունը խոսում էր թուրքերենով, «...միայն զարմանալի է, որ հաստատամտութեամբ պահպանում են իրենց հաւատը եւ անհրաժեշտ կարիք ունեցած միջոց իսկ չեն դիմում կաթոլիկ կամ բողոքական կրօնաւորներին: Սոցա հաւատալեաց առաջինը կազմում է պահեցողութիւնը. պահեք լուծողը հայ չի համարում, արդէն տարբեր մի նշան էլ չկայ հայը ճանաչելու»<sup>61</sup>:

Ազգային ինքնության տարրեր գրեթե առկա չէին Սուլղուզ, Սովուճ-Բուլաղ եւ Միանդուաբ գավառներում: Հայերն այս գավառներում մայրենի լեզվով չէին խոսում՝ «...կարելի է սրանց համարել ֆրիստոնէայ ֆիւտեր եւ ոչ թէ հայեր»:

Սովուճ Բուլաղում հայերը բնակվում էին 4 գյուղում եւ նման էին Սուլղուզի հայերին, իսկ քրդաբնակ Միանդուաբ գավառի 4 գյուղում բնակվում էր 53 տուն հայ: Մարաղա քաղաքում բնակվում էր 180 տուն հայ: Կարեւոր է, որ այստեղ «...թուրքերը նոյն բարբարոսութիւնը չունին ինչպէս Ումիին, թէւ նոյն զգուանքը եւ գարշանքը կայ գեաւորներից, բայց կախումն ունենալով՝ ստիպուած են կեղծել եւ շողոփորթել հայերին»<sup>62</sup>:

«Արարատ» ամսագրի հաղորդած տեղեկութիւնների համաձայն՝ «Ատրպատականում հայերը ցրուած են բնակւում եւ ոչ մի գաւառում մեծամասնութիւն չեն կազմում: 1828 թուի գաղթականութիւնը հայոց պատկանելի թիւը նուազեցրել է»<sup>63</sup>:

Ամսագրի էջերում ներկայացված են Թավրիզից հյուսիս գտնվող հայաբնակ գյուղերը՝ Մուժամբարը, Ալշամուլքը եւ Սեոհրյուլը<sup>64</sup>:

Մուժամբարում էր գտնվում «Աներեւոյթ» անունով ուխտատեղին, որի մատուռում գիշերում էին Թավրիզից եկած ուխտավորները՝ բժշկվելու նպատակով: Այստեղ կար նաեւ հանքային ջրի աղբյուր: Հետաքրքիր է, որ Մուժամբարում, հակառակ ավանդույթին, հյուրասեր չէին, նաեւ երկրագործութիւնից զատ զբաղվում էին ձիապանութեամբ: Իսկ 36 տուն հայ բնակչութիւն ունեցող Ալշամուլքն աչքի էր ընկնում հյուրասիրութեամբ:

Ինչ վերաբերում է Խոյին, ապա համանուն բերդաքաղաքում հայեր չէին բնակվում: Այն Ատրպատականում միակ քաղաքն էր, որ

<sup>61</sup> Տէս անդ, էջ 452:

<sup>62</sup> Տէս անդ, էջ 453:

<sup>63</sup> Տէս «Խմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1898, է., էջ 301-303:

<sup>64</sup> Տէս անդ, էջ 302:

կառավարչական հատուկ շենք ուներ: Խոյից հարավ-արեւմուտք՝ «Մահալլէ» արվարձանում, բանկվում էր 94 տուն հայ՝ ցրված երեք թաղամասում՝ թուրքերի հետ խառը, ունեին երկու եկեղեցի: Խոյի հայերն աղքատ էին, զբաղվում էին միայն արհեստներով, ճնշված էին թուրքերի կողմից<sup>65</sup>:

Ե. Մխիթնեւոյնը եւ թեմական կյանքի խնդիրները «Արարատ» ամսագրում.

1875 թ. հունիսի 3-ին Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցուն ուղղված նամակում Նոր Զուղայի առաջնորդական փոխանորդ Տ. Խաչատուր վրդ. Կարապետյանը հայտնում էր բողոքականության տարածման նպատակով օտարների քարոզչության մասին<sup>66</sup>: Դեռեւս 1872-1873 թթ. Գրիգորիս արք. Հովհաննիսյանն այդ մասին տեղեկացրել էր Հայոց հայրապետին, նրանից ստացել անհրաժեշտ հրահանգներ: Ամսագրում հստակ նշվում է, որ Գրիգորիս արք. Հովհաննիսյանի «ի Հնդկաստան երթալոյ նպատակն ոչ եթէ միայն ի վտանգի եղող Հնդկահայոց այցելելու եւ օգնելու համար, այլ նաեւ անդ կարեւոր դպրոցներ հաստատելոյ եւ այլ մի քանի ազգային հոգացողութիւնք եւ եկեղեցական կարգադրութիւններ տնօրինելոյ համար է, ինչպէս նաեւ Նոր Զուղայու հայոց դպրոցաց համար եղած մի քանի կտակները ի կարգի դնելով՝ եւս Համեստ Ծաղիկ Խաբսանիմ՝ Բրուս կոչուած եւ ծպտեալ բողոքական քարոզչին խնամոց անգիտութեամբ եւ միամտաբար յանձնած դպրոցը ազատելոյ...»<sup>67</sup>:

Բրուս կոչված քարոզիչը 1870-ից, երբ Պարսկաստանում սով էր, մեծ գումարներ էր բերել Եւրոպայից ու բաժանել աղքատներին՝ տեղում դպրոց հիմնելու նպատակով: Իսկ բացված դպրոցում էլ քարոզում էին բողոքականություն:

Մխիթնեւոյնները գործուն էին Սալմաստում: Կաթոլիկ Լազարիստ միաբանությունը ասորաբնակ Խոսրովա գյուղում բացել էր սեմինարիա<sup>68</sup>, իսկ Ամերիկյան երիցական եկեղեցին գործունեություն էր ծավալել Հաֆթվան գյուղում: Չնայած մխիթնեւոյնները տարածված էր, սակայն «հայը դեռ առ այժմ, մեծամասնութեան մասին է խօսփ, աւելի կը յօժարի զոհողութիւն անել, եւ իր ազգային Եկեղեցուն ու վարժարանին յարած մնալ, քան միսիօնարական ձրի կրթութենէն օգտուել»<sup>69</sup>: Ահա թե ինչու հա-

<sup>65</sup> Տէն «Ժմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1898, Ը., էջ 356-357:

<sup>66</sup> Տէն «Ժմբագրական. Ի Նոր Զուղայէ», «Արարատ», 1875, Ը., էջ 313-316:

<sup>67</sup> Տէն անդ, էջ 313:

<sup>68</sup> Տէն «Ժմբագրական. Մայր Աթոռ. Պարսկահայք», «Արարատ», 1895, Զ., էջ 219-220:

<sup>69</sup> Տէն անդ, էջ 220:

յուլյան թուրքախոս հատվածը նախընտրում էր լինել անգրագետ, քան օգտվել միսիոներների կրթական ծառայություններից<sup>70</sup>:

Ինչ վերաբերում է թեմական կյանքին, ապա դրա աշխուժացմանը նպաստում էին հովվական այցելությունները, որոնց կազմակերպումը պահանջում էր մեծ ծախսեր եւ շատ ժամանակ: Իսկ հեռավոր գաղթօջախներում այն դիտվում էր որպես ազգային կյանքի իմաստավորման եւ համախմբման ձեւ, ազգային եկեղեցու ու նրա քարոզած արժեհամակարգին հավատարմության վերահաստատում:

1875 թ. հուլիսի 27-ով թվագրված՝ «Մեծ պարոն Կ. Յ. Զէյթունեանի» գրություն մեջ<sup>71</sup> նկարագրվում է Պարսկա-հնդկահայոց թեմի<sup>72</sup> առաջնորդ Գրիգորիս արք. Հովհաննիսյանի հովվական այցելությունը Հնդկաստան եւ այդ ճանապարհին Սրբազանի դիմավորման արարողությունը Բուշե-ռում, պատարագի մատուցումը Ս. Գեւորգ եկեղեցում եւ ազգային համախմբվածությունն այդ քաղաքում:

Գրիգորիս արք. Հովհաննիսյանն այցելում է Բիրմա եւ Դաքա: 1871 թ. Դաքայի փոքրաթիվ հայերը՝ 23 տուն՝ 97 հոգի, կառուցել էին Ս. Հարություն եկեղեցին, որն ուներ մեկ քահանա: «Սոքա ամենքը եւս յաջողակ առեստուրով զբաղուած են, եւ գրեթէ ամեն արուեստի մէջ բաժին եւ կարողութիւն ունին: Դպրոց չունին, որոյ համար կարգադրութիւն եղած է, բայց ոմանց հաճման եւ ոմանց մաւրմ մեծ խնամքով հայերէն լեզուն կուսուցանեն իւրեանց որդոց: Իսկ հանրական դաստիարակութիւնը Անգղիացոց վարժարաններում կստանան»<sup>73</sup>: Սրբազանը 16 օր մնում է այս համայնքում, որից հետո գնում Բոմբեյ:

Հիշարժան է, որ 1895 թ. մարտի սկզբին Պարսկա-հնդկահայոց թեմի առաջնորդ Եսայի արքեպիսկոպոսը եւս հովվական այցելություն կատարեց Հնդկաստան<sup>74</sup>: 1904 թ. նոյեմբեր ամսին նույն թեմի հաջորդ առաջնորդ Սահակ արքեպիսկոպոսը այցելեց Հնդկաստան<sup>75</sup>: Վերջինս իր հետ տանում էր Հայրապետական օրհնության կոնդակ՝ ուղղված տարագիր հայուլթյանը: Սահակ արքեպիսկոպոսի այցելությանը, տեղի հայուլթյան առաջարկով,

<sup>70</sup> Հիշարժան է, որ 1880-ական թթ. կեսերից Վենետիկի Միսիոնարյան միաբանությունը առաքելություն էր հիմնել հայաբնակ Սալբա գյուղում, այնտեղ նորոգել հին ասորական եկեղեցի, հիմնել փոքր վանք, ուներ ուսումնարան:

<sup>71</sup> Տե՛ս Կ. Զէյթունեան, Գրիգորիս արքեպիսկոպոս ի Հնդկաստան, «Արարատ», 1875, Ժ., էջ 394-396:

<sup>72</sup> Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Պարսկա-հնդկահայոց թեմը կազմավորվել է Ժէ. դարասկզբին: Առաջնորդանիստը նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքն է:

<sup>73</sup> Տե՛ս «Խմբագրական. Գրիգորիս արքեպիսկոպոս ի Դաքա», «Արարատ», 1876, Լ., էջ 309-310:

<sup>74</sup> Տե՛ս «Խմբագրական. Պարսկահայք», «Արարատ», 1895, Գ., էջ 108:

<sup>75</sup> Տե՛ս «Խմբագրական. Պարսկահայք», «Արարատ», 1904, Ա., էջ 44:

տրվել էր պաշտոնական բնույթ: Սրբազանը Թեհրանում Անգլիայի դեսպանի միջոցով դիմել էր Հնդկաստանի փոխարքային եւ հայտնել իր այցելության մասին: Ուստի, տարբերությունը նախորդ այցելությունից այն էր, որ Թեմի առաջնորդը գնում էր այդ երկիր նախապես որոշված ծրագրով:

Հոգեորսությունը լուրջ խնդիր էր նաեւ Ատրպատականի թեմում: Ամսագրում վկայաբերվում է՝ «Ազգիս Վեհափառ Հայրապետն (Մկրտիչ Ա. Խրիմեան — Կ. Մ.) իւր գահը բազմելու օրումանից առաջին խնամք է ցոյց տուել Պարսկաստանի հայոց վրայ: Ատրպատականի համար թեմակալ առաջնորդ յղելուց յետոյ, Նորին Օծուքինը յատուկ հովի ուղարկեց եւ Սպահանի հայերին արժանապատիւ Սահակ վրդ. Այվատեանին, որպէսզի Գերապատիւ Եսայի արքեպիսկոպոսը հմար ունենայ հեռաւոր Հնդկաստանի եւ Խաղաղական ովկիանոսի կղզիներում ցրուած հօտին այց գնալու եւ ի մօտոյ մխիթարելու»<sup>76</sup>:

Ատրպատականի թեմի առաջնորդի ընտրության հարցով մտահոգ Հայոց հայրապետի հարկադրանքով 1905 թ. հունվարի 2-ին ընտրություն կատարվեց<sup>77</sup>: Հակառակ կանոնադրությանը՝ ընտրվեց մի հոգեւորական, որն արդեն թեմակալ առաջնորդ էր եւ այդ պատճառով հրաժարվեց Ամերիկայից գալ Թավրիզ. խոսքը Հովսեփ արք. Սարաջանի մասին է<sup>78</sup>: Եւ միայն Գեւորգ արքեպիսկոպոսի<sup>79</sup> 1908 թ. հունվարի 9-ին Մեհմեդ Ալի շահին ուղղված նամակից պարզ է դառնում, որ Ատրպատականի թեմի առաջնորդ է ընտրվել Կարապետ Ժ. վրդ. Մկրտչանը<sup>80</sup>: Գեւորգ արքեպիսկոպոսը շահին խնդրում էր վավերացնել նորընտիր առաջնորդի հաստատումը:

Ամսագրի համարներում առկա են Ատրպատականի թեմի վերաբերյալ վիճակագրական աղյուսակներ<sup>81</sup>, Արտազ գավառի Ս. Թադեոս առաքյալի վանքի<sup>82</sup> եւ Թավրիզի Բերդաթաղի Ս. Աստվածամոր եկեղեցու

<sup>76</sup> Տէն «Խմբագրական. Պարսկաստանում», «Արարատ», 1894, ժ.Բ., էջ 386-388:

<sup>77</sup> Տէն «Խմբագրական. Պարսկահայք», «Արարատ», 1905, Բ., էջ 134-136:

<sup>78</sup> Հովսեփ արք. Սարաջանը, Կ. Պոլսի հայոց պատրիարքության որոշմամբ, 1889 թ. ստանձնել է Ամերիկահայոց թեմակալ առաջնորդի պաշտոնը: Նրա նախաձեռնությամբ կառուցվել եւ 1891-ին օծվել է հայ առաքելական առաջին եկեղեցին ԱՄՆ-ում՝ Ուստրի Ս. Փրկիչը:

<sup>79</sup> 1907 թ. մահացել էր Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոսը, ուստի գրությունը Պարսից շահին ուղարկում է կաթողիկոսական տեղապահ Գեւորգ արքեպիսկոպոսի կողմից:

<sup>80</sup> Տէն «Խմբագրական. Տեղապահ Գեորգ արքեպիսկոպոսի թուղթը Պարսից Շահն-Շահին», «Արարատ», 1908, Ա., էջ 36-37:

<sup>81</sup> Տէն «Խմբագրական. Վիճակագրություն թեմին հայոց Ատրպատականի ի 1875 ամի», «Արարատ», 1876, Գ., էջ 109-113:

<sup>82</sup> Տէն ԽԱՁԻԿ ՎՐԴ. ԴԱՏԵԱՆ, Պարսկահայք. Համառօտ նկարագիր Շաւարշան-Արտազ գավառի Ս. Թադէոս առաքելոց վանքի, «Արարատ», 1898, Ա., էջ 38-40, Բ., էջ 89-91:

վերաբերյալ պատմական ակնարկներ, ծիսական եւ թանգարանային նշանակություն ունեցող իրերի նկարագրություններ<sup>83</sup>:

«Արարատ» ամսագրում հրատարակված են քննադատական հոդվածներ<sup>84</sup>, գրական գործեր<sup>85</sup>, ուսումնասիրություններ եւ հաղորդումներ: Ըստ էության՝ ամսագիրը դարձել էր տարբեր մշակույթների ներկայացման հարթակ:

Վերլուծելով «Արարատ» ամսագրում առկա բազմաբովանդակ տեղեկությունները՝ կարող ենք եզրակացնել.

ա. Պարսկաստանի հայ գաղթօջախի գոյության համար սպառնալիք չկար:

բ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հարաբերությունները Պարսից շահական արքունիքի հետ միտված են եղել հայության վիճակի առավել բարելավմանը եւ խնդիրների լուծմանը:

գ. Պարսկաստանի հայ գաղթօջախում բազմաթիվ դպրոցներ են բացվել, հայաշատ որոշ վայրեր զարգացում են ապրել:

դ. Հայկական գաղթօջախում կրթական մակարդակը մնում էր առավել բարձր նիշի վրա, քան այդ պետության այլ ժողովուրդներին:

ե. Սովի ճիրաններում հայտնված Սպահանի հայերին աջակցության կազմակերպումը եւ դրա լուսաբանումն ունեւ համազգային նշանակություն:

զ. Պարսկահայքի վերաբերյալ ազգագրական եւ ժողովրդագրական տեղեկությունները լույս են սփռում այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են՝ հայության թվաքանակը, տեղի բարբառները, ապրելակերպը, ազգային Եկեղեցու հետ ժողովրդի կապը, ավանդույթների պահպանումն ու կիրառումը, որոշ դեպքերում խառնամուսնությունները, դրացի ժողովուրդների հետ այլ առնչությունները:

է. Միսիոներական շարժումը դարձել էր լուրջ մարտահրավեր Պարսկաստանի հայ գաղթօջախի համար:

<sup>83</sup> Տե՛ս «Խմբագրական. Քաղուածք Ս. Էջմիածնի սինօդի օրագրութիւններից: Պարսկահայք. Խաչիկ վրդ. Դատեանի՝ Պարսկաստանից բերած հնութիւնները», «Արարատ», 1895, է., էջ 266-270, Ը., էջ 313-316:

<sup>84</sup> Տե՛ս Գ. Շիրմազանեան, Քննադատութիւն: Պարոն Բաֆֆիի «Փունջ» բանաստեղծութեան վերայ, «Արարատ», 1874, Ը., էջ 291-306:

<sup>85</sup> Տե՛ս Մ. Բժշկեան, Աղերսանք պարսկահայի, «Արարատ», 1878, Բ., էջ 68. ԳԱՐԵԳԻՆ ՎՐԳ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Մի հատուած Ռոստամ Զալ վէպից, «Արարատ», 1899, Բ., էջ 91-94. Ս. ԳԻՒԼՃԱՏԵԱՆ, Ֆիրդուսի, «Արարատ», 1887, Ե., էջ 227-229:

## РЕЗЮМЕ

В статье рассматриваются отношения между Персидские шахами и Армянскими Католикосами, и показано, что они были в первую очередь направлены на сохранение армянских школ в Персии и создание новых. При этом позиция персидского двора была важна для армян.

Публикации журнала «Арарат» дают возможность составить представление об Атрпатаканской и Персидско-Индийской епархий, а также о материальной и духовной культуре армян, включая местные повествования, диалекты, привычки, повседневную жизни, быт, традиции, отношения с соседними народами, род занятий, социальное положение в персидского общества и другие вопросы.

## SUMMARY

The article discusses relations between Persian Shahs and Armenian Catholicoi, and shows that they primarily aimed at preserving Armenian schools in Persia and creating new ones. In this case, the position of the Persian court was important for the Armenians.

The publications of “Ararat” monthly enable us to have an idea about the Armenian Dioceses in Atropatene, Persia and India, and also about the material and spiritual culture of the Armenians, including local narratives, dialects, everyday life, traditions, movements, relations with neighboring nations, occupation, social status in Persian society and other issues.



ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու  
ՀԱԱ

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ

Մենք մամուլի պատմության մեջ եկեղեցական պարբերականների թիվն այնքան էլ բազմաքանակ չէ, իսկ ահա հայագիտական ու հասարակական որոշակի շեշտադրմամբ լուրջ արժեք ունեցած հանդեսները կարելի է մատնել վրա հաշվել: Այս տեսանկյունից՝ Մայր Աթոռի պաշտոնական ամսագիր «Արարատ»-ը միանշանակ պետք է դիտարկել եւ գնահատել «Բազմավէպ»-ի ու «Հանդէս Ամսօրեայ»-ի հետ նույնական հարթությունում: Ավելին՝ «Արարատ»-ը, մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը, արեւելահայության շրջանում միակ հայագիտական հանդեսն էր<sup>1</sup>, հայագետների կերտման ու դրսեւորման դարբնոցը՝ մշակութային անուրանալի դերակատարմամբ:

Համաշխարհային պատմության մեջ աննախագեպ ցեղասպանության (առնվազն 1890-ական թվականներից) զոհ դարձավ Մերձավոր Արեւելքում քրիստոնեության պատվար շուրջ երկու միլիոն հայություն: Իր ժողովրդի հետ հավասար եւ անբաժան՝ մեծագույն ողբերգությունն ապրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ ծխական քահանայից մինչեւ Հայոց Հայրապետ: Հայ հոգեւորականությունը միաժամանակ եղավ ազգային-ազատագրական պայքարի մասնակից-մաքառողն ու դրա նվիրական աջակիցը, օրինակ ծառայողը, միջազգային դիվանագիտական ատյաններում Հայկական հարցի հետապնդման առաջնորդողը:

Քննարկվող թեման գրեթե հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձվել, անգամ անուշադրության է մատնվել: Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ, պրոֆեսոր Ա. Առաքելյանի՝ «Արարատ»-ի 100-ամյակին նվիրված հոդվածում<sup>2</sup> որեւէ հիշատակում չկա թեմայի վերաբերյալ:

<sup>1</sup> Տե՛ս «Մատենագիտություն «Արարատ» ամսագրի», կազմ.՝ Ս. Կոժինյան, Ս. Էջմիածին, 1970:

<sup>2</sup> Տե՛ս Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ, «Արարատ» ամսագիրը, «Էջմիածին», 1968, ԺԱ.-ԺԲ., էջ 6-14:

Նման լուսթյուն է տիրում նաեւ «Արարատ»-ի 100-ամյակին նվիրված միջոցառումների մասին հաղորդագրության մեջ<sup>3</sup>:

Միակ բացառությունը Արարատյան թեմի Հայրապետական փոխանորդ Վահան եպս. Տերյանի հոգվածն է<sup>4</sup>, որտեղ ներկայացվել է թեմայի ընդհանուր ակնարկ՝ կարեւոր փաստաթղթերի հիշատակումով: Այդ առումով հատկանշական են Վահան եպս. Տերյանի ուշագրավ եւ դիպուկ հետեւյալ տողերը. «Մկրտիչ Ա. Խրիմյանից սկսած՝ Մայր Աթոռը Ամենայն Հայոց հայրապետների գլխավորությամբ ստանձնում էր արեւմտահայության ապահովության եւ պաշտպանության ղեկավարությունը եւ իր բոլոր միջոցներով հետապնդում Հայկական հարցի խաղաղ լուծումը: Այդ տարիներից «Արարատ» ամսագիրը լայնորեն իր էջերն է տրամադրում Հայկական հարցի վերաբերյալ նյութերի, կաթողիկոսների դիմումների, կոչերի, բողոքների եւ Արեւմտյան Հայաստանից ստացված տխուր լուրերի հրատարակությանը: «Արարատ» ամսագիրը հայրենասիրական խորունկ գիտակցությամբ պաշտպան էր կանգնում արեւմտահայության իրավունքներին եւ պահանջում էր Հայկական հարցի արդար լուծումը: Պետք է երախտագիտությամբ արձանագրել, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթը համարձակորեն կանգնում էր հայրենասիրական այդ դիրքերի վրա 1895 թ. մինչեւ 1919 թվականը»<sup>5</sup>:

Այսուհանդերձ, փաստենք, որ թեմայի վերաբերյալ «Արարատ»-ի հսկայածավալ ու արժեքավոր նյութերը մասնագիտական շրջանակի կողմից գրեթե չի օգտագործվել: Մինչդեռ դրանց պատմագիտական շրջանառությունն էապես օգտակար կլինի թեմայի առավել ամբողջական պատկերացման ու ընկալման, շատ հարցերի առարկայական պարզաբանման ու համապատասխան սպառիչ տեղեկատվության ստացման համար:

Հաշվի առնելով նշյալ հանգամանքը՝ դեռեւս 2010 թ. հրատարակության պատրաստեցինք «Սուրբ Էջմիածինը եւ Հայոց ցեղասպանությունը» ժողովածուն<sup>6</sup>: Այդտեղ ամփոփված են «Արարատ»-ի այն բոլոր նյութերը, որոնք արտացոլում են Մեծ Եղեռնի եւ Հայկական հարցի պատմությունը,

<sup>3</sup> Տե՛ս «Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում», «Էջմիածին», 1968, ԺԱ.-ԺԲ., էջ 96-102:

<sup>4</sup> ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐՅԱՆ, «Արարատ»-ը եւ արեւմտահայությունը, «Էջմիածին», 1968, ԺԱ.-ԺԲ., էջ 78-83:

<sup>5</sup> Անդ, էջ 79:

<sup>6</sup> Տե՛ս մանրամասն «Սուրբ Էջմիածինը եւ Հայոց ցեղասպանությունը», «Արարատ»-ի ժառանգություն», Լ., Ս. Էջմիածին, 2010, 736 էջ:

Մայր Աթոռի, Վեհափառ Հայրապետի ու հոգեւորականութեան ցուցաբերած հայրական հոգատար վերաբերմունքը:

Ուսումնասիրողի աշխատանքը դյուրացնելու նպատակով նյութերը թեմատիկ առումով բաժանել էինք 9 մասի՝ 1. Կոնդակներ, 2. Ամենայն Հայոց կաթողիկոսների գրադրութիւն, 3. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեութիւն եւ վիճակ, 4. Հայ հոգեւորականների գրութիւններ, 5. Հայ աշխարհիկ վավերագրեր, 6. Օտար աշխարհիկ վավերագրեր, 7. Հոգվածներ, 8. Գրախոսականներ, 9. Հաշիվներ եւ ցուցակներ: Իհարկե, անհնար է ամբողջութեամբ ներկայացնել այդ հսկայածավալ նյութը, եւ այդ պատճառով ընդհանուր գծերով կանդորդառնանք եւ կգնահատենք:

Առաջին աշխարհամարտի սկսվելով հայութիւնը եւս ընդգրկվեց համաշխարհային անասելի մատաղացում: Մայր Աթոռն իր առաջնահերթ պարտքը համարեց կատարել ամեն մի հնարավոր քայլ ժողովրդին օգնելու, սատարելու եւ մխիթարելու ուղղությամբ: Եղբայրական օգնութեան քրիստոնեական գործը դարձավ հոգեւորականների սրբազան հայրենասիրական պարտականութիւնը:

Գեւորգ Ե. Սուրենյանցի (1911–1930 թթ.)<sup>7</sup> կոնդակներն անմիջական պատկերացում են տալիս հայոց վիճակված ճակատագրի նկատմամբ Վեհափառի հայրապետական սրտացավութեան եւ կեցվածքի մասին: Անշուշտ, հարկ է առանձնացնել «Ս. Էջմիածնի եղբայրական օգնութեան գլխավոր կարգադրիչ հանձնաժողով» ստեղծելու վերաբերյալ 1914 թ. դեկտեմբերի 28-ի կոնդակը, որտեղ անհրաժեշտ էր համարվում քրիստոնեական օգնութեան կազմակերպումը, եւ տրվում էին հրահանգներ<sup>8</sup>:

Այս հանձնաժողովի նախագահ կարգվեց Եփրեմ եպս. Սուբիասյանը, անդամակցեցին Բագրատ եպս. Վարդազարյանը, Մատթեոս եպս. Մատթեոսյանը, Վրթանես եպս. Հակոբյանը, Գարեգին վրդ. Հովսեփյանը, Բաբկեն վրդ. Աղավելյանը: Վերջինս միաժամանակ նշանակվեց Մայր Աթոռի որբանոցի կառավարիչ: Հետագայում այս հանձնաժողովի նախագահներ եղան Բագրատ եպս. Վարդազարյանը, Գարեգին եպս. Հովսեփյանը, Գեւորգ եպս. Չորեքչյանը, Զավեն եպս. Մահտեսի-Բաբայանը: Նման հանձնաժողովներ ստեղծվեցին ամենուր: Դրանցից հիշատակենք մի քանիսը. Երեւանի թեմում՝ փոխթեմակալ Խորեն եպս. Մուրադբեկյանի, Նոր

<sup>7</sup> Տէն մանրամասն «Գեւորգ Ե. Սուրենյանց. Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847–1930 թթ.)», Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, կազմ.՝ Ս. Բէհբուդեան, Երեւան, 2005:

<sup>8</sup> Տէն «Արարատ», 1915, Ա., էջ 3–5. «Տեղեկագիր եւ հաշիւ Ս. Էջմիածնի «Եղբայրական օգնութեան յանձնաժողով»-ի գործունեութեան», 1915–1916, Վաղարշապատ, 1917:

Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմում՝ առաջնորդ Ներսէս արքեպս. Խուրավերդյանի, Հին Նախիջեւանի թեմում՝ առաջնորդական փոխանորդ Սիրոն վրդ. Մանվելյանի, Ալեքսանդրապոլի թեմում՝ առաջնորդական փոխանորդ Արտակ վրդ. Սմբատյանի, Ատրպատականի թեմում՝ առաջնորդ Ներսէս եպս. Մելիք-Թանգյանի, Վասպուրականի թեմում՝ առաջնորդ Սահակ արքեպս. Այվազյանի նախագահութեամբ<sup>9</sup>: Այսինքն՝ ամենուր այդ հայրենանվեր գործի գլուխ էին կանգնած հենց հոգեւորականները:

Որպէս այս ամենի տրամաբանական շարունակութիւն՝ Գեւորգ Ե. Սուրենյանցը 1915 թ. մարտի 21-ին ու հուլիսի 10-ին, 1916 թ. մարտի 22-ին դիմեց հայ հոգեւոր ու աշխարհիկ հաստատութիւններին ներկայացուցիչներին՝ հայրաբար հորդորելով ու կոչ անելով կատարել ամեն հնարավորը՝ օգնելու իրենց արեւմտահայ եղբայրներին<sup>10</sup>: Ուշադրութեան արժանի են թուրքերի դեմ մղվող պայքարում ռուսական զորքին անվերապահ աջակցելու մասին 1914 թ. օգոստոսի 5-ի եւ սեպտեմբերի 28-ի կոնդակները<sup>11</sup>:

Զարաշունչ ապրիլից հետո Հայոց Հայրապետը հոգու պարտք համարեց ժողովրդին առավել համախմբելն ու եղբայրական օգնութեան կազմակերպմանը հատուկ ուշադրութիւն դարձնելը: Տեղին է շեշտել, որ այս գործում առաջնահերթ դերակատարութիւն էր վերապահված հոգեւորականութեանը, հենց նրանցից էր Վեհափառն ակնկալում հայրենասիրութեան ցուցաբերում, որի վկայութիւնն են 1915 թ. հունվարի 12-ի ու նոյեմբերի 24-ի, 1916 թ. մարտի 21-ի կոնդակները<sup>12</sup>:

Գեւորգ Ե. Սուրենյանցի հայրապետական հորդորին ականջալուր էին աշխարհիկ հիմնարկներն ու գործիչները, որոնց նա նաեւ գոհունակութեան եւ օրհնութեան կոնդակներ էր հղում: Հիշատակենք 1914 թ. մարտի 18-ին Թիֆլիսի Կենտրոնական նպաստամատուց հանձնաժողովը եւ 1916 թ. հուլիսի 25-ին Կովկասում Հայկական բարեգործական ընկերութեան հիմնադիր Բագրատ Նավասարդյանին ուղղված կոնդակները<sup>13</sup>:

Արեւմտահայութեանն օգնութիւն ցուցաբերելու եւ այդ գործում ունեցած ծառայութեան գնահատման եւ օրհնութեան առնչութեամբ նշենք նաեւ օտարազգի գործիչներին հղված կոնդակների մասին. օրինակ՝

<sup>9</sup> Տէս օրինակ ՀԱՍ, ֆ. 57, ց. 2, գ. 1254, թ. 59:

<sup>10</sup> Տէս «Արարատ», 1915, Բ.-Գ., էջ 101-103, է.-Լ., էջ 515-518, 1916, Գ.-Դ., էջ 166-170:

<sup>11</sup> Տէս «Արարատ», 1914, Ը., էջ 678-679, Ժ., էջ 870-873. ՀԱՍ, ֆ. 57, ց. 5, գ. 94, թ. 1:

<sup>12</sup> Տէս «Արարատ», 1915, Բ.-Գ., էջ 99-100, ԺԱ.-ԺԲ., էջ 803-806, 1916, Գ.-Դ., էջ 163-166:

<sup>13</sup> Տէս «Արարատ», 1914, Դ., էջ 291-293, 1916, է.-Լ., էջ 451-454:

1916 թ. ապրիլի 27-ին Ջեյմս Բրայսին<sup>14</sup>, 1916 թ. մարտի 21-ին ԱՄՆ-ի հոգեւորականությանը եւ ապրիլի 10-ին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին<sup>15</sup>, 1917 թ. մայիսի 23-ին շվեյցարացի հայասեր Լեոպոլդ Ֆավրին, հունիսի 7-ին եւ 17-ին ֆրանսիացի հայասերներ Անատոլ Ֆրանսին ու Վիկտոր Բերարին<sup>16</sup>:

«Ամենայն Հայոց կաթողիկոսների գրագրություն» մասից հատկապես հիշատակման են արժանի նրանք, որոնք արտացոլում են Մեծ Եղեռնից հետո արեւմտահայերի անասելի վիճակի բարելավման ու Հայկական հարցի դրական լուծման ուղղությամբ միջազգային ատյաններում Վեհափառի դիվանագիտական ունակությունը: Հիշատակենք Գեւորգ Ե. Սուրենյանցի գրագրությունը Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Իտալիայի ղեկավարների հետ<sup>17</sup>: Առանձին խումբ է կազմում Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի հետ գրագրությունը<sup>18</sup>:

Հայոց Հայրապետի ուշադրության կենտրոնում էր Արեւմտյան Հայաստանում ռուսական բանակի եւ հայ կամավորների ռազմական հաջողությունները, որի վկայությունը Վանի, Երզնկայի, Կարինի եւ Տրապիզոնի ազատագրման առիթով նրա գրագրությունն էր ռուսական ռազմաքաղաքական ղեկավարության հետ<sup>19</sup>:

«Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեությունը եւ վիճակը» մասից առանձնացնենք եկեղեցական գույքի վերադարձման ու դպրոցների վերաբացման մասին պաշտոնական վավերագրերը<sup>20</sup>, տարբեր տարիներին (նաեւ մինչեւ 1915 թ.) Մայր Աթոռի կողմից որբերի նկատմամբ ցուցաբերված հոգատարության վերաբերյալ տեղեկությունները (հանգանակություններ հոգեւորականների շրջանում, «Որբախնամ մարմնի» գործունեություն), Ս. Էջմիածնի «Եղբայրական օգնության հանձնաժողով»-ի՝

<sup>14</sup> Տե՛ս «Արարատ», 1916, Ե.-Զ., էջ 313-314, 1917, Ա., էջ 39-44:

<sup>15</sup> Տե՛ս «Արարատ», 1915, ԺԱ.-ԺԲ., էջ 842-845, 1916, Թ.-Ժ., էջ 666, 1917, Բ.-Գ., էջ 83-85. ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 105, թթ. 12-14:

<sup>16</sup> Տե՛ս «Արարատ», 1917, Լ., էջ 579-582, 582-585, 585-588:

<sup>17</sup> Տե՛ս «Արարատ», 1915, Բ.-Գ., էջ 170-177, 1916, Գ.-Դ., էջ 220-221. ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 35, գ. 37, թ. 37:

<sup>18</sup> Տե՛ս «Արարատ», 1914, Բ., էջ 121, 1914, Գ., էջ 195-198, 217-219:

<sup>19</sup> Տե՛ս «Արարատ», 1915, Դ.-Ե., էջ 415-416, 1916, Ա.-Բ., էջ 44-45, Գ.-Դ., էջ 215-218, Է.-Ը., էջ 524-525:

<sup>20</sup> Տե՛ս «Բարձրագույն հրաման հայոց եկեղեցական կալուածների եւ դպրոցների մասին», «Արարատ», 1905, Զ., էջ 585-587. «Եկեղեցուն կալուածքների եւ դրամագլուխների վերադարձման կանոններ», 1905, ԺԲ., էջ 1045-1051:

արեւմտահայ գաղթականներին օգնելու նպատակով համայն հայությանն ուղղված կոչը<sup>21</sup>:

«Հայ հոգեւորականների գրություններ» մասից առանձնացնենք կիլիկիահայության կոտորածների մասին Կիլիկիո կաթողիկոսության<sup>22</sup>, Կ. Պոլսի Հայոց պատրիարքության եւ Ադանայի թեմի օգնության կոչերը<sup>23</sup>, որոնք հետազոտողների ուշադրությունից դուրս են մնացել: Նույն հանգամանքը պետք է նշել նաեւ քրդերի հայահալած գործունեության վերաբերյալ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն Տերեղիայանի ու Տարոնի թեմի առաջնորդ Ներսես եպս. Խարախանյանի նամակների առնչությամբ<sup>24</sup>:

«Հայ աշխարհիկ վավերագրեր» մասի նյութերը բավականին մանրամասն աղբյուրագիտական նյութ են պարունակում արեւմտահայերի օրհասական վիճակի վերաբերյալ: Հիշատակենք 1895–1896 թթ. կոտորածների մասին վիճակագրական աղյուսակներով տեղեկագրերը<sup>25</sup>, աշխարհիկ մարմինների օգնության կոչերը<sup>26</sup>, Պողոս Նուբարի նամակները Հայկական հարցի ճակատագրի վերաբերյալ<sup>27</sup>, Գեւորգ Ե.-ի կողմից Մուշ ուղարկված հանձնաժողովի զեկուցագիրը<sup>28</sup>: Եւ կրկին պետք է փաստել, որ այդ նյութերը եւս անհրաժեշտ չափով շրջանառված չեն:

«Օտար աշխարհիկ վավերագրեր» մասում ամփոփված են Արեւմտյան Հայաստանում 1914 թ. բարենորոգումների վերաբերյալ միջազգային դիվանագիտական փաստաթղթերը, որոնց՝ «Արարատ»-ում հրատարակումն իսկ արդեն վկայում է Հայկական հարցի ճակատագրի հանդեպ

<sup>21</sup> Տե՛ս «Արարատ», 1909, Բ., էջ 136–137, 1915, է.-Ը., էջ 518–520, ԺԱ.-ԺԲ., էջ 847–849, 1916, Ա.-Բ., էջ 43–44:

<sup>22</sup> Տե՛ս «Արարատ», 1908, ԺԱ., էջ 1014–1016. «Տեղեկագիր Կիլիկիոյ որբախնամ կեդրոնական յանձնաժողովի», 1909 օգոստոս 7 - 1910 դեկտեմբեր 31, Կ. Պոլիս, 1911:

<sup>23</sup> Տե՛ս «Արարատ», 1908, ԺԱ., էջ 1018, ԺԲ., էջ 1146–1147, 1909, Ե.-Զ., էջ 525–526, 549–551:

<sup>24</sup> Տե՛ս «Արարատ», 1914, Դ., էջ 325–326, Ե., էջ 406–420. ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 67, թթ. 11–12:

<sup>25</sup> Տե՛ս «Արարատ», 1896, է., էջ 329–334, Ը., էջ 381–384, Թ., էջ 420–424, ԺԱ., էջ 525–530, ԺԲ., էջ 578–586:

<sup>26</sup> Տե՛ս «Կոշ Հանգանակիչ մասնաժողովի ի նպաստ Թիւրքական Հայաստանի հայ տառապեալների», «Արարատ», 1908, ԺԱ., էջ 1051–1052. «Պատերազմից վնասուածներին օգնող Կովկասեան կոմիտէի կոչը», 1914, Թ., էջ 860–63:

<sup>27</sup> Տե՛ս «Արարատ», 1914, Ե., էջ 404–406, Զ., էջ 505–509. ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 58, թթ. 35–40, 47–49. նաեւ՝ ԲԱԲԳԷՆ ՎԱՐԳԱՊԵՏ, Հայկական հարցը եւ Պողոս Նուբար Փաշա, Ս. էջմիածին, 1914. Ս. ՊՈՂՈՍՅԱՆ, Գեւորգ Ե. կաթողիկոսի եւ Պողոս Նուբարի նամակագրությունը (1915–1918 թթ.), «էջմիածին», 2013, Դ., էջ 45–59:

<sup>28</sup> Տե՛ս «Զեկուցում Մուշ ուղարկուած յանձնաժողովի», «Արարատ», 1916, է.-Ը., էջ 566–586:

Մայր Աթոռի ուղադրության եւ, ինչու չէ, նաեւ այդ գործընթացում ունեցած կարեւոր դերակատարության մասին<sup>29</sup>:

Ծավալի առումով ամենից մեծը «Հողվածներ» մասն է. այդ հողվածները հրատարակվել են «Տաճկահայք», «Հայկական հարց», «Հայ կեանք եւ եկեղեցի», «Կրօնական-բարոյական», «Մայր Աթոռ» խորագրերի ներքո: Ուղադրավ է, որ մասնավորապես թարգմանական բազմաթիվ հողվածներ այժմ հասանելի են միայն «Արարատ»-ի շնորհիվ: Դրանցում առկա են արեւմտահայության վարչական, տնտեսական դրության վերաբերյալ տեղեկություններ, աղյուսակներով վիճակագրություն<sup>30</sup>, կոտորածների<sup>31</sup>, գաղթականների վիճակի բարելավման մասին նյութեր, եւ Հայկական հարցի հայանպաստ կարգավորման հարցում եւրոպական պետությունների անտարբեր քաղաքականության քննադատությունն են Բաբկեն վրդ. Աղավելյանի<sup>32</sup>, Գյուտ աբդ. Տեր-Ղազարյանի<sup>33</sup>, Գեւորգ Ալթունյանի<sup>34</sup>, Ալեքսեյ Զիվելեգովի<sup>35</sup> հողվածները: Նորություն են 1913 թ. նոյեմբերի 17-ին Փարիզում Հայկական հարցի առիթով գումարված միջազգային վեհաժողովի<sup>36</sup> եւ Ֆրանսիայում ու ԱՄՆ-ում հայանպաստ քառողջություն<sup>37</sup> մասին նյութերը:

<sup>29</sup> Տե՛ս «Հայաստանի բարենորոգումները», «Արարատ», 1914, Բ., էջ 126-129. «Տաճկահայաստանի բարենորոգումների ծրագիրը», 1914, Գ., էջ 222-226:

<sup>30</sup> Տե՛ս «Արեւմտահայերի ազգային եւ վարչական վիճակը», «Արարատ», 1908, Ա., էջ 46-52. «Տաճկահայոց եկեղեցական կալուածներու խնդիրը», 1908, Բ., էջ 223-227, 1912, Բ., էջ 117-121:

<sup>31</sup> Տե՛ս «Տեղեկատուութիւն Կիլիկիայի հայկական կոտորածների մասին», 1909, Ե.-Զ., էջ 526-538. «Հայկական կոտորածներ», 1916, Ա.-Բ., էջ 87-95, 1916, Ե.-Զ., էջ 366-368:

<sup>32</sup> Տե՛ս Բ. Վ. Ա., Թիւրքահայերի թիւն ըստ զանազան վիճակագրութեանց, «Արարատ», 1914, Բ., էջ 129-133. «Տաճկահայոց համերաշխ գործունէութիւնը այժմ աւելի քան անհրաժեշտ է», 1914, Գ., էջ 327-330. «Օգնենք վիրաւոր զինուորներին», 1914, Թ., էջ 778-781. «Յարութեան ժամը», 1914, ԺԱ., էջ 975-978. «Տաճկահայ գաղթականները ռուս-տաճկական պատերազմի ընթացքում», 1915, Բ.-Գ., էջ 138-149. «Տառապանքի երկիրը», 1915, Զ., էջ 441-443. «Մեր որբերը», 1915, Է.-Ը., էջ 544-546: Հատկանշական է, որ նրա խմբագրության օրոք «Արարատ»-ում բացվեց «Հայկական հարց» բաժին. տե՛ս «Արարատ», 1914, Ա., էջ 29-30:

<sup>33</sup> Տե՛ս ԳԻՒՏ ԱՔՅ. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ, Սրտացաւ աջակցութեան կարիքը, «Արարատ», 1916, Թ.-Ժ., էջ 674-681. «Մխիթարելու կարիքը», 1916, ԺԱ.-ԺԲ., էջ 802-804:

<sup>34</sup> Տե՛ս Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Թուրքահայաստանի նոր ճգնաժամը, «Արարատ», 1912, Թ., էջ 795-798. «Հայկական հարցի շուրջ», 1913, Բ.-Գ., էջ 266-272. «Անգլո-գերմանական հակամարտութիւնը եւ հայկական բարենորոգումների դժուարութիւնները», 1913, Ե., էջ 509-518:

<sup>35</sup> Տե՛ս Ա. ԶԻՒԵԼԵԳՈՎ, Ռուսաստանը եւ Գերմանիան Հայկական հարցում, «Արարատ», 1914, Բ., էջ 122-125. «Ինքնավար Հայաստանի տերրիտորիան», 1914, ԺԲ., էջ 1085-1090:

<sup>36</sup> Տե՛ս «Փարիզի միջազգային վեհաժողովը Հայկական հարցի առթիւ», «Արարատ», 1914, Ա., էջ 31-37. «Պօղոս Նուբար փաշայի զեկուցումը», «Արարատ», 1914, Ա., էջ 42-55:

<sup>37</sup> Տե՛ս «Արարատ», 1916, Ե.-Զ., էջ 368-86, 1917, Ա., էջ 55-62, Բ.-Գ., էջ 119-128:

«Հաշիվներ եւ ցուցակներ» մասն արդեն իսկ հստակ վկայում եւ ապացուցում է Մեծ Եղեռնից հետո արեւմտահայ գաղթականների նկատմամբ Մայր Աթոռի եւ Հայոց կաթողիկոսի հայրական հոգածության մասին: Այսպես՝ դրա վառ օրինակ է Ս. Էջմիածնի Սինոդի, որը տնօրինվում էր Գեւորգ Ե. Սուրենյանցի կարգադրությամբ, անունով արեւմտահայ գաղթականների օգտին ստացված գումարների հաշիվը, որն ընդգրկում է 1914 թ. դեկտեմբերի 23-ից մինչեւ 1917 թ. օգոստոսի 31-ը ժամանակաշրջանը<sup>38</sup>:

Հիշատակենք նաեւ Սալմաստի «Եղբայրական օգնության հանձնաժողով»-ի եւ Ղարաբաղի «Եղբայրական օգնության կանանց կոմիտե»-ի հաշիվները<sup>39</sup>, Ս. Էջմիածնի «Եղբայրական օգնության հանձնաժողով»-ի հաշվեկշիռը<sup>40</sup>:

Առանց հուզմունքի հնարավոր չէ ընթերցել Ս. Էջմիածնի «Եղբայրական օգնության որբանոց»-ում ապաստան գտած գաղթական երեխաների ցուցակը, որն ընդգրկում է 297 հոգի եւ ներկայացնում նրանց անունը, հայրանունը, ազգանունը, ծննդավայրը, տարիքը, սեռը, գրագիտության աստիճանը, ծնողների առկայությունը<sup>41</sup>:

Միաժամանակ նշենք, որ առկա են նաեւ այլ նյութեր, որոնք չենք դիտարկում, քանզի հետազայում հրատարակելու ենք առանձին գրքով<sup>42</sup>:

Մեծ Եղեռնի հետեւանքով հայոց Գողգոթան ամբողջությամբ ապրեց նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ ավերվեց, այրվեց ավելի քան 2.000 վանք ու եկեղեցի, զոհվեց շուրջ 4.000 հոգեւորական:

<sup>38</sup> Տէն Մ. Ն. ԳԵՐԳԵԱՆՅ, Հաշիւ Ս. Էջմիածնի Սինոդի անունով յօգուտ տաճկահայ գաղթականների ստացուած գումարների, «Արարատ», 1915, Զ., էջ 505-512, Թ., էջ 664-667, Ժ., էջ 793-799, ԺԱ.-ԺԲ., էջ 925-928, 1916, Ա.-Բ., էջ 157-160, Գ.-Դ., էջ 299-302, Ե.-Զ., էջ 442-443, Է.-Ը., էջ 607-608, Թ.-Ժ., էջ 766-767, ԺԱ.-ԺԲ., էջ 945-946, 1917, Ա., էջ 78-79, Բ.-Գ., էջ 254-255, Դ.-Ե., էջ 397-398, Թ.-ԺԲ., էջ 848-849:

<sup>39</sup> Տէն «Արարատ», 1916, Գ.-Դ., էջ 302-304, Ե.-Զ., էջ 439-441:

<sup>40</sup> Տէն ՎՐԹԱՆԵՍ Մ. ՎԱՐԳԱՊԵՏ, Հաշուեկշիռ Ս. Էջմիածնի «Եղբայրական օգնութեան յանձնաժողով»-ի դրամարկղի, աւանդադրամների, շտեմարանի եւ ազարակի, «Արարատ», 1917, Դ.-Ե., Ներդիր:

<sup>41</sup> Տէն «Ցուցակ Ս. Էջմիածնի «Եղբայրական օգնութեան որբանոց»-ի մէջ ապաստարան գտած տաճկահայ երեխաների (մինչեւ 1916 թ. օգոստոս)», «Արարատ», 1916, Թ.-Ժ., էջ 763-765, 1917, Բ.-Գ., էջ 243-253: Միայն Երեւանի «Եղբայրական օգնության հանձնաժողով»-ի 14 որբանոցում 1916 թ. հունիսի 15-ի դրությամբ խնամվում էր 1145 որբ. տե՛ս նաեւ Գ. ԷԳԻՆԵԱՆ, Գաղթականական որբանոցներ, Թիֆլիս, 1917:

<sup>42</sup> Տէն Ա. ԱՄՏԻԹԵԱՏՐՈՎ, Հայկական հարցը, «Արարատ», 1905, էջ 1081-1097. Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ, Արեւելեան հարցի գլխաւոր էտապները, «Արարատ», 1912, էջ 974-996, 1124-1145. ԲԸՆԷ ԲԻՆՕՆ, Հայերի բնաջնջումը. Գերմանական մեթօդ-թիրաքական գործ, «Արարատ», 1916, էջ 65-86, 233-260:

Ակնհայտ էր այն իրողությունը, որ քանի դեռ եղեռնագործ թուրքը Հայ Եկեղեցուն չէր հարվածել՝ նրա ժողովրդին չէր կարող ոչնչացնել: Այս առնչությամբ մեջբերենք Հակոբ Սիրունու դիպուկ եւ ճշմարտացի վկայությունը. «Մարտիրոսացավ նաեւ Հայ Եկեղեցին: Դահիճը չխնայեց եւ անոր: Ու շատ տրամաբանական էր: Պիտի չկարենար հայությունը խորտակել իսպառ, քանի կանգուն էր Հայ Եկեղեցին.... Հոտը բնաջնջած ատեն, չխնայեց նաեւ հովիվին: Եւ արդարեւ, Հայ Եկեղեցին իր բովանդակ հոգեւորականությունը զոհ տվավ հայաջինջ սարսափներուն: Գավառական թեմերու առաջնորդներեն, առաջնորդական փոխանորդներեն եւ վանահայրերեն սկսյալ մինչեւ գյուղերու համեստ քահանաները երիտասարդ թուրքերու վայրագության զոհ գնացին՝ սպանվելով երբեմն այնպիսի չարչարանքներու եւ խոշտանգումներու տակ, որոնց քով կնսեմանային հին սուրբերու կրած չարչարանքները»<sup>43</sup>:

Այսուհանդերձ, հայ ժողովուրդը, հավատարիմ իր համամարդկային առաքելությանն ու որդեգրած քրիստոնեական հավատքին, չոչնչացավ, այլ փյունիկին հարանման կրկին վեր հառնեց մոխրակույտից, շարունակեց ապրել, մաքառել ու հարատեւել, ավելին՝ իր նահատակությունը դարձրեց վերածնունդ. անասելի Գողգոթայից նորից հարություն առավ եւ իր հավերժի ճանապարհը շարունակեց հայր:

Եզրափակելով՝ եւս մեկ անգամ փաստենք, որ «Արարատ» ամսագրի նյութերը կարեւորագույն սկզբնաղբյուր են Հայոց ցեղասպանության եւ Հայկական հարցի համալիր ուսումնասիրության համար:

## РЕЗЮМЕ

В истории армянской периодической печати один из журналов, имеющий серьезное арменоведческое и общественное значение, является официальный журнал Первопрестольного Святого Эчмиадзина «Арапат». Его материалы всесторонне отображают историю Геноцида армян и Армянского вопроса, и во всем этом — проявляется заботливое отношение Первопрестольного Святого Эчмиадзина, Католикосов Всех Армян и духовенства.

Материалы представляют следующие тематические части: энциклики, переписка католикосов всех армян, деятельность и положение Первопрестольного

<sup>43</sup> Տէս Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ, Եղեռն մը եւ իր պատմությունը, «Էջմիածին», 1965, Բ.-Գ.-Դ., էջ 25:

Святого Эчмиадзина, переписка армянского духовенства, переписка армянских светских деятелей, переписка зарубежных светских деятелей, статьи, рецензии, счета и списки. В них содержится источниковедческий богатый материал о положении западных армян, геноциде, беженцах, дипломатической судьбе Армянского вопроса.

Данная тема почти никогда не была предметом специального исследования. Колоссальные и ценные материалы «Арарата» о данной тематике исследовательскими кругами почти не были использованы. А историографический оборот этих материалов был бы полезен для более обстоятельного представления и понимания, объективного разъяснения и получения соответствующей исчерпывающей информации о тематике. Несомненно, материалы «Арарата» являются важнейшими источниками для комплексного изучения Геноцида армян и Армянского вопроса.

## SUMMARY

“Ararat”, official magazine of the Mother See of Holy Etchmiadzin is one of the most serious Armenological and socially significant publications in the history of Armenian periodicals. The materials of “Ararat” comprehensively reflect the history of the Armenian Genocide and the Armenian Cause, reflecting on the caring attitude of the Mother See of Holy Etchmiadzin, the Catholicoi of All Armenians and the clergy.

The materials are presented in the following thematic sections: 1. Encyclicals, 2. Correspondence of the Catholicoi of All Armenians, 3. Activities and the current state of the Mother See of Holy Etchmiadzin, 4. Correspondence of the Armenian clergymen, 5. Correspondence of Armenian secular figures, 6. Correspondence of foreign secular figures, 7. Articles, 8. Reviews, 9. Accounts and lists. They contain rich material on source studies about the situation of Western Armenians, genocide, refugees, and the diplomatic fate of the Armenian Cause.

The topic under discussion has almost never been the subject of a special study; moreover, it has been neglected. The colossal and valuable materials of “Ararat” about this topic were almost not used by scholars. Its historic turnover will be particularly useful for the full understanding and perception of the subject, the objective settlement of many issues and the provision of relevant information. Undoubtedly, materials printed in “Ararat” magazine are the most important sources for the comprehensive study of the Armenian Genocide and the Armenian Cause.

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



ՍԵՐԺ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու  
ԵՊՀ

### «ԱՐԱՐԱՏ»-Ը՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՆԻ ՏԱՐԵԳԻՐ

«Արարատ» ամսագիրը հրապարակ իջավ 1868 թ. մայիսից՝ «Հրամանաւ Աստուածընտիր եւ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգեայ Դ.-ի ընդհանրական Հայրապետի եւ Ասպետի»՝ ինչպես վկայում է պարբերականի տիտղոսաթերթը: Այս պարզ, անգամ մի քիչ սառը թվացող վկայության ետեւում թաքնված է երկարատեւ ու տքնաջան աշխատանք՝ իրականացված Հայոց հայրապետ Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցու (1866–1882 թթ.) եւ միաբանության՝ ողջամիտ ու առաջադեմ հոգեւորականների ջանքերով: Այդ մասին է վկայում հենց «Արարատ»-ը<sup>1</sup> ներկայացնելով Սանկտ Պետերբուրգում Ալեքսանդր Բ. կայսեր հետ Հայոց հայրապետի հանդիպման ընթացքում քննարկված հարցերի շրջանակը: Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցուն հաջողվել է ստանալ կայսեր հաճությունը ոչ միայն հոգեւոր ճեմարան բացելու, այլ նաեւ տպարանի վերագործարկման ու հրատարակչություն ունենալու առնչությամբ: Կարծում ենք՝ պարբերական ունենալու որոշման կայացման վրա նշանակալի ազդեցություն է ունեցել նաեւ 1867 թ. հունվարի 16-ին Հայոց հայրապետի եւ Կ. Պոլսի հայկական վեց օրաթերթի խմբագրապետների հանդիպումը, որի ժամանակ այլ հարցերի շրջանակում քննարկվել է նաեւ կաթողիկոսի գործունեության ուղղվածությունը եւ թափանցիկությունը հավուր պատշաճի ներկայացնելու խնդիրը:

<sup>1</sup> Տե՛ս «Արարատ» ամսագիր, 1889, Ժ. էջ 570. այսուհետեւ սույն պարբերականից կատարվող մեջբերումների կողքին կնշվեն համապատասխան տարեթիվը, պարբերականի համարը եւ էջը:

Ինչեւէ, հարցը տարբեր դիտանկյուններից վերլուծվել է մամուլում եւ գիտական հետազոտություններում, ու մեր հետաքրքրության շրջանակից դուրս է այն վերստին եւ մանրամասն արծարծելը:

Հայտնի է, որ լույս աշխարհ եկող ցանկացած պարբերական նախ հրապարակում է իր հավատոյ հանգանակն այն առաքելության եւ նպատակների, որոնց միտված է իր գործունեությամբ: «Արարատ»-ը այս առումով բացառություն չէր: Ստորեւ հարկ ենք համարում ներկայացնել «Արարատ»-ի ուղղվածության վերաբերյալ խմբագրակազմի հայտարարագիրն ամբողջությամբ. «Արարատայ մէջ բովանդակելի նիւթերը պիտի լինին կրօնական, պատմական, բանասիրական եւ բարոյական հետեւեալ կարգաւորութեամբ.

Կրօնականին մէջ պիտի դրուին եկեղեցական կարգաց եւ արարողութեանց վրայ տեղեկութիւններ, կաթողիկոսաց գործեր, սուրբ հարց գրուածքներ, ազգային մատենագրաց կենսագրութիւններ եւ ձեռագիր մատենից ծանօթութիւններ:

Պատմականին մէջ՝ Հայաստանի նահանգաց, գաւառաց եւ քաղաքաց վրայ աշխարհագրական տեղեկութիւններ, վանօրէից ու մենաստանաց ստորագրութիւններ, որոնց նշխարքներն են, որ ժամանակ ժամանակ օրագրաց եւ ամսաթերթերից նաեւ աշխարհագրութեանց մէջ թերութեամբ հրատարակուելով՝ հայրենասիրաց փափագը արթնցուցած են արդէն Հայաստանի վրայ:

Բանասիրականը պիտի լինի ազգիս զարգացման վիճակին դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ, ուսումնական ճառեր, ճանապարհորդութիւններ, ոտանաւորներ եւ նամականիք նախնեաց:

Բարոյականին մէջ կդրուին թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին Սուրբ Գրոց վճռական առաժներու ընդլայնումներ, առակներ, հանելուկք, ընդ որս եւ օրագրալուրք, զուարճալի եւ կարեւոր դէպքեր եւ այլ այսպիսիք» (1868, Ա., «Յառաջաբան»):

Ինչպես նկատում ենք՝ «Արարատ»-ի ծրագիրը շատ պարզ է, նպատակային ու հասկանալի, որին հավատարիմ մնաց պարբերականն իր գործունեության ընթացքում՝ չհրաժարվելով նյութերի եւ խնդիրների արծարծման մշտական նորոգումից ու կանոնակարգումից՝ ըստ ժամանակի թելադրած պահանջի: Հատկանշական է, որ պարբերականի ծրագրային ձեւակերպումները հստակ եւ որոշակի նախանշում են նրա հիմնական նպատակագրումների ու ենթադրվող արդյունքների շրջանակը,

հիմնախնդիրները, որոնց նպատակը մոռացված կամ չգիտակցված ազգային հիշատակներ արթնացնելն է. «Այնպիսի յիշատակներ, զորոնք իրենց նախնիքը անմահացրած՝ իրենք ի համբոյր խոնարհելու կը կարօտին. այնպիսի յիշատակներ, որոնք լեռներու եւ ձորերու մէջ հիմա հոգեւորքի պէս կիսամահ կ'ընեն. այնպիսի յիշատակներ, ուր երբեմն աստուածային պաշտօններգութիւնք կ'իսկէին... այնպիսի յիշատակներ, ուր յառաջ քրիստոսանման հովիւք իրենց բանաւոր հօտը կ'մակաղէին, ուր հիմա անբանից հօտք կ'ապառակին եւ գազանաց ջուրիք կ'գիշերեն. այնպիսի, վերջապէս, յիշատակներ, որոնց սիրտն ու սիրոյն քրտանցը շաղախ, կամ այսպէս ասել, զորոնք իրենց նախնիքը թողլով կերթային ու կ'լային, իսկ իրենք յետագայք նոցա գալով պիտի գան, եւ տեսնելով ցնծան» (1868, Ա.): Ուշագրավ է, որ «Արարատ»-ը որդեգրել է ոչ միայն հոգեւոր ու գրագետ դասին պիտանի լինելու, այլ նաեւ համայն հայութեանը լուսավորելու եւ զարգացնելու առաքելութիւն: Նրա հրատարակիչները հույս են հայտնում, թէ՛ «...նորա ոճն եւս հաճոյական լինի ընթերցողաց, որ է Հայաստանի գաւառի պարզ աշխարհաբառ լեզուն, որ աւելի մերձ է գրաբառին. կյուսանք դարձեալ Տաճկաստանի մեր սիրելի ազգայնոց դիւրընտել առնել զայն հետզհետէ, երբ առիթ կունենանք յօրագրաւորս խառն գործածել եւս Տաճկաստանի ազգային օրագրաց լեզուն» (1868, Ա.):

Ինչպէս տեսնում ենք՝ որդեգրած ուղին հեռու էր պատեհապաշտութիւնից եւ դուրս օրախնդիր հարցեր լուծելու շրջանակից: Այն լուրջ եւ կշռադատված, հեռահար նպատակներ հետապնդող, հիմնարար դրույթներ ընդգրկող ծրագիր էր, որ այսօր եւս արդիական է հնչում: Այս դիտանկյունից զարմանք ու հիացմունք է առաջացնում այն վիթխարի աշխատանքը, որ ժամանակին սուղ եւ անհնարին թվացող պայմաններում իրագործել են պարբերականի հիմնադիրները՝ Հայոց հայրապետի գլխավորութեամբ: Նախ պետք էր բարեկարգել եւ արդիականացնել տպարանը: Եւ ինչպէս ներկայացնում է հմուտ եւ խորագետ պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը՝ «1868 թ. մարտի 1-ին ձեռնահաս բարձրաստիճան հոգեւորականների մասնակցութեամբ ստեղծում է մի հանձնաժողով՝ տպարանը բարեկարգելու, այն հարստացնելու եւ ընդարձակելու գործն ամուր հիմքերի վրա դնելու համար: Կաթողիկոսի հանձնարարութեամբ Հարութիւն Խալիբյանը Թեոդոսիայից էջմիածին է ուղարկում տառեր, գլխատառեր, ծաղկատառեր, զարդեր, գծագրեր՝ շուրջ 0,5 տոննա

կշռով: Հովհաննես Հովնանյանը Մայր Աթոռի տպարանի համար Եւրոպայից բերել է տալիս 120 թուի երեք տեսակի որակյալ թուղթ: Վերջինս տրամագրում է նաեւ տպագրական երկու մամուլ, իսկ Մկրտիչ Սանասարյանը Վիեննայից էջմիածին է ուղարկում հայկական տառերի պղնձյա մայրերը եւ նվիրում անգլիական «WOOD» ընկերության արագածույլ մեքենա՝ զանազան աստիճանի եւ ձևերի գլխագրեր, ծաղկագրեր եւ ծաղիկներ ձուլելու համար: Ամստերդամից եւ Փարիզից ստացվում են տպագրական զանազան սարքավորումներ<sup>2</sup>:

Մեջբերվածը վկայում է, որ «Արարատ» ամսագրի հրատարակումն ունեցել է համահայկական նշանակություն: Մեծ պատասխանատվությամբ եւ ուշադրությամբ են ընտրվում նաեւ ամսագրի խմբագրության աշխատակիցները: Թուրքիկ հայացքն անգամ տարբեր ժամանակներում «Արարատ»-ը խմբագրողների ցուցակին վկայում է, թե ինչպես են խնդիրը կարեւորել ժամանակին, ովքեր են ղեկավարել խմբագրությունը եւ ինչով են պայմանավորված եղել պարբերականի բարձր վարկանիշն ու պահանջվածությունը հասարակության տարբեր շերտերում: Խմբագիրներից յուրաքանչյուրն իր ծանրակշիռ ավանդն ունի պարբերականի կայացման գործում, եւ նրանցից ամեն մեկն իր գրողն է գրել պարբերականի արտաքին ձեւավորման եւ բովանդակության վրա: Նրանց աշխատանքը բնութագրելը, մանավանդ գնահատելը մեզ հեռուն կտաներ, բայց խմբագիրներից մեկի՝ Ղ. Աղայանի առնչությամբ մեկ-երկու դիտարկում անելը, այնուամենայնիվ, ավելորդ չենք համարում:

Հայտնի է, որ Ղ. Աղայանը տպագրական գործի հմուտ գիտակ եւ ղեկավար էր: Պատահական չէ, որ 1867 թ. վերջին Մոսկվայից վերադարձած Ղ. Աղայանին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հրավիրում են՝ զբաղեցնելու տպագրության ղեկավարի պաշտոնը: Ղ. Աղայանը համաձայնում է, քանի որ գտնվում էր նյութական անձուկ վիճակում, իսկ առաջարկված աշխատանքը խոստանում էր ժամանակի համար բավականին լուրջ աշխատավարձ (ի դեպ, հասարակական-քաղաքական, նաեւ նյութական անբարենպաստ եւ ամենասուղ պայմաններում անգամ միաբանությունը չի զլացել իր աշխատակիցներին եւ թղթակիցներին վճարել կայուն աշխատավարձ. տե՛ս 1918–1919 թթ. համարների վկայությունները): 1869 թ. հունվարի 8-ին Ղ. Աղայանը հասնում է Ս. Էջմիածին եւ ստանձնում իրեն

<sup>2</sup> ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցի (1813–1882 թթ.), «Նշանավոր ճեմարանականներ», պրակ Ա., Ս. Էջմիածին, 2005, էջ 38–39:

վստահված պաշտոնը. նույն թվականին նաեւ նշանակվում է «Արարատ»-ի խմբագիր: Նա պաշտոնավարում է մինչեւ 1870 թ. կեսերը, այսինքն՝ շուրջ մեկուկես տարի, ապա հեռանում է Ս. Էջմիածնից՝ զբաղվելով ուսուցչությամբ Հայաստանի տարբեր գավառներում, Ղարաբաղում եւ Թիֆլիսում:

Առավել նկատելի է դառնում «Արարատ»-ի տեղն ու դերը հայագիտության զարգացման եւ ազգապահպանման գործում, երբ մի փոքր այլ դիտանկյունից ենք մոտենում հայ մամուլի պատմությանը, մասնավորապես՝ նրա շրջափուլերին:

Հայ մամուլի պատմությունը, նկատի ունենալով գործունեության արդյունավետությունը եւ ունեցած դերակատարությունը, մեր համոզմամբ, կարելի է բաժանել հետեւյալ 4 շրջափուլերի՝

ա. 1794 թ. «Ազդարար»-ի հրատարակում՝ սկիզբ դրվեց հայ պարբերական մամուլի պատմությանը:

բ. 1843 թ. «Բազմավէպ»-ի հրատարակում՝ սկզբնավորվեց հայագիտությունը գիտական բարձր չափանիշներով, բարձրակարգ թարգմանությունների շնորհիվ յուրացվեցին համաշխարհային գրականության նվաճումները՝ նպաստելով հայրենական գրականության եւ արվեստի աննախընթաց ու համակարգված զարգացմանը:

գ. 1858 թ. «Հիւսիսափայլ»-ի հրատարակում՝ սկզբնավորվեց հայ հեղափոխական-դեմոկրատական մտքի տարածումը՝ իբրեւ այլընտրանք մտածողության արտահայտության եւ լուսավորական շարժման երաշխավոր:

դ. 1868 թ. «Արարատ»-ի հրատարակում՝ սկզբնավորվեց հայ պարբերական մամուլը հայրենիքում, զարգացան եւ տարածվեցին հայ մշակույթն ու հոգեւոր կյանքի պատմությունը՝ գնահատելի չափանիշներով, աննախադեպ բարձրացավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հեղինակությունը, նրա գործունեության թափանցիկությունը՝ նպաստելով հայրենասիրության եւ ազգային միասնականության ձեւավորմանը:

Այս պարզ շրջաբաժանումն ամենեւին նպատակ չի հետապնդում նսեմացնելու հայ մամուլի մյուս պարբերականների դերն ու նշանակությունը մեր ազգային կյանքում եւ կառուցված է զուտ ժամանակագրական հաջորդականության սկզբունքով եւ, ինչպես նշեցինք, այն դերակատարման հաշվառմամբ, որ ունեցել են վերոնշյալ պարբերականները: Հենց այս դերակատարումը նկատի ունենալով՝ առանձնացրել ենք

գրանցից երկուսը՝ «Բազմավէպ»-ը եւ «Արարատ»-ը, որոնք երկարակեցությամբ, հետեւաբար նաեւ ազդեցության տեւականությամբ եղան ու մնացին անգերազանցելի ազգային պարբերական մամուլի պատմության մեջ: Արդ, ո՞րն էր այն առաքելության նպատակը, որն ի սկզբանե որդեգրել էր «Արարատ»-ը, եւ այն արդյունքը, որն այսօր հնարավոր է վավերագրել:

Ամսագրի խմբագրութեան գործունեությունը մշտապես եղել է այն համակարգող խորհրդի եւ անձամբ Հայոց հայրապետների ուշադրության կենտրոնում, որի արդյունքում հաճախ են տեղի ունեցել ինչպես որդեգրած ուղղության, այնպես եւ անհատական մոտեցմամբ պայմանավորված փոփոխություններ: Այսպես՝ պարբերականի լույս ընծայումից ընդամենը երկուսուկես տարի անց Գեւորգ Գ. Կոստանդնուպոլսեցին հրավիրում է հրատարակչական ժողով՝ խորհուրդը համակարգող Գ. եպս. Մուշեղյանցի գլխավորությամբ եւ հաստատում նոր կանոնադրություն. «Մայր Աթոռոյ տպարանի օր աւուր առաւել եւս բարեգործութեան եւ ազգօգուտ պայծառութեան ու կառավարութեան համար՝ Վեհափառ Կաթողիկոսը տպարանական ժողովում հաստատեց կարեւոր մի կանոնադրութեամբ միանգամայն իւրաքանչիւր անդամը պատրաստելով մէկ մի պաշտօն ստանձնել նոյն ժողովոյ իրաւանց ենթարկեալ գործոց մէջ» (1870, Ժ., էջ 297):

Վերոնշյալը վկայում է, որ հստակ գիտակցվել ու արժեւորվել է «Արարատ»-ի դերակատարությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեության ճշմարիտ նկարագիրը ներկայացնելու գործում՝ ինչպես հոգեւոր, այնպես եւ աշխարհիկ շրջանակի համար: Ուստի, պատահական չէ, որ խմբագրակազմը, անկախ անդամների փոփոխությունից կամ նրանց ով լինելուց, հաճախ է հանդես եկել ինքնաքննադատությամբ, ինչպես օրինակ՝ 1887 թ. Ա. համարում կարդում ենք. «Այո՛, եղավ ժամանակ, որ «Արարատ»-ը փոքր-ինչ շեղուեց իւր նպատակից եւ տեղի տուեց թարգմանական ու ինքնուրոյն այնպիսի գրուածքների, որոնք մինչեւ անգամ պատշաճաւորութեան սահմանից դուրս էին (ընդգծ.՝ Ս. Ս.), բայց այդ ժամանակը կարի սող եղաւ»: Մկրտիչ Ա. Վանեցին (1892–1907 թթ.) հայրապետական կոնդակով<sup>3</sup> կազմում է խմբագրության նոր հանձնաժողով, որի գործունեության վերաբերյալ երեք տարի անց՝ 1897 թ., հայտնում է իր գոհունակությունը՝ «...յօրէ անտի եւ ցայսօր ժամանակի անդամք

<sup>3</sup> 1894 թվականի թիվ 2168 կոնդակը:

յանձնաժողովոց ջանասիրութեամբ վարեալ զգործս» (1897, Ա., էջ 1): Հայոց հայրապետը սա եւս բավարար չի համարում եւ հանձնարարում է՝ «...անփոփոխ պահելով զվաղեմի ծրագիր Արարատի, ջան ի գործ դնել առաւելապէս ընդարձակելոյ եւ ճոխացուցանելոյ զայնոսիկ նիւթս ընթերցանութեան յէջս ամսագրոյն, որք արծարծեն ի միտս ընթերցողաց՝ աշխարհականաց եւ եկեղեցականաց զսէր ուսման Ս. Աւետարանի եւ այլոց կրօնական գիտելեաց»: Ապա նաեւ հիշեցնում է «յստակութեան ոճոյ» եւ «զգիւրամատչելի նիւթս ընթերցանութեան քաղեալս ի տնտեսական կենցաղօգուտ գիտութեանց եւ յառողջապահութենէ»: Այս կոնդակով, փաստորեն, նոր ծրագիր է տրվում «Արարատ»-ին, որն առավել է հստակեցնում ամսագրի բովանդակությունը՝ ներառելով նաեւ ժողովրդական զվարճալի պատմություններ, գեղարվեստական բազմաբովանդակ նյութեր: Մկրտիչ Ա. Վանեցին ամսագրի առջեւ նոր խնդիր է դնում՝ տպագրութեան ընդունել «կարող եւ գրագէտ անձանց յօդուածներ, եւս նիւթաւոր գեղեցիկ բանաստեղծութիւններ...», իսկ նյութերի ստորակարգությունը հստակեցվում է ըստ բաժինների՝

ա. կրօնական բաժնի մէջ՝ Սուրբ Գրքի բացատրութիւն պարզ լեզուով, քարոզ ընտանի ոճով գրուած, եկեղեցական կարգերի եւ կանոնների քննական լուսաբանութիւններ:

բ. Պատմական բաժնի մէջ՝ հայ ժողովրդի անցեալ կեանքից, Հայաստանի նահանգների, գաւառների եւ քաղաքների վրայ պատմական եւ աշխարհագրական տեղեկութիւններ, նկարագրութիւններ, հին ձեռագրերից՝ քաղուածներ, յիշատակարաններ, եկեղեցական սուրբ հայրերի կենսագրութիւններ:

գ. Բարոյական մասի մէջ կը լինին բարոյագիտական յօդուածներ դաստիարակութեան գործնական եւ հանրամատչելի մանկավարժութեան վերաբերեալ նիւթեր:

դ. Բանասիրական բաժնի մէջ՝ կրթիչ վէպեր, զուարճալի առակներ, գրոց եւ բրոց, հին եւ նոր առածներ, տնտեսական տեղեկութիւններ:

ե. Ազգային մասն կը պարունակէ Վեհափառ Հայրապետի դիւանի տնօրինութիւններ, սինօդի կարեւոր օրագրութիւններ, ուսումնարանների վերաբերեալ կարեւոր որոշումներ, եկեղեցական կեանքի տեսութիւններ» (1894, Ա., էջ 2-3):

Ինչպես երեւում է վերոշարադրյալից՝ երջանկահիշատակ կաթողիկոսի ծրագիրը հստակություն է հաղորդում ամսագրի կառուցվածքին,

նյութերի դասակարգմանը, որով եւ որոշակի են դառնում նպատակագրումներն ու աշխատանքը: Նշենք, որ տարբեր խմբագրակազմեր տարբեր ժամանակներում կարեւորել են խնդիրը, եւ «Արարատ»-ը, ըստ անհրաժեշտության, փոխել է նաեւ տիտղոսաթերթը: Այսպես՝ հիմնադրման օրից այն կոչվել է «Կրօնական, պատմական, բանասիրական եւ բարոյական», արդեն 1873 թ. նշյալ բնութագրերին ավելանում է նաեւ «ազգայինը», իսկ 1895-ին ընդլայնվում է նյութերի շրջանակը, եւ ամսագիրը կոչվում է «Կրօնական-բարոյական, գրականական-պատմական, բանասիրական-մանկավարժական ազգային եւ պաշտօնական», 1898 թ.՝ «Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի պաշտօնական-եկեղեցական», 1901-ին՝ «Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ», 1917 թ.՝ «Փրկիստիայական եւ գիտական կիսամեայ հանդէս», 1918-ին՝ պարզապես «գիտական»: 1919 թ. միաբանության անասելի ջանքերի շնորհիվ «Արարատ»-ը հրատարակվում է համահավաքով՝ Ա.-ԺԲ. համարներով՝ «Գիտական ամսագիր Հայրապետական Աթոռոյ» վերտառությամբ, եւ դադարեցվում է հրատարակությունը (հասկանալի պատճառներով): Ամսագրի վերահրատարակումը հնարավոր դարձավ միայն 1944 թ. Գեւորգ արք. Զորեքչյանի (Հայոց կաթողիկոս՝ 1945-1954 թթ.) ճկուն մարտավարության եւ համառ ջանքերի շնորհիվ՝ այս անգամ արդեն «Էջմիածին» անվամբ:

Անվանափոխության վերաբերյալ որոշակի փաստեր առանձնացնել չհաջողվեց, սակայն հակված ենք կարծելու, թե «Արարատ» անունը, հասկանալի պատճառներով, չէր կարող հաճո լինել բոլշևիկյան իշխանության կուսակցականացված քիմքին: Ինչ էլ որ լինի Մայր Աթոռի պաշտօնական ամսագրի անվանումը՝ «Արարատ» թե «Էջմիածին», այն փառահեղ կատարեց եւ շարունակում է կատարել իրեն վերապահված առաքելությունը՝ տարեգրել-ամրագրել Մայր Աթոռի գործունեությունը, որը նաեւ հայ ժողովրդի դժվարին, բայց իմաստավորված կյանքի տարեգրությունն է: Այս առումով «Արարատ»-ի՝ իբրեւ հայ հոգեւոր ու աշխարհիկ կյանքի ճշմարիտ եւ անխարդախ հայելու տարեգրական գործունեությունը պետք է գնահատել երկու տարբեր դիտանկյունից: Առաջին՝ ամսագիրը, առանց ավելորդ մանրամասների, բայց հատուկ կարեւորությամբ ներկայացնում է Սուրբ Էջմիածնի միաբանության գործունեությունը՝ հավուր պատշաճի նկարագրելով եկեղեցական կյանքի նորություններն ու նրբությունները, ծիսական արարողություններն ու միջոցառումները՝

հընթացս անդրադառնալով նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ նրա նշանավոր գործիչների պատմությանն ու ծառայությանը:

Երկրորդ՝ «Արարատ»-ն իր էջերում ներկայացնում էր նաեւ Հայ Եկեղեցու հայաստանյան եւ սփյուռքյան թեմերի կյանքն ու խնդիրները, ինչպես նաեւ համայնքներում տեղի ունեցող նշանակալից իրադարձությունները, որով եւ ամբողջանում է Մայր Աթոռի համազգային գործունեության համայնապատկերը: Ամսագիրը հստակ եւ ամբողջական պատկերացում է տալիս իր ընթերցողին Մայր Աթոռի կրթական գործունեության ու որդեգրած քաղաքականության վերաբերյալ, որով պարզ է դառնում նաեւ այն վիթխարի դերակատարությունը, որ խաղացել եւ շարունակում է խաղալ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ազգապահպանության շրջագծում:

Ձարմանք եւ հիացմունք ես ապրում, երբ ամսագրի միջոցով հաղորդակից ես դառնում այն ուսումնական ծրագրերին եւ կանոնադրությունը, որ թեմական եւ ծխական նորաբաց դպրոցների համար ստեղծել են ժամանակի լուսամիտ մարդիկ՝ աշխարհիկ ու հոգեւորական: Եւ եթե նկատի ունենանք այն պայմանները, որում ապրում եւ արարում էին նրանք, ապա անկասկած է դառնում, որ ամեն մի հաջողած ձեռնարկ պարզապես խիզախում էր: Այդ խիզախումը դրսեւորվում էր հատկապես մեր ազգային գոյության միակ եւ հիմնական պատվարի՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միասնության քայքայիչների դեմ պայքարում:

Բերենք ընդամենը մեկ օրինակ: Տխրահուշակ Ա. Հասունյանի անձն ու ազգակործան գործունեությունը վաղուց է քննվել եւ ներկայացվել, ու ավելացնելու քիչ բան կա: Չենք ցանկանում անցյալի հնացած վեճը կրկին բորբոքել, բայց դժվար է չզարմանալ, առավել եւս չհիանալ այն նվիրումով եւ գիտակցումով, որով «Արարատ»-ի թղթակիցները, հեղինակներն ու աշխատակիցները մեկնաբանում, մերկացնում են հասունյանականությունը<sup>4</sup>: Գրեթե նույն գիտակցումով են քննվում, ներկայացվում նաեւ Լեհաստանի հայ համայնքի հավատափոխության եւ կորստյան պատճառներն ու հետեւանքները, տխրահուշակ Նիկոլ Թորոսովիչի կործանիչ գործունեությունը եւ Հասունյանի հետ ունեցած առնչությունը: «Արարատ»-ի տարեգրական առաքելության հաջողվածության կարեւոր պայմաններից մեկն այն է, որ ամսագիրը դարձավ Մայր Աթոռի գործունեության թափանցիկության գլխավոր վկայարանն ու երաշխավորը

<sup>4</sup> Տե՛ս «Արարատ», 1869-1871 թթ.:

(նկատի ունենք հատկապես նյութական շրջանակը): Զարմանալի պատասխանատվությամբ, անաչառ մանրամասներով Վեհարանն իր միաբանությունն ու աշխարհիկ ընթերցողին «Արարատ»-ի յուրաքանչյուր համարում ներկայացնում է բարերարներին, նրանց նվիրատվությունները, անգամ՝ մոմավաճառությունից ստացված գումարները եւ դրանց բաշխումը: Այս ամենը վկայում է, որ «Արարատ»-ը, նրանում արժարժված հարցերն ու խնդիրները ոչ միայն հետաքրքիր, հաջող ու կարեւոր նյութ են մերօրյա պատմաբանի համար, այլ նաեւ շարունակում են արդիական եւ ուսանելի մնալ աշխարհիկ ու հոգեւոր իշխանությունների համար: Ընդամենը մեկ պարզաբանում. Գաղտնիք չէ, որ համաշխարհայնացման (գլոբալացման) եւ տեղեկատվական բազմաշերտ բախումների հետ միաժամանակ այսօր անհամեմատ մեծացել է մամուլի, մասնավորապես՝ էլեկտրոնային մամուլի դերակատարությունը: Մեր ժամանակները համեմատելի չեն ԺԹ. դարի, նույնիսկ Ի. դարի տեղեկատվական ժամանակների հետ: Ավելին՝ անգամ ԻԱ. դարի առաջին տասնամյակը ետ է մնում իր իսկ երկրորդ տասնամյակից: Եթե նախկինում ամիսների, լավագույն դեպքում շաբաթների ընթացքում էր լուրը հասնում հասցեատիրոջը, ապա այժմ դա վայրկյանների խնդիր է, իսկ ազդեցությունը՝ տասնապատիկ, նույնիսկ հարյուրապատիկ ավելի: Ահա թե ինչու Մայր Աթոռը պետք է լրջորեն գնահատի «Արարատ»-ի դերը, յուրացնի նրա դասերը՝ ոչ միայն ապահովելով իր գործունեության թափանցիկությունն ու սերտ կապն ընթերցողի հետ, այլ նաեւ հակահարված տալով Հայ Եկեղեցու թաքնված ու հայտնի հակառակորդներին: Վերջին շրջանում տարբեր աղանդների ներկայացուցիչների, մութ եւ կասկածելի ծագում ունեցող ՀԿ-ների կազմակերպած հարձակումը Ամենայն Հայոց Կաթողիկոսի դեմ պատահական չէ: Մեր ժողովրդի եւ պետության հաջողություններից երկյուղած կառույցները հրաշալի հասկանում են, որ դարեր շարունակ առանց պետականության ապրած ու գոյատեւած ազգը արհավիրքներին դիմակայել եւ մեր դար է հասել գլխավորապես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ նրա ողջախոհ առաջնորդների շնորհիվ: Իսկ հարվածն ուղղում են Հայոց հայրապետի դեմ՝ ոչ իբրեւ անձի, այլ որպես Հայ Եկեղեցու եւ հավատապահի խորհրդանիշի. հոգեւոր առաջնորդը մեր ազգային գոյության հարատեւության վկայողն ու խորհրդանիշն է: Թերեւս պետության որեւէ ղեկավարի, փոքրիկ Հայաստանի սահմանից դուրս, չի հաջողվել (գոնե անկախության այս երեք տասնամյակում) հայ ժողովրդի

բոլոր հատվածներին՝ «ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի», այնպես համախմբել եւ ի մի բերել համազգային գաղափարների շուրջ, ինչպես դա անում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ Հայոց հայրապետի առաջնորդությամբ:

Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցին պատմության մեջ մնաց «մեծահոգի», «լուսամիտ» պատվատիտղոսներով՝ առավելապես իր ուսումնական-կրթական գործունեությամբ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ստեղծմամբ, նաեւ շնորհիվ այն բանի, որ ժամանակը եւ «Արարատ»-ը հնարավորին չափ սթափ ու ճիշտ գնահատեցին եւ ներկայացրին երջանկահիշատակ հայրապետին: Իսկ այսօրվա գահակալը... միթե պակաս է նրա ազգանպաստ եւ հայապահպան գործունեությունը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւս շարունակում է իր նախորդների եկեղեցասեր ու ազգանվեր գործունեությունը՝ Սեւանի Վազգենյան դպրանոցի հիմնում, Հառիճավանքի դպրանոցի վերաբացում, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի՝ Աստվածաբանական համալսարանի վերածում, Հայորդյաց տների ստեղծում եւ դեռ կարելի է շարունակել... Չենք կամենում խոսել աղքատախնամության, բարեգործական ճաշարանների եւ աչք շոյող եկեղեցաշինության մասին, որի նախագեպը Մայր Աթոռի պատմության մեջ երբեւէ չի արձանագրվել:

Միայն Մայր Աթոռի Մատենադարանի կառուցումն իսկ բավարար է Հայ Եկեղեցու պատմության մեջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մնացուն տեղն ամրակայելու համար: Արդ, ի միտ ունենալով «Արարատ»-ի դասերը, նկատի ունենալով Հայ Եկեղեցու եւ նրա հովվապետի անշրջանցելի դերը մեր ազգային գոյատեւման ու զարգացման գործում՝ հարկ է, որ հանգամանորեն ներկայացվի Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեության իրական եւ ճշմարիտ պատկերը, մանավանդ որ այս՝ 2019 թ. նրա գահակալության հոբելյանական՝ 20-րդ տարին է. կարծում ենք՝ անմիտ ու զազրախոս «առաջադիմականներից» մեր խղճի եւ հոգու երաշխավորին պաշտպանելու միակ ճշմարիտ ճանապարհը դա է: «Արարատ»-ի նման՝ Մայր Աթոռի եւ Հայոց հայրապետի մերօրյա պատմությունը տարեգրելը նրա ժառանգորդի՝ «էջմիածին» ամսագրի (եւ ոչ միայն նրա) հիմնական ու կարեւոր առաջնահերթություններից մեկը պետք է լինի:

## РЕЗЮМЕ

В статье рассматривается почти полувековая деятельность журнала «Ара-рат», представляются идея и цели его основания, а также направленная на благо народа деятельность Первопрестольного Святого Эчмиадзина. Рассказы-вается о проектах архиепископа Гавриила Айвазовского, Газароса Агаяна и других редакторов, в частности, о нововведениях Католикоса Всех Армян Мкртича Первого Ванеци. По сути, журнал «Арарат» является истинным и бескорыстным зеркалом, отражающим путь Святой Армянской Апостольской Церкви. Оценивается просветительская деятельность Католикоса Всех Армян Геворга Четвертого не только в деле строительства школ, но и в развитии армянского периодической печати.

## SUMMARY

The article considers nearly 50-year old activity of “Ararat” magazine. The idea and aims of its creation, as well as the patriotic activity of the Mother See of Holy Etchmiadzin are also described. It presents the projects of the editor-in-chief Archbishop Gabriel Ayvazovsky, Ghazaros Aghayan and others, and in particular the innovations of Mkrtich I of Van, Catholicos of All Armenians. Basically, “Ararat” magazine is the true and genuine mirror of the progression of the Armenian Apostolic Church. The enlightening activity of Kevork IV, Catholicos of All Armenians is appreciated not only in building schools, but also in the development of the periodical press.



ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու  
ԿԳՆ

## «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ԱՎԱՆԴԸ ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

**Ա**ՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոս Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցու նախաձեռնությամբ հիմնված է 1868–1919 թթ. հրատարակված «Արարատ» ամսագիրը նշանակալի դեր է խաղացել հայ ժողովրդի հոգեմտավոր, մշակութային եւ հասարակական կյանքում: «Արարատ» ամսագիրը Արեւելյան Հայաստանում հրատարակվող կրոնագիտական, եկեղեցագիտական, պատմագիտական, բանասիրական ու մշակութային առաջին լուրջ ամսագիրն էր եւ մեծապես նպաստել է գիտության, մշակույթի ու հայագիտության զարգացմանը: «Արարատ»-ի շուրջ համախմբվել եւ ամսագրին թղթակցել են ժամանակի գրեթե բոլոր հայ անվանի հոգեւորականները, մշակութային գործիչներն ու գիտնականները<sup>1</sup>:

Ամսագրում հայ ժողովրդի պատմության, հայ հին, միջնադարյան եւ նոր գրականության, եկեղեցական մատենագրության (մեկնողական, ջատագովական, հակաճառական, սրբախոսական, ծիսական երկեր, ճառեր, քարոզներ), Հայոց Եկեղեցու դավանաբանության, ծիսագիտության, եկեղեցական իրավունքի, աղանդների ու հարակից այլ խնդիրների, ինչպես նաեւ հայ բանահյուսության, ազգագրության, հնագիտության, հաբեւան եւ հեռավոր ժողովուրդների հետ հայերի առնչությունների, հայկական գաղթավայրերի, հայոց վանքերի ու եկեղեցիների մասին, գիտության եւ արվեստի տարբեր ճյուղերին, այդ թվում՝ մանկավարժությանը վերաբերող հոգվածներ, նյութեր եւ ուսումնասիրություններ են տպագրվել: Դրանք անգնահատելի աղբյուր ու կարեւոր ատաղձ դարձան հետագա ուսումնասիրությունների եւ գիտական պրպտումների համար:

«Արարատ» ամսագիրը, իր էջերը սիրահոժար տրամադրելով ժամանակի հայ մշակույթի եւ գիտության ինչպես անվանի ու վաստակաշատ,

<sup>1</sup> «Արարատ» ամսագրի շուրջ հավաքված եւ ամսագրին թղթակցած հայ մշակույթի երեւելի գործիչների մասին առավել մանրամասն տե՛ս «Մատենագիտություն «Արարատ» ամսագրի», կազմ.՝ Սեդա Կոծինյան, խմբ.՝ Սուրեն Քոլանջյան, Արթուր Հատիտյան, Ս. էջմիածին, 1970, էջ III–XVI:

այնպես եւ սկսնակ գործիչները՝ մանկավարժական բնույթի հոգվածներին ու նյութերին, իր գնահատելի ավանդն է ունեցել հայ մանկավարժական մտքի զարգացման գործում:

«Արարատ»-ում տպագրված հոգվածներով հայ մանկավարժական մտքի զարգացմանն իր նպաստն է բերել գրող, հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ եւ մեծ մանկավարժ Ղազարոս Աղայանը<sup>2</sup>, որն իր ամբողջ կյանքը նվիրել է մատաղ սերնդի դաստիարակության եւ ժողովրդին լուսավորելու գործին: 1869 թ. մայիսից ստանձնելով «Արարատ» ամսագրի խմբագրի պարտականությունը՝ առաջին իսկ համարներում հրատարակում է «Խորհրդածութիւն դաստիարակութեան վերայ» հոգվածաշարը<sup>3</sup>, որում շարադրում է մանկավարժական բազմաբնույթ հարցերի վերաբերյալ սեփական արժեքավոր մեկնաբանություններ: Ղազարոս Աղայանը քննադատում էր գործող դպրոցը, պահանջում վերափոխել այն, մերձեցնել կյանքին, պատանեկությանը պատրաստել՝ վաղվա թոհուրոհի մեջ գտնելու իր տեղը. դեմ չլինելով օտար դրականը վերցնելուն՝ միաժամանակ մերժում էր այն մանկավարժներին, որոնք աղանդավորի մոլեռանդությամբ՝ կուրորեն ընդօրինակում են ուրիշներին<sup>4</sup>: Նա պնդում էր, որ դպրոցը ժողովրդին է եւ պետք է ծառայի հասարակության բոլոր խավերին: Նրա մանկավարժական համակարգի նպատակն էր երեխաներին պատրաստել կյանքի համար, զարգացնել ուժեղ, խելոք, առաքինի քաղաքացի, ապահովել սովորողների համակողմանի, ներդաշնակ դաստիարակությունը եւ զարգացումը: Այդ նպատակը հաջողությամբ իրագործելու համար առաջնությունը տալիս էր մայրենի լեզվի ուսուցմանը՝ մտավոր, աշխատանքային, բարոյական ու գեղագիտական դաստիարակության միասնականությամբ<sup>5</sup>, եւ սովորողների ինքնագործունեությանը: Ղազարոս Աղայանը դեմ էր մարմնական պատիժներին, կողմնակից՝ երկսեռ ուսուցմանը: Գրելով, թե «Մեծ է դաստիարակի գործը եւ սրբազան

<sup>2</sup> Ղ. Աղայանի մասին առավել մանրամասն տե՛ս Ա. ԱՍԱՏՐՅԱՆ, Ղազարոս Աղայան. կյանքն ու գործունեությունը, Երեւան, հտ. Ա., 1940. Հ. ՄՈՒՐԱԳՅԱՆ, Ղազարոս Աղայան (կյանքը եւ գործը), Երեւան, 1941. Վ. ԱՍՏՎԱԾՍՏՐՅԱՆ, Ղ. Աղայանը - մանկավարժ, Երեւան, հտ. Ա., 1957. Ա. ԱՎԹԱՆԳԻՆՅԱՆ, Ղազարոս Աղայանի աշխարհայացքը, Երեւան, 1983. «Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում», կազմ. եւ ծանոթ.՝ Ա. Ասատրյան, խմբ. եւ առաջաբ.՝ Ս. Սարինյան, Երեւան, 1967:

<sup>3</sup> Տե՛ս Ղ. ԱՂԱՅԱՆ, Խորհրդածութիւն դաստիարակութեան վերայ, «Արարատ», 1869, Ե. (թիւ 1), էջ 22-24, 2. (թիւ 2), էջ 44-48, Թ. (թիւ 5), էջ 118-128, Ժ. (թիւ 6), էջ 160-177:

<sup>4</sup> Տե՛ս Յ. ՍԻՄՈՆՅԱՆ, Հայ մանկավարժության պատմություն, Երեւան, 2012, էջ 170:

<sup>5</sup> Տե՛ս անդ, էջ 169:

է նորա պաշտօնը»<sup>6</sup> նա բարձր էր գնահատում ուսուցչի դերը եւ պահանջում մասնագիտական, մանկավարժական խորը գիտելիքներ, դասավանդման վարպետություն, նորարարություն եւ հնարամտություն, բարոյականային անաղարտություն: Այսինքն, ըստ Ղազարոս Աղայանի, ուսուցիչը պետք է կատարելատիպ լինի իր աշակերտների համար եւ նրա պատիվը պետք է բարձր պահել:

Կարեւորելով Ղազարոս Աղայանի գործունեությունը եւ ներդրումը հայ գրականության, դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացման գործում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցին (Խրիմյան Հայրիկ) նրա գրական գործունեության 40-ամյա հոբելյանի առթիվ օրհնության կոնդակ է հրապարակել<sup>7</sup>:

Հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ գնահատելի ներդրում է ունեցել մանկավարժության նշանավոր տեսաբան, ուսուցիչ, բազմաթիվ դասագրքերի, մեթոդական ձեռնարկների, «Արարատ»<sup>8</sup> եւ այլ պարբերականներում հրատարակված մանկավարժամեթոդական բազում հոդվածների հեղինակ Սեդրակ Մանդինյանը<sup>9</sup>: Հայ մանկավարժության առջեւ ծառացած խնդիրների եւ հետագա ընթացքի մասին իր խոհերն ու դիտարկումները Ս. Մանդինյանը ամփոփ ներկայացրել է 1882 թ. օգոստոսի 23-ին Թիֆլիսում կայացած Հայոց ուսուցչական ընդհանուր ժողովում (առաջին) կարդացած հրապարակային դասախոսության մեջ, որը հետագայում տպագրվել է «Արարատ»-ում<sup>10</sup>: Անձի ձեռավորման գործում կարեւորելով դպրոցական դաստիարակության դերը՝ կրթության բովանդակության համընդհանուր ընդգրկումով (հումանիտար, բնագիտական, ճշգրիտ առարկաներ, արվեստ, լեզուներ, կրոն եւ այլն)՝ Ս. Մանդինյանը, այնուամենայնիվ, այն չի համարում միակը եւ

<sup>6</sup> Տէս Ղ. ԱՂԱՅԱՆ, Խորհրդածութիւն դաստիարակութեան վերայ, «Արարատ», 1869, Ե. (թիւ 1), էջ 23:

<sup>7</sup> Տէս «Արարատ», 1902, Ե.-Զ., էջ 417:

<sup>8</sup> Տէս Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ, Իրազնական դասեր, «Արարատ», 1889, ԺԱ., էջ 577-590, ԺԲ., էջ 626-654, 1890, Բ., էջ 88-101, Գ., էջ 144-154, Դ., էջ 189-205. «Մեծը դպրոցում», 1889, Գ., էջ 154-165, Դ., էջ 212-227. «Հայերէն լեզուի դասատուութիւն ծխական ուսումնարաններում», 1889, Թ., էջ 490-520, Ժ., էջ 552-567. «Միացեալ բաժանմունքներում աւանդելու եղանակ», 1890, ԺԱ., էջ 615-625. «Շարադրական վարժութիւններ», 1890, Ը., էջ 453-471, Թ., էջ 499-516. «Քերականական լուծումն», 1890, Ե., էջ 243-253, Զ., էջ 310-328. «Թերուսումնութիւն», 1898, Ե., էջ 210-219. «Աշակերտական շարադրութիւն», 1912, Բ., էջ 131-138 եւ այլ հոդվածներ:

<sup>9</sup> Ս. Մանդինյանի մասին տես Գ. Էդիլեան, Սեդրաք Մանդինեան, Թիֆլիս, 1916. Ա. Դանիելյան, Սեդրակ Մանդինյան, խմբ.՝ Հ. Կարճիկյան, Երեւան, 1964:

<sup>10</sup> Տէս Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ, Յարգելի հանդիսականք եւ սիրելի պաշտօնակիցք, «Արարատ», 1883, Ա.-Բ., էջ 22-40:

ամենազորը: Նա բարձր էր գնահատում ընտանեկան դաստիարակությունը եւ այդ գործընթացում կարեւորում կրթված, դաստիարակված մոր դերը: Բարոյական դաստիարակության հարցերում առաջնորդվում էր քրիստոնեական բարոյախոսությունով: Զգալի է Ս. Մանդինյանի ծառայությունը մայրենի լեզվի, ռուսաց լեզվի, թվաբանության, տարրական ուսուցման մեթոդաբանության մշակման հարցում: Հայկական դպրոցների համար անընդունելի էր համարում թարգմանված դասագրքերը, քանզի դրանք չէին կարող հաշվի առնել հայ ժողովրդի ու հայոց լեզվի առանձնահատկությունները:

Ս. Մանդինյանը ուսուցչին համարում էր դպրոցի առանցքը, հետեւաբար վերջինս պետք է ունենա մասնագիտական գերազանց պատրաստվածություն, լինի հմուտ, ստեղծագործող, իր մտահղացումներն իրականացնող: Նա կարեւոր տեղ էր հատկացնում սովորողների տրամաբանության, վերլուծական մտածողության զարգացմանը եւ ինքնուրույն մտահանգումներ կատարելու կարողությանը՝ առաջնահերթ համարելով մայրենի լեզվի ուսուցումը. վերջինս դիտարկելով որպես ազգապահպանման միջոց՝ չէր անտեսում օտար լեզուների ուսուցման նշանակությունը<sup>11</sup>: Կարեւորում էր տեսական նյութի հաստատուն յուրացումն ու դրա գործնական կիրառությունը:

«Արարատ»-ում տպագրված իր հոդվածներում Ս. Մանդինյանը առաջադիմական մանկավարժության դիրքերից բարձրացրել է ժամանակի հայ մանկավարժներին ու դպրոցին հուզող բազմաթիվ հարցադրումներ (դիդակտիկայի ու մասնավոր մեթոդաբանության հարցեր, դպրոցականի տարիքային եւ հոգեկան զարգացման առանձնահատկություններ, կրթության բովանդակությանն ու դասավանդման արդյունավետությանը վերաբերող խնդիրներ եւ այլն), ներկայացրել ու հիմնավորել դրանց լուծումները: Նա իր գործունեությամբ մեծապես նպաստել է հայ մանկավարժական մտքի զարգացմանը:

«Արարատ»-ում տպագրված հոդվածներով, ուսումնասիրություններով եւ գրախոսություններով հայ մանկավարժական մտքի զարգացմանն իր անուրանալի նպաստն է բերել նշանավոր մանկավարժ, հոգեբան, կրթամշակութային գործիչ Գուրգեն Էդիլյանը<sup>12</sup>: Նրա աշխատություն-

<sup>11</sup> Տե՛ս Յ. ՍԻՄՈՆՅԱՆ, Հայ մանկավարժության պատմություն, էջ 175:

<sup>12</sup> Գ. Էդիլյանի մասին տե՛ս Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Գուրգեն Էդիլյան (մենագրություն), Երեւան, 1973:

ները այժմ եւս չեն կորցրել իրենց գիտականությունը, արդիականությունն ու թարմությունը եւ բազմաթիվ մանկավարժների համար շարունակում են մնալ իբրեւ սեղանի գիրք։ Գ. Էդիլյանին մեծ համբավ եւ ճանաչում է բերել «Քննադատություն Յիլլէրի ձեւական աստիճանների» ատենախոսությունը, որը նա 1909 թ. փետրվարի 20-ին Բեռլինում հաջողությամբ պաշտպանել է եւ ստացել փիլիսոփայության դոկտորի աստիճան<sup>13</sup>։ Հետագայում Գ. Էդիլյանը թարգմանել է իր աշխատանքը հայերեն եւ տպագրել ինչպես «Արարատ»-ի համարներում, այնպես եւ առանձին գրքով<sup>14</sup>։ Ատենախոսության մեջ Գ. Էդիլյանը գիտնականի բարեխղճությունն ու սկզբունքայնությամբ քննադատում է Արեւմուտքում գերիշխող Հերբարտ-Յիլլէրյան մանկավարժության մեջ ընդունված ուսուցման աստիճանների ձեւական բնույթը, նշում ուսուցման գործընթացի կազմակերպման գիտամանկավարժական հիմունքներն ու ձեւերը։

Հայ մանկավարժական մտքի նշանակալի ձեռքբերումներ են Գ. Էդիլյանի՝ «Արարատ» ամսագրի էջերում հրատարակած «Ուսուցիչներ պատրաստելու խնդիրը (խօսուած Գէորգեան ճեմարանի տարեդարձին)»<sup>15</sup>, «Մեթոդի անհրաժեշտությունը ուսուցման ժամանակ»<sup>16</sup>, «Դիդակտիկայի հիմունքները»<sup>17</sup>, «Գիտություն եւ դպրոցական պարապմունքների նպատակները»<sup>18</sup>, «Դիտողութեան մեթոդներ։ Անալիզ»<sup>19</sup>, «Գաղափարները դպրոցում»<sup>20</sup>, «Օրէնքների մշակման մեթոդներ. ինչ է օրենքը»<sup>21</sup>, «Մի՞, թէ՞ մի քանի մեթոդներ»<sup>22</sup>, «Պատմելու խնդիրը դպրոցում»<sup>23</sup> եւ այլ հոդվածները, բազմաթիվ գրախոսականներն ու անդրադարձները<sup>24</sup>։

<sup>13</sup> Տէս Յ. ՍԻՄՈՆՅԱՆ, Հայ մանկավարժության պատմություն, էջ 246։

<sup>14</sup> Տէս Գ. ԷԴԻԼՅԱՆ, Քննադատություն Յիլլէրի ձեւական աստիճանների, Վաղարշապատ, 1911։

<sup>15</sup> Տէս «Արարատ», 1911, Ա., էջ 69-75։

<sup>16</sup> Տէս «Արարատ», 1913, Ժ.-ԺԱ., էջ 913-924։

<sup>17</sup> Տէս «Արարատ», 1913, ԺԲ., էջ 1086-1107։

<sup>18</sup> Տէս «Արարատ», 1913, Ա., էջ 23-40։

<sup>19</sup> Տէս «Արարատ», 1913, Բ.-Գ., էջ 133-153։

<sup>20</sup> Տէս «Արարատ», 1913, Ե., էջ 416-432։

<sup>21</sup> Տէս «Արարատ», 1913, Զ.-Է., էջ 552-564։

<sup>22</sup> Տէս «Արարատ», 1913, Լ.-Թ., էջ 705-715։

<sup>23</sup> Տէս «Արարատ», 1913, ԺԱ., էջ 1013-1031։

<sup>24</sup> Տէս Գ. ԷԴԻԼՅԱՆ, Դպրոցական կեանք։ «Նոր-դպրոցը» շաբաթաթերթ, «Արարատ», 1911, Գ., էջ 196-198. «Մանկավարժական մուգէյ», «Արարատ», 1911, Բ., էջ 147-154. «Քննադատություն Յիլլէրի ձեւական աստիճանների», «Արարատ», 1911, Դ., էջ 306-313, Ե., էջ 378-383, Զ., էջ 456-459, Է., էջ 553-561, Թ., էջ 749-753, Ժ., էջ 836-845, ԺԱ., էջ 925-936, 1912, Ե.-Զ., էջ 427-445, Է.-Լ., էջ 637-657. Օսուալդի կարծիքը միջնակարգ դպրոցների բարեփոխության մասին», «Արարատ», 1912, Բ., էջ 123-130. Յ. ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, Մեթոդական

Գ. Էդիլյանի գիտական ուսումնասիրությունները վերաբերում են ուսուցման տեսությանը, դասավանդման եղանակներին եւ խնդիրներին, ընդհանուր եւ մանկավարժական հոգեբանությանը, հայոց լեզվի դասավանդման մեթոդաբանությանը, դպրոցական դասագրքերի ու ձեռնարկների ստեղծմանը, դատական հոգեբանությանը, գեղարվեստական երկի հոգեբանական վերլուծությանը, հայկական տառատեսակներին եւ նրանց դյուրընթեռնելիության հարցերին:

Իր հրապարակումներում Գ. Էդիլյանը հիմնավորում է մեթոդի անհրաժեշտությունը, ժխտում մեկ մեթոդի գերակայությունը, ապա ընդգծում, որ արդյունավետ դասավանդման հիմքը մեթոդների բազմազանությունն է, իսկ մեթոդի ընտրությունը կախված է դասի նպատակից, սովորողների տարիքային առանձնահատկություններից, կրթական մակարդակից եւ ուսումնական նյութի բովանդակությունից:

Գ. Էդիլյանը ուսուցիչներից պահանջում էր լինել հնարագետ ու ստեղծագործող, ազատորեն ընտրել մեթոդը, բայց չդառնալ դրա գերին, տիրապետել մասնագիտությանը, մանկավարժական վարպետությանը, մշտապես զբաղվել ինքնազարգացմամբ, լինել ճկուն, արագ կողմնորոշվող, հասկանալ աշակերտի հոգին, ապրել ու զգալ դասավանդվող նյութը եւ սովորողներին էլ ապրեցնել ու զգալ տալ այն, դասավանդել հստակ, մաքուր, ճշիւ ու պատկերավոր, ոչ երբեք միապաղաղ, լինել արդարամիտ, անաչառ, համեստ ու համբերատար, այսինքն՝ դառնալ «դպրոցի հոգեկան կյանքի աղբյուրը»<sup>25</sup>:

Ժամանակի հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ գնահատելի ներդրում է «Արարատ» ամսագրում հրատարակված «Խաղի նշանակությունը կրթութեան մէջ» հոդվածը<sup>26</sup>: Հոգվածագիր Խորեն վրդ. Ստեփանեն գրում է, որ խաղը «...զարգացնում է հոգու ուրախ յօժարություն եւ պարզություն, խաղը զարգացնում է եւ ամրացնում է երեւակայություն.... Խաղը արտայայտուած հակումն է դէպի գործունէություն»<sup>27</sup>: Նա կարծում է, որ նախադպրոցական, կրտսեր դպրոցական տարիքի երեխայի

եւ գործնական ցուցմունքներ (գրախոսական), «Արարատ», 1912, Ժ.-ԺԱ., էջ 1033-1035. ՊՐՕՖ. Է. ՄԱՅԷՐ, Պատմութեան տեսական եւ մեթոդական խնդիրները, թարգմ.՝ Գ. Գաբրիէլեանի, խմբ.՝ Գ. Ալթունեանի (գրախոսական), «Արարատ», 1912, Ժ.-ԺԱ., էջ 1036-1040:

<sup>25</sup> Յ. ՍԻՄՈՆՅԱՆ, Հայ մանկավարժության պատմություն, էջ 249:

<sup>26</sup> ՏԷՄ ԽՈՐԷՆ ՎՐԴ. ՍՏԵՓԱՆԷ, Խաղի նշանակությունը կրթութեան մէջ, «Արարատ», 1872, է., էջ 283-284, Ը., էջ 321-322, Թ., էջ 353-354:

<sup>27</sup> ԽՈՐԷՆ ՎՐԴ. ՍՏԵՓԱՆԷ, Խաղի նշանակությունը կրթութեան մէջ, «Արարատ», 1872, է., էջ 284:

համար խաղը կենսական անհրաժեշտություն է, աշխատանք, աշխարհաճանաչության միջոց: Երեխային պետք է դաստիարակել խաղի մեջ, խաղի միջոցով՝ հասակակիցների շրջապատում, բնության գրկում: Երեխային խաղից զրկել, նշանակում է նրան պատժել: Բարձր գնահատելով եւրոպական դպրոցն ու մանկավարժական միտքը՝ Խորեն վրդ. Ստեփանեն միաժամանակ նշում է, որ «գերմանական դպրոցն ընդհանրապես չի կարող օրինակ ծառայել այլ ազգերի համար.... ազգային դպրոցը պէտք է համապատասխանի ազգի հոգեկան բնույթին, սովորոյթին...»<sup>28</sup>:

«Արարատ» ամսագրում հրատարակված մանկավարժական ուշագրավ եւ արժեքավոր հրապարակումներ են «Մանկավարժական աշխարհից քաղուած խնդիրներ»<sup>29</sup>, Ա. Զամինյանի «Թէ ինչպէս են նայում ամերիկացիները կրթութեան հարցի վերայ»<sup>30</sup>, Ս. Կանայանի «Թէ որքան պէտք է պարապեն աշակերտները»<sup>31</sup>, Հուսիկ վրդ. Մովսիսյանի «Մեր դպրոցները եւ նոցա ներքին կազմակերպութիւնը»<sup>32</sup>, Գ. Տեր-Գաբրիելյանցի «Ուսուցչի կատարելագործութիւնը»<sup>33</sup>, «Դարձեալ վարժապետներ պատրաստելու խնդիրը»<sup>34</sup>, Գ. Պատկանեանի «Դաստիարակութիւն մանկանց Հայոց»<sup>35</sup> եւ «Կտակ կրթական»<sup>36</sup>, Հ. Մուշեղյանցի «Դաստիարակութիւն ի մարդն»<sup>37</sup> եւ բազմաթիւ այլ հոգւածները:

Մեր օրերում եւս հրատապ ու արդիական մի խնդիր եւ դրան առնչվող հարցադրումներ են արծարծված «Հայոց ուսումնասիրութիւնը. անհեռատես եւ վնասակար հետեւանքները» հոգւածում: Հոգւածագիրը թվարկում է օտար դպրոցներում սովորելու վնասակար

<sup>28</sup> «Հայկական աշխարհ», Բաքու, 1876, թ. 1-2, էջ 14. հմմտ. Յ. ՍԻՄՈՆՅԱՆ, Հայ մանկավարժության պատմություն, էջ 184:

<sup>29</sup> Տէս Ս. Բ., Մանկավարժական աշխարհից քաղուած խնդիրներ, «Արարատ», 1880, է., էջ 288-297, Ը., էջ 334-342, Թ., էջ 378-384, Ժ., էջ 426-430:

<sup>30</sup> Տէս Ա. Զ. (Ա. ԶԱՄԻՆՅԱՆ), Թէ ինչպէս են նայում ամերիկացիները կրթութեան հարցի վերայ, «Արարատ», 1881, Գ., էջ 117-127, է., էջ 307-313:

<sup>31</sup> Տէս ՍՏ. ԿԱՆԱՅԵԱՆՅ, Թէ որքան պէտք է պարապեն աշակերտները, «Արարատ», 1881, Դ., էջ 177-181, Ե., էջ 219-226, Զ., էջ 255-257:

<sup>32</sup> Տէս Յ. Վ. Մ. (ՅՈՒՍԻԿ ՎՐԴ. ՄՈՎՍԻՍՅԱՆ), Մեր դպրոցները եւ նոցա ներքին կազմակերպութիւնը, «Արարատ», 1881, Բ., էջ 56-73:

<sup>33</sup> Տէս Գ. ՏԵՐ-ԳԱԲՐԻԷԼՅԱՆՅ, Ուսուցչի կատարելագործութիւնը, «Արարատ», 1885, Բ., էջ 69-73:

<sup>34</sup> Պ. Հ. Ո. Գ. Է. Ը., Դարձեալ վարժապետներ պատրաստելու խնդիրը, «Արարատ», 1870, Ա., էջ 13-22. Պ. Հ. Ո. Գ. Է. Ը., Թէ ինչպէս պէտք է պատրաստել մանկավարժ ուսուցիչներ, «Արարատ», 1870, Բ., էջ 47-51:

<sup>35</sup> Տէս Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ, Դաստիարակութիւն մանկանց Հայոց, «Արարատ», 1873, Ժ., էջ 376-379, ԺԱ., էջ 417-421:

<sup>36</sup> Տէս Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ, Կտակ կրթական, «Արարատ», 1873, ԺԱ., էջ 416-419:

<sup>37</sup> Տէս ՅՈՎՀ. ՄՈՒՇԵԼՅԱՆՅ, Դաստիարակութիւն ի մարդն, «Արարատ», 1873, Թ., էջ 341-342:

հետեւանքները, անդրադառնում հայերի օտարամոլությանը, ուժացման եւ ձուլման խնդիրներին, նշում, որ կովկասյան արքունի (պետական) ուսումնարաններում ուսանելից հետո աշակերտների մեծ մասը հայեր են, իսկ գավառական ուսումնարաններում առհասարակ մեծ թիվ են կազմում հայերը<sup>38</sup>։ Մոր հասարակական եւ ընտանեկան դերն է կարեւորված «Ո՛րտեղ են մայրերը» հոդվածում։ Հոդվածագիրը գրում է՝ երբ առկա չէ մոր ազդեցությունը, աշխարհում որեւէ բան չի կարող նրան փոխարինել։ Արտաքին սովորությունները կարող են մանկավարժից հաղորդվել մանկանը, բայց բարոյականության դասերը երեխայի մեջ կարող են արմատանալ միմիայն մոր միջոցով։ Ընտանեկան կյանքում մոր տնօրինության ներքո գտնվող բոլոր միջոցները նրա համար կրթության եւ դաստիարակության գործիք պետք է լինեն<sup>39</sup>։

«Արարատ» ամսագրում հրատարակված մանկավարժական ուղղվածությամբ հոդվածները եւ թարգմանական նյութերը մեծապես նպաստել են ժամանակի Արեւմտյան առաջադիմական մանկավարժության ձեռքբերումները հայ մասնագետների եւ ընթերցողների սեփականությունը դարձնելու եւ հայ մանկավարժական միտքը զարգացնելու գործին։

«Արարատ»-ը, հաջողությամբ շարունակելով եւ զարգացնելով Վենետիկի «Բազմավէպ» եւ Երուսաղեմի «Սիօն» ամսագրերի որդեգրած գիտական, մշակութային ու հայագիտական ձեռքբերումների հանրահռչակման եւ տարածման գործելաոճը, իր հերթին մեծապես ազդեց հայ իրականության ու մամուլի պատմության մեջ որակապես նոր շրջափուլի մեկնարկի եւ կրոնաբարոյական, գրական-բանասիրական, գիտական ու հայագիտական ուղղվածությամբ՝ ավելի ուշ հրապարակ իջած այնպիսի պարբերականների կայացման ու զարգացման վրա, ինչպիսիք էին Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ»-ն, նոր շրջանի «Սիօն»-ը, Անթիլիասի «Հասկ» ամսագիրն ու «Հասկ» տարեգիրքը, Մայր Աթոռի «Էջմիածին»-ը, Կ. Պոլսի հայոց պատրիարքության «Շողակաթ»-ը։

Այսպիսով, «Արարատ» ամսագրում հրատարակված մանկավարժական ուղղվածությամբ հոդվածները, նյութերը եւ ուսումնասիրությունները, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ գիտատեսական, թարգմանական եւ հայ մանկավարժության պատմության,

<sup>38</sup> Տե՛ս «Հայոց ուսումնասիրությունը. անհեռատես եւ վնասակար հետեւանքները», «Արարատ», 1871, Բ., էջ 102։

<sup>39</sup> Տե՛ս Ս. Ս., Ո՛րտեղ են մայրերը, «Արարատ», 1871, Ը., էջ 443-444։

*պարարտ հող նախապատրաստեցին ժԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին հայ մանկավարժական մտքի զարգացման, որակապես նոր շրջափուլ անցնելու, ինչպես նաեւ խորհրդահայ մանկավարժական դպրոցի սաղմնավորման ու կայացման համար: Հիրավի, հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ անուրանալի է «Արարատ» ամսագրի ունեցած ավանդը:*

## РЕЗЮМЕ

Основанный и изданный в 1868–1919 гг. по инициативе Католикоса Всех Армян Геворга Четвертого Костанднуполсеци журнал «Арагат» сыграл значительную роль в духовной, культурной и общественной жизни армянского народа. Журнал «Арагат» был первым серьезным религиозно-богословским, историческим, филологическим и культурным журналом, изданным в Восточной Армении, который внес значительный вклад в развитие науки, культуры и арменоведения. Вокруг журнала «Арагат» были объединены почти все известные армянские священнослужители, деятели культуры и ученые.

Педагогические статьи, материалы и исследования, опубликованные в журнале «Арагат», которые можно условно разделить на три группы: научно-теоретические, переводные и истории армянской педагогики, подготовили плодородную почву для развития в конце XIX – начале XX вв. армянской педагогической мысли, осуществили переход в качественно новую стадию, а также зарождение и становление армянской советской педагогической школы.

Воистину, неоспоримо вклад журнала «Арагат» в развитии армянской педагогической мысли.

## SUMMARY

“Ararat” magazine founded by the initiative of Gevorg IV of Constantinople, Catholicos of all Armenians, and published from 1868 to 1919, has had a significant role in the spiritual, cultural and social life of the Armenian people. “Ararat” magazine was the first serious religious, ecclesiastical, historic, philological and cultural journal published in Eastern Armenia, and made a significant contribution to the

development of Armenian science, culture and, in particular, of Armenology. Almost all well-known Armenian clergymen, cultural figures and scholars gathered around “Ararat” magazine.

The pedagogical studies, essays and articles published in the magazine can be conditionally divided into three types: scientific-theoretical, translated and those dealing with the history of the Armenian pedagogy. All of these contributed greatly to the evolution of the Armenian pedagogical thought of the late 19<sup>th</sup> and early 20<sup>th</sup> centuries, and helped to enter a qualitatively new phase. They also created a base for the emergence and formation of the Soviet Armenian pedagogical school.

Truly, the contribution of “Ararat” magazine to the development of the Armenian pedagogical thought is indisputable.



ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու  
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

## ՎԻՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐԱՐԱՏ»-Ի ԷՋԵՐՈՒՄ

«Արարատ» ամսագրի հրատարակությունը  
«Հատ անհրաժեշտ բան էր ազգային կրօնական դաստիարակութեան և  
Ա. Էջմիածնի դիրքի և բոլոր վարչական գործերի համար»:  
ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆ

**Մ**ԱՅՐ Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական՝ «Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական ամսագրի նախորդ «Արարատ»-ը հրատարակության 52 տարիների՝ 1868–1919 թթ. ընթացքում լույս է ընծայել հայագիտության տարբեր բնագավառներին՝ մատենագրությանը, ձեռագրագիտությանը, աղբյուրագիտությանը, հնագիտությանը, կրոնագիտությանը, արվեստագիտությանը եւ այլ գիտաճյուղերին առնչվող նյութեր, բնագրեր, ուսումնասիրություններ: Մեր գիտական հետաքրքրությունների՝ ի մասնավորի վիճագրագիտական հետազոտությունների շրջանակում նպատակահարմար ենք նկատում ուշադրության արժանացնել 150-ամյա «Արարատ»-ի էջերում հրատարակված արձանագրագիտական հաղորդումները, հոդվածներն ու նրանց հեղինակների պրպտումները:

Նախքան մեր բուն նյութին անցնելը՝ նշենք, որ ԻԱ. դարասկզբից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինն սկսել է «Արարատ»-ի ժառանգությունը՝ շարքի տպագրությունը, որի հատորներում մեկտեղվում-ամբողջացվում են Մայր Աթոռի միաբանների, նաեւ տարբեր հետազոտողների հոդվածներն ու հոդվածաշարերը՝ լույս ընծայված «Արարատ» ամսագրում: Այսկերպ հայագետներին առավել հասանելի է դարձել «Արարատ»-ի հարուստ շտեմարանից օգտվելը, մանավանդ որ հրատարակության պատրաստող-կազմողները հոդվածները խմբավորել-տեսակավորել են ըստ բնագավառների: Այս շարքով հրատարակված ժողովածուներից իրենց պատմահնագիտական խորն ընդգրկմամբ հիշատակելի են Աբել արք. Մխիթարյանի, Խաչիկ ծ. վրդ. Դադյանի, Արշակ Տեր-Միքեյլանի, Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի (Մեսրոպ Մագիստրոս),

Հուսիկ արք. Տեր-Մովսիսյանի, Երվանդ Տեր-Մինասյանի եւ այլոց մեծարժեք հրապարակումները՝ նվիրված հայոց պատմությանն ու մշակույթի տարբեր բնագավառներին:

Ս. Էջմիածնի միաբան Աբել արք. Մխիթարյանը, Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցի (Քերեստեճյան՝ 1866–1882 թթ.) կաթողիկոսի հրամանով, 1868 թ. ստանձնել է «Արարատ» ամսագրի առաջին խմբագրի պաշտոնը: Իր բարենորոգչական եւ լուսավորչալ գործունեության ընթացքում Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցին նախաձեռնել է դեռեւս Սիմեոն Երեւանցի (1763–1780 թթ.) կաթողիկոսի հիմնած, բայց տեւական ժամանակ չգործող տպարանի աշխատանքների վերսկսումը, որը նպատակ ուներ ոչ միայն խթանելու կրոնագիտական, աստվածաբանական ու հայագիտական գրքերի հրատարակությունը, այլ նաեւ Մայր Աթոռի պաշտոնական պարբերականի լույս ընծայումը: Այսպես՝ 1868 թ. մայիսի 1-ից Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի տնօրինությամբ եւ Աբել արք. Մխիթարյանի խմբագրությամբ հրատարակվում է «Արարատ» ամսագիրը՝ «կրօնական, պատմական, բանասիրական եւ բարոյական գիտելեաց, ապագայում կիսամսեայ լրագիր դարձնելու նպատակով»<sup>1</sup>: Ծագումով Վաղարշապատից Աբել արք. Մխիթարյանը 1870–1874 թթ. եղել է Մուղնիի Ս. Գեւորգ վանքի վանահայրը, վախճանվել 1876 թ. դեկտեմբերի 12-ին ու թաղվել Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում<sup>2</sup>: Նրա ուղղանկյունաձեւ տապանաքարին հետեւյալ արձանագրությունն է. «Այս է տապան քաջ պատմաբանի եւ հնագիտի տեառն Աբէլի արքեպիսկոպոսի՝ միաբանի Ս. Էջմիածնի, որ հանգեաւ ի Տէր, յամի 1876»<sup>3</sup>:

Բոլորովին վերջերս ««Արարատ»-ի ժառանգությունը» շարքով լույս տեսավ նաեւ «Եկեղեցական մատենագրություն» խորագրով մեծագիր երկհատորյակը, որում ամփոփված են «Արարատ»-ում տպագրված բնագրերը: Ինչպես առաջաբանում նկատում է ժողովածուն կազմողներից պատմական գիտ. դոկտոր Գեւորգ Տեր-Վարդանյանը՝ «...ժամանակի հայկական եկեղեցական-գիտական գրեթէ բոլոր պարբերականները («Բազմավէպ», «Սիոն», «Հանդէս Ամսօրեայ» եւ այլն) բնականաբար եւ ըստ հարկի նաեւ բնագրեր

<sup>1</sup> Մ. ԱՐԵՎՅԱՆ, Գեւորգ Դ. Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց, աշխ. եւ ծանոթ.՝ Պ. Հովհաննիսյանի, Ս. Էջմիածին, 2014, էջ 81:

<sup>2</sup> Տէս ԱՐԵՒ ԱՐԲ. ՄԽԻԹԱՐԵԱՆՅ, Երկերի ժողովածու, «Արարատ»-ի ժառանգությունը», Ա., կազմ.՝ Եզնիկ արք. Պետրոսյան, Ս. Էջմիածին, 2009, էջ 14: Մահախոսականը տես «Արարատ», 1876, ժԲ., էջ 466:

<sup>3</sup> Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 228, արձ. 482:

են հրատարակել. նրանց այդտեսակ տպագրութիւնների պատկերը մեզ ընդհանուր գծերով յայտնի է նոյն հանդէսների տպագիր եւ անտիպ մատենագիտութիւններով: Եւ այս իմացութեան հենքի վրայ կարող ենք վստահօրէն ասել, որ քանակի, տեսակի, հետաքրքրութիւնների ընդարձակութեան եւ խորքի իմաստով առաջնութեան պատիւն ըստ ամենայնի Մայր Աթոռի «Արարատ» պաշտօնաթերթինն է»<sup>4</sup>: Զեռագրական հիմք ունեցող աղբյուրներից բացի, «Արարատ»-ի էջերում պահպանվել են նաեւ վիմագրական բազմաթիւ նյութեր՝ ինչպես սեպագրերի կամ բեւեռագրերի, այնպես եւ օտարալեզու ու հայերեն վիմագրերի վերաբերյալ: Այս իրողութիւնը նկատել է նաեւ Գեորգ Տեր-Վարդանյանը եւ երկհատորյակի առաջաբանում նշել է, որ իր կազմած «...ժողովածուի խնդիրը չհամարուեցին բնագրական ընդարձակ քաղուածքներ ունեցող ուսումնասիրութիւնները, բանահիւսական նիւթերը, վիմագրական եւ սեպագիր արձանագրութիւնները եւ, ընդհանրապէս, տեղագրական-նկարագրական նիւթերը»<sup>5</sup>:

Հայագետներին վաղուց հայտնի են ինչպես «Արարատ»-ի, այնպես եւ նրա լիիրավ ժառանգորդ «Էջմիածին» ամսագրի մատենագիտութիւնները (վերջինս կազմված է մինչեւ 2008 թ. ներառյալ)<sup>6</sup>: Նշենք, որ այդ ժողովածուները՝ իբրեւ յուրօրինակ տեղեկատուներ, համալրված են տարաբնույթ ցանկերով՝ նաեւ անվանական եւ առարկայական: Այս ցանկերի միջոցով ընդհանուր պատկերացում ենք կազմում «Արարատ»-ի էջերում տպագրված նյութերի բովանդակութեան, ոլորտների եւ առհասարակ

<sup>4</sup> Գեորգ Տեր-Վարդանյան, «Արարատ»ի բնագրական նկարագիրը, «Արարատ»ի ժառանգութիւնը», Թ., «Արարատ»ի բնագիրները, հտ. Ա., հրատ. պատր.՝ Սուսաննա Նահապետեան, դասակարգ., խմբ. եւ առաջ.՝ Գեորգ Տեր-Վարդանյանի, Ս. Էջմիածին, 2017, էջ 11:

<sup>5</sup> Անդ, էջ 13:

<sup>6</sup> Տէն «Մատենագիտութիւն «Արարատ» ամսագրի», կազմ.՝ Սեդա Կոծինյան, խմբ.՝ Սուրեն Քոլանջյան, Արթուր Հատիտյան, Ս. Էջմիածին, 1970 (7707 միավոր). «Մատենագիտութիւն «Էջմիածին» ամսագրի (1944-1973 թթ.)», կազմ.՝ Սեդա Կոծինյան, խմբ.՝ Արթուր Հատիտյան, Սուրեն Քոլանջյան, Ս. Էջմիածին, 1975 (5283 միավոր). «Մատենագիտութիւն «Էջմիածին» ամսագրի (1974-2008 թթ.)», կազմ.՝ Ս. Արարատ ք.ճ. Պողոսյան, խմբ.՝ Գեորգ Տեր-Վարդանյան, Ս. Էջմիածին, 2012 (8239 միավոր): «Էջմիածին» ամսագրի մատենագիտութեան կազմամամբ նաեւ ավարտաճառեր են գրվել (տէն «Մատենագիտութիւն «Էջմիածին» ամսագրի (1974-1983 թթ.)», ավարտաճառ, կազմ.՝ Նշան սրկ. Հովհաննիսյան, Ս. Էջմիածին, 1997. «Մատենագիտութիւն «Էջմիածին» ամսագրի (1984-1988 թթ.)», կազմ.՝ Արման սրկ. Պողոսյան, Ս. Էջմիածին, 2007), հրատարակութիւններ են եղել «Էջմիածին» ամսագրի համարներում, այսպէս՝ Նշան սրկ. (հետագայում՝ Տ. Խորեն արեղա) Հովհաննիսյանի կազմած մատենագիտութիւնը հրատարակվել է 1997-1998 թթ. համարներում, իսկ Անդրանիկ Զեյթունյանը հրատարակել է «Էջմիածին» ամսագրի 17 տարվա՝ 1984-2000 թթ. մատենագիտութիւնը (մանրամասն տէն Գեորգ Տեր-Վարդանյան, Մուտք, «Մատենագիտութիւն «Էջմիածին» ամսագրի (1974-2008 թթ.)», էջ 6, ծանոթ. 3, 5):

հոգվածագիրներին հետաքրքրությունների վերաբերյալ: «Արարատ»-ի մատենագիտության առարկայական ցանկում Սեդա Կոծինյանն առանձնացրել է արձանագրագիտական 52 միավոր նյութ (որոշ միավորներ այլ խորագրերի ներքո են՝ «Տապանագրեր», «Կոմիտաս կաթողիկոս» եւ այլն)<sup>7</sup>: Ուսումնասիրելով խնդրո առարկա միավորների բովանդակությունը՝ պետք է արձանագրել հետեւյալը.

ա. Սեպագրերը կամ բեւեռագրերը «Արարատ»-ի էջերում. «Արարատ»-ի էջերում հրատարակվել են երեք տասնյակից ավելի հաղորդումներ նորահայտ սեպագրերի կամ բեւեռագրերի վերաբերյալ: Դրանցից մեկ տասնյակից ավելին հայտնաբերել ու հայագետների դատին է հանձնել Ս. էջմիածնի միաբան Մեսրոպ արք. Սմբատյանցը, որի հետաքրքրությունների շրջանակն ընդարձակ էր՝ սեպագրերից մինչեւ հայերեն վիմագրեր, ձեռագրեր, ժողովրդական բանահյուսություն, հնագիտություն եւ այլն: Մեսրոպ Սմբատյանցի՝ «Արարատ»-ում տպագրած հաղորդումներն ու հոգվածները լավագույնս բնութագրում են հնասեր հոգեւորականի հետաքրքրությունները: Հայ իրականության մեջ դեռեւս նոր սկզբնավորվող սեպագրագիտության զարգացման գործում նրա դերն անուրանալի է: Արմավիրից<sup>8</sup>, Ցոլակերտից (Սուրմալուի գավառ)<sup>9</sup>, Երվանդակերտից<sup>10</sup>, Շահրիար<sup>11</sup>, ինչպես նաեւ Շիրակի Ղուլիջան (ներկայիս Սպանդարյան)<sup>12</sup>,

<sup>7</sup> Տե՛ս «Մատենագիտություն «Արարատ» ամսագրի», էջ 222:

<sup>8</sup> Տե՛ս ՄԵՍՐՈՎ ԳՐԳ. ՍՄԲԱՏԵԱՆՑ, *Խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ, «Արարատ», 1869, Ժ. (թիւ 6), էջ 135-138*: Հաղորդումը նվիրված է Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Արմավիրի բլրի գագաթից Մեսրոպ Սմբատյանցի հայտնաբերած սեպագրին բաղկացած 13 տողից: Նա նշում է, որ դեռեւս 1862-1863 թթ. Նոր Բայազետի Ադամխան, Ալիշալու, Կոտայքի էլար (ներկայիս Աբովյան) բնակավայրերից հաջողվել է վավերացնել մի քանի սեպագիր, ուստի հարկ է համարել հաղորդագրություն հղել «Արարատ» պատվական ամսագրի խմբագրությանը՝ ի լուր ուսումնասեր անձանց: «Արմավիրեան երկրորդ արձանագիր» (ստորագրված՝ Մ. Ե. Ս. [Մեսրոպ եպս. Սմբատեանց]), «Արարատ», 1880, Ա., էջ 27-28. «Արմավիր եւ նոր բեւեռագիրներ յԱրմավիր», «Արարատ», 1881, ԺԱ., էջ 602-603. «Խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ. [Արմավիրեան նոր բեւեռագրի մասին]», «Արարատ», 1886, Ա., էջ 25-27. «Արմավիրի ԺԱ. արձանագիրն աղիւսի վերայ. Բազմարդին խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ», «Արարատ», 1895, Թ., էջ 348:

<sup>9</sup> Տե՛ս ՄԵՍՐՈՎ ԳՐԳ. ՍՄԲԱՏԵԱՆՑ, *Ցոլակերտի արձանագիրը. Ստորագրութիւն Ցոլակերտ, Երուանդաշատ, Երուանդակերտ եւ Բագարան քաղաքացն Հայաստանի, «Արարատ», 1870, Բ. (թիւ 10), էջ 248-251, Գ. (թիւ 11), էջ 272-274*:

<sup>10</sup> Տե՛ս ՄԵՍՐՈՎ ԳՐԳ. ՍՄԲԱՏԵԱՆՑ, *Նորագիտ սեպածեւ արձանագրութիւն. Երուանդակերտի արձանագիրն գտնուած 1895 թուին, «Արարատ», 1895, Զ., էջ 204-206*:

<sup>11</sup> Տե՛ս ՄԵՍՐՈՎ ԳՐԳ. [ՍՄԲԱՏԵԱՆՑ], *Նամակ խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ. [Արձանագիր Շահրիար գիւղի], «Արարատ», 1896, ԺԱ., էջ 512-513*:

<sup>12</sup> Տե՛ս ՄԵՍՐՈՎ ԳՐԳ. ՍՄԲԱՏԵԱՆՑ, *Խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ. Արձանագիր Ղուլիջան գեղջ Շիրակայ, «Արարատ», 1884, Ա., էջ 18-22*:

Սուրմալուի Փանիկ<sup>13</sup> գյուղերից եւ այլ վայրերից հայտնաբերված սեպագրերը մշտապես զբաղեցրել են հոգեւորականի միտքը, եւ նա վերջիններս վերծանելու ուղիներ է որոնել: «Բազմավէպ»-ի հոգվածագիրներից Խ. Հովհաննիսյանը նշում է, որ 1862 թ. Վանի բեւեռածեւ արձանագրություններն առաջին անգամ Արմավիր մայրաքաղաքի տեղում գտավ այն ժամանակ դեռեւս վարդապետ Մեսրոպ արք. Սմբատյանցը, որը «...մինչեւ այժմ եւս շարունակում է որոնել եւ աշխարհ հանել այս նիւթերը՝ լոյս ընծայելով այդ ամենը Ս. Էջմիածնում հրատարակուող «Արարատ» ամսագրում: Արեւմտեան ուսումնականները երախտագիտութեամբ օգուտ էին քաղում նորա հրատարակած բնագիրներից, թէպէտ եւ շատ անբաւարար էին համարում»<sup>14</sup>: Հայաստանի բեւեռագիտության ձեւավորման գործում Մեսրոպ արք. Սմբատյանցի դերը կարեւորել է նաեւ Հր. Աճառյանը<sup>15</sup>, իսկ Արարատյան հայրապետական թեմի երկարամյա փոխանորդ Վահան վրդ. Գալամբարյանը (հետագայում՝ Տերյան) իրավացիորեն նշում է, որ «...հայ պատմաբանասիրական գրականության մեջ Սմբատյանի անունը անխզելիորեն կապված է Կովկասում բեւեռագիր արձանագրությունների հավաքման եւ հրատարակության շնորհակալ աշխատանքի հետ... [նա], այդ բոլորն ի մի բերելով, կազմել է «Բեւեռագրութիւն Արարատեան նահանգի» անունով արժեքավոր աշխատությունը, որի համառոտ ռուսերեն թարգմանությունը հրատարակել է Մոսկվայի Կայսերական հնագիտական ժողովը 1895 թվականին»<sup>16</sup>:

Մեսրոպ արք. Սմբատյանցի վիճազրագիտական գործունեությանն էր նվիրված վիճազրագետ Սուսաննա Ադամյանի՝ վերջերս պաշտպանած ատենախոսությունը<sup>17</sup>, որի շրջանակում նա հատուկ անդրադարձել է նաեւ սեպագրերի հավաքչական աշխատանքներին: Իր հոգվածներից մեկում Ս. Ադամյանը նշում է, որ Մեսրոպ արք. Սմբատյանցի տպագիր եւ անտիպ աշխատություններում, բացի հայերեն վիճագրերից, պահպանվել են հայագիտության համար աղբյուրագիտական մեծ

<sup>13</sup> Տէս ՄԵՍՐՈՎԲ ԵՊՍ. ՍՄԲԱՏԵԱՆՑ, Խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ, «Արարատ», 1885, Թ., էջ 416:

<sup>14</sup> Խ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Բեւեռագիր արձանագրութիւններ Ռուսաց Հայաստանում, «Բազմավէպ», 1897, ապրիլ, էջ 162:

<sup>15</sup> Տէս Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց գրերը, Երեւան, 1984, էջ 398:

<sup>16</sup> ՎԱՀԱՆ ՎՐԴ. ԳԱԼԱՄԲԱՐՅԱՆ, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյան, «Էջմիածին», 1958, Բ.-Գ., էջ 37-38:

<sup>17</sup> Տէս Ս. ԱԳԱՄՅԱՆ, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի վիճագրագիտական գործունեությունը, պատմական գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, գիտ. ղեկավար՝ Գր. Գրիգորյան, Երեւան, 2017:

արժեք ներկայացնող ավելի քան երեք տասնյակ սեպագիր եւ այլալեզու արձանագրություններ<sup>18</sup>:

Նշենք, որ բացի Մեսրոպ արք. Սմբատյանցից, «Արարատ»-ի էջերում սեպագրերի վերաբերյալ հրապարակումներ ու գրախոսություններ ունեն Ս. Էջմիածնի միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանը («Միաբան» մականվամբ)<sup>19</sup>, Եղիշե վրդ. Մուրադյանը (ռուսերենից թարգմանել է Մ. Վ. Նիկոլսկու աշխատությունը)<sup>20</sup>, դոկտոր Ա. Մորդմանը<sup>21</sup>, գերմանացի Բելքը<sup>22</sup>, Խաչիկ վրդ. Դադյանը<sup>23</sup>, Կարապետ Բասմաջյանը<sup>24</sup>, Հրաչյա Աճառյանը<sup>25</sup>, Հուսիկ արք. Տեր-Մովսիսյանը<sup>26</sup> եւ այլք:

<sup>18</sup> Տե՛ս Ս. ԱՂԱՄՅԱՆ, *Սեպագիր եւ այլալեզու աղբյուրները Մեսրոպ արք. Սմբատյանցի աշխատություններում, «Մերձավոր Արեւելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» հոգվածների ժողովածու*, V, Երեւան, 2008, էջ 169–170:

<sup>19</sup> Տե՛ս ՄԻԱԲԱՆ [Գալուստ Տեր-Մկրտչյան], Արմավիրեան նոր բեւեռագիր, «Արարատ», 1892, Ե., էջ 423–427. նույն հեղինակի՝ «Սարգարապատի բեւեռագրի վերծանութիւնը», «Արարատ», Ե., էջ 663–665. «Ուրարտեան բեւեռագրերի լեզուն», «Արարատ», 1893, ԺԱ., էջ 923–934:

<sup>20</sup> «Վանի թագաւորների՝ Ռուսաստանի սահմաններում գտնուած սեպածեւ արձանագրութիւնները» (իսկական անդամ Մ. Վ. Նիկոլսկու), թարգմ.՝ Եղիշե վրդ. Մուրադեան, 1893, «Արարատ», Ը., էջ 745–764. «Տեսութիւն Ուրարտուի (Արարատեան աշխարհի) պատմութեան ըստ Ասորեստանի եւ Վանի աղբիւրների», Թ.-Ժ., էջ 852–865, ԺԱ., էջ 935–949, ԺԲ., էջ 987–996:

<sup>21</sup> Տե՛ս ՏԷՐԹԵՐ ՄՕՐԹՄԱՆ, Վանայ սեպածեւ արձանագրութիւնները, «Արարատ», 1872, Ա., էջ 43–44, Բ., էջ 81–85: Այնուհետեւ շարունակվում է «Հայաստանի նախկին յիշատակարանը» շարքով՝ ըստ ծանոթագրութեան. տե՛ս «Արարատ», 1872, Դ., էջ 152–159, Ե., էջ 192–197, Զ., էջ 245–248:

<sup>22</sup> Գերմանացի Բելքի՝ իր ուսուցչապետ Ռուդոլֆ Վիրխովի հանձնարարականով այցելությունները Հայաստան բավական ուշագրավ մանրամասներ են պարզում: Ըստ դրանց՝ նա եղել է հիմնականում Արեւմտյան Հայաստանում, հայտնաբերել 20 նոր սեպագիր, լուսանկարել հայերեն ու ասորերեն վիմագրեր, տեսել հայերեն բազմաթիվ ձեռագրեր Աղթամարում, իմ անապատում, Վարազավանքում: Ձեռագրերի կազմում հիշատակում է 3-ը, որոնք բովանդակում են Մովսես Խորենացու Պատմագիրքը. [Խմբագրական], «Արարատ», 1891, ԺԲ., էջ 678–679:

<sup>23</sup> Տե՛ս «Զուարթնոց եկեղեցու պեղումները», [Հաղորդագրութիւն], «Արարատ», 1900, Ը.-Թ., էջ 380–381:

<sup>24</sup> Տե՛ս Կ. ԲԱՍՄԱՋՅԱՆ, Զուարթնոց եկեղեցու բեւեռածեւ արձանագրութիւնը, «Արարատ», 1901, Դ., էջ 225–226: Ծանոթագրված է, որ բնագիրը հրատարակվել է «Արարատ»-ի 1900 թ. Ը.-Թ. միացյալ համարում [էջ 380]:

<sup>25</sup> Տե՛ս ՀՐ. ԱՃ[ԱՌԵԱՆ], Ասորեստանեայ եւ պարսիկ սեպագիր արձանագրութիւնք կամ նոցին քաղուածք, որոնք նաիրի-Ուրարտու աշխարհին պատմութեան կը վերաբերին (թարգմ.՝ Յովսէփ վրդ. Սանտալճեան, Վիեննա, 1901), «Արարատ», 1902, Գ.-Դ., էջ 343–345:

<sup>26</sup> Տե՛ս ՅՈՒՍԻԿ ԱՐՔ. [ՏԷՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ], Դալի-Բաբայի սեպագիր արձանագրութիւնը, «Արարատ», 1910, Բ., էջ 189–192. նույն հեղինակի՝ «Աղլի դաշտի սեպածեւ արձանագրութիւն», «Արարատ», 1910, Զ., էջ 576–577: Վերահրատարակվել է հեղինակի հոգվածների ընդհանուր ժողովածուում՝ «Արարատ»-ի ժառանգությունը» շարքով. տե՛ս ՀՈՒՍԻԿ ԱՐՔ. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ, Երկերի ժողովածու, «Արարատ»-ի ժառանգությունը», Բ., հրատ. պատր.՝ Եզնիկ արք. Պետրոսյանը, ներած. եւ ծանոթ.՝ Ավագ Հարությունյանի, Ս. Էջմիածին, 2009, էջ 539–543:

բ. Օտարալեզու վիմագրերը «Արարատ»-ի էջերում. «Արարատ»-ի վիմագրագիտական նյութերի կազմում հիշատակելի են նաեւ Կեսարիայից հայտնի Հաթյան կամ հեթիթական, այսինքն՝ հնագույն նշանագրերով արձանագրությունը (Ք. ա. Ձ. դար)<sup>27</sup>, Տրդատ Գ. արքայի (287-330 թթ.) հունարեն վիմագիրը<sup>28</sup>, ինչպես նաեւ երկլեզվյան՝ Սեմիրեշիայում գտնված 1323 թ. հայ-ասորերեն արձանագրությունը<sup>29</sup>։ Հունարեն արձանագրությունը 1908 թ. առաջին անգամ Ապարանում՝ «մի գիւղացու դրան առաջ», տեսել է Գարեգին Հովսեփյանը, այնուհետեւ Տիխոնովի հետ գնացել, լուսանկարել, չափագրել է այն ու փոխագրել Մայր Աթոռի թանգարան։ Ն. Մառի եւ Յ. Սմիռնովի հանձնարարությամբ 1911 թ. վիմագիրն ուսումնասիրել է Մ. Ռոստովցեւը՝ վերագրելով Տրդատ Գ.-ին՝ ըստ այդմ թվագրելով Գ.-Դ. դդ.։

Ինչ վերաբերում է երկլեզվյան հայերեն եւ ասորերեն վիմագրին, ապա, ինչպես հոգվածագիրն է նշում, այն հայագիտությունը հայտնի է դեռեւս Ն. Մառի ընթերցմամբ, ըստ որի՝ ներկայիս Ղազախստանի Հանրապետության Սեմիրեշիայի շրջանից հայտնի այս երկլեզվյան գրի ասորերեն մասը հետեւյալն է. «Սա Յովհան Հայոց եպիսկոպոսի գերեզմանն է», կենտրոնում խաչ է քանդակված, թեւերի անկյուններում Տ(Է)Ր, Ա(ՍՏՈՒԱ)Ծ, Յ(ԻՍՈՒ)Ս, Ք(ՐԻՍՏՈ)Ս, ապա նույնաբովանդակ հայերեն վիմագիրը՝ «Տէր Յովհան Հայոց եպիսկոպոս, ի թվին Հայոց էՃՀԲ. (1323) գրեցաւ յիշատակարան»։

գ. Հայերեն վիմագրերը «Արարատ»-ի էջերում. Մեծ արժեք ունեն նաեւ «Արարատ»-ի հայերեն վիմագրերը։ Հայ վիմագրությամբ հետաքրքրված հեղինակները հիմնականում Մայր Աթոռի միաբաններն էին, որոնք իրենց ճանապարհորդությունների եւ տարբեր վանքերում առաջնորդության ընթացքում ընդօրինակել ու վերծանել են մեր միջնադարյան պատմության համար հավաստի սկզբնաղբյուրներ համարվող մեսրոպատառ քարեղեն վավերագրերը։ Այս շարքում նշելի են

<sup>27</sup> Տե՛ս ՏՐԴԱՏ եղ. ՊԱՆԵԱՆ, Նախակիրիկեան-Հաթեան նոր արձանագրութիւն մը ի Կեսարիա, «Արարատ», 1900, Ձ., էջ 298-300։ Հաթյան նշանագրերի ուսումնասիրման ամենից հաջող փորձերը գերմանացի գիտնական Ենսենինն են. այդ մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Հրաչյա Աճառյանը (տե՛ս Հ.Ր. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց գրերը, Երեւան, 1984, էջ 393-397)։

<sup>28</sup> Տե՛ս ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. [ՅՈՎՍԷՓԵԱՆ], Հայագիտական այլ եւ այլք. Տրդատի յունարէն արձանագրութիւնը, «Արարատ», 1915, Բ.-Գ., էջ 211-219։

<sup>29</sup> Տե՛ս ՖԻՄԻ, Սեմիրեշիայում գտնուած գերեզմանաքարը 1323 թուականի հայերէն եւ ասորերէն արձանագրութիւնով, «Արարատ», 1895, Ա., էջ 22։

Աբել արք. Մխիթարյանցի<sup>30</sup>, Ստեփանոս վրդ. Մխիթարյանցի<sup>31</sup>, Ռոստոմ բեգ Երզնկյանցի<sup>32</sup>, Խաչիկ վրդ. Դադյանի<sup>33</sup>, Գարեգին վրդ. Հովսեփյանի<sup>34</sup>, Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի<sup>35</sup> եւ ուրիշների վիճադրագիտական ուշագրավ ուսումնասիրությունները՝ նվիրված Հոռոմոսի, Մարմաշենի, Գեղարդի, Հաղբատի, Արտազի Ս. Թադեոս առաքյալի, Ս. Հռիփսիմեի, Տաթևի եւ մի շարք այլ վանքերի ու եկեղեցիների տեղագրությանը եւ վիճական արձանագրություններին: Հատկանշելի է նաեւ Ուկրաինայի Սիմֆերոպոլ քաղաքի մոտակա Զուրգուն գյուղից՝ շինարարական աշխատանքների ընթացքում գտնված արձանագիր տապանաքարի մասին Վարդան Բաբիյանի հրապարակումը, որը գրախոսություն է այդ նույն արձանագրության նախորդ վերծանության վերաբերյալ<sup>36</sup>: Առաջին հրատարակիչը Խ. Քուլուկ-Հովհաննիսյանն է, որը 1909 թ. եղել է Թեոդոսիայում, ընդօրինակել եւ վերծանել 1588 թ.

<sup>30</sup> ԱԲԷԼ ԱՐՔ. [ՄԽԻԹԱՐԵԱՆՅԱՆ], Պատմական տեղեկությունք զհաստատությունէ Հոռոմոսին վանաց ի Շիրակ, «Արարատ», 1870, Ա. (թիւ 9), էջ 220-222, Բ. (թիւ 10), էջ 244-248, Գ. (թիւ 11), էջ 269-272, Դ. (թիւ 12), էջ 297-302. «Տեղագրութիւն Մարմաշինոյ վանացն ի Շիրակ», «Արարատ», 1870, Ե. (թիւ 1), էջ 9-13. «Տեղագրութիւն Հոգեվանք կոչեցեալ [Եւ այլ] վանաց, որ ի հարաւային եզր գաւառին Շիրակայ», «Արարատ», 1870, Զ. (թիւ 2), էջ 45-47. «Ստորագրութիւն եկեղեցեաց ինչ յոտն Արագածու [Կաթողիկէ Թալնայ, Մաստարայ, Զարննի գիւղ եւ այլք]», «Արարատ», 1870, Ը. (թիւ 4), էջ 121-124. «Եկեղեցիք Վաղարշապատ քաղաքի [ա. Կաթողիկէ եկեղեցի Սուրբ Էջմիածին, բ. Եկեղեցի Սրբոյն Հռիփսիմեայ, գ. Եկեղեցի Սրբոյն Գայիանեայ, դ. Շողակաթ անուանեալ եկեղեցի տկար կուսին, ե. Եկեղեցի Սուրբ Գրիգորի ասացեալ յԱռապարին]», «Արարատ», 1874, Ժ., էջ 361-365, ԺԱ., էջ 410-419, ԺԲ., էջ 441-445, 1875, Ա., էջ 15-19, Բ., էջ 54-60, Գ., էջ 91-93:

<sup>31</sup> ՏԷՄ [ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ՄԽԻԹԱՐԵԱՆՅԱՆ], Տեղագրութիւն Այրիվանոց եւ արձանագրութիւնքն, «Արարատ», 1871, Ե. (թիւ 1), էջ 17-22, Զ. (թիւ 2), էջ 90-94:

<sup>32</sup> ՏԷՄ ՌՈՍՏՈՄ (ՌՈՍՏԱՄ) ԲԷԿ ԵՐԶՆԿԵԱՆՅԱՆ, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից Սրբոյ Նշանի, «Արարատ», 1886, Ժ., էջ 444-455, ԺԱ., էջ 493-499, ԺԲ., էջ 518-532, 1887, Ա., էջ 27-37, Բ., էջ 68-76, Դ., էջ 168-174, Ե., էջ 213-226, Զ., էջ 256-273, Է., էջ 300-315, Ը., էջ 349-364:

<sup>33</sup> ՏԷՄ Խ. Վ. (ԽԱԶԻԿ ՎՐԴ. ԴԱԴԵԱՆ), Համառօտ նկարագիր Շաւարշան-Արտազ գաւառի Ս. Թադեոս առաքելոյ վանքի, «Արարատ», 1898, Ա., էջ 38-40, Բ., էջ 89-91:

<sup>34</sup> ՏԷՄ ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՅՈՎՍԵՓԵԱՆ, Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրութիւն, «Արարատ», 1898, Ժ., էջ 441-442: Ս. Հռիփսիմե վանքի նորահայտ արձանագրությունները (մեկը՝ է. դար, մյուսը՝ 1296 թ.), որոնք ի հայտ են եկել Մկրտիչ Ա. Խրիմյան հայրապետի օրոք (1892-1907 թթ.) իրականացված նորոգչական աշխատանքների ընթացքում, առաջին անգամ հրատարակվել են «Արարատ»-ում (նկ. 1, 2). վիճադրերի վերծանության վերջին հրատարակությունը տես Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ. վանքերը եւ վիճական արձանագրությունները, էջ 249, արձ. 502, էջ 251, արձ. 503, էջ 267, արձ. 528:

<sup>35</sup> ՏԷՄ ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. [ՏԵՐ-ՄՈՎՍԵՅԱՆ], Արձանագրութիւններ Տաթևի վանքի եւ շրջակայքի, «Արարատ», 1918, Դ.-ԺԲ., էջ 204-225:

<sup>36</sup> ՏԷՄ Ա. ԲԱԲԻԵԱՆ, Հայերէն հին արձանագրութիւնը Սիմֆերոպոլում, «Արարատ», 1910, ԺԲ., էջ 1194-1195: Տապանագիրը մանկահասակ տղայի մահվան մասին է գուժում, որը «... յետ ծննդեան աւուրց Ի. (20)-ի, գնա մտնէ հող տապանի»:

վիմագիր, 1512 թվակիր դռան արձանագրություն, նաեւ՝ իր ժամանակ արդեն Տավրիկյան դիվանական հանձնաժողովի Հնադարանում գտնվող տապանագիր<sup>37</sup>:

Նկատենք, որ վկայակոչված հրապարակումներից շատերը «Արարատ»-ի ժառանգությունը» շարքով վերահրատարակվել են իրենց հեղինակների աշխատություններն ամբողջացնող ժողովածուներում<sup>38</sup>, իսկ մի քանիսն առավել վաղ՝ առանձին գրքերով<sup>39</sup>:

դ. Վիմագրերի վերծանության սկզբունքը «Արարատ»-ում. «Արարատ»-ում տպագրված վիմագրագիտական ուսումնասիրություններն առանձնացնելիս եւ նրանց հեղինակների մասին խոսելիս կարելու է նաեւ համեմատական վերլուծության միջոցով ցույց տալ վիմագրերի «արարատյան» եւ հետագա՝ ասենք «դիվանական» վերծանությունների տարբերությունները:

<sup>37</sup> Տե՛ս «Մատենախօսություն» (ստորագրված՝ Յ. Ա. Ե.), «Արարատ», 1910, Ա., էջ 93-95: Ինչպես 1588 թվակիր վիմագիրը, այնպես եւ Չուրգունի տապանագիրը ԴՀՎ մատենաշարում հետագայում վերահրատարակել է վիմագրագետ Գր. Գրիգորյանը, սակայն, անձանոթ լինելով Բեդիյանի գրախոսականին՝ տապանագիրը վերահրատարակել է՝ հետեւելով Քուչուկ-Հովհաննիսյանի սխալաշատ վերծանությանը (ԴՀՎ, պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմ.՝ Գր. Գրիգորյան, Երեւան, 1996, էջ 83, արձ. 150, էջ 149, արձ. 395):

<sup>38</sup> Տե՛ս Աբել ԱՐԲ. ՄԵԻԹԱՐԵԱՆՑ, Երկերի ժողովածու, «Արարատ»-ի ժառանգությունը», Ա., կազմ.՝ Եղնիկ արք. Պետրոսյանը, էջ 63-142: Աբել արք. Մխիթարյանցի տեղագրական աշխատությունները վկայված են նաեւ ԴՀՎ մատենաշարի համապատասխան հատորում (ԴՀՎ, պրակ X, Շիրակի մարզ, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երեւան, 2017). ԽԱԶԻԿ Ս. ՎՐԳ. ԴԱՏԵԱՆ, Երկերի ժողովածու, «Արարատ»-ի ժառանգությունը՝ Գ., կազմ.՝ Ն. Պետրոսյանը, առաջ.՝ Ա. Ղազիյանի, Ս. էջմիածին, 2007, էջ 40-53: Խաչիկ վարդապետի վիմագրական ընդօրինակություններից հետագայում՝ Արտազի Ս. Թադեոս վանքի վիմագրերը հրատարակելիս, օգտվել է նաեւ ճարտ. դոկտոր Արմեն Հախնազարյանը (տե՛ս Ա. ՀԱՆԱԶԱՐՅԱՆ, Արտազի երեք վանքերը, ՀՀՈՒ հիմնադրամի ուսումնասիրություններ, գ. ԺԵ., Երեւան, 2012, էջ 157-174). ՄԵՍՐՈՊ ԱՐԲ. ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ (ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ), Յօդուածների ժողովածու, «Արարատ»-ի ժառանգությունը», է., հրատ. պատր.՝ Գէորգ Տէր-Վարդանեանը եւ Սուսաննա Նահապետեանը, Ս. էջմիածին, 2009, էջ 279-297: Գ. Տէր-Վարդանյանը ծանոթագրում է, որ այստեղ ներկայացված 45 վիմագրերից շատերը հետագայում հրատարակվել են նաեւ ԴՀՎ համապատասխան պրակում, սակայն ինչպես այս հոդվածը, այնպես եւ Մեսրոպ Տէր-Մովսիսյանի գիրքը (Երուսաղեմ, 1938) օգտագործված չեն (ԴՀՎ, պրակ II, Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երեւան, 1960):

<sup>39</sup> Տե՛ս «Ստորագրություն հուշակալու մեծի ուխտին Այրիվանաց Սրբոյ Գեղարդայ՝ հանդերձ պատմական ծանօթութեամբ», աշխատ.՝ Ստեփաննոս վրդ. Մխիթարեանց, Վաղարշապատ, 1873. «Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից Սրբոյ Նշանի», գործ՝ Ռոստոմ բեգ Երզնկեանց Հաղբատեցւոյ, Վաղարշապատ, 1886: Հետագայում Հաղբատավանքի վիմագրերը, գիտական ու ամփոփ աշխատություններ, հրատարակել է հնագետ-վիմագրագետ Կարո Ղաֆադարյանը՝ վկայակոչելով նաեւ Ռոստոմ Երզնկյանցի հիշյալ աշխատությունը (Վ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները եւ վիմական արձանագրությունները, Երեւան, 1963): Ավելի ուշ այն հիշատակված է նաեւ ԴՀՎ մատենաշարի համապատասխան պրակում (ԴՀՎ, պրակ IX, Լոռու մարզ, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երեւան, 2012):

Զմոռանանք, որ «Արարատ»-ի տպագրության տարիներին եւ առավել վաղ հրատարակվել են տեղագրական-նկարագրական բնույթի բազմաթիվ աշխատություններ, ավելին՝ «Արարատ»-ի հոգվածագիրներից շատերը տեղագիրներ էին, որոնք իրենց տարաբնույթ հրապարակումներով հանդես էին գալիս նաեւ Մայր Աթոռի պարբերականում: Այստեղից հետեւություն, որ «Արարատ»-ում տպագրված վիմագրերը տրամաբանորեն պետք է հեռու լինեն արձանագրությունների գիտական հրատարակության այն չափանիշներից, որոնք նախորդ դարասկզբին սահմանեցին ականավոր հայագետներ Նիկողայոս Մառն ու նրա աշակերտ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին<sup>40</sup>: Նրանց մշակած սկզբունքներով հետագայում վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանն սկսեց «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի հրատարակությունը: Ասվածն առավել պատկերավոր ընկալելու համար բերենք մի քանի օրինակ. Հաղբատավանքի վիմագրերի նախընթաց հրատարակություններին անդրադառնալով Կ. Ղաֆազարյանը՝ իբրեւ Հաղբատի վիմագրերի վեցերորդ հրատարակիչ, հիշատակում է պաշտոնաթող զինվորական, ծագումով հաղբատեցի Ռոստոմ բեկ Երզնկյանցի անունը, որի՝ գրաբարով գրված աշխատությունը նախապես լույս է տեսել «Արարատ»-ի էջերում, ապա՝ առանձին գրքով: Հաղբատից 162 արձանագրություն բովանդակող աշխատությունը, որը վիմագրերի քանակով գերազանցում էր իր նախորդներին՝ Սարգիս Զալալյանցի եւ Հովհաննես Ղրիմեցու հրատարակած վիմագրերին, այդուհանդերձ, զերծ չէր թերություններից, մասնավորապես՝ «Ռոստոմ բեկ Երզնկյանցը եւս իր առաջադրած խնդիրները հետեւողականորեն չի կատարել: Բոլոր արձանագրությունները չեն, որ նա ընդօրինակել է, թեեւ այդ նպատակն է հետապնդել: Նա եւս ընտրություն է կատարել, եղծվածները եւ դժվարիմացները չի արտագրել, եւ բացի այդ, ուղղագրությունը փոխելով՝ հեռացել է բնագրից, հետեւապես՝ Երզնկյանցի ժողովածուն եւս ստույգ չենք կարող համարել»<sup>41</sup>:

Վկայակոչենք Հաղբատավանքի փոքր գավթի արեւմտյան պատի վիմագրերից մեկը.

«Կաման Աստուծոյ ես Իվանէ քաղաքացի մեծ յուսով միաբանեցայ տանս Հաղբատայ եւ ընծայեցի ըստ իմ կարի արդիւնս. Տէր Համագասպ

<sup>40</sup> Վիմագրերի վերծանության գիտական նոր սկզբունքների մասին մանրամասն տե՛ս Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Հայկական վիմագրություն, ԴՉՎ, պրակ 1, կազմ.՝ Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ XV-XXIX:

<sup>41</sup> Կ. ՂԱՖԱԳԱՐՅԱՆ, Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները եւ վիմական արձանագրությունները, էջ 103:

եւ միաբանքս ետուն ինձ պատարագ ի տաւնի Պետրոսի, որք կատարեն աւրհնին յԱստուծոյ»<sup>42</sup>:

Արձանագրութեան վիճազրագիտական արդի պահանջներին հարիր վերծանութիւնը Կարո Ղաֆադարյանինն է, որը հետագայում վերահրատարակվել է ԴՀՎ-ում:

ՄԱՍՄԱՆՆԻ՝ ԱՅԵՄ ԻԻԱՆԷ ԱՒԻԱԳ՝ ՔԱՂԱՔԱՅԻ, ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ԵԿՑԻ՝

Ի ՍԲ ՎՂԱՆՍ ՀԱՂԲԱՏԱ ԵՒ ԸՆԾԱՆՅԵՑԻ ԸՍՏ ԻՄ ԿԱՐԻ ԵՒ ՏՐ՝ ՀԱՄ-

ԱԶՂԱՍՊ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԷՏՈՒՆ ԻՆՁ :Գ: (Յ) ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱԽՆԻՒ-

Ն՝ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ԱԲԻՍՈՂՈՄԱ: ՈՐՔ ԿԱՏԱՐԵՆ՝ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅՑ՝:

Միեւնույն արձանագրութեան երկու տարբեր ընդօրինակութիւնների համեմատութիւնը լավագոյնս պարզում է վերծանութեան տարբերութիւնը: Եթե առաջինը վերծանված է առանց հատուկ նշելու տառերի սղումների, տողերի սահմանները, կետադրական նշանները եւ որոշակիորեն խմբագրված է ընդօրինակողի կողմից, ապա երկրորդ տարբերակում Կ. Ղաֆադարյանը հարազատ է մնացել բնագրին՝ վերծանութիւնը նույն բնագրի նմանութեամբ տրված է գլխատառերով, կետադրված է, հատուկ պայմանական նշաններով վերականգնված են բոլոր սղումներն ու վնասված տառերը, պահպանված են նաեւ տողերի սահմանները եւ, որ ամենակարեւորն է, նրա գրքում վերծանութեանը կից են վիճազրի գրչանկարն ու լուսանկարը:

Նույնն է Աբել արք. Մխիթարյանցի՝ Շիրակի վանքերին նվիրված հոդվածաշարում, երբ վիճազրերը դարձյալ հրատարակված են որոշ տարբերութեամբներով ու խմբագրված: Մարմաշենի վանքի գլխավոր տաճարի հյուսիսային ավանդատան մուտքի վերնամասի արձանագրութիւնն այսպէս է սկսվում՝

ԵՄ՝ ՏՐ ԳՐԻԳՈՐ, ԵՂԲԱԻՐՈՐԴԻ ՏՆ ՍԱՐԳՍԻ ԵՏՈՒ ԶԻՄ ՍԲ ՆՇԱՆՍ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ՄԱՐՄԱՇԻՆԻ<sup>44</sup>...

Աբել արք. Մխիթարյանցի վերծանութիւնը հետեւյալն է՝ «Ես՝ տէր Գրիգորս, տեառն Սարգսի ետու զիմ սուրբ նշանս ի սուրբ ուխտս Մարմաշինի...»<sup>45</sup>:

Չնայած վերծանութիւններում առկա նմանօրինակ տարբերութիւններին՝ «Արարատ»-ի եւ, ընդհանրապէս, ԺԹ. դարի տեղագրական գրականութեան շնորհիվ բազմաթիվ վիճազրեր կորստից փրկվել եւ մեզ են

<sup>42</sup> «Արարատ», 1887, Ա., էջ 37:

<sup>43</sup> Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, Հաղբատ, էջ 200, արձ. 67, ԴՀՎ, IX, էջ 186, արձ. 349:

<sup>44</sup> ԴՀՎ, X, էջ 97, արձ. 139:

<sup>45</sup> «Արարատ», 1870, Ե. (թիւ 1), էջ 13:

հասել միայն այդ հրատարակություններով: Օրինակ՝ ԴՉՎ երկրորդ պրակում, որն ընդգրկում է ներկայիս ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի, Գորիսի եւ Կապանի շրջանները, Տաթևի վանքի մի շարք վիմագրեր չեն ընդգրկվել, մինչդեռ նախորդ դարասկզբին Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանը Տաթևի վիմագրերին նվիրված մի հոդված է հրատարակել «Արարատ»-ում, որտեղ առկա են ԴՉՎ-ից դուրս մնացած վիմագրեր: Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի աշխատությունների՝ «Արարատ»-ի ժառանգությունը կազմելիս այս հանգամանքը նկատել է Գեորգ Տեր-Վարդանյանը եւ նշել ԴՉՎ-ից դուրս մնացած, բայց Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի հրատարակած 13 վիմագրերի կարգային համարները<sup>46</sup>:

Ամփոփելով Մայր Աթոռի պաշտոնական ամսագրի վիմագրագիտական հաղորդումներին ու հոդվածներին նվիրված մեր համառոտ ուսումնասիրությունը՝ պետք է արձանագրել, որ իր 52-ամյա գոյության ընթացքում «Արարատ»-ը մշտապես կարեւոր տեղ է հատկացրել Հայոց պատմության եւ մեր մշակութային ժառանգության ուսումնասիրման համար հավաստի սկզբնաղբյուրներ համարվող վիմագրերին՝ ինչպես սեպագրերին, այնպես էլ օտարալեզու եւ մեսրոպատառ արձանագրություններին: Անկասկած, այդ գործում մեծ է հանդեսի առաջին խմբագիր Աբել արք. Մխիթարյանցի դերը, որը եւս անտարբեր չլինելով քարեղեն գրավոր հուշարձանների նկատմամբ՝ մեծապես խթանել է «Արարատ»-ի էջերում նմանօրինակ բովանդակությամբ նյութերի հրապարակումն ու հանրայնացումը: Ուրախալի է, որ այսօր եւս «Արարատ»-ի լրիրավ ժառանգորդ «Էջմիածին» հանդեսը շարունակում է բարի ավանդույթը, հրատարակում հայագիտության տարբեր բնագավառներին առնչվող հոդվածներ, հաղորդումներ, գրախոսություններ՝ չանտեսելով նաեւ վիմագրությանը նվիրված հոդվածների շարքը:

## РЕЗЮМЕ

На протяжении 52 лет издания научного журнала «Арапат» (1868–1919 гг.) были опубликованы материалы, относящиеся к различным областям арменистики, оригинальные тексты, исследования. На страницах «Арапата» сохранились также ценные материалы по эпиграфике – как относительно клинописей,

<sup>46</sup> Տէս ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ (ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ), *Յօդուածների ժողովածու*, էջ 279, ծանոթ. \*:

так и иноязычных и армянских надписей. Сообщений о клинописях более тридцати, большая их часть обнаружена и представлена на суд арменоведов конгрессом Святого Эчмиадзина архиепископом Месропом Смбастьянцем. Значительную ценность представляют также эпиграфические надписи на иностранных и армянском языках. Авторами, обращавшимися к эпиграфике, большей частью были служители Первопрестольного Святого Эчмиадзина, которые в годы служения в различных монастырях и в ходе странствий занимались копированием и расшифровкой эпиграфических надписей, являющихся достоверными первоисточниками по истории средневековья. В этом ряду стоит отметить сообщения о памятных надписях архиепископа Абела Мхитарянца, архимандрита Степаноса Мхитарянца, Ростом бек Ерзнкяца, архимандрита Хачика Дадьяна, архимандрита Гарегина Овсепяна, архиепископа Месропа Тер-Мовсисяна и других священнослужителей, посвященных топографии и эпиграфическим памятникам Оромоса, Мармашена, Гегарда, Ахпата, церкви Св. Апостола Фаддея в Артазе, Татевского монастыря и ряда других монастырей и церквей.

#### SUMMARY

During 52 years of its publication (1868–1919), “Ararat” scientific magazine published materials related to different spheres of Armenology, original texts, studies. On the pages of “Ararat” we can find worthwhile materials about epigraphy—both cuneiform and Armenian epigraphic inscriptions. There are more than 3 dozens of evidences about cuneiform inscriptions. Most of them were discovered by Archbishop Mesrop Smbatyants, member of the Brotherhood of the Mother See of Holy Etchmiadzin. There are epigraphs in Armenian and foreign languages, which are also important for Armenology. The authors, who have been involved in the study of the Armenian epigraphy, basically are the members of the Brotherhood of the Mother See of Holy Etchmiadzin. They have copied and deciphered many epigraphs during their travels and monastic service, which are reliable sources about our medieval history. We can emphasize especially epigraphic studies of Archbishop Abel Mkhitaryants, Archimandrite Stepanos Mkhitaryants, Rostom bek Yertzinkyants, Archimandrite Khachik Dadyan, Archimandrite Karekin Hovsepyan, Archbishop Mesrop Ter-Movsisyan and others, whose works and descriptions are dedicated to the topography and epigraphy of monasteries and churches of Horomos, Marmashen, Geghard, Haghpata, Tatev, Monastery of Apostle St. Thaddeus of Artaz, St. Hripsime Monastery and so on.

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան»

մատենադարանի եւ Հրատարակչական բաժնի տնօրեն

ՊԱՊԻՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան»

մատենադարանի փոխտնօրեն

**«ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՍԿԱՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎ  
«ՎԱՉԵ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ  
ՆԿԻՐՎԱԾ «ԱՐԱՐԱՏ» ԱՍՍԱԳՐԻ 150-ԱՄՅԱԿԻՆ**

(19 դեկտեմբերի 2018 թ.)

**Ա**ՅՍ տարի լրացավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական առաջին ամսագրի՝ «Արարատ»-ի հրատարակության 150-ամյակը։ Այն լույս է տեսել 1868–1919 թթ. Սուրբ Էջմիածնում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցու նախաձեռնությամբ։ Նպատակն էր հայոց կյանքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերի եւ նշանակության բարձրացումն ու ամրապնդումը, Հայ Եկեղեցու ուղղափառության, ազգային նկարագրի, ինքնուրույնության եւ անկախության պաշտպանությունը։ Ամսագրի լեզուն աշխարհաբարն էր։ Խմբագրել է միաբաններից կազմված կոլեգիան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նշանակած խմբագրի ղեկավարությամբ։ Տարբեր տարիներին խմբագիրներ են եղել Աբել արք. Մխիթարյանը, Խորեն վրդ. Ստեփանեն, Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Գարեգին վրդ. Հովսեփյանը, Հուսիկ արք. Մովսիսյանը, Աբել աբղ. Աբրահամյանը, Ներսես վրդ. Միքայելյանը եւ այլք։

«Արարատ»-ը Կովկասում հրատարակվող կրոնագիտական, եկեղեցագիտական, հայագիտական, բանասիրական առաջին լուրջ ամսագիրն էր եւ մեծապես նպաստել է գիտության այդ ճյուղերի զարգացմանը, մեծ դեր խաղացել հայ ժողովրդի եկեղեցական, հասարակական կյանքում։

«Արարատ»-ի շուրջ համախմբվել են ժամանակի գրեթե բոլոր հայ անվանի գիտնականները, աստվածաբան-հոգեւորականները, գրողները, աշխատակցել են Մաղաքիա արք. Օրմանյանը, Գաբրիել արք. Այվազովսկին, Երվանդ վրդ. Տեր-Մինասյանը, Վահրամ եպս. Մանկունին, Սահակ վրդ.

Ամատունին, Վահան վրդ. Բաստամյանցը, Կոմիտասը, Ղազարոս Աղայանը, Հրաչյա Աճառյանը, Նիկողայոս Ադոնցը, Ստեփան Մալխասյանցը, Լեոն, Նիկողայոս Մառը, Հակոբ Մանանդյանը, Հայկունին, Ստեփանոս Մելիքյանը, Երվանդ Լալայանը, Գրիգոր Ղափանցյանը, Հովհաննես Հովհաննիսյանը եւ ուրիշներ:

«Արարատ»-ում հրատարակվել են հայրապետական կոնգակներ եւ կարգադրություններ, քաղվածքներ Սինոդի գրագրությունից, տեղեկություններ Հայ Եկեղեցու թեմերի, ծխական ու թեմական դպրոցների, Քույր եկեղեցիների, հայ կաթոլիկ եւ ավետարանական համայնքների վերաբերյալ:

Հոգվածներ եւ ուսումնասիրություններ են տպագրվել հայ ժողովրդի պատմության, հայ հին ու նոր գրականության, գաղթավայրերի, հայ բանահյուսության, ազգագրության, հարեւան ժողովուրդների հետ հայերի առնչությունների մասին: Զգալի տեղ է հատկացվել հայոց վանական համալիրներին, եկեղեցիներին, հայ սրբերին, վարքագրությանը, եկեղեցական մշակույթին անդրադարձող նյութերին: «Արարատ»-ը կարեւոր դեր է կատարել Հայ Եկեղեցու դավանաբանության, տոմարագիտության, ծիսագիտության, կանոնագիտության, եկեղեցական իրավունքի ուսումնասիրման ասպարեզում, եղել է հայ աստվածաբանական մտքի հանդես, Հայ Եկեղեցու ուղղափառության պաշտպանության ամբիոն, հայ դավանաբանական գրականության մաս կազմող բնագրերի հրատարակման ու հետազոտման կենտրոն: Ամսագիրն իր առջեւ խնդիր չի դրել «հաւատոյ վէճեր նորոգել» («Յառաջաբան»), այլ ձգտել է պահպանել Հայ Եկեղեցու կարգն ու կանոնը, նոր հրապարակումների լույսի ներքո եւ աղբյուրագիտական հիմնավորումներով պարզաբանել մեր Եկեղեցու պատմությանն առնչվող որոշ հարցեր, ներկայացնել նրա դավանաբանական դիրքորոշումը, առաքելականությունը, առաքելական հաջորդականությունը, ազգային նկարագիրը:

«Արարատ»-ն անցել է ստեղծագործական երկու շրջան՝ 1868–1895 եւ 1895–1919 թթ.: Առաջին շրջանում աստվածաբանական, դավանաբանական հոգվածներն առավելապես ունեցել են մատենագրական, ջատագովական բնույթ: Հանդես են եկել Աբել արք. Մխիթարյանը, Հուսիկ վրդ. Մովսիսյանը, Մաղաքիա արք. Օրմանյանը, Արշակ Տեր-Միքելյանը, Գաբրիել եպս. Այվազովսկին եւ ուրիշներ<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, գլխ. խմբ.՝ Հովհաննես Այվազյան, Երեւան, 2002, էջ 138–140:

1888 թ. «Արարատ»-ում բացվել է «Ս. Էջմիածնի գրադարան» բաժինը:

1895-ից «Արարատ»-ում գերակշռել են հայ դավանաբանական մտքի ուսումնասիրմանը նվիրված գիտական հոդվածները: 1894-1899 թթ., երբ Կարապետ վրդ. Տեր-Մկրտչանն էր կրոնական բաժնի խմբագիրը, «Արարատ»-ը բեղուն շրջան է ապրել աստվածաբանական, դավանաբանական խնդիրների ուսումնասիրման, պարզաբանման եւ հրապարակման առումով<sup>2</sup>:

1895 թ. ստեղծվել է նոր բաժին՝ «Հավելված»: Այս բաժնում հրատարակվել են «Գիրք թղթոց» ընդգրկված ու մի շարք այլ արժեքավոր բնագրեր եւ ուսումնասիրություններ:

«Արարատ»-ի շուրջ համախմբված միաբաններն ու մտավորականները 1913 թ. հրատարակել են «Շողակաթ» հայագիտական ժողովածուի առաջին գիրքը՝ նվիրված հայ գրի ստեղծման 1500 եւ տպագրության 400-ամյա հոբելյաններին:

«Արարատ»-ը անդրադարձել է նաեւ ընդհանուր աստվածաբանական հարցերին: 1910 թ. համարներում տպագրվել է ռուս նշանավոր աստվածաբան, պրոֆ. Նիկոլայ Սագարդայի «Յոյն Արեւելքի հին եկեղեցական աստուածաբանական գիտությունը իւր ծաղկման շրջանում (IV-V դդ.)» աշխատությունը, 1917-ի համարներում՝ ռուս գիտնական Ֆ. Մ. Ռոսեյկինի «Կ. Պոլսի Փոտիոս պատրիարքի առաջին պատրիարքությունը» աշխատությունից մի հատված եւ այլն<sup>3</sup>:

Ամսագիրը մեծ ավանդ ունի նաեւ հայագիտության զարգացման գործում: 1870 թ. վերջից ընդարձակվել է «Արարատ»-ի հայագիտական բաժինը: Հայագիտական ուսումնասիրություններով հանդես են եկել Հակոբ Մանանդյանը, Երվանդ վրդ. Տեր-Մինասյանը, Նիկողայոս Ադոնցը, Հրաչյա Աճառյանը, Նիկողայոս Մառը, Երվանդ Շահագիրը, Մանուկ Աբեղյանը, Հովսեփ Օրբելին, Թղթակցել են մտավորականներ Տրդատ եպս. Պալյանը, Բաբկեն վրդ. Կյուլեսերյանը, Կարապետ Բասմաջյանը եւ ուրիշներ:

Ամսագիրն իր տարածմամբ ու հեղինակների լայն ընդգրկմամբ ստացել է համահայկական բնույթ: Բացվել են հայագիտության ենթաբաժիններ՝ հայ երաժշտության, խազագրության, շարականների, հայ

<sup>2</sup> Տե՛ս «Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում», «Էջմիածին» ամսագիր, 1968, ԺԱ.-ԺԲ., էջ 96-102:

<sup>3</sup> Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 138-140:

իրավաբանական մտքի, գրախոսություն եւ այլն: «Արարատ»-ում հրատարակված հայագիտական, պատմաբանասիրական բնույթի արժեքավոր, հարուստ նյութեր բովանդակող ուսումնասիրություններն ընդգրկել են հայագիտության գրեթե բոլոր ճյուղերը, հատկապես՝ ձեռագրագիտությունը, հնագրությունն ու մանրանկարչությունը: Հայ եւ օտարերկրյա մի շարք մատենագիրների աշխատություններ հրապարակվել են գիտական համեմատական բնագրով:

Հայ անվանի գիտնականներից ոմանց լավագույն աշխատություններն առաջին անգամ լույս են տեսել «Արարատ»-ի էջերում: Նրա վերջին երկու համարները՝ 1918-1919 թթ., ամբողջովին նվիրվել են հայագիտական նյութերին<sup>4</sup>:

«Արարատ»-ի լավագույն նյութերն ընդգրկող մատենագիտական ցանկերը լույս են տեսել տարբեր պարբերականներում, ձեռք բերել սկզբնաղբյուրի նշանակություն:

2006-ից Մայր Աթոռ «Արարատ»-ի ժառանգությունը՝ խորագրով՝ առանձին հատորներով շարունակաբար լույս է ընծայում ամսագրի էջերում տեղ գտած հայագիտական, աստվածաբանական, կրոնագիտական հրապարակումները<sup>5</sup>:

\* \* \*

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունում ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի նախաձեռնությամբ կազմակերպված՝ «Արարատ» ամսագրի 150-ամյակին նվիրված «Մայր Աթոռի գիտական հսկան» խորագրով գիտաժողովի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ սույն թվականի դեկտեմբերի 19-ին:

Գիտաժողովի հանդիսավոր բացմանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ, գրադարանների տնօրեններ, թեմայով հետաքրքրված գիտնականներ եւ ուսանողներ:

<sup>4</sup> Տե՛ս «Մատենագիտություն «Արարատ» ամսագրի», Ս. Էջմիածին, 1970, էջ 15:

<sup>5</sup> Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի նախաձեռնությամբ (2015 թ.), Հայաստանի ազգային գրադարանի օժանդակությամբ՝ «Արարատ» ամսագրի բացառապես բոլոր համարները թվայնացվել են (2017 թ.) եւ զետեղվել են համացանցում՝ տարբեր ձեռնագրերով: Ամսագիրն առցանց կարդալու համար կարող եք օգտվել հետևյալ հղումներից՝ <http://www.flib.sci.am/eng/Ararat/Main.html>, [http://tert.nla.am/mamul/Ararat\\_2/Table.html](http://tert.nla.am/mamul/Ararat_2/Table.html):

Գիտաժողովն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի եւ Հրատարակչական բաժնի տնօրեն Արժանապատիվ Տ. Արարատ քհն. Պողոսյանը հանդես եկավ բացման խոսքով:

Տեր Հայրը փաստեց, որ «Արարատ» ամսագիրն անցել է երկար, բարդ ու դժվարին ճանապարհ, ընդունել ժԹ. դարավերջի եւ Ի. դարասկզբի մարտահրավերները, դիմակայել ու ապացուցել իր ժամանակին եւ գալիք դարերին, որ բացառիկ է, լավագույններից մեկը՝ թե՛ որպես հայ կրոնագիտական-հայագիտական ամսագիր, թե՛ որպես լրագրության պատմության մեջ բովանդակալից, իսկ ավանդույթով՝ երկարակյաց պարբերական: Տեր Հայրը նաեւ ընդգծեց, որ Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրը անգնահատելի դերակատարում է ունեցել Հայ Եկեղեցու պատմության, նրա դավանաբանության, ծիսագիտության, տոմարագիտության, կանոնագիտության ուսումնասիրման, ինչպես նաեւ հայագիտության զարգացման գործընթացում:

Այնուհետեւ իր օրհնության խոսքն ասաց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Այսօր դուք համախմբվել եք ձեր զեկույցներով ու քննարկումներով վերարժեւորելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագրի նշանակալի վաստակն ու ժառանգությունը: Երջանկահիշատակ Գեւորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք եւ նրա խրախուսմամբ հիմնադրված «Արարատ» ամսագիրը հարյուր հիսուն տարի առաջ կարելոր առաքելության լծվեց ազգային-եկեղեցական մեր անդաստանում: Ինչպես նշվում է ամսագրի առաջին համարի նախաբանում՝ «Արարատ»-ի հանձնառությունն էր կրոնական գիտելիքների մատուցմամբ, ներկայացվող ուսումնասիրություններով եւ հոգվածներով նպաստել ազգի բարոյական ու հոգեւոր դաստիարակությանը: Ամսագիրը կարելոր ներդրում ունեցավ հայ աստվածաբանական մտքի, հայագիտության ու պատմագիտության զարգացման գործում», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր գնահատանքը հայտնելով նաեւ Մայր Աթոռի մատենադարանի տնօրենությանը եւ գիտաժողովի իրականացմանը բարի նպաստ բերած բոլոր անձանց:

Հայրապետական օրհնության խոսքից հետո գիտաժողովը համարվեց բացված:

Գիտաժողովի առաջին նիստում ընթերցվեց հինգ զեկույց: Նիստը նախագահում էին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ,

աստվածաբանական գիտությունների թեկնածու Գարեգին վրդ. Համբարձումյանը եւ Երեւանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը:

Առաջին նիստում զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Դեւրիկյանը: Նրա զեկույցը վերնագրված էր «Էջմիածնականության» գաղափարի արծարծումը «Արարատ»-ի էջերում»:

Երեւանի պետական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի Հայ գրականության պատմության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սերժ Սրապիոնյանը «Արարատ»-ը՝ Մայր Աթոռի տարեգիր» վերնագրով զեկույցում անդրադարձավ մշակույթին ու հոգեւոր կյանքին: Նա հիշատակեց ժամանակի լուսավոր եւ առաջադեմ գործիչներին, որոնք իրենց մտքի գործությամբ ու նվիրվածությամբ կարողացան ապահովել մի այնպիսի ամսագրի հրատարակություն, որի դերը եւ նշանակությունն անգամ այսօր անգնահատելի է:

Երեւանի պետական համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաղաշ Մարտիրոսյանը ներկայացրեց «Հրապարակախոսությունը «Արարատ» ամսագրում» վերնագրով զեկույց, որտեղ հիշատակեց շուրջ մեկ ու կես դար առաջ տպագրված հրապարակախոսական այնպիսի հոդվածներ, որոնք այսօր նույնքան արդիական են: Մասնավորապես խոսվեց մարդու իրավունքների, խոսքի ազատության, հայ դպրոցի, կրթության որակի բարձրացման, ազգային արժեքների պահպանության, հոգեւորականության դերի ու նշանակության եւ այլ հարցերի մասին:

ՀՀ ազգային գրադարանի փոխտնօրեն Հայկանուշ Ղազարյանը, մասնագիտորեն ուսումնասիրելով «Արարատ» ամսագրի՝ գրադարանային բնագավառին վերաբերող հրապարակումները, զեկույց ներկայացրեց «Արարատ»-ի անդրադարձը գրադարանային ոլորտին» թեմայով: Հայկանուշ Ղազարյանը նշեց, որ 1888 թվականից «Արարատ» ամսագրում բացվել է նոր բաժին՝ «Ս. Էջմիածնի գրադարան»: Նա ընդգծեց, որ Մայր Աթոռի գրադարանում էր պահվում հայերեն ձեռագրերի՝ նշյալ ժամանակաշրջանի հավաքածուներից ամենամեծը, իսկ գրադարանի դռները,

Մակար Եպիսկոպոսի հրամանով, բաց էին հանդեսի խմբագրակազմի համար, որպեսզի ձեռագրերում առկա փաստերը, իբրեւ «հում նյութեր», հետզհետե հրատարակվեն եւ հայ հետազոտողների համար հնարավորություն ստեղծեն գրելու Հայոց պատմությանը նվիրված գիտական աշխատություններ: Որոշվում է հրատարակել ձեռագիր հուշարձանների հիշատակարանները՝ ժամանակագրական կարգով:

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վիկտոր Կատվալյանն իր զեկուլյցում անդրադարձավ «Արարատ» ամսագրի այն հրապարակումներին, որոնք վերաբերում էին Հայ գրերի գյուտի եւ տպագրության համագգային մեծ հոբելյանի տոնակատարությանը:

Գիտաժողովի մասնակիցներն ամփոփեցին առաջին նիստը: Հակիրճ քննարկումից հետո սկսվեց երկրորդ նիստը, որը նախագահում էին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ավանդապահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեորգ Տեր-Վարդանյանը եւ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Դեւրիկյանը:

«Արարատ» հանդեսի կեսդարյա բնագրական վաստակը» վերնագրով զեկուլյց ներկայացրեց Գեորգ Տեր-Վարդանյանը:

Էդիկ Մինասյանը «Արարատ» ամսագրի պատմագիտական նշանակությունը» վերտառությամբ իր զեկուլյցում նկատեց, որ ի տարբերություն այլ պարբերականների՝ «Արարատ»-ը աչքի է ընկել գիտականությամբ: Նրա դիտարկմամբ՝ Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրը կարողացել է՝ անաչառությամբ, պատմական ճշմարտությունները վեր հանելով եւ բարոյական ազնիվ մղումներով, հայ երիտասարդներին դաստիարակելու դժվարին ու պատախանատու առաքելությունն ստանձնել:

ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի Հայագիտական եւ սոցիալ-մշակութային առարկաների բաժնի գլխավոր մասնագետ, պատմական գիտությունների թեկնածու Արման Մալոյանն իր զեկուլյցում հանգամանորեն անդրադարձավ «Արարատ» ամսագրում հրատարակված մանկավարժական ուշագրավ եւ արժեքավոր հոդվածներին, ուսումնասիրություններին: Նա նշեց, որ «Արարատ» ամսագիրը, իր էջերը սիրահոփար տրամադրելով ժամանակի հայ մշակույթի եւ գիտության ինչպես անվանի ու վաստակաշատ, այնպես եւ սկսնակ

գործիչների մանկավարժական բնույթի հոգվածներին ու նյութերին, իր գնահատելի ավանդն է ունեցել հայ մանկավարժական մտքի զարգացման գործում:

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի, Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Արսեն Հարությունյանի զեկույցը վերնագրված էր «Վիմագրությունը «Արարատ»-ի էջերում»: Նա իրավամբ նկատեց, որ «Արարատ»-ի էջերում պահպանվել է վիմագրական մեծածավալ նյութ՝ ինչպես սեպագրերի կամ բեւեռագրերի, այնպես եւ օտարալեզու ու հայերեն վիմագրերի տեսքով:

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Հայկանուշ Մեսրոպյանը «Հայ բարբառագիտության հարցերը «Արարատ» հանդեսի էջերում» զեկույցում անդրադարձավ ամսագրում տեղ գտած բարբառային բնագրերին, բարբառագիտության տեսությանն առնչվող հրապարակումներին, ինչպես նաեւ հայ բարբառագիտության համար հետաքրքրություն ներկայացնող նյութերին:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի Արարատ Ղարիբյանի անվան հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ընդհանուր եւ համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանի զեկույցը վերնագրված էր «Հայերենի տեսության եւ կանոնարկման հարցերը «Արարատ»-ի էջերում»:

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Տորք Դալալյանն իր զեկույցում անդրադարձավ «Արարատ» ամսագրում հրատարակված բանահյուսական նյութերի ընդհանուր բնութագրին:

Երրորդ նիստը նախագահում էին Ս. Էջմիածնի թանգարանների եւ արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քհն. Կարապետյանն ու «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի եւ Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Արարատ քհն. Պողոսյանը:

Սույն նիստի առաջին զեկույցողը Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության անդամ Արփի Վարդումյանն էր: Զեկույցի

վերնագիրն էր «Կոմիտասը եւ «Արարատ» հանդեսը»: Արփի Վարդունյանը նկատեց, որ «Կոմիտասի կյանքի օրոք նրա ոչ բոլոր գրվածքներն են հրատարակվել. նրա լույս տեսած հոգվածներից ու գրախոսություններից առաջինները տպագրվել են հենց «Արարատ» ամսագրում, ըստ որում՝ սկսած 1894 թվականի հուլիսից, երբ 24-ամյա Կոմիտասը դեռեւս արեղա չէր օծվել եւ ստորագրում էր Սողոմոն սարկավազ Սողոմոնյան ու տակավին հայտնի չէր որպէս հմուտ երաժշտագետ»:

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Սուսաննա Հովհաննիսյանը («Հովհաննես Թումանյանը եւ «Արարատ» ամսագիրը (խմբագիրներ Գալուստ Տեր-Մկրտչյանի եւ Գարեգին վարդապետ Հովսեփյանի բարեկամության պատմությունից)» վերնագրով զեկույցը ներկայացնելիս նշեց, որ «Արարատ» ամսագիրը հրատարակման առաջին իսկ օրերից արժարժում էր գրականության ու արվեստի զարգացման խնդիրներ: Սուսաննա Հովհաննիսյանն ընդգծեց՝ «Բանաստեղծն ու «Արարատ»-ը տարեկիցներ են. նրանց ծնունդների միջեւ ընդամենը ամիսներ են: Բնականաբար, «Արարատ»-ը չէր կարող շանդրադառնալ ժամանակի ամենամեծ համարում ունեցող բանաստեղծի ստեղծագործությանը»:

«Էջմիածին» ամսագրի խմբագիր Արփինե Չանթիկյանը զեկույց ներկայացրեց «Կրոնագիտական-աստվածաբանական հոգվածները «Արարատ» ամսագրում» թեմայով:

ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ հին եւ միջնադարյան գրականության բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Լուսինե Վարդանյանի զեկույցը «Շարականի ուսումնասիրությունները «Արարատ» ամսագրի էջերում» թեմայով էր:

Հայաստանի ազգային արխիվի կինոֆոտոֆոնո փաստաթղթերի եւ ապահովագրական պատճենների մասնաճյուղի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Ավագ Հարությունյանն իր զեկույցով փաստեց, որ «Արարատ» ամսագրի էջերում հրատարակված՝ Մեծ Եղեռնին վերաբերող նյութերը կարեւորագույն սկզբնաղբյուր են Հայոց ցեղասպանության եւ Հայկական հարցի համալիր ուսումնասիրման համար, ուստի անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել այդ հրապարակումներին:

ՀՀ սփյուռքի նախարարության Համահայկական ծրագրերի վարչության մշակութային, սպորտի եւ երիտասարդական ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ, պատմական գիտությունների թեկնածու Կարեն Մկրտչյանի զեկուլցի թեման էր «Պարսկաստանի հայ գաղթօջախը «Արարատ» ամսագրի էջերում ժԹ. դարավերջին - Ի. դարասկզբին»:

Զեկուցողը նկատեց, որ «Արարատ» ամսագիրը արժեքավոր հոգվածներ է հրապարակել Պարսկաստանի հայ գաղթօջախի գործունեության վերաբերյալ: Դրանք ունեն աղբյուրագիտական նշանակություն՝ ժԹ. դարավերջին - Ի. դարասկզբին այդ երկրում բնակվող հայության կյանքի մասին պատկերացում կազմելու համար: Ապա հավելեց, որ Կովկասում հայագիտական առաջին պարբերականը հատուկ լուսաբանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Պարսից արքունիքի հարաբերությունները, ինչպես նաեւ Պարսկահայ գաղթօջախի կրթական եւ սոցիալ-տնտեսական կյանքը:

Գրեթե յուրաքանչյուր զեկուլցից հետո մասնակիցները հարցեր էին ուղղում զեկուցողին, ապա ծավալվում էր հետաքրքիր եւ բովանդակալից քննարկում:

Գիտաժողովի ավարտից հետո որոշվեց ի մի բերել մասնակիցների զեկուլցները՝ առաջիկայում առանձին ժողովածուում տպագրելու նկատառումով:

Նշենք նաեւ, որ «Արարատ» ամսագրի 150-ամյակին նվիրված՝ «Մայր Աթոռի գիտական հսկան» թեմայով գիտաժողովին անդրադարձ կատարվեց հայաստանյան տպագիր եւ էլեկտրոնային մի քանի տասնյակ լրատվամիջոցների կողմից:



# ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ



## ԹԻՖԼԻՍԻ ՀԱՄԱՐՈՐԵՑՈՅ ՍՐ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵՒ ՍՐ. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԸ

**Թ**ԻՖԼԻՍԻ հայոց եկեղեցիները մշտապէս քաղաքի զարդն են հանդիսացել՝ լրացնելով պատմաճարտարապետական յայտնի կոթողների շարքը: Նրանցից շատերն այսօր գոյութիւն չունեն, իսկ որոշները մեզ են հասել կիսաւեր եւ խոնարհուած վիճակում: Այդ եկեղեցիների ճակատագիրը, ցաւօք, դեռեւս անորոշ է, քանի որ յետխորհրդային Վրաստանում դեռեւս չի մշակուել եւ ընդունուել կրօնի մասին օրէնքը, ինչի պատճառով երկրում գործող բոլոր կրօնական համայնքները (բացի Վրաց Ուղղափառ Եկեղեցուց (ՎՈՒԵ) սեփականութիւն գրանցելու հարցում ունեն բազմաթիւ դժուարութիւններ: Միւս կողմից՝ Վրաստանի աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւնները, գործելով միասնաբար, կիսաւեր վիճակում մեր օրեր հասած մի շարք հայոց եկեղեցիների պատկանելութեան հարցը համարում են վիճելի՝ յայտարարելով, թէ, իբր, այդ յուշարձանների հիմքերը վրացական են: Արդիւնքում՝ նշեալ յուշարձանների իրական տէրերը, այն է՝ Հայ Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմը եւ Թիֆլիսի հայ համայնքը, մինչ օրս զրկուած են եկեղեցիների օրեցօր փլուզումը եւ քայքայումը կանխելուն ուղղուած որեւէ քայլ ձեռնարկելու իրաւական հնարաւորութիւնից. բոլոր խոնարհուած յուշարձանները յայտարարուած են վրաց պետութեան սեփականութիւնը, եւ վերանորոգուելու պարագային դրանք միանգամից անցնում են ՎՈՒԵ տնօրինութեան տակ՝ գործելով որպէս վրաց եկեղեցիներ:

Վերոնկարագրեալ կարգավիճակում են Թիֆլիսի հայաբնակ Հաւլաբար թաղամասում գտնուող Շամքորեցոյ Սբ. Աստուածածին եւ Երեւանցոյ Սբ. Մինաս եկեղեցիները, որոնց պատմութեանն է նուիրուած Արմէն

Ասատրեանի ծաւալուն գիրքը<sup>1</sup>։ Հայաստանի ազգային արխիւի, Մաշտոցեան Մատենադարանի հազարաւոր վաւերագրերի եւ ոչ մեծաթիւ մասնագիտական գրականութեան հենքի վրայ Ա. Ասատրեանը երկու խոշոր բաժիններով ներկայացրել է նշեալ եկեղեցիների ամբողջական պատմութիւնը՝ հիմնադրումից մինչեւ մեր օրերը։

Գրքի առաջին բաժինը, որը նուիրուած է Շամքորեցոց Սբ. Աստուածածին (Կարմիր աւետարան)<sup>2</sup> եկեղեցուն։ Այն սկսում է շամքորեցիների՝ Հաւաբար գաղթի եւ եկեղեցու հիմնադրման մասին ենթաբաժնով։ Յայտնի է, որ Թիֆլիսի նշեալ թաղամասն առաւել հայաշատ է դարձել ԺՀ. դարում, երբ վրաց Հերակլ երկրորդ արքան իր արշաւանքների ժամանակ Գանձակից, Շամախից, Շամխորից, ինչպէս նաեւ Արարատեան դաշտավայրի մի շարք բնակավայրերից բռնի կերպով Թիֆլիս տեղափոխեց մեծաթիւ հայերի։ Ա. Ասատրեանը վկայակոչում է նաեւ փաստաթղթեր, համաձայն որոնց շամքորեցիները, ինչպէս նաեւ գանձակեցի հայերը Հաւաբար են տեղափոխուել դեռեւս ԺՀ. դարի առաջին քառորդին՝ մինչ Հերակլ երկրորդի կազմակերպած հիմնական գաղթը։ Բնականաբար՝ Հերակլ երկրորդի կազմակերպած գանգուածային բռնագաղթը չէր կարող չարժանանալ հայրենագուրկ ժողովրդի դիմադրութեանը, եւ որքան էլ Հայրենիքում մեծ լինէր օտար ասպատակութիւնների սարսափը, այդուհանդերձ, բռնագաղթուածների մէջ մեծ է եղել վերագործի ցանկութիւնը։ Ահա այս պատճառով է նաեւ, որ Հերակլ երկրորդը, վերաբնակեցուած հայութեանը ոչ միայն չի պարտադրել Վրաց (քաղկեդոնական) Եկեղեցու հետեւորդ դառնալ, այլեւ ցուցաբերել է զգալի աջակցութիւն, որ հայութիւնն աւելի արագօրէն վերահաստատուի նոր միջավայրում։ 1760-ական թթ. վերջերին Ղազար քհնյ. Տէր-Ղազարեանի առաջնորդութեամբ Թիֆլիսում հաստատուած շամքորեցիների կողմից 1770-ական թթ. կէսերին (1775 թ.) Սբ. Աստուածածին հոյակերտ եկեղեցու հիմնադրումը եւս վերոնշեալ իրողութեան արտացոլումն է։

<sup>1</sup> «Հին Թիֆլիսի հայոց Շամքորեցոց Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Մինաս եկեղեցիները. (Պատմութիւն եւ տարեգրութիւն)», աշխատասիրութեամբ Ա. Ասատրեանի, Ս. Էջմիածին, 2018, 780 էջ։ Սոյն աշխատանքը «Թիֆլիսի հայկական եկեղեցիները» շարքի երկրորդ գիրքն է։ Առաջինը նուիրուած է Մողնու Սբ. Գէորգ եւ Սբ. Նշան եկեղեցիներին. տես «Թիֆլիսի հայկական Մողնու Սուրբ Գէորգ եւ Սուրբ Նշան եկեղեցիները (Պատմութիւն եւ տարեգրութիւն)», աշխատասիրութեամբ Ա. Ասատրեանի, Ս. Էջմիածին, 2016, 328 էջ։

<sup>2</sup> 1838 եւ 1840 թթ. գոյքացուցակներում տեղեկութիւններ կան եկեղեցուն պատկանող չորս աւետարանների մասին, որոնցից մէկի անուամբ էլ եկեղեցին նաեւ կոչւել է Կարմիր Աւետարան։

Ա. Ասատրեանը վկայակոչում է նաեւ եկեղեցու 1809 թ. կառուցման մասին փաստաթղթեր եւ նշում, որ այս դէպքում խօսքը վերաբերել է տաճարի հիմնովին վերանորոգմանը (Շամքորեցոց եկեղեցին եւս աւերուել էր 1795 թ. պարսկական ասպատակութիւնների ժամանակ):

Բաժնի յաջորդ ենթազուլուխը նուիրուած է Շամքորեցոց Սբ. Աստուածածնի առաջին հոգեւորականներին եւ երէցփոխներին՝ սկսած ԺԹ. դարի սկզբներից: Նշեալ շրջանի քահանաների գործունէութիւնը սերտօրէն շաղկապուած է Ներսէս արք. Աշտարակեցու՝ Վիրահայոց թեմում ծաւալած հոգեւոր-մշակութային քաղաքականութեան հետ: Ա. Ասատրեանը փաստառատ հենքի վրայ առանձնակի վառ գոյներով է անդրադառնում եկեղեցու քահանայ, իսկ 1819 թ.՝ աւագ քահանայ Յարութիւն Տէր-Ղուկասեանի կեանքին եւ գործունէութեանը, բազմաթիւ ոլորտներում բարձր դիրքերի հասած նրա որդիներին՝ կենտրոնանալով նրա ամենահանրայայտ որդու՝ գեներալ Արշակ Տէր-Ղուկասեանի կեանքի եւ անցած փառաւոր ուղու վրայ:

Կրկին արխիւային ձեռագիր փաստաթղթերի տեղեկութիւնները վկայաբերելով՝ հեղինակը յաջորդ ենթաբաժիններում անդրադառնում է Շամքորեցոց եկեղեցու եւ պարսպի՝ 1840-ական թթ. կատարուած վերանորոգութիւնների խնդրին, 1840-1870-ական թթ. եկեղեցում գործունէութիւն ծաւալած երէցփոխներին եւ հոգեւորականներին, եկեղեցում տեղի ունեցած առանձին դէպքերին եւ այլն: Բաժնի վերջին ենթազուլուխներում ժամանակագրական կարգով ներկայացուած է Շամքորեցոց Սբ. Աստուածածին եկեղեցու պատմութիւնը՝ սկսեալ 1880-ականներից մինչեւ ԺԹ. հարիւրամեակի վերջ եւ Ի. դարասկիզբ՝ մինչեւ խորհրդային շրջանի սկզբնաւորումը: Եկեղեցու պատմութիւնը եւ տարեգրութիւնն արտացոլող վերոնշեալ բոլոր ենթաբաժիններում ամենայն խնամքով եւ մանրամասնութեամբ ներկայացուած է եկեղեցուն առընչուող իւրաքանչիւր անձ եւ դէպք: Տարի առ տարի, ամիս առ ամիս ժամանակագրական սկզբունքով կազմուած շարադրանքը յիշեցնում է մի իւրօրինակ շարժանկար, որի տեսարանները ներկայացնում են ոչ միայն եկեղեցական կեանքը, այլեւ տալիս են թիֆլիսահայութեան տուեալ շրջանի կեանքի եւ իրադարձութիւնների մասին հարուստ տեղեկութիւններ: Նշուած բաժիններում գտնում ենք եւ եկեղեցուն կտակած շարժական եւ անշարժ գոյքի, եւ երէցփոխանական ու պատգամաւորական ընտրութիւնների, եւ տարբեր տարիների հոգեւորականների ցուցակների, եւ եկեղեցական կեանքին

առընչուող դժբախտ ու ուրախալի դէպքերի, ինչպէս նաեւ բազմաթիւ ու բազմապիսի ալլեւալլ հարցերի մասին մանրակրկիտ մշակուած տեղեկութիւններ, որոնք իրենց ամբողջական ծաւալով շրջանառուում են առաջին անգամ: Շամքորեցոց եկեղեցու պատմութեան ժամանակագրական շարադրանքն աւարտուում է խորհրդային եւ յետխորհրդային տարիներին հոգեւոր այդ հաստատութեան կեանքում տեղի ունեցած շրջադարձային իրադարձութիւնների ներկայացմամբ: Դժնի այդ փուլում մեր եկեղեցական հայրերը ուժերի գերլարումով փորձեցին ոչ միայն փրկել տաճարը, այլեւ խնդրագրերի եւ գրութիւնների միջոցով ձգտեցին վերանորոգել եկեղեցին՝ փրկելու համար այն մօտալուտ փլուզումից: Այդուհանդերձ, այդ գործողութիւնները հանդիսացան եկեղեցու կարապի երգը. 1934 թ. եկեղեցին արդէն բռնագրաւուած էր:

Շամքորեցոց Սբ. Աստուածածինը խորհրդային հետագայ տարիներին գործել է որպէս պահեստ, այնուհետեւ՝ որպէս նկարիչների արուեստանոց: Բազմաթիւ ականատեսների վկայութեամբ՝ Թիֆլիսի փառաւոր անցեալի այդ վկան վրացական իշխանութիւնների կողմից պայթեցման միջոցով նորոգվի աւերուեց 1989 թ. ապրիլի 14-ին: Յետխորհրդային ողջ ընթացքում եկեղեցին մնաց կիսաւեր վիճակում:

Նորանկախ Վրաստանի իշխանութիւնները, ինչպէս նշեցինք վերելում, եկեղեցին Հայ Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմին վերադարձնելու հարցում շարունակում են ցուցաբերել մերժողական մօտեցումներ, իսկ նրա անմիջական հարեւանութեամբ շարունակում են խոյանալ նորակառոյց շինութիւններ՝ խաթարելով եկեղեցու տեսքն ու նսեմացնելով հոյակերտ այդ յուշարձանի պատմաճարտարապետական նշանակութիւնը:

Աշխատանքի յաջորդ եւ մեծագիր ենթաբաժինը նուիրուած է Շամքորեցոց եկեղեցու ծխական դպրոցին, որը, դատելով հեղինակի փաստական եզրակացութիւններից, հիմնուել է Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսի 1848 թ. յունիսի 2-ի յատուկ կոնդակի հրապարակ իջնելուց յետոյ՝ 1848-1849 թթ.՝ Կարապետ քհնյ. Ստեփանոսեան Տէր-Գրիգորեանցի կողմից: Ա. Ասատրեանն այս ենթաբաժնում եւս զետեղել է արխիւային վաւերագրերից քաղուած հարուստ տեղեկութիւններ, որոնք առընչուում են ծխական դպրոցի կրթական կեանքին, առարկաներին ու ծրագրերին, ուսուցչական խնդիրներին, յայտնի եւ անյայտ ուսուցիչներին, դպրոցի նիւթական կարիքներին եւ այլն: 1880-ական թթ. սկզբներին (1883 թ.)

Վիրահայոց թեմի առաջնորդ Արիստակէս եպս. Սեդրակեանի ջանքերի շնորհիւ ծխական դպրոցի հին ու խարխուլ շէնքին փոխարինելու է գալիս երկյարկ շինութեամբ արական միջնակարգ դպրոցը: Հեղինակն ամբողջովին մէջ է բերել Սրբազան հօր յուզիչ ճառը, որն արտասանուել է դպրոցի հիմնարկէքից 1-2 ամիս առաջ՝ 1883 թ. յունիսի 1-ին՝ Շամքորեցոց եկեղեցում մատուցուած պատարագից յետոյ: Մտահոգութիւն յայտնելով դպրոցների, յատկապէս Շամքորեցոց եկեղեցու ծխական դպրոցի վատթար վիճակի մասին՝ թեմի առաջնորդն իր խօսքում նշում է. «...Բայց դպրոցն ու եկեղեցին երկու հակառակ տպաւորութիւն ունեցան ինձ վերայ. եկեղեցին տեսայ փառաւոր. իսկ ուսումնարանը՝ խեղճ, մի ողորմելի բան: Եւ ես ակամայ մտածում էի. արդեօք ա՛յն ժողովուրդն է կառուցել այս հոյակապ տանաւր, որ պահում է մի այսպիսի ողորմելի դպրոց. եւ արդեօք այն միեւնոյն ժողովուրդն է պահպանում այս դպրոցը, որ կանգնել է այս եկեղեցին...»<sup>3</sup>: Յաջորդիւ Ա. Ասատրեանը ծաւալուն կերպով ներկայացնում է դպրոցի կենսագործունէութիւնը, որը շարադրանքում աւարտւում է 1921 թուականով:

Բաժնի հետագայ ենթաբաժիններում բերուած են Շամքորեցոց եկեղեցու 1841, 1852, 1906 թուականների ծխականների ցուցակները, տեղեկութիւններ՝ եկեղեցում կատարուած հոգեհանգիստների մասին: Մէկ ծաւալուն ենթաբաժին նուիրուած է Շամքորեցոց եկեղեցու չափաբերական տեղեկութիւններին եւ տնտեսական տեղեկագրերին, որոնք նոր լոյս են սփռում ԺԹ. հարիւրամեակի եւ Ի. դարի առաջին երկու տասնամեակների թիֆլիսահայութեան հոգեւոր-եկեղեցական, ինչպէս նաեւ կրթամշակութային եւ ընկերային-տնտեսական կեանքի վրայ:

Ա. Ասատրեանը նաեւ վաւերագրերից առանձնացրել եւ ցանկագրել է Շամքորեցոց եկեղեցում յիշատակուող հոգեւորականներին եւ երէցփոխներին: Բաժինը եզրափակւում է յաւելուածով, որտեղ առաջին անգամ հրապարակւում են եկեղեցուն առընչուող 79 արխիւային վաւերագրեր:

\* \* \*

